

ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

---

---

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ  
№ 5 (59)

ԵՐԵՎԱՆ 2022

---

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ  
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ  
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

*Խմբագրական խորհուրդ՝*

**Ս. Ռ. Գևորգյան (նախագահ),**

Մ. Գ. Գիլավյան (գլխավոր խմբագիր),  
Ա. Վ. Գալստյան, Ս. Դ. Դանիելյան, Ա. Գ. Դուրխանյան,  
Լ. Ս. Խաչատրյան, Ա. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան,  
Ա. Ա. Մակարյան, Է. Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,  
Ա. Տազեայան (Բեյրութ), Զ. Պողոսյան (Բտալիա),  
Հ. Մարտիրոսյան (Նիդերլանդներ), Ա. Հ. Մանուկեան (Շվեյցարիա)

Ա. Հ. Հարությունյան (գլխավոր խմբագրի տեղակալ)

Գրանցման վկայական՝ 211.200.00182  
Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.  
Պարբերականությունը՝ եռամսյա

Բոլոր նյութերն ուղարկվում են գրախոսության:

Հոդվածները տպագրվում են անվճար: Ցանկացողները հանդեսը կարող են ձեռք բերել համալսարանի հաշվեհամարին (151 000 230 84 80 100) փոխանցելով համարի արժեքը:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-20)  
Էլեկտրոնային փոստ՝ [hayagitakanhandes@gmail.com](mailto:hayagitakanhandes@gmail.com)  
Կայքէջ՝ <https://armenianstudies.aspu.am/>

---

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՄԱՐԱՆԻ  
ՕՐՀՆԵՐԳԸ

Խոսք՝ *Մարտին Գիլավյանի*  
Երաժշտ.՝ *Արկաղի Շենունցի*

Ճամփան ես մեր լուսավորում  
Դու Մաշտոցի արդար լույսով,  
Ու լցնում ես սրտերը մեր  
Հավատով ու պայծառ հույսով:

*Կրկներգ*

*Դու մայր տաճար մեր դպրության,  
Դու մեր երթի փարոս մի նոր,  
Ճամփան ես մեր լուսավոր  
Արությանից մինչ այսօր:*

Ճանապարհը քո փառավոր  
Շարունակվի թող հավիտյան,  
Կանաչ լինի ու լուսավոր  
Մեր հարազատ Համալսարան:

*Կրկներգ*

*Դու մայր տաճար մեր դպրության,  
Դու մեր երթի փարոս մի նոր,  
Ճամփան ես մեր լուսավոր,  
Արությանից մինչ այսօր:*

---

---

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ**

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ  
Բանասիրական ֆակուլտետի դեկան  
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
*Էլիասուգե՝ [ash.galstyan@mail.ru](mailto:ash.galstyan@mail.ru)*

**ԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԼԵԶՈՒ**

**Ամփոփում**

Նամականին հայ գրականության մեջ համարվում է երկրորդական ժանր, սակայն այն նպաստում է գրողի ժառանգության քննությանը: Նամակներն իրենց կառուցվածքով և ներքին բովանդակությամբ բաժանվում են մի քանի տեսակների, որտեղ արծարծվում են ոչ միայն գործնական հարցեր, այլև գրողների գրամշակութային հետաքրքրությունները: Ուշադրության են արժանի նշանավոր մարդկանց նամակներն ուղղված զավակներին:

Գրողների և արվեստագետների նամակներն ու նամակաշարերն ունեն ճանաչողական զգալի արժեք:

Հոդվածում քննվում են գրական նամականու կառուցվածքը, լեզվական հիմքերը, վեր են հանվում ժանրային էական դրսևորումներ:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** գրական նամականի, բաց նամակ, կեղծ նամակ, կառուցվածք, երկխոսություն, փոխաբերություն, համեմատություն:

**Ներածություն**

Նամականի են կոչվում գրողների և արվեստագետների նամակների ժողովածուները: Նամակները՝ որպես գրողի ժառանգության կարևորագույն մաս, հաճախ ներառվում են նրա երկերի լիակատար ժողովածուների մեջ: Նամականին անվանում են նաև էպիստոլյար գրականություն<sup>1</sup>: Թեպետ նամականու ժանրը հայ գրականության մեջ համարվում է երկրորդական, սակայն այն նպաստում է գրողի ժառանգության քննությանը:

Նամակներն իրենց կառուցատիպերով և ներքին բովանդակությամբ բաժանվում են մի քանի տեսակների՝

---

<sup>1</sup> Ջրբաշյան Է., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, Ե., 1972, էջ 204:

ա) գրողների նամակաշար, բ) տարբեր մասնագիտության տեր անձանց (հոգևորական, հեղափոխական) նամակներ, գ) գրողների նամակներ՝ հասցեագրված գրչընկերներին, հարազատներին դ) նամակներ՝ որպես գեղարվեստական գրականության կամ գեղարվեստական վավերագրության կառուցվածքային տարրեր, ե) բաց նամակներ, զ) կեղծ նամակներ և այլն:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե նամակներում հեղինակները շոշափում են անձնական խնդիրներ, երբեմն այնքան մանր, որ անհարիր է նրանց բարձր կոչմանը: Հարկ է ընդգծել, որ նամակների մի մասում արծարծվում են գործնական հարցեր՝ կապված հեղինակների գրամշակութային հետաքրքրությունների հետ: Նամակները գրվում են տարբեր հոգեվիճակներում, երբեմն խիստ հապճեպ. օրինակ՝ Միամանթոյի նամակները մի քանի տողանոց բացիկներ են, որոնք տեղեկույթ են տալիս բանաստեղծի այդ օրվա, հաճախ այդ ժամի մտասևեռման և ծրագրերի մասին:

Մեր նպատակն է միջգիտակարգային առումով բացել այդ խունացած էջերի ներքին ծայքերը, քննել հայ գրողների, մտավորականների նամակների կառուցվածքը, լեզվական հիմքերը, գրական նամականու լեզվական-կառուցատիպային հատկանիշները, վեր հանել ժանրային էական դրսևորումները:

Այս բոլորով հանդերձ նշելի է, որ գրողների, արվեստագետների, հոգևորականների նամակներն ու նամակաշարերն ունեն ճանաչողական զգալի արժեք, որը շատ ավելի մեծ է, քան կարող է թվալ առաջին հայացքից:

### **Մեթոդաբանություն**

Բուն խնդիրների լուծման նպատակով հիմնվել ենք տրամաբանության և հումանիտար մի շարք գիտություններում տարածում գտած մեթոդների և մոտեցումների վրա: Կիրառվել են լեզվաբանական մի շարք մեթոդներ՝ կառուցվածքային, նկարագրական, ոճաբանական:

Կառուցվածքային մեթոդով քննել ենք բնագրի լեզվական տարրերի հարաբերությունների հնարավոր տիպերը: Նկարագրական մեթոդով ուսումնասիրել ենք նամակների լեզվական համակարգի տարրերն ու հատվածները: Ոճաբանական մեթոդով կատարվել է նամակի՝ որպես տեքստի զուտ լեզվաբանական վերլուծություն: Ուսումնասիրվել են տեքստի ձևի ու բովանդակության կապերը, նամակագրի ոճը և այլն:

\*\*\*

**Գրողների նամակաշար:** Հայտնի է, որ հատկապես 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայկական մամուլի էջերում յուրօրինակ տեղ է

գրադեցրել «Նամակներ» խորագրով լրաբաժինը, որտեղ գետեղվել են արդիական հնչեղություն ունեցող գրական-հասարակական տարաբնույթ խնդիրներ: Օրինակ՝ «Մշակ» լրագրի առաջին իսկ համարներում տպագրվել է Բաֆֆու հայտնի նամակաշարը Պարսկաստանից: Հայտնի է, որ մեծ են Բաֆֆու ծառայությունները գրական աշխարհաբարի մշակման ասպարեզում: Գրականագետ Ա. Տերտերյանը նրան համեմատում է հայ բեմի լավագույն դերասանուհիների հետ, որոնց լեզվի մեջ լսվում էր հայերենի նվազայնությունը, երբեմն նաև շառաչը<sup>2</sup>: Ուշագրավ է Աղայանի և Բաֆֆու այն դիտողությունը, թե «Մշակն» է, որ առաջ է տանում լեզվի մշակությունը: Դ. Աղայանը, անդրադառնալով Բաֆֆու նամակաշարի բովանդակային հիմքերին, հակադարձում է. «Մենք գրաբարից կլիմենք, ինչ որ կլիմվի, կուտենք, ինչ որ կարելի է ուտել և մարսել, բայց ոչ կուտենք և ոչ կլիմենք՝ անմարս բաները»<sup>3</sup>: Այստեղ գրողի նամակաշարը կենսական-քաղաքական խնդիրների մշակման ու քննարկման հարթակ է հանդիսացել:

**Տարբեր մասնագիտության տեր անձանց նամակներ: 1868թ.**

Կիրակոս Ղազանյանը ուխտավորների մի խմբի հետ եկել է Ս. Էջմիածին՝ ներկա լինելու Գևորգ Դ. կաթողիկոսի կատարած մյուռոնօրհնությանը և հրատարակել «Ուխտավորի նամակներ» շարքը: Նամակների հասցեատերը ընթերցողն է. «Կը փափաքիմ, սիրելի՛ ընթերցողք, որ դուք ալ պատեհութիւն ունենաք վայելելու մի այսպիսի Ս. Աթոռի տեսութիւն, որ լի է բազում հին և նոր յիշատակներով...»<sup>4</sup>: Սրանք ըստ էության ուղեգրական նկարագրություններ են, որոնք կառուցված են նամականու կաղապարով: Ձ նամակն սկսվում է բնության գողտրիկ նկարագրությամբ. «Էջմիածին, Վաղարշապատ. 1868, հոկտեմբեր.

աշնան միջին ամիսն ենք և օդերու յարմար ժամանակում. հովեր փչում են անուշիկ և զով: Առաւօտեան արեւու ճառագայթ սփռեր իր լոյս, գոյն և ջերմութիւն ի վերայ խորհրդաւոր դաշտին Եղիվարդ, Մուղնի, Օշական, Աշտարակ, Վաղարշապատ և այլ գիւղերի հաւք և թռչունք երգում են քաղցրիկ բնական նուագարանով, վճիտ առուակներ հոսում և կարկաչում են և օձապտոյտ գնում են»<sup>5</sup>: Նամակի հոսքերում տեղ է տրված նաև Վեհափառի դիմանկարին. «Վեհափառի գլխին կար մի ամպհովանի զարդարուն, որ բռնած էին չորս յատուկ անձինք՝ երգելով մտան յեկեղեցի.

<sup>2</sup> Տերտերյան Ա., Հայ կլասիկներ, Ե., 1944, էջ 177:

<sup>3</sup> «Տարագ», 1890, հմ. 5, էջ 83:

<sup>4</sup> «Էջմիածին», 2008, Թ, էջ 91:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 88:

Վեհափառը պատարագիչ էր... »<sup>6</sup>:

Ուշագրավ են Արամ Մանուկյան հեղափոխականի նամակները, որոնք լույս են սփռում այն բախտորոշ ժամանակաշրջանի վրա, որի ընթացքում տեղի է ունեցել Վանի 1915թ. ապրիլյան հերոսամարտը:

**Գրողների նամակներ:** Հայ գրականության, մշակույթի պատմության համար կարևոր նշանակություն ունի գրողների նամակագրությունը: Նամակներում հեղինակները շոշափում են առանձին խնդիրներ, ինչը պայմանավորված է նրանցից յուրաքանչյուրի գործունեության ոլորտով, մտերմության աստիճանով և հետաքրքրությունների շրջանակով (այդպիսին են Ալ. Ծատուրյանի, Նար-Ղոսի, Զ. Եսայանի, Համաստեղի, արևմտահայ գրողների և այլոց նամակները): Այսպիսի նամակներում երևում են հեղինակի հոգեվիճակն ու տրամադրությունը: Օրինակ՝ արևմտահայ գրողների (Սիամանթո, Գ. Զոհրապ, Ռ. Սևակ) առաջին տարիների նամակները հուսադրող են եղել, ցնծալից, մինչդեռ պատերազմի նախօրեի նամակները կրել են գալիք ողբերգության սարսուռը:

**Նամակները՝ որպես գեղարվեստական գրականության կամ գեղարվեստական վավերագրության կառուցվածքային տարրեր:** Հայ գրականության մեջ նամակի ձևը օգտագործվել է դեռևս 5-րդ դարում: Մ. Խորենացին «Հայոց պատմության» մեջ գետեղել է բազմաթիվ թուղթ-նամակներ: Հայտնի են Ղ. Փարպեցու «Թուղթը», Ն. Շնորհալու «Թղթերը» և այլն:

Ընդհանրապես նամակը կարելի է համարել մենախոսության տեսակ: Այն գրություն է բացակա անձին որևէ բան հաղորդելու համար: Իհարկե, սխալ կլինի նամակը միանշանակ մենախոսություն համարել: Այդ գրավոր խոսքը մենախոսություն է ժամանակային առումով: Երբ որ հասցեատերն ստանում է նամակը և գրում պատասխանը, արդեն այն դառնում է երկխոսության մի եզրը: Համբոյի նամակը մինչ Գիքորի ընթերցելը մենախոսություն է, իսկ երբ Գիքորը կարդում է նամակը, այն դառնում է թերի երկխոսություն: Նամակը պատմվածքին հաղորդում է բնականություն և ներքին դրամատիզմ: Համբոյի մտքերն ու իրավիճակը բացահայտելիս զգալի դեր է կատարում Հ շաղկապը, որը կրկնվում է յոթ անգամ: Հետաքրքրական է նաև, որ «Տեղներս շատ նեղ ա», «Եվ Նանն ու Զանին տկլոր են» նախադասությունները կրկնվում են երկու անգամ, որովհետև անհանգստություն ունի նամակագիրը: Նամակում խառնված են բարբառը, գրաբարի ու խոսակցական ձևերը (խարջ, ի քաղաքն, տեղներս

---

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 89:

նաղ ա):

Հ. Քոչարի «Գեներալի քույրը» պատմվածքում երկխոսություն է ընթանում նամակի ձևով: Անահիտի նամակը ծավալուն է: Երբեմն նա օգտագործում է հրամայական եղանակի բայաձևեր, որոնք վերածվում են պահանջ-խնդրանքի. «Պատասխանեցե՛ք ինձ թեկուզ երկու բառով: Ես երջանիկ եմ, որ Դուք գոյություն ունեք աշխարհում, որ կա մեր նահապետական տոհմի ազգանունը կրող գորավար»:

Հայ գրականության մեջ նամակնու ձևով են գրված շատ ստեղծագործություններ: Սրբուհի Տյուսաբի «Մայտա»-ն նամակ-վեպ է, Նար-Դոսի «Աննա Մարոյան»-ը նամակ վիպակ:

Ժամանակակից հայ պատմվածքը դրսևորում է ներժանրային հարուստ բազմազանություն: Տարբեր պատմվածքներում օգտագործված են նամակի և օրագրության կոմպոզիցիոն միջոցներ (Վ. Իսրայելյան «Ֆեսուկ», Ա. Պաչյան «Ռոբինզոն» և այլն): Այդպիսի երկերը երբեմն չեն ճանաչում կաղապարված կանոններ և ունեն ներժանրային բազմազանություն: Սա իրապես նշանակում է, որ ժանրի սահմանները կարող են լինել հարաբերական, դրսևորման ձևերը՝ բազմազան:

Նամակը որպես գեղարվեստական հնար, կարող է կիրառվել նաև բանաստեղծական խոսքում: Մփյուռքահայ բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանի նշանավոր բանաստեղծությունը վերնագրված է «Նամակ առ Հայաստան»: Սա նամակ-մենախոսություն է, որտեղ երևում են բանաստեղծուհու ապրումներն ու խոհերը, տազնապներն ու ուրախությունը: Բանաստեղծության մեջ շատ են կիրառված անձնական դերանուններ. առկա է ես-դու հակադրությունը<sup>7</sup>:

Հաճախ առանձին նամակներ այնքան սրտառուչ են գրված լինում, որ նաև անձանոթի հետաքրքրությունն են շարժում: Այդպիսին են նշանավոր մարդկանց նամակները՝ ուղղված իրենց զավակներին: Նամակի դասական օրինակներ են Չարլի Չապլինի նամակը իր դստերը՝ Ջերալդինային, Ջեյ Լոնդոնի նամակը դստերը՝ Ջոանին, Ա. Իսահակյանի նամակը որդուն՝ Վիզենին և այլն:

**Բաց նամակներ:** Նամակի ձևերից մեկը բաց նամակն է: Այն նույնպես ունի իր հասցեատերը, սակայն ներկայացվում է հրապարակավ, որովհետև հեղինակը էական հարց է արձարծում: Բաց նամակը հրապարակախոսական բնույթ ունի և հանրամատչելի է իր բառապաշարով: Այստեղ կարևորվում է հասարակական հնչեղություն ունեցող ասելիքը: Այդպիսին կարելի է համարել Ջորի Բալայանի բաց

---

<sup>7</sup> Գալստյան Ա., Երկխոսությունը ժամանակակից հայերենում, Ե., 2003, էջ 104-105:

նամակը՝ հասցեագրված նորապսակներին, Լ. Կարապետյանի բաց նամակը հասցեագրված Ղուկաս Սիրունյանին: Այդպիսի նամակներում երբեմն ի հայտ են գալիս հուշագրության դրսևորումներ. «Հիշում եմ՝ հոգիդ միանգամից փառավորվեց, երբ Սասնա ազգային հանդերձանքներով կահավորված սրահում հենց սկզբից երեխաները մեզ ողջունեցին ազգագրական երգ ու պարով, ապա և քո հայրենախոս բանաստեղծություններով»:<sup>8</sup>

**Կեղծ նամակներ:** Իրականում, ինչպես ընդունված է նամականուն վերաբերող ուսումնասիրություններում, կարող են լինել նաև, այսպես կոչված, կեղծ նամակներ (պսևդոնամակներ): Ա. Պուշկինի բանաստեղծական հայեցակարգը, գրողի մենախոսությունները լույս են տեսել նրա մտերմիկ գրուցակից Ա. Սմիռնովայի նամակներում վերջինիս մահից հետո: Դրանք հրատարակվել են հեղինակի դստեր՝ Օ. Սմիռնովայի կողմից: Սակայն մի քանի տարի անց պարզվել է, որ նամակների մի մասը կեղծված են: Այս դեպքում նամակագիրներն ունենում են որոշակի կաշկանդումներ:

XX դ. գեղանկարչության խոշորագույն դեմքերից մեկի՝ Արշիլ Գորկու նամակներն առաջին անգամ ոչ ամբողջությամբ տպագրվել են «Արարատ» ամսագրի հատուկ համարում (Բոստոն, 1971): Կարծիքներ են շրջանառվում, որ որոշ նամակներում կան հավելումներ, իսկ մի քանի գրառումների բնօրինակները բացակայում են: Խոսք կա նաև այն մասին, թե դրանք ոչ թե պակաս են կամ ինչ-ինչ պատճառներով չկան, այլ հորինվել են նկարչի քրոջ որդու՝ Կ. Մուրադյանի կողմից: Մի առիթով վերջինս նշել է, որ իր մոտ պահված նամակներում որոշ անձանց մասին կան անբարենպաստ արտահայտություններ, և ինքը չէր ցանկացել, որ դրանք հանրությանը ներկայացվեին<sup>9</sup>:

Կան գրական նամակների այլ տեսակներ ևս, օրինակ՝ էլեկտրոնային նամակները, որոնք սովորաբար չունեն ժամանակի և տարածության ինդիք: Եթե համեմատական վերլուծության ենթարկենք նամականու, հուշերի, և օրագրերի տարածաժամանակային սահմանները, ապա կնկատենք որոշակի տարբերություններ. նամականու հեղինակը գրուցում է ներկայում՝ ի տարբերություն հուշագրի, որը գրուցում է իր ապագայի ընթերցողի հետ, իսկ օրագրողի գրառումների հասցեատերը հենց ինքն է թե՛ ներկայում, թե՛ ապագայում և թե՛ նույնիսկ անցյալում:

Ի՞նչ լեզվական հիմքերով են կառուցվում նամակները: Նամակի

<sup>8</sup> «Գրական թերթ», 2014, հմ.18, էջ 4:

<sup>9</sup> Գորկի Ա., Նամակներ, Ե., 2005, էջ 6:

հեղինակը՝ որպես լեզվական անհատ, ներկայացնում է կյանքի տարբեր իրավիճակներ, անձնական կարծիքներ և ապրումներ: Նկատենք, որ նամակների տեքստերի նախադասությունների կառուցվածքային ընտրությունը նախևառաջ կախված է հեղինակների ոճերից: Նամակներում առկա է հեղինակի անհատական կնիքը: Նամակագիրներն ազատ են քերականական պարտադիր բանաձևումներից և նորմերից և առանձնանում են իրենց ստեղծագործական հնարավորություններով և անհատական-ոճական կողմերով:

Այդուհանդերձ կան կառուցվածքային-իմաստային որոշակի առանձնահատկություններ, որոնք բնորոշում են գրական այս տեսակը:

Նամականու հոսքերում ցայտուն ընդգծվում են դիմելվածը, դերանունների և բայերի երկրորդ դեմքի կիրառությունները, հեղինակի խոսքին բնորոշ ինքնատիպ հնչերանգը: Քննության առարկա են դառնում նաև նրանցում գործածվող հատկանունները: Դիտարկվում են ոչ միայն անձնանուններ, այլև քաղաքների, փողոցների անուններ և հասցեներ<sup>10</sup>:

Հետաքրքրական է նաև նամականու ոճաբանությունը, որը այլ ուսումնասիրության նյութ է: Ինչպես նշում է լեզվաբան Օ. Բաբայանը, հրապարակախոսական գրքերը, նամակներն առավել շատ են պարունակում փոխաբերություններ և համեմատություններ, որովհետև հրապարակախոսական տարրեր ունենալով հանդերձ մոտենում են գեղարվեստական ոճին<sup>11</sup>: Օրինակ՝ Ա. Ծատուրյանի՝ Մկրտիչ Բարխուդարյանին հասցեագրված նամակում կարդում ենք. «Նար-Դոսի և Մուրացանի մեջ Ալայյան սարեր կան: Նար-Դոսը մի համեստ տղա է, իսկ Մուրացանը՝ գոռոզ Բել»<sup>12</sup>:

Նամակներում առկա են նաև հարցականության դրսևորումներ. «Ինչպե՞ս է ընտանիքդ»: «Հիշո՞ւմ ես նաև իմ մարգարեությունը»<sup>13</sup>:

### **Եզրակացություններ**

Թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Գրողների նամակաշարերը կարևոր են հայ գրականության, մշակույթի պատմության համար: Նրանցում շոշափված թեկուզ մասնավոր,

---

<sup>10</sup> Богданова Е., Языковые особенности жанра дневника//Филологические науки. Вопросы теории и практики. Тамбов, 2008, т.1, էջեր 10, 29:

<sup>11</sup> Բաբայան Օ., Փոխաբերությունը արդի հայերենում, Ե., 2004, էջ 112:

<sup>12</sup> Գրական ժառանգություն, Գիրք Ա., Ե., 1940, էջ 27:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 38:

սակայն հանրությանը հուզող խնդիրները հեղինակի հոգեվիճակն ու տրամադրությունն են փոխանցում ընթերցողին:

2. Նամակներն իրենց կազմաբանությամբ, ընթերցողին ուղղված հարցադրումներով առավելաբար երկխոսական բնույթ ունեն:

3. Մեծ կտավի որոշ նամակներ կարելի է համարել գեղարվեստական գրականության կամ գեղարվեստական վավերագրության կառուցվածքային տարրեր:

4. Նամականու ոճաբանությունը հրապարակախոսական տարրեր ունենալով հանդերձ ունի լեզվական-արտահայտչական զգալի դրսևորումներ (ես-դու անձնական դերանունների հակադրություն, մակդիրների, փոխաբերությունների առատություն և այլն):

5. Մեր ընդհանուր եզրակացությունն այն է, որ որոշ մասնագետներ նամակների մի մասն ըստ էության դասում են վավերագրական գրականության շարքում: Այդուհանդերձ նշենք, որ նամակներն իրենց կազմաբանությամբ երկպլան են: Դրանք ունեն ն՝ երկխոսության, ն՝ մենախոսության շերտեր: Նամակներում սովորաբար չկան ճիգ ու ջանք, չկան ժեստային դրսևորումներ:

Այսպիսով նամակների տարրեր տեսակներն իրենց ընդհանրության մեջ ունեն կառուցվածքային և լեզվական էական տարրերություններ:

**Ашот Галстян**

### **Литературная корреспонденция: структура и язык**

#### **Заключение**

**Ключевые слова и выражения:** литературная корреспонденция, открытое письмо, фальшивое письмо, структура, диалог, метафора, сравнение.

В результате изучения темы мы пришли к следующим выводам.

1. Письма писателей имеют важное значение для истории армянской литературы и культуры. Вопросы, затронутые в них, даже если частные, но волнующие общественность, передают читателю душевное состояние и настроение автора.

2. По своему составу и вопросам, адресованным читателю, письма имеют в основном характер диалога.

3. Некоторые крупномасштабные письма могут считаться строительными элементами художественной или художественно-документальной литературы.

4. Стилистика коллекции писем, имея элементы публичного выступления, представляет значительные языково-экспрессивные

проявления (контраст личных местоимений я-ты, обилие наречий, фразеологизмов и др.).

5. Наш общий вывод состоит в том, что некоторые специалисты считают часть писем документальной литературой. Однако заметим, что письма двойки по своей структуре. В них есть слои как диалогов, так и монологов. В письмах обычно нет ни усилий, ни старания, нет проявления жестов.

Таким образом, разные типы писем, при своей общности, имеют структурные и языковые различия.

Ashot Galstyan

### Literary correspondence: structure and language

#### Conclusions

**Key words and expressions:** literary correspondence, open letter, false letter, structure, dialogue, metaphor, comparison.

As a result of studying the topic, we came to the following conclusions.

1. Letters of writers are of great importance for the history of Armenian literature and culture. The issues raised in them, even if private, but of concern to the public, convey to the reader the state of mind and mood of the author.

2. In terms of their composition and questions addressed to the reader, the letters have mainly the nature of a dialogue.

3. Some large-scale letters can be considered the building blocks of fiction or documentary-fiction.

4. The style of the collection of letters, representing elements of public speaking, has significant linguistic and expressive manifestations (contrast of personal pronouns I-you, abundance of adverbs, phraseologisms, etc.).

5. Our general conclusion is that some experts consider part of the letters to be documentary literature. However, we must note that the letters are twofold in their structure. They have layers of both dialogue and monologue. In letters, there is usually no effort, no labor, no gestures.

Thus, different types of letters, despite their generality, have structural and linguistic differences.

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարսյան Օ., Փոխաբերությունը արդի հայերենում, Ե., 2004:
2. Գալստյան Ա., Երկխոսությունը ժամանակակից հայերենում, Ե., 2003:

3. Գորկի Ա., Նամակներ, Ե., 2005:
4. «Գրական թերթ», 2014, հմ.18:
5. Գրական ժառանգություն, Գիրք Ա., Ե., 1940:
6. «Էջմիածին», 2008, Թ:
7. Ջրբաշյան Է., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, Ե., 1972:
8. «Տարազ», 1890, հմ. 5:
9. Տերտերյան Ա., Հայ կլասիկներ, Ե., 1944:
10. Богданова Е., Языковые особенности жанра дневника//Филологические науки. Вопросы теории и практики. Тамбов, 2008, т.1, էջ 28-33:

*Խմբագրություն է ուղարկվել 02.11.2022թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 15.11. 2022թ.*

*Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.*

**ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Վանաձորի Հովհաննես Թումանյանի  
անվան պետական համալսարան  
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
Էլխաւցէ՝ [gxachatryan@yahoo.com](mailto:gxachatryan@yahoo.com)

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌ-ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ամփոփում**

Միջին հայերենի հաղորդակցական միավորների շարքում առկա են նաև բառ-նախադասություններ, որոնք, ինչպես անվանական միակզմ կառույցները խոսքի ոճավորման լավագույն միջոց են. նրանց կիրառությամբ խոսողը համառոտում է իր ասելիքը՝ խուսափելով ընդարձակ նախադասություններից:

Միջին հայերենում բառ-նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է հաստատական և ժխտական վերաբերականներով, որոնք հիմնականում ավանդվել են գրաբարից: Արտահայտչական բառ-նախադասություններ չեն հանդիպում:

Բառ-նախադասությունները միջին հայերենում լայն կիրառություն չունեն, ինչը պայմանավորված է ոչ միայն այդ նախադասությունների արտահայտության սահմանափակ միջոցներով, այլև ավանդված սկզբնաղբյուրների բովանդակությամբ: Բանն այն է՝ միջին հայերենում բառ-նախադասությունները գործածվում են հիմնականում այնպիսի սկզբնաղբյուրներում, որոնցում առկա են երկխոսություններ, մասնավորապես՝ ուղղակիորեն մեջբերվող պատասխանական խոսքեր:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** միակզմ նախադասություն, բառ-նախադասություն, գերադաս անդամ, ձայնարկություն, գրաբար, միջին հայերեն, զգացական և դատողական վերաբերմունք:

**Ներածություն**

Որպես հաղորդակցական միավոր՝ բառ-նախադասությունները հայ լեզվաբանների ուսումնասիրության առարկա են անցյալ դարակեսից: Լեզվական այդ իրողությունը հայ լեզվաբաններից առաջինը նկատել է Գ. Ղափանցյանը, սակայն ելնելով իր աշխատության մեջ հետապնդվող նպատակադրումներից՝ նա ոչ թե խորապես քննել, այլ միակզմ նախադասությունների շարքում բերել է նաև բառ-նախադասությունների

օրինակներ<sup>1</sup>: Թեն Գ. Ղափանցյանը գործածում է *բառ-նախադասություն* եզրույթը, սակայն դրանով նկատի ունի մեկ բառով արտահայտված բոլոր միակազմ նախադասությունները, որոնցում «գործողությունը ոչ թե տրամաբանական ակցիա է, այլ ավելի շուտ կամային-զգայական արտահայտություն»<sup>2</sup> անկախ այն բանից՝ ինչ խոսքի մասով է արտահայտված նրանց գերադաս անդամը: Պատահական չէ, որ լեզվաբանը բառ-նախադասությունների շարքում բերում է ոչ միայն ոչ նյութական բառերով, այլև գոյականով, ածականով և բայով արտահայտված միակազմ հաղորդակցական միավորներ, ինչպես «թե՛յ» («чаша»-կայարանում), «գո դը, գողը» ..., - «չաղմկե՛լ», «զգաստ»<sup>3</sup>, «լռություն, սս, կամաց, մտիկ, չծխե՛լ (բայ է), ավստս ...»<sup>4</sup> և այլն:

Ժամանակակից հայերենի միակազմ կառույցները (այդ թվում նաև բառ-նախադասությունները) առաջին անգամ ձևախմբատային դասակարգման և համակողմանի վերլուծության է ենթարկել Վ. Առաքելյանը<sup>5</sup>: Հաշվի առնելով ռուս շարահյուսագետների (Ա. Շախմատով, Վ. Վինոգրադով, Ա. Պեշկովսկի և այլք) առաջ քաշած սկզբունքային դրույթները՝ Վ. Առաքելյանը ժամանակակից հայերենում առանձնացնում է միակազմ նախադասությունների երեք տեսակ՝ բայական, անվանական և բառ-նախադասություն<sup>6</sup>: Ըստ լեզվաբանի՝ ա) բառ-նախադասությունների գերադասանդամ կարող են դառնալ այն «բառերը կամ առանձին մասերի չբաժանվող ամբողջական բառակապակցությունները, որոնք լրացումներ չեն ընդունում .... »<sup>7</sup>, բ) ժամանակակից հայերենի բառ-նախադասությունները լինում են *հաստատական, ժխտական, հարցական, հորդորական* և *արտահայտչական* (վերջիններն արտահայտվում են «ձայնարկություններով կամ դրանց մոտիկ բառերով»<sup>8</sup>):

<sup>1</sup> Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ. I, Ե., 1939, էջ 170:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 172:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 168:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 174:

<sup>5</sup> Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Ե., 1964, էջ 11-57:

<sup>6</sup> Վ. Առաքելյանը դրանք անվանում է *բայական, անվանական* և *բառական* նկատելով, որ վերջինս կոչվում է նաև բառ-նախադասություն [տե՛ս Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջ 12]: Հետագայում այդ նախադասություններն ինքն էլ է անվանում բառ-նախադասություն[տե՛ս Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոչյան Վ., Հայոց լեզու, II մաս, Շարահյուսություն, Ե., 1975, էջեր 276, 290-293]:

<sup>7</sup> Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջեր 52, 1, 290:

<sup>8</sup> Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջ, 57:

Ի տարբերություն Վ.Առաքելյանի, որը բառ-նախադասությունների արտահայտման միջոց էր համարում թե՛ վերաբերականներ ու ձայնարկություններ և թե դրանց մոտիկ բառեր՝ Ս. Գյուլբուդադյանը հստակեցնում է, որ ժամանակակից հայերենի բառ-նախադասությունների գերադասանդամկարող են դառնալ բացառապես վերաբերականներն ու ձայնարկությունները<sup>9</sup> : Ավելի ուշ նա բառ-նախադասությունները համարում է ոչ թե միակազմ նախադասությունների առանձին տեսակ, այլ անդամ նախադասության ենթատեսակներից մեկը<sup>10</sup>:

Բառ-նախադասությունները քննության է առել նաև տողերիս հեղինակը՝ անդրադառնալով գրաբարի համապատասխան լեզվական իրողություններին<sup>11</sup>:

Միջին հայերենի բառ-նախադասություններն առայսօր քննության առարկա չեն դարձել. «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության՝ միջին հայերենի պարզ նախադասության շարահյուսական համակարգին նվիրված բաժնում Պ.Վարդապետյանը ներկայացնում է միայն բայական և անվանական միակազմ կառույցներ<sup>12</sup>: Կարծում ենք՝ դա պայմանավորված է Պ.Վարդապետյանի առաջադիր խնդիրներով. նա միջին հայերենի միակազմ նախադասությունները ենթարկել է ոչ թե առանձին ծավալուն քննության, այլ դրանք ընդհանուր գծերով ներկայացրել է գրական հայերենի հիշյալ շրջանի պարզ նախադասությունների սահմաններում:

Հոդվածում նպատակ է հետապնդվում ներկայացնելու միջին հայերենի բառ-նախադասությունների արտահայտության և բովանդակության պլանների ամբողջական նկարագիրը, որն իրականացնելու համար լուծել ենք հետևյալ խնդիրները՝ ա) միջինհայերենյան աղբյուրներից առանձնացնել բառ-նախադասությունները, բ) ուսումնասիրել և դասակարգել դրանք՝ ըստ կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունների:

---

<sup>9</sup> Գյուլբուդադյան Ս., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Ե., 1967, էջ 196:

<sup>10</sup> Գյուլբուդադյան Ս., Ժամանակակից հայերենի շարահյուսություն (պարզ նախադասություն), Ե., 1988, էջեր 122, 137-139:

<sup>11</sup> Խաչատրյան Գ., Գրաբարի միակազմ նախադասությունները, Ե., 2002, էջ 200-204:

<sup>12</sup> Վարդապետյան Պ., Գրական միջին հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն (Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Ե. 1975, էջ 134-141:

**Մեթոդաբանություն**

Աշխատանքը հիմնականում կատարել ենք համաժամանակյա նկարագրության, առանձին դեպքերում՝ համեմատության, վերլուծական և համադրության մեթոդներով:

\*\*\*

**Բառ-նախադասությունները միջին հայերենի հաղորդակցական միավորների շարքում:** Հաղորդակցումն իրականանում է պարզ և բարդ նախադասությունների միջոցով: Միջին հայերենի հաղորդակցական միավորներից է նաև բառ-նախադասությունը, որը պարզ նախադասության երկու հիմնական տեսակներից մեկի՝ միակազմ նախադասությունների մի ենթատեսակն է: Բառ-նախադասությունները մեկ բառով արտահայտված գերադաս անդամ ունեցող այն միակազմ կառույցներն են, որոնք ցույց են տալիս խոսողի, խոսակցի կամ այլ անձի դատողական կամ զգացական վերաբերմունք: Օրինակ՝ Եվկոծեցին վասն նորա ամենայն ազգք երկրի: *Այո՛, ամէն* (ՆԼ, 33, 4): Յայնժամ որ բժշկեցան, ասէ. Ո՛չ տեսանէք զուրբ առաքեալն Պաղոս և զվարդապետն Գեորգ ընդ նմա: Եւ ասեն. *Ոչ:* (ՊՎ, 424): Եւ ասէ աղուէսն զաղտ ՚ի մարդն, թէ ինձ .Բ. շէրտ պանիր բեր. որ քեզ լաւ դատաստան անեմ. եւ ասաց լծվարն. *այո՛, քեզ տկով պանիր բերեմ* (ՎԱԱ)<sup>13</sup>:

Խոսողի, խոսակցի կամ այլ անձի դատողական կամ զգացական վերաբերմունք կարող են ցույց տալ թե՛ նյութական և թե՛ ոչ նյութական իմաստով բնութագրվող խոսքի մասեր, սակայն ի տարբերություն վերաբերականների և ձայնարկությունների՝ նյութական խոսքի մասերով արտահայտված՝

ա) վերաբերմունքը կամ զգացողությունն ունի շոշափելի իմաստ՝ Ահա մեծ ամօթ է ինձ (Հ, 835):

բ) գերադաս անդամն անհրաժեշտության դեպքում կարող է լրացում պահանջել, ինչպես՝ Եւ նա .... ասէ, կարիքաջ, ո՛վ ագբաւ, բայց ՚ի մտաց պակաս ես (ՎԱԱ):

Ասվածն ինքնին նշանակում է, որ բառ-նախադասությունների գերադաս անդամը կարող է արտահայտվել միայն ոչ նյութական (տվյալ դեպքում՝ դատողական կամ զգացական) իմաստ արտահայտող խոսքի

---

<sup>13</sup> Բնագրերում այս կարգի նախադասությունները հաճախ տրոհվում են ոչ թե վերջակետով կամ միջակետով, այլ ստորակետով: Ստորակետով տրոհված լինելու դեպքում մենք գնահատել ենք այդ միավորների հարաբերական անկախությունը՝ փորձելով այդ շարքից դուրս թողնել միջանկյալ բառի գործառնությունը հանդես եկող միավորները:

մասերով, այն է՝ վերաբերականներով և ձայնարկություններով, որոնք, որպես կանոն, չեն կարողանում կապակցվել այլ բառերի և դառնալ լրացում-լրացյալ կապակցության անդամ:

Ի տարբերություն բայական և անվանական միակազմ նախադասությունների, որոնք խոսքի մեջ կազմությամբ կարող են լինել թե՛ համառոտ և թե՛ ընդարձակ, այսինքն՝ արտահայտվել միայն գերադաս անդամով կամ գերադաս անդամով ու վերջինիս լրացում(ներ)ով՝ բառ-նախադասությունները կազմությամբ լինում են միայն համառոտ, ինչպես՝ Եւամենկերպովտղականօգտակարմօրնկայթնէ. *ամէն* (ԱՍՕԲ):

**Միջին հայերենի բառ-նախադասությունները:** Միջինհայերենյան բնագրերում բառ-նախադասություններն արտահայտվում են *ամէն*, *այո/այոյ* դրական և *չէ*, *քաւ լիցի* ժխտական վերաբերականներով: Օրինակ՝ Եւ ասէ առիւծն ՚ի սպառնալեալք, թէ դո՞ւ ես մարդն, որ նեղես զամենայն կենդանիս. եւ նայ ասէ. *այոյ՛* (ՎԱԱ): Գոհանալով փառաւորենք զնա, որ զարարածս ստեղծեաց եւ զամենեսեան կերակրեաց իւր շնորհիւն, եւ նմա փառք յաիտեանս. *ամէն* (ԱՍՕԲ): Ասացաք, թէ Չէ. մեք մեղաւոր մարդ ենք (ՎՎՀՊ): Ասէ ցնոսա «Փեղամբերն ձեր հրաման տուեալ է ձեզ չարագործութեան»: Ասեն ցնա «*քաւ լիցի*» (ԹՄԼԹ, 63)<sup>14</sup>:

Բառ-նախադասություններում առկա *ամէն*, *այո/այոյ* և *չէ* գերադաս անդամների մասին անհրաժեշտ է նշել, որ՝

1. գրաբարյան բնագրերում *ամէն* բառը գործածվում է թե՛ նախադաս շարադասությամբ (*Ամէն* ասեմ քեզ), թե՛ վերջադաս (Որ է օրինեալ յաիտեանս, *ամէն*): Բոլոր նախադաս կիրառություններում *ամէն* բառն ունի մակբայական նշանակություն, ինչի մասին վկայում են նաև ՆՀԲ-ի հեղինակները նույն բառահոդվածում. «Ի սկիզբն բանից նշանակել, Ստոյգ, ստուգութեամբ. արդարև. ճշմարտապես .... »՝ հավելելով, որ նախադասությունների վերջում *ամէն*-ը « .... նշանակել, Այո՛ այդպես է, և այդպես եղիցի»<sup>15</sup>: Ասվածից դժվար չէ հետևցնել, որ գրաբարում *ամէն* բառը վերջադաս կիրառությամբ ուներ նաև վերաբերականի նշանակություն<sup>16</sup> և կարող էր

<sup>14</sup> Հմմտ. .... որ տեսանէ զսիրելի որդի իւր ի տառապանս, ասէ. «*Քաւ լիցի քեզ*, որդի, հեռի ի քեզանէ» (ԴԶ, 73):

<sup>15</sup> ՆՀԲ, 91:

<sup>16</sup> ՆՀԲ-ի հեղինակները *ամէն*-ը համարում են մակբայ (տե՛ս հիշյալ բառահոդվածը) այն պատճառով, որ տվյալ ժամանակաշրջանում վերաբերականները առանձին խոսքի մաս չէին համարվում, այլ դիտվում էին մակբայի մի տեսակ:

կատարել բառ-նախադասության գերադաս անդամի գործառույթ<sup>17</sup>:

Միջինհայերենյան աղբյուրներում *ամէն* բառը գործածվում է միայն վերջադաս: Նրանով արտահայտված բառ-նախադասությունները կազմությանը համառոտ են, որով տեղի է ունենում խոսքի ոճավորում. այս կամ այն նախադասության վերջում *ամէն* գործածելով՝ հեղինակը խոսքին հաղորդում է լրացուցիչ հավաստիություն: Նկատենք, որ ոճավորման այս հնարքին սակավաթիվ հեղինակներ են դիմում, որոնցից են՝ Վարդան Այգեկցին և Ամիրդովլաթ Ամասիացին: Օրինակ՝ Եւ այսէ .Գ. բաժանումն բնութեան խառնուածոց կամօքն աստուծոյ. *ամէն* (ԱՍՕԲ): Եւ պարոն յոյժ սիրեաց զնա՛. փառք Աստուծոյ. ամէն (ՎԱԱ): Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս, *ամէն* (ՎԱԱ) և այլն:

2. Գրաբարյան բնագրերում *այո* բառը համարվում է մակբայ նույն հիմունքով, որով *ամէն* բառն է համարվում<sup>18</sup>: Հատկանշական է, որ *այո*-ն գերազանցապես մեկնաբանվում է այնպես, ինչպես *ամէն*-ը, այն է՝ «այդ այդպէս է», «արդարև», «յիրաւի», «ամէն ասեմ» իմաստներով, և, ինչպես *ամէն*-ը, գործածվում է թե՛ միայնակ, թե՛ կրկնությամբ: Հմմտ. *Այո՛ այո՛*, և եւ եմ ի նոցանէ (ՆՀԲ, 115) և *Ամէն ամէն* ասեմ ձեզ (ՆՀԲ)<sup>19</sup>:

Միջին հայերենում *այո*-ն գործածվում է երկխոսությունների պատասխանական խոսքերում, ինչպես՝ Եւ ասեն ծնողք նոցա ցնոսայ. լսէ՞ք զայն ձայնն. եւ նոքայ ասեն. *այոյ*. զի՞նչ է այն (ՎԱԱ): Յանժամ ասաց վարդապետն, թէ .... մեկ անկամ զԱստուած ՚ի միտդ ձգէ եւ ապայ առ զգանձն եւ զնայ. եւ ասաց. *այոյ*, հայր սուրբ (ՎԱԱ) և այլն: Լեզվական աղբյուրներում *այո*-ն սովորաբար հաջորդում է հեղինակի խոսքին՝ ուղղակիորեն մեջբերվող խոսքում գրավելով նախադաս կամ միջադաս դիրք, ինչպես՝ Ասէ աղուէն ընդ ագռան, թէ ձայնդ աղէկ է՝ *այոյ*. զամենայն տեղիքդ յաւել ունիս թագաւորութեան (ՎԱԱ): Եւ ասէ առուծն. միթէ դու եւ մարդն, որ փախուցանես զգազանս յանայպատէ. եւ նայ ասէ. *այոյ*, եւ եմ (ՎԱԱ): Պատասխանի ետ առիւծն հանդարտայբար եւ ասէ. *այոյ* յ, մի կորին ծնանիմ, բաց առիւծ ծնանիմ եւ ոչ աղուէս քան զքեզ (ՎԱԱ): Ասէ յընկերն իւր. եկ գաս, որ բաժանենք զկարպետն. եւ նայ ասէ. *այոյ* յ գամ. (ՎԱԱ):

3. *Չէ* ժխտական վերաբերականը լեզվական աղբյուրներում թեև հազվադեպ է, սակայն համոզված ենք, որ այն բանավոր խոսքում ամենա-

<sup>17</sup>Նույն բառահոդվածի բնագրային օրինակներից մեկում բերվում է *ամէն* բառի իմաստը՝ «է ամէնն եբրայեցի բարբառով, այո՛ և արդարև»: Իսկ մեկ այլ օրինակում՝ «Ձամէնն ոմանք՝ եղիցի թարգմանեցին, և կէսք՝ այո՛, և այլք՝ ճշմարիտ»:

<sup>18</sup>Տե՛ս ծան. 5:

<sup>19</sup> Հմմտ. *Ամէն, ամէնեւ եղիցի* (ՄԹ):

հաճախ գործածվող վերաբերականների շարքում է եղել դեռևս միջին հայերենի առաջին շրջանից: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ այդ բացառիկ վկայության հեղինակը 13-րդ դ. պատմիչ Վարդան Վանականն է, որը իր պատմության տվյալ հատվածը շարադրել է տվյալ ժամանակաշրջանի խոսակցական լեզվով:

4. *Քաւ լիցի* («ոչ», «աստված մի արասցե», «թող չլինի (այնպես)» և այլն) վերաբերականը միջին հայերենին ավանդվել է գրաբարից, որում *քաւ*-ը կայուն կապակցություն է ձևավորում ոչ միայն *լիցի* բայաձևի հետ, այլև գործածվում է թե՛ առանձին (*Քաւ ի մի երբէք դիցէ արքայ ի վերայ ծառայի իւրոյ այդպիսի բան*), թե՛ կրկնավոր բարդության կազմում (*քաւ քաւ*), թե՛ տրականով խնդրի հետ (*քաւ քեզ*) կատարելով անվանական կամ բառնախաղասության գերադաս անդամի գործառույթ<sup>20</sup>: Միջին հայերենում *քաւ լիցի*-ով արտահայտված բառ-նախաղասություններն ունեն ոճական արժեք և համարվում են գրաբարաբանության արտահայտություն:

Բառ-նախաղասությունները, ինչպես անվանական միակազմ կառույցները խոսքի ոճավորման լավագույն միջոց են. նրանց կիրառությամբ խոսողը համառոտում է իր ասելիքը՝ խուսափելով ընդարձակ նախաղասություններ գործածելուց:

Բառ-նախաղասությունները գործածվում են հիմնականում գեղարվեստական խոսքում, մասնավորապես՝ այնպիսի աղբյուրներում, որոնցում առկա են ուղղակիորեն մեջբերվող խոսքեր, քարոզներ, հրապարակային հայտարարություններ և այլն:

Ինչպես բայական անդամ և անվանական միակազմ նախաղասությունները, բառ-նախաղասությունները ևս միջին հայերենում գեղարվեստական երկին հաղորդում են հուզական շունչ:

Բառ-նախաղասությունները միջին հայերենում լայն կիրառություն չունեն, ինչը պայամավորված է նաև այդ նախաղասությունների արտահայտության սահմանափակ միջոցներով:

### Եզրակացություններ

1. Միջին հայերենի հաղորդակցական միավորների շարքում առկա են նաև բառ-նախաղասություններ: Նրանց գերադաս անդամն արտահայտվում է հաստատական և ժխտական վերաբերականներով, որոնք հիմնականում ավանդվել են գրաբարից:

---

<sup>20</sup> Տ՛ե՛ս ՆՀԲ-ի համապատասխան բառահոդվածը:

2. Միջին հայերենում բառ-նախադասությունները խոսքի ոճավորման լավագույն միջոց են, գործածվում են ուղղակիորեն մեջբերվող խոսքերում, հիմնականում՝ որպես պատասխանական խոսքեր:

3. Բառ-նախադասությունները միջին հայերենում լայն կիրառություն չունեն (արտահայտչական բառ-նախադասություններ ընդհանրապես չեն հանդիպում), ինչը պայամավորված է ոչ միայն այդ նախադասությունների արտահայտության սահմանափակ միջոցներով, այլև ավանդված սկզբնաղբյուրների բովանդակությամբ:

Гурген Хачатрян

### Слова-предложения в среднеармянском языке

#### Заключение

**Ключевые слова и выражения:** односоставное предложение, слово-предложение, главный член, междометие, грабар (древнеармянский язык), среднеармянский язык, чувственное и оценивающее отношение.

В ряду коммуникативных единиц среднеармянского языка выделяются также слова-предложения. Главный член в них выражается утвердительными и отрицательными модальными словами *սուէն* “аминь”, *այո* “да”, *չէ* “нет”, *բաւ լիցի* “не дай бог”, которые в основном пришли из грабара (древнеармянского языка). В среднеармянских источниках выраженные междометиями слова-предложения не встречаются.

Конечно, оценочное или эмоциональное отношение может быть также выражено знаменательными частями речи, однако, в отличие от модальных слов и междометий: а) выражение чувств или отношений знаменательными частями речи имеет вполне конкретное значение; б) при необходимости главный член может иметь при себе дополнение.

Сказанное само по себе означает, что главный член в словах-предложениях может быть выражен только частями речи, выражающими невещественное (в данном случае осуждающее или эмоциональное) значение, то есть модальным словом и междометием, которые, как правило, не могут быть связаны с другими словами и стать дополнением или дополняемым в словосочетании.

Слова-предложения, как и односоставные назывные конструкции, являются наилучшим средством стилизации речи: путем их использования говорящий выражается сжато, избегая распространенных предложений. Словапредложения используются в основном в художественной литературе, в частности в таких источниках, где встречаются проповедь, объявления,

диалоги, цитируются ответные слова говорящего и т.д. Подобно безличным глагольным и односоставным назывным предложениям, слова-предложения в среднеармянском тоже передают чувственность художественного произведения.

Слова-предложения не имеют широкого применения в среднеармянском, что объясняется не только ограниченностью их выразительных средств, но и содержанием традиционных источников.

Gurgen Khachatryan

### Word-sentences in middle armenian

#### Conclusions

**Key words and expressions:** one-part sentence, word-sentence, main member, interjection, Grabar (the Old Armenian language), the Middle Armenian language, sensual and appreciating perception.

Among the communicative units of the Middle Armenian language word-sentences are observed separately. The main member in them is expressed via affirmative and negative words *uult'u* "Amen", *այո* "Yes", *չէ* "No", *քաւ լիցի* "God forbid" which came mainly from Grabar (the Old Armenian language). In Middle Armenian sources expressive word-sentences are not found.

Of course, judgmental or emotional attitude can also be shown by parts of speech characterized by notional meanings, but unlike relative words and sounds, they are expressed by notional parts of speech: the attitude or feeling has a tangible meaning, b) the main (head) member may demand a complement if necessary.

What is said means that the main (head) member of word-sentences can be expressed only by parts of speech expressing immaterial (in this case, judgmental or emotional) meaning, that is, by conjuncts (disjuncts) and interjections, which, as a rule, cannot be connected to other words and become a member of a modifier-modified combination

The word-sentences, as well as one-part nominal structures, are the best means for speech-styling. Their application helps the speaker to be short, thus avoiding long, extended sentences. Word-sentences are used mainly in fiction, particularly in such sources where there are sermons, announcements, dialogues, quotations of the speakers' responses, etc. Just like impersonal verbal and one-part nominative sentences, the word-sentences in Middle Armenian represent the sensuality of the works of fiction.

The word-sentences are not widely used in Middle Armenian which is explained not only by the restriction of the expressive means, but also by the content of the traditional sources.

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, II մաս, Շարահյուսություն, Ե., 1975:
2. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Ե., 1964:
3. Գյուլբուրդյան Ս., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Ե., 1967:
4. Գյուլբուրդյան Ս., Ժամանակակից հայերենի շարահյուսություն (պարզ նախադասություն), Ե., 1988:
5. Խաչատրյան Գ., Գրաբարի միակազմ նախադասությունները, Ե., 2002:
6. Ղափանցյան Գ., Ընդհանուր լեզվաբանություն, հ. I, Ե., 1939:
7. Վարդապետյան Պ., Գրական միջին հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն (Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Ե. 1975, էջ 133-191):

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲՆԱԳՐԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱՕԲ – Ամիրտովյաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Ե., 1940:

ԴԶ – Դավիթ Զեյթունցի, Մեկնություն քերականի, Աշխատասիրությամբ Ե.Կ. Մելքոնյանի, Ե., 1981:

ԹՄԼԹ – Պատմություն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցոյ, Պարիս, 1860:

Հ – Հայրեններ, աշխատասիրությամբ Ա.Մնացականյանի, Ե., 1995:

ՄԹ – Մինաս Թոխաթեցի, Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ սաղասացներ, Վիեննա, 1921:

ՆԼ, ՅՅ – Ներսէս Լամբրոնացի, Յայտնություն Յովհաննու, Երուսաղէմ, 1906:

ՆՀԲ – Աւետիքեան Գ., Սիրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

ՊՎ – Պատմություն վարուց և երջանիկ և տիեզերալոյս բարբունոյն Գեորգեայ ծնընդեանն և սնընդեանն և գերահրաշ կատարմանն յունվար ի ԺԱ (Բանբեր մատենադարանի, №7, 1964):

ՎԱԱ – Վարդան Այգեկցի, Ժողովածոյ առակաց Վարդանայ

[https://hycatholic.ru/pro/biblioteca/%D5%8E%D4%B1%D5%90%D4%B4%D4%B1%D5%86\\_%D4%B1%D5%85%D4%B3%D4%B5%D4%BF%D5%91%D4%BB\\_%](https://hycatholic.ru/pro/biblioteca/%D5%8E%D4%B1%D5%90%D4%B4%D4%B1%D5%86_%D4%B1%D5%85%D4%B3%D4%B5%D4%BF%D5%91%D4%BB_%)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

-----  
D4%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%A1%D5%AE%D5%B8%D5%  
%B5\_%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D6%81\_%D5%8E%D5%  
A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5.pdf

ՎՎՀՊ – Վարդան Վանականի Հուարումն պատմութեան, Վենետիկ, 1862:

*Խմբագրություն է ուղարկվել 07.10.2022թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 23.10.2022թ.*

*Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.*

**ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ  
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ  
Էլհասուցե՝ [anahit.muradyan.1966@mail.ru](mailto:anahit.muradyan.1966@mail.ru)

**ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ ՀԱՄԱՂՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**Ամփոփում**

Աշխատանքում, ամփոփելով բայական հիմքերով կազմված բաղադրությունների բառակազմական կաղապարների ուսումնասիրության արդյունքները, կարելի է փաստել, որ բայական հիմքերը բավական ճկուն բառակազմական հնարավորություններ ունեն, և նրանցով կազմված նոր գոյականներն ու ածականները մեծապես հարստացնում են հայոց լեզվի բառային կազմը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենի բառակազմությանը մասնակցող հիմքերի զգալի մասը գրաբարյան ժառանգություն է: Բայական հիմքերի ձևաբանական կաղապարների մեջ առավել կենսունակ են **Գ + Բ, Ա + Բ, Մ + Բ** կաղապարները<sup>1</sup>: Այս կաղապարներով կազմված բարդ բառերը շարահյուսական հարաբերությունների տեսակետից արտահայտում են ենթակայի ու ստորոգյալի, որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատկացյալի, ինդրային և պարագայական իմաստներ:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** ածական, բայահիմք, գոյական, բարդություն, կաղապար:

**Ներածություն**

Լեզվի զարգացման արդի փուլում բայական գերադաս բաղադրիչով կազմված համադրական բարդությունները մեծ տեղ են գրավում ժամանակակից հայերենի բառային կազմում: Վերոհիշյալ բարդությունները կազմվում են ստորադաս բաղադրիչներ ունեցող համարյա բոլոր կաղապարներով, *կարող են լինել երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և քառաբաղադրիչ*: Ընդ որում նրանցում հիմնական իմաստի կրողը վերջին

---

<sup>1</sup> Անուն խոսքի մասերի և բայի զուգորդումից ստացած բարդությունների առանձնահատկությունների քննությանն անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածում (Տե՛ս, Ա. Մուրադյան, Բայական հիմքերով բարդությունները ժամանակակից հայերենում, Ե., 2014, Գիտական տեղեկագիր, էջ 93):

բաղադրիչն է, որը հանդես է գալիս երկու ձևով՝ բայարմատով կամ բայահիմքով:

Ըստ Հ.Աճառյանի՝ հայերենը «թեև շատ հարուստ է բարդությանց կողմից, բայց պահում է չափավորություն», որը նշանակում է, որ երկուսից ավելի բաղադրիչներով բարդ բառերը սակավաթիվ են: Ըստ Գ. Բ. Ջահուկյանի՝ հայերենի բարդությունների համար բնական է երկու բաղադրիչներից կազմված լինելը<sup>2</sup>:

*Նշենք, որ այնուամենայնիվ, եռաբաղադրիչ բարդությունները ևս հանգում են երկբաղադրիչ կազմությունների, քանի որ բառի մեջ ամեն դեպքում առանձնանում են երկու հիմքեր: Օրինակ՝ ջրածամացույց-ջր+ա+ժամացույց*

Փաստերը ցույց են տալիս, որ բայական գերադաս բաղադրիչները կենսունակ չեն գոյականներ կազմելիս, քանի որ այդպիսի կառուցվածք ունեցող բարդ բառերի մեծ մասն արտահայտում է հատկանշային հարաբերություն:

Ներկա հոդվածում ներկայացնում ենք բայական հիմքերով բարդությունների կազմության եղանակները, հիմքերի տեսակները, դրանց տարբերակային ձևերը, ձևաբանական կաղապարները, բաղադրիչների շարահյուսական և հոլովական հարաբերությունները: Բարդության մեջ սերող և բաղադրող հիմքերի առանձնացման հարցում մենք առաջնորդվում ենք Է.Աղայանի մոտեցմամբ. «բարդ բառերի վերջին բաղադրական հիմքը սովորաբար բաղադրող հիմքն է, իսկ դրան նախորդող հիմքը՝ սերող»<sup>3</sup>:

### **Մեթոդաբանություն**

Աշխատանքը կատարված է լեզվաբանական հետազոտության համաժամանակյա, այն է՝ նկարագրական մեթոդի արտաքին և ներքին մեկնաբանության եղանակներով:

\* \* \*

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից բարդությունների կազմության ժամանակ բայական բաղադրիչն ավելի

<sup>2</sup> Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ.3, Ե., 1957, էջ 141: Այս մասին տե՛ս

Գ. Բ. Ջահուկյան, ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 214: Լ. Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011, էջ 3:

<sup>3</sup> Է.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 248:

շատ հանդիպում է բաղադրող հիմքի դերում: Մա բացատրվում է նրանով, որ բուն կամ իսկական բարդության գերադաս անդամը երկրորդ բաղադրիչն է, իսկ առաջին բաղադրիչը՝ նրա լրացումը:

Ստորև ներկայացնում ենք այն խոսքի մասերի ձևաբանական կաղապարները, որոնց կազմությանը մասնակցում են բայական բաղադրիչներ:<sup>4</sup>

1. **Գ+Բ**

կաղապարի բաղադրիչների զուգադրման արդյունքում ստեղծվող նոր բառերը կարող են լինել և՛ գոյականներ, և՛ ածականներ: Այստեղ բարդության հիմնական իմաստն արտահայտում է բայարմատը, իսկ գոյական բաղադրիչը՝ տարբեր իմաստներով ու հարաբերություններով, լրացնում է նրան: «Բարդության ներսում,- գրում է Ս. Էլոյանը է,- գոյականով ու բայարմատով (բայահիմքով) բաղադրված բաղադրիչներն իմաստային առումով ունեն այնպիսի փոխհարաբերություններ, ինչպիսին ունի բայը կամ ստորոգյալը իր լրացումների ու ենթակայի հետ»<sup>5</sup>:

Այս կաղապարով գոյական բարդություններ են կազմվում ինչպես հոդակապով՝ *աստղագուշակ, արևակեզ, ատամնաբույժ, ակնաբույժ, ակնանետ, քանասեր, քանաստեղծ, քաժակակայ, դասախոս, գրավաճառ, երկրաշարժ, հարկահան, հարկատու, լարախաղաց, լրաբեր, ձկնակեր*, և այլն, այնպես էլ առանց հոդակապի՝ *խրատասաց, կայծեան, հավկիթ, հյուրընկալ, ձկնորս, ունկնդիր* և այլն:

Ի դեպ՝ այս կաղապարով ավելի շատ կազմվում են ածականներ: Վերջիններիս գերակշռությունը բացատրվում է բայարմատի արտահայտած գործողության ընդհանուր հատկանիշներով՝ *ազգադավ, ազգահալած, արյունախում, երազադատ, նեռադավան, թելատու, ծաղկահյուս, կարգապահ, կաշառակեր, հյուրասեր, մարդատար, մարդասեր, մեղսագործ, պատվաբեր, սրտաբուխ, սերմնագործ* և այլն:

2. **Ա+Բ** կաղապարով ժամանակակից հայերենում հիմնականում կազմվում են ածականներ՝ *դատարկախոս, երկարակյաց, թեթևասահ, կարճատև, հանդարտածուփ, հումակեր, մեծածախ, նրբահյուս, նորադավան, սակավակյաց, քաղցրաբուխ* և այլն: Հանդիպում են նաև գոյականներ՝ *բարեխոս, բարձրախոս, բարեկամ, հնավաճառ, ստախոս, ուղղաթիռ* և այլն, որոնք միաժամանակ կարող են գործածվել որպես ածականներ:

<sup>4</sup> Խոսքի մասերը նշվում են հետևյալ ձևով՝ **գ** (գոյական), **ա** (ածական), **բ** (բայ), **մ** (մակբայ), իսկ հոդակապը՝ + նշանով:

<sup>5</sup> Ս. Էլոյանը, Ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1963, էջ 333:

3. **Մ + Բ** կադապարով բացառապես ստացվում են ածականներ, քանի որ կառույցը պարունակում է հատկանշային իմաստ՝ **առաստարուխ, արագահոս, արագավագ, արագընթաց, հանկարծածին, հարատև, հավերժարուխ, մշտածածան, վաղահաս, վաղամեռ, վերընթաց** և այլն, սակայն հանդիպում են նաև գոյականներ՝ **առաջընթաց, առաջնեկ, հեռադետ, հեռախոս, հեռաչափ** և այլն:

Ուշագրավ են **թվական, դերանուն + բայական բաղադրիչ** կադապարները: Նշված խոսքի մասերը բառակազմությանը քիչ են մասնակցում և իսկական բարդության կառուցվածքում հանդես են գալիս միայն որպես առաջին բաղադրիչներ:

4. Դերանուններից բառակազմության տեսակետից շատ կենսունակ է **ինքը** դերանունը, օրինակ՝ **ինքնաբավ, ինքնաբույժ, ինքնագնաց, ինքնաբուխ, ինքնաեռ, ինքնաթիռ, ինքնաթափ, ինքնածին, ինքնահոս, ինքնամեծար, ինքնասեր, ինքնաստեղծ, ինքնասույգ, ինքնամոռաց** և այլն:

Պարզ երևում է, որ **ինքը** դերանունը երրորդ դեմքի իմաստ չի արտահայտում, այլ՝ երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողության ինքնին կատարվելը, ինչպես՝ **ինքնաթիռ = (ինքնիրեն թռչող)**, **ինքնահոս = (ինքնիրեն հոսող)** և այլն:

Ըստ Հ. Բարսեղյանի բառարանի տվյալների՝ նման կազմությունների թիվը ածանցների հետ շուրջ 650 է<sup>6</sup>, որոնք կա՛մ ածականներ են, կա՛մ գոյականներ:

Բառակազմական դրսևորումներով **ինքն** դերանունից քիչ է տարբերվում **յուր** դերանունը, որը, սակայն, արդի բառակազմության մեջ այլևս կենսունակ չէ: Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» **յուր + բայահիմք** կադապարով հանդիպել է 9 օրինակ, որոնք բոլորն էլ ածականներն են՝ **յուրաբնակ, յուրադիր, յուրածին, յուրակերտ, յուրահնար, յուրահոգ, յուրաշարժ, յուրաշեն, յուրաստեղծ**<sup>7</sup>:

Սյուս դերանուններով (**ողջ, ամեն, բոլոր, այլ, ես**) կազմությունները քանակով զիջում են վեր նշվածներին, թեև այստեղ էլ **Ղ + Բ** զուգորդումից հիմնականում ստացվում են ածականներ՝ **այլադավան, այլածին, այլամերժ, այլասեր, ամենագնաց, ամենագրավ, ամենակույ, ամենատես, բոլորանվեր, բոլորակերտ, բոլորաշեն, եսասեր, եսապաշտ, իրարամերժ, ողջանվեր, ողջախոհ, ողջակեզ** և այլն:

<sup>6</sup> Հ. Խ. Բարսեղյան, Հայերենի ուղղագրական, ուղղախոսական, տեմինաբանական բառարան, Ե., 1973, էջ 978:

<sup>7</sup> Էդ. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 1043:

5. **Թ + Բ** կազմություններում որպես առաջին բաղադրիչ հանդես են գալիս բոլոր թվականները. գերակշռում են մեկից ինը թվականներով բարդությունները, օր.՝ **եռաբաժան, եռահյուս, եռածալ, եռաշար, եռապտույտ, հնգասեր, հազարագետ, հազարախոս, միահավան, միագոչ, միախոս, միածին** և այլն:

Իրենց քանակային դրսևորումներով զգալիորեն զիջում են այն կաղապարները, որոնցում բայահիմքը հանդես է գալիս որպես գերադաս բաղադրիչ: Այսպես

1. **Բ + Գ** կաղապարով հիմնականում կազմվում են գոյականներ, որոնք բառակա-պակցության վերածելիս՝ անորոշ դերբայի սեռական հոլովածի իմաստ են ստանում, օր.՝ **անցագիր, գրասեղան, դիտակայան, էլակետ, զսպաշապիկ, ընտրարշավ, խաղառձ, պարասրահ, մրցահրավեր, քննաշրջան, փոխադրավարձ** և այլն,

2. **Բ + Ա** կաղապարով շատ քիչ բարդություններ են կազմվում, այն էլ միայն ածականներ: Գերակշռում են **-կից** արմատական և **-ուն (ակ)** ածանցավոր բաղադրիչներով կազմությունները, թեև կան նաև այլ հիմքերով ածականներ՝ **ընկալունակ, հարգարժան, մարտունակ, շարժակից, պաշտպանունակ, տեսարժան** և այլն: Հանդիպում են նաև գոյականներ՝ **գործազուրկ, գործակից, մրցակից** և այլն:

Ինչ վերաբերում է դերբայական սերող հիմք + բաղադրող հիմք կաղապարին, ապա պետք է նշել, որ ժամանակակից հայերենում այս կառույցով համադրական բարդությունների բառակազմությանն անկախ դերբայներից մասնակցում են անորոշը, ենթակայականը և հարակատարը, որոնք կազմում են անվանական խոսքի մասեր: Այս կազմությունների սերող հիմքում գործածության հաճախականություն ունեն **-գրել, -գործել, -խոսել, -մտածել, -նստել, -վարել, -ուտել** դերբայները, որոնց հետ բաղադրող հիմքում հաճախակի հանդես են գալիս **-ձև, -նյութ, -ոճ, -տեղ, -ցավ** և այլ հիմքերը՝ **գրելաձև, գրելաթուղթ, գրելառձ, գործելաշրջան, խոսելակերպ, խոսելաձև, խոսելացավ, մտածելակերպ, մտածելաձև, նստելաձև, նստելավարձ, նստելատեղ, պատմելաձև, պատմելառձ, վատելանյութ, վարվելաձև** և այլն:

Վերը բերված օրինակներից ակնհայտ է, որ անորոշ դերբայը, հանդես գալով սեռական հոլովի նշանակությամբ, բաղադրություններում դրսևորվում է մե՛րթ **գոյականի**, եթե բաղադրող հիմքը գոյական է (**գրելաձև - գրելու ձև, վարելահող-վարելու հող**), մե՛րթ **բայի** նշանակությամբ՝ դառնալով ինդրային լրացում, եթե բաղադրող հիմքը

բայական է (*գրոսասեր - գրոսնել սիրող, գրուցասեր - գրուցել սիրող, իշխելասեր - իշխել սիրող*) և այլն<sup>8</sup>:

Իսկ ենթակայական դերբայը բառակազմական կաղապարներում հանդես է գալիս երկակի կիրառությամբ՝

Ա. որպես բուն կամ իսկական բարդության սերող հիմք, օր.՝ *արարողակարգ, քերթողահայր, ծնողասեր, ծնողասպան, ծնողասպաշտ* և այլն,

Բ. որպես բուն կամ իսկական բարդության բաղադրող հիմք. ընդ որում այս կաղապարի բառերը կարելի է բաժանել երկու խմբի՝ բառեր, որոնք առաջացել են բառակապակցություններից՝ *հեռուստա-դիտող, ռադիոլսող, ռադիոսիող, կինոդիտող, իրավախախտող, լրագրող*, և բառեր, որոնք առաջացել են անորոշ դերբայից՝ *արդյունաբերող, արդյունահանող, գծագրող, մեքենագրող, մեղադրող, սղագրող, ուսումնասիրող* և այլն: Ինչպես երևում է օրինակներից ենթակայական դերբայով արտահայտված հիմքերն անվանական նշանակություն ունեն:

Ենթակայական դերբայի պես երկակի կիրառություններ ունի նաև հարակատարը, որի վերջավորությունը՝ *-ած* ածանցը, բայերից կազմում է բազմաթիվ ձևեր՝ ինչպես գործողության հետ կապված հատկանիշի, այնպես էլ անցյալ դերբայի նշանակությամբ<sup>9</sup>: Օրինակ՝ *գետնատարած, երկփեղկված, լիաբեռնված, ծանրաբեռնված, շահագրգռված*:

Հարկ է նշել, որ եթե բայական բաղադրիչը սերող հիմքում հանդես է գալիս բայահիմքի և դերբայական հիմքի ձևով, ապա բաղադրող հիմքում երևան է հանում տիպաբանական բազմազան տարբերակներ<sup>10</sup>, որոնց մեջ կարելի է առանձնացնել

1. մաքուր բայարմատով կազմված, որը համընկնում է պարզ բայերի ներկայի հիմքին՝ *աստվածասպաշտ, բանախոս, հերարձակ, հողակերտ, քարակոփ* և այլն,

2. գրաբարի պատճառական բայերի երկրորդ հիմքին համընկնող՝ *ամպահարույց, կիսակա-ռույց, վարձահատույց, խելակորույս, որդեկորույս, մատնացույց, ինքնուսույց* և այլն,

<sup>8</sup> Հ. Խ. Բարսեղյան, Հայերենի ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Ե., «Լույս» հրատ., 1973, էջ103:

<sup>9</sup> Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, էջ194:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ251:

3. անցյալ կատարյալի հիմքին համընկնող՝ **ազգուրաց, անձնամոռաց, արթաղաց, բանհիմաց, հեռասլաց, խրատասաց, նրբազգաց** և այլն,

4. բուն հրամայականի եզակի երկրորդ դեմքին համընկնող հիմքերի տեսակները: Առավել գործածական են **դիր** և **տուր** հիմքերը՝ **ուսադիր, որմնադիր, օրենսդիր, բնատուր, անձնատուր** և այլն:

Հաճախ բառաբարդման կամ ածանցման դեպքում, երբ բայական բաղադրիչը հանդես է գալիս բարդության բաղադրող հիմքում, բայական հիմքերում առաջանում են հնչյունափոխական երևույթները: Օրինակ՝ **ի > ը, ի > զրռ, ույ > ու, (ե) > ի, ու > ը, ու > վ** և այլն:<sup>11</sup>

Վերջապես, երբ բարդության բաղադրող հիմքն արտահայտվում է բայարմատով կամ բայահիմքով, նման բարդությունները բառակապակցությունների վերածելիս առաջին բաղադրիչը ստանում է զանազան հոլովական իմաստներ.

Ուղղական - հայցականի նշանակությամբ՝ **արթաղաց, խրատասաց, հարկատու, հուսահատ, սրտատրոփ, սրտամեռ, տնաքանդ, սանձարձակ, ուժասպառ** և այլն:

Սեռական - տրականի նշանակությամբ՝ **բուն սեռական՝ արքայանհիստ, դիմաշարժ, տրական՝ կենտրոնամետ, երկնահույ, չափահաս** և այլն:

Բացառականի նշանակությամբ՝ **հողմածեծ, ձայնագուրկ, սրտաբուխ, լեռնահոս, հողածին, մտահան, պաշտոնագուրկ** և այլն:

Գործիականի նշանակությամբ՝ **ամպասքող, ասֆալտապատ, զրահապատ, կավածեփ, մատախլապատ, գորգածածկ, մեքենագիր, ծաղկազարդ, ոսկեգօծ** և այլն:

Ներգոյականի նշանակությամբ՝ **գինեսույգ, ամրոցաբնակ, մտասույգ, լեռնաբնակ, մոխրաթավալ, խավարաբնակ** և այլն:

Հոլովման հարացույցի իմաստային բազմազանության հետ միասին բայականանհիմքերով բարդությունների բաղադրիչներն աչքի են ընկնում նաև շարահյուսական հարաբերությունների բազմազանությամբ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենում բավականին տարածված **գոյական** (մասամբ նաև այլ խոսքի մասերով) + **բայահիմք** կաղապարով կազմված բարդ բառերը շարահյուսական կապակցության վերածվելիս արտահայտում են՝

<sup>11</sup> Ա.Մուրադյան, Բայական հիմքերով բարդությունները ժամանակակից հայերենում, Գիտական տեղեկագիր, Ե., 2014, էջ 94:

ա) ենթակայի ու ստորոգյալի՝ **այգաբաց, արևածագ, արյունականգ, բուժայց, ձնհալ, գլխապտույտ, ամառնամուտ,**

բ) որոշիչ-որոշյալի՝ **սպրեչակերպ, գրելառճ, գրատախտակ, դիտակետ խոսելաձև, վառելանյութ, վառելափայտ, զսպաշապիկ, քնապարկ, ննջատոպրակ, նստելատեղ, սպասելավարձ, ճեմասրահ, հավաքատեղի:** Վերոհիշյալ կաղապարով բարդություններ են կազմվում բացառապես **անորոշ դերբայ + գոյական** զուգորդումից, որը պարզորոշ երևում է բարդությունները բառակապակցության վերածելիս, օր.՝ **քնելու պարկ, գրելու տախտակ, նստելու տեղ** և այլն:

գ) **հասկացուցիչ-հասկացյալի՝ արևադարձ, կրծքահեղձուկ, սրտխառնուք, երկրաշարժ** և այլն:

դ) խնդրային և պարագայական հարաբերություններ:

Խնդրային հարաբերությունների մեջ կարելի է առանձնացնել բազմաթիվ իմաստային խմբեր.

ա. Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչները սննդամթերքի անուններ կամ առարկաներ են՝ **գինեվաճառ, մսավաճառ, տոմսավաճառ, փայտահատ** և այլն:

բ. Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչները զանազան կենդանիների անուններ են՝ **անասնապահ, կովկիթ, տավարարած, մեղվապահ, շերամաբույծ** և այլ:

գ. Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչները երկնային մարմինների անուններ են՝ **ամպացիք, արևաչափ, լուսնագնաց, տիեզերագնաց** և այլն:

դ. Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչներն արվեստի տարբեր բնագավառների հետ կապված հասկացություններ են՝ **դուդուկահար, երգասաց, թատրոնասեր, դաշնակահար, տաղասաց, տաղերգու, դերակատար** և այլն:

Նկատելի է, որ վերոնշյալ բարդությունների ցանկում զգալի թիվ են կազմում ուղիղխնդրային հարաբերություն արտահայտող բառերը, օր.՝ **բեռնատար, բայակերտ, գրաշար, կենսագիր, մարդասպան, մսակեր, ժամանակացույց, քարտաշ** և այլն:

Այս իմաստային խմբի բարդությունները կարելի է բաժանել երեք հիմնական տեսակի՝

1. Բարդություններ, որոնք արտահայտում են՝

*ա. գործողություն կատարող անձի իմաստ՝ մորթապաշտ, անտառապահ, ակնարույժ, վիրարույժ, ջահակիր, պատմագիր, տառաստեղծ, լարախաղաց, փայտահատ և այլն,*

*բ. գործողություն կատարող առարկայի, գործիքի, մեքենայի իմաստ, օր.՝ մարդատար, փոշեկուլ, ջրցան, կողմնացույց, ջերմաչափ, աղբատար, ցորենաքաղ, սերմնացան և այլն,*

2. բարդություններ, որոնց

*ա. առաջին բաղադրիչով արտահայտված առարկան կամ անձն անմիջապես ենթարկվում է տվյալ գործողության ազդեցությանը՝ մարդասպան, մսահեղ, հրացան, ձկնորս, քարտաշ, տնաքանդ և այլն,*

*բ. առաջին բաղադրիչով նշված առարկան բայարմատով արտահայտված գործողության արդյունքն է՝ արյունաստեղծ, բայակերտ, կտակագիր, գրաշար, կենսագիր, և այլն,*

*գ. գործողության օբյեկտ հանդիսացող առարկան ֆիզիկապես ենթարկվում է տվյալ գործողությանը՝ բեռնատար, բանբեր, ավետաբեր, ժամանակացույց, հոգատար և այլն,*

3. գործողությունն իբրև հատկանիշ արտահայտող բարդություններ, որոնք էլ կարելի է բաժանել հետևյալ կերպ.

ա) ընթացքի մեջ գտնվող գործողությունն իբրև հատկանիշ ներկայացնող բարդություններ՝ *բեռնատար, օրենսդիր, սարսափազդու և այլն,*

բ) գործողության հետևանքն իբրև հատկանիշ ներկայացնող բարդություններ՝ *հերարձակ, տերնաթափ, ուժասպառ, էլեկտրավառ, որձակտոր և այլն:*

Հանգման, միջոցի, անջատման խնդրի հարաբերություններ ունեցող բարդություններն արտահայտում են առարկաների, անձերի հատկանիշներ և կազմում են հիմնականում ածականներ. դրանց մի մասը վերածվել է գոյականի: Բարդության մեջ սերող հիմքի գոյական բաղադրիչն արտահայտում է.

- տրական հոլովի իմաստ (հանգման խնդիր)՝ *ազգադավ, ամպահույ, երկնահույ, երկնահաս, հայրենանվեր, վանքապատկան* և այլն:
- բացառական հոլովի իմաստ (անջատման խնդիր)՝ *ականազերծ, աթոռագուրկ, ամպրոպածին, հողածին, պաշտոնանկ, տերնագուրկ, տեղահան, սրտաբուխ* և այլն:
- գործիական հոլովաձևի իմաստ (միջոցի խնդիր)՝ *աղբածածկ, անտառապատ, աղապատ, ասֆալտապատ, գորգածածկ, զարդանախշ, կղմինդրածածկ, մշուշապատ, մեքենագիր, նկարագարդ, պարսպապատ, սիրակառույց* և այլն:

Պարագայական հարաբերությունների մեջ առանձնացվում է՝  
ա. **պատճառի պարագայական հարաբերությունը**՝ մարդու հոգեկան ու մտավոր գործունեությանը վերաբերող հատկանիշների առատությամբ, օր.՝ *ամոթահար, մտավախ, սիրակեզ, վշտաբեկ*,

բ. գործածականության հաճախականությամբ՝ **տեղի պարագայական հարաբերությունը**. վերջինիս իմաստները կարող են դրսևորվել զանազան հոլովներով, օր.՝

**հայցական՝ տիեզերագնաց, երկնապագ, ծովագնաց** և այլն,  
**տրական՝ վիմագիր, ճակատագիր, գետնատարած** և այլն,  
**ներգոյական՝ ջրասույգ, հայաստանաբնակ, ձյունաթավալ, ցեխաթաթախ** և այլն,

գ. կառուցվածքային առանձնահատկություններով՝ **ժամանակի պարագայական հարաբերությունը**, քանի որ այս կառուցվածքի բուն կամ իսկական բարդությունների մեծ մասը փոխանվանաբար ածականներից անցել է գոյականների համակարգը՝ *աշնանացան, գիշերապան, գիշերածին, իրիկնապան* և այլն:

Հարկ է նշել, որ շատ դեպքերում բարդությունների շարահյուսական հարաբերությունները որոշելը բավական դժվար է, և հաճախ դրանք որոշվում են՝ նկատի ունենալով բարդության առավել ընդունելի և առավել բնորոշ շարահյուսական հարաբերությունը:

#### **Եզրակացություն**

Ամփոփելով բայական հիմքերով կազմված բաղադրությունների բառակազմական կաղապարների ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է փաստել, որ բայական հիմքերը բավական ճկուն բառակազմական հնարավորություններ ունեն, և նրանցով կազմված նոր գոյականներն ու ածականները մեծապես հարստացնում են հայոց լեզվի բառային կազմը:

**Анаит Мурадян**

#### **Модели сочетаний глагольных основ в современном**

**армянском языке**

#### **Заклучение**

**Ключевые слова и выражения:** прилагательное, глагольная основа, существительное, сложения, модель,

Таким образом, обобщая результаты изучения составов словообразовательных моделей, составленных глагольными основами, можно констатировать факт, что глагольные основы имеют довольно гибкие словообразовательные возможности при составлении сложных слов и образуемые ими новые существительные и прилагательные весьма обогащают словарный запас армянского языка. По результатам исследований

значительная часть основ, участвовавших в словообразовании современного армянского языка наследована нам от древнеармянского (грабара). Что же касается глагольных основ тех морфологических компонентов, в которых глагольная основа является производной, то следует отметить, что глагольная основа в большинстве случаев представляет собой составную основу, поскольку глаголы в редких случаях служат дополнением для других частей речи. В армянском языке имеются также сложные слова, первым компонентом которых являются глагольная основа либо причастие. Модели существительное+глагол, прилагательное + глагол, наречие + глагол, глагол + существительное преимущественно продуктивны в морфологических моделях глагольных основ. Сложения, составленные этими моделями, при трансформации в синтаксическое сочетание могут выражать выражают подлежащие и сказуемые, атрибутивно-определенные, объектные и обстоятельственные отношения.

В объектных отношениях можно выделить множество семантических групп.

а. Составные слова, первыми компонентами которых являются названия продуктов или предметов: винодел, мясник, продавец дровосек и т. д.

б. Составные слова, первыми компонентами которых являются наименования различных животных: пастух, коровник, скотовод, пасечник и другие.

в. Составные слова, первыми составляющими которых являются названия небесных тел: солнцезер, луноход, космонавт и т. д.

д. Осложнения, первыми составляющими которых являются понятия, относящиеся к разным областям искусства: дудукист, певец, театрал, пианист, певец, актер и др.

Из обстоятельственных отношениях продуктивны отношения причины и места: значения последних могут быть выражены различными наклонениями.

Anahit Muradyan

### **Models of verbal stems combinations in modern armenian language**

#### **Conclusion**

**Key words and expressions:** adjective, verbal stem, noun, complication, pattern.

Consequently, while summarizing the effects of study of compositions word-building patterns, formed by verbal stems, one can state that the verbal stems have quite flexible word-building opportunities for formation of compound

words and the new nouns and adjectives formed by them considerably enrich the word-stock of the Armenian language. As research showed the considerable part of stems, taking part in the word-building of the modern Armenian language were inherited to us from the ancient Armenian language (grabar). As for the verb stems of those morphological components in which the verb stem is a derivative, then It should be noted that the verb stem in most cases is a compound stem, since verbs in rare cases serve as a complement to other parts of speech. There are also compound words in the Armenian language, the first component which are the verb stem or participle . The models noun+verb, adjective+verb, adverb+verb, verb+noun are predominantly effective in the morphological models of the verbal stems. Compositions formed by these models in the process of transformation into syntactical combination can express subject and predicate, attributive-definite, object and circumstantial relations. In objective relations, many semantic groups can be distinguished.

a. Compound words, the first components of which are the names of products or objects: winemaker, butcher, lumberjack seller, etc.

b. Compound words, the first components of which are the names of various animals: shepherd, cowshed, cattle breeder, beekeeper and others.

c. Compound words, the first components of which are the names of celestial bodies: sunmeter, lunar rover, astronaut, etc.

d. Complications, the first components of which are concepts related to different areas of art: duduk player, singer, theater-goer, pianist, singer, actor, etc.

### Օգտագործված գրականություն

1. Ա. Ա. Աբրահամյան, Բայր ժամանակակից հայերենում, հ, Ե., 1962:
2. Ա. Ա. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Ե., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1956, 351 էջ:
3. Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1953:
4. Էդ. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., հ. 1, «Հայաստան» հրատ., 1976, 929 էջ:
5. Էդ. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., Եր. համալս. հրատ., 1984, 370 էջ:
6. Վ. Դ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979, 250 էջ:
7. Հ. Խ. Բարսեղյան, Հայերենի ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Ե., «Լույս» հրատ., 1973 :

8. Ս. Ա. Գալստյան, Անորոշ դերբայը բառակազմական անփոփոխ հիմք, Բանբեր Երևանի համալսարանի, 1(124), Ե., 2008, 99 էջ:
9. Ս. Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., Եր.համալս. հրատ. , 1978, 324 էջ:
10. Խաչատրյան Լ., Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011:
11. Ա. Մ. Սուրադյան, Բայական հիմքերով բաղադրությունները ժամանակակից հայերենում, ԳՏ, հ.1, Գ., 2014, 93 էջ:
12. Ա. Մ. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ.1982, 440 էջ:
13. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:

*Խմբագրություն է ուղարկվել 01.11.2022թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 16.11.2022թ.*

*Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.*

ՄԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

էլհասցե՝ [sirarpikarapetyan@ysu.am](mailto:sirarpikarapetyan@ysu.am)

**ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ԹՈՒՂԹԸ» ԵՐԿԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ  
ԻՄԱՍՏԱԱՐԺԵՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ  
(ՏԱՐԺԱՄԱՆԱԿՅԱ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)**

**Ամփոփում**

Սույն հոդվածը նվիրված է հինգերորդ դարի պատմիչ Ղազար Փարպեցու «Թղթի» բառային կազմի ուսումնասիրությանը: Մենք կատարել ենք տարժամանակյա ուսումնասիրություն՝ ընտրելով «Թղթում» գործածված այն բառերը, որոնք ձևաբանական իմաստափոխության կամ տարարժեքության են հանգել լեզվի զարգացման տարբեր շրջաններում: Այդ կարգի բառերը ցուցաբերում են տարբեր խոսքի մասերի ձևաբանական համատեղումներ, ինչպես՝ գոյական-ածական, ածական-մակբայ և այլն:

Քննելով Ղ. Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» աշխատության մեջ հանդիպող խոսքիմասային տարարժեք բառերը և դրանք դիտարկելով տարժամանակյա մակարդակում՝ դրանց բացատրությունները քաղել ենք գրաբարի բառարանագրական հուշարձաններից, որոնք վկայում են այդ բառերն իրենց բառաբերականական արժեքներով: Յուրաքանչյուր բառի համար բերվել են բնագրային համապատասխան վկայություններ: Մեր ընտրանքում առանձնացվել են ինչպես երկարժեք, այդպես էլ եռարժեք տեղաշարժերի ենթարկված բառերը: Իմաստաարժեքային խոսքիմասային անցումները կատարվել են հիմնականում գոյական, ածական կամ մակբայ խոսքիմասային սերող կաղապարներից: Այս բառերի խոսքիմասային արժեքներն ու բառիմաստները հստակ տարբերվում են իրենց առանձին կիրառություններով՝ արժևորվելով շարահյուսական մակարդակում: Հոդվածում անդրադարձել ենք նաև մեր Փարպեցու «Թղթի» բառային կազմի տարժամանակյա իմաստային փոփոխություններին:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** գրաբար, ժամանակակից հայերեն, նամակ, բառային կազմ, ուղղակի իմաստ, փոխաբերական իմաստ, իմաստափոխություն, խոսքիմասային փոխանցում, մատենագրություն, տարժամանակյա:

Ղ. Փարպեցու ստեղծագործության մեջ իր յուրահատուկ տեղն ունի «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է Մ. Էմինի կողմից<sup>1</sup>: Ղ. Փարպեցու «Թուղթը» պատմամշակութային հուշարձան է, որ նամակից բացի՝ ներառում է նաև քարոզի, ճառի և ներբողի հատկանիշներ: Այն կցվել է նրա «Պատմութիւն Հայոց» երկի վերջում և հրատարակվել: Ղ. Փարպեցի պատմիչը քաջածանոթ է եղել 5-րդ դարի հայ ինքնուրույն և թարգմանական մատենագրությանը և հայտնի է եղել որպես ճարտասան: Նա նաև շփվել է ժամանակի հայ մտավորականության հետ<sup>2</sup>:

Սույն հոդվածում մենք քննել ենք Փարպեցու «Թղթի» բառական միավորների այնպիսի փոփոխությունները, որոնք ենթադրում են խոսքիմասային կամ ձևաբանական տարարժեքություն: Վերջինս սերտորեն կապված է բառիմաստի և շարահյուսական մակարդակների գործոնների հետ:

Հայտնի է, որ «լեզվի բառերն ունեն բառական իմաստ և քերականական արժեք: Բառիմաստը բառային նշանի բովանդակային կողմն է՝ նշանակելին, իսկ քերականական արժեքը նշանակությունը, որ ներառում է բառի ձևաբանաշարահյուսական այլևայլ հատկանիշներ»<sup>3</sup>: Որևէ բառույթ աստիճանաբար ներառում է խոսքիմասային նոր արժեք կամ արժեքներ՝ լեզվի զարգացման ընթացքում կամ համատեղելով հին և նորամուտ խոսքիմասային արժեքները, կամ զրկվելով նախորդից՝ կայունացնում է նոր ձեռք բերած արժեքը<sup>4</sup>:

Լեզվական միավորների բառիմաստի տեղաշարժերն առաջացնում են ձևաբանական և շարահյուսական կարգերի փոփոխություններ, որոնք էլ իրենց հերթին առաջ են բերում նոր միավորներ՝ ձևաբանական նոր արժեքով ու գործառույթով: Հոդվածում հատուկ քննության ենք առել նաև բառի բառային իմաստի՝ ժամանակի ընթացքում կրած փոփոխությունները, որոնցից են *բառիմաստի ընդլայնումը, նեղացումը և մասնավորումը*,

---

<sup>1</sup> Տե՛ս Մ. Էմին, Ղազարայ Փարպեցու Թուղթ առ Վահան տերն Մամիկոնեից, Մոսկվա, 1853:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Ալեքսանյան, Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան» երկը միջնադարյան նամակի տեսության լույսի ներքո, Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 9, Եր., 1987, էջ 65:

<sup>3</sup> Լ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1996, էջ 5:

<sup>4</sup> Տե՛ս Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Եր., 1985, էջ 3:

*իմաստների փոխհաջորդումը, իմաստի անցումը, շրջումը* և այլն<sup>5</sup>: Բանն այն է, որ ժամանակի ընթացքում «...բառերը կրում են իմաստային բազմատեսակ փոփոխություններ, որոնք լեզվի զարգացման տարբեր փուլերում, ընդհանուր գծեր ունենալով հանդերձ, զգալիորեն տարբերվում են միմյանցից»<sup>6</sup>:

*Բառիմաստի ընդլայնումը*, ինչպես գիտենք, այն երևույթն է, երբ ժամանակի ընթացքում բառի իմաստային կառուցվածքն ընդարձակվում է՝ ներառելով այլ իմաստ կամ իմաստներ. այդ շարքում որոշ մենիմաստ բառեր դառնում են բազմիմաստ, իսկ բազմիմաստ բառերը կարող են նաև ընդարձակել իրենց իմաստները: Օրինակ՝ *բյուրո* նախապես նշանակել է «ուղտի կաշի», այնուհետև՝ այն սեղանը, որի վրա գցել են այդ կաշին», հետո՝ «այն մարդկանց խումբը, որ նստում էր այդ սեղանի շուրջը ժողովի», հետո՝ «ժողով, խորհրդակցություն»<sup>7</sup>:

*Բառիմաստի նեղացումը կամ մասնավորումը* ենթադրում է՝ «...իմաստի այնպիսի զարգացում, որի հետևանքով աստիճանաբար սահմանափակվում է դասի կամ սեռի անվանումը՝ վերածվելով տեսակի կամ անհատի անվանման, ինչպես՝ *քաջ* գրաբարում նշանակել է «լավ» բառիս ընդարձակ իմաստով (առհասարակ դրական հատկանիշով բնութագրվող՝ կտրիճ, անվեհեր, գեղեցիկ, ընտիր, ճարտասան, ճարտար և այլն), ժամանակակից հայերենում այդ բառն ստացել է նեղ իմաստ և նշանակում է *կտրիճ, անվեհեր...*»<sup>8</sup>:

*Բառիմաստի շրջումը կամ անցումը* լեզվական այն երևույթն է, երբ բառի սկզբնական իմաստին հակադիր իմաստ է առաջանում և որպես արդյունք՝ ստացվում է այնպես, որ հակադրվում են բառի նախնական և նոր իմաստները<sup>9</sup>: Սա հաճախ նաև անվանում են իմաստի բևեռացում: Այսպես՝ *դեղ* բառը նշանակել է *խոտ*, ապա բուժական խոտ, վերջապես՝ բուժական նյութ (թե՛ բուսական և թե՛ քիմիական), սակայն այդ բառը բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում ստացել է նաև *թույն* նշանակությունը, որից և՛ *դեղել*՝ «թունավորել»։ *բուժիչ նյութ* իմաստից զարգացել է հակառակ իմաստը՝ *սպանող՝ մահացնող նյութ...*<sup>10</sup>:

<sup>5</sup> Տես Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 101-107:

<sup>6</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 81:

<sup>7</sup> Լ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն. ուսումնական ձեռնարկ, Եր., 2008, էջ 146:

<sup>8</sup> Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 378:

<sup>9</sup> Տե՛ս Լ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 148:

<sup>10</sup> Տե՛ս Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 464:

*Բմաստնների փոխհաջորդումը* բառի հին իմաստի կորուստն է և նորի ձեռքբերումը, երբ բառի նախկին իմաստը փոխարինվում է նոր, ուղղակի իմաստով: Օրինակ, *սեղան* բառն ունեցել է «գոհարան, բագին» իմաստները, իսկ այժմ չունի նախնական այդ իմաստը, նշանակում է «կահույքի մի տեսակ»<sup>11</sup>:

Սույն հոդվածում մենք խոսքիմասային փոխանցման երևույթը քննության ենք առել Ղ. Փարպեցու «Թղթի» հիման վրա: Այս մոտեցմամբ քննել ենք մեր ընտրած բառերի ուղիղ կամ փոխաբերական իմաստները և նրանց շարահյուսական գործառույթը: Քննություն կատարելիս նկատել ենք, որ կան մի շարք բառեր, որոնք, գրաբարից աշխարհաբար ժամանակահատվածում պահպանելով իրենց կառուցվածքային ամբողջությունը, հանդես են գալիս մեկից ավելի խոսքիմասային իմաստներով և գործառույթով: Որոշ բառեր, իրենց իմաստային կառուցվածքով պայմանավորված, կարող են հանդես բերել մեկից ավելի ձևաբանական նշանակություններ և բնութագրվել խոսքիմասային տարարժեքության հատկանիշով: Մեր քննության մեջ որդեգրել ենք հետևյալ մոտեցումները.

1. Բնութագրել խոսքիմասային փոխանցումները Ղ. Փարպեցու «Թղթի» բառային կազմի հիման վրա ըստ ժամանակային գործոնի՝ գրաբար-աշխարհաբար կտրվածքով:
2. Ցույց տալ ձևաբանորեն տարարժեք բառերի իմաստային իրացումները բնագրային օրինակներով:
3. Բացատրել բառիմաստները գրաբարում և հնարավորության դեպքում ներկայացնել իմաստափոխությունները պայմանավորող գործոնները:
4. Բացատրել ձևաբանական փոփոխության դրսևորումները՝ ա) հատկանիշ ցույց տվող խոսքի մասերում, բ) գործողություն ցույց տվող խոսքի մասի՝ բայի ներսում, գ) գոյականների, դերանունների մեջ:

Ինչպես նշեցինք, խոսքիմասային տեղաշարժերի և տարարժեքության երևույթը դիտարկել ենք տարածամակյա կտրվածքով՝ որպես երկարաժամկետ գործընթացի արդյունք:

Այսպիսով, լեզվի տարածամակյա կտրվածքում բառիմաստը կարող է կրել ամենատարբեր փոփոխություններ՝ *լայնանայ, նեղանայ, շրջվել*, կարող է լինել *բառիմաստի կորուստ* և այլն: Բառիմաստի այսօրինակ փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունենում նաև բառի ձևաբանական արժեքի վրա՝ դուրս բերելով բառը տվյալ խոսքիմասային կարգի շրջանակներից: Խոսելով բառերի իմաստաարժեքային դաշտում

---

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 148:

կատարվող տեղաշարժերի մասին՝ որպես քանակական ու որակական փոփոխությունների տարաստիճան գործընթաց՝

Լ. Խաչատրյանը նշում է, որ դրանք, ըստ անցման բնույթի, լինում են երկու տեսակի.

1. Մասնակի կամ շարահյուսական, որի ընթացքում փոխվում է սերիչ կադապարների շարահյուսական գործառույթը՝ բուն խոսքիմասային արժեքի գերակայությամբ: Այս դեպքում բառերը, համատեղելով հին և ձեռքբերված նոր խոսքի մասի հատկանիշները, իրենց իմաստային կառուցվածքով ցուցաբերում են խոսքիմասային տարարժեքություն ու շարահյուսական տարբեր գործառույթներ:

2. Լիակատար կամ ձևաբանական, որի ընթացքում բառերը գրվում են նախկին իմաստից ու արժեքից և ձեռք են բերում նոր խոսքիմասային արժեք՝ բնութագրվելով բառաքերականական նոր հատկանիշներով<sup>12</sup>:

Քննենք Ղ. Փարպեցու «Թղթում» հանդիպող թվով տասնութ բառեր, որոնք այցի են ընկնում իրենց իմաստային կառուցվածքում մեկից ավելի ձևաբանական արժեքների համատեղումով: Չանագան իմաստափոխությունների ենթարկված բառերի բացատրությունների և դրանց համեմատությունների ներկայացման, բերված օրինակների համար հիմնականում հիմք են ծառայել մի քանի հայտնի բառարաններ<sup>13</sup> և արևելահայերենի ազգային կորպուսը՝ ԱՐԵՎԱԿԸ:

**Այլադանդ-ՆՀԲ**-ում բառը գրանցված է որպես **գոյական**: Ղ. Փարպեցու «Թղթում» կա հետևյալ օրինակը՝ «...ո՞ր անմիտ, ո՞ր տգետ, ո՞ր Հրեայ, ո՞ր **այլադանդ**»: (190): Արդի հայերենում այս բառը **գոյական** է և **ածական**՝ *ուրիշ աղանդի հետևող*: Այսինքն՝ նոր խոսքիմասային իմաստի առաջացմամբ առաջացել է նոր բառ՝ արդեն *ածականական, հատկանշի* իմաստով: «... **այլադանդ** բողոքական հովիվները եկեղեցիների բեմերից մարդասիրական պարտավորություններին հետևելու կոչ էին անում...» (մամուլ, «Հայագիտական Հայաստան»):

<sup>12</sup> Տե՛ս Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան, Եր., 2003, էջ 5-6:

<sup>13</sup> Գ. Աւետիքեան, Հ. Սիւրմելեան, Մ. Աւգերեան, Նոր հայկազեան բառարան( ՆՀԲ), հ. 1, Եր., 1979, հ. 2, Եր., 1981: Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Եր., 2000: Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր, Եր., 2003: Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Եր., 1926: Ս. Մալխայանց, Հայերեն բացատրական բառարան (ՀԲԲ), Եր., 1944: Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., 1969:

**Անհրահանգ** - ՆՀԲ-ն համարում է ածական՝ հետևյալ իմաստով՝ *անկիրթ, անվարժ*: Թղթում նույպես այս իմաստով է գործածված՝ «...որ **անհրահանգն** է յուսմունս» (190): Մտ. Մալխասյանցի բառարանում արձանագրված է երկրորդ իմաստը՝ *առանց հրահանգի*: Ուստի տեղի է ունեցել **բառիմաստի ընդլայնում**: Օրինակ՝ Եվ չնայած պետական-պաշտոնական հրահանգավոր եւ **անհրահանգ** արգելքներին, այնուամենայնիվ, 50-ական թվականներին հայ գրականության եւ արվեստի եւ մասնավորապես գեղանկարչության մեջ կային արվեստագետներ... (Մամուլ, «Ազգ»):

**Ասացող**- գրաբարում **ասել** բայի ենթակայականն է: Փարպեցին գործածում է հենց այս իմաստով: «Ջայնպիսի բանից **գասացողաց** զգործս ես ահա լռեմ» (195): Արդի հայերենի բառարաններում բառն արձանագրված է որպես գոյական՝ *«ժողովրդական բանավոր ստեղծագործության պատմող»* իմաստով, քանի որ **ասել** բայի ենթակայականն ունի միայն **ասող** ձևը՝ որպես **է** լծորդության պարզ բայ: Կատարվել է խոսքիմասային փոխանցում. ենթակայական դերբայից դարձել է գոյական՝ «Տիրապետելով հայ ժողովրդական վիպերգի գաղտնիքներին, Դաշտենցը հանդես է եկել իբրև **ասացող**, ժողովրդական ասմունքող...» (Խ. Դաշտենց):

**Արդարեւ**- Այս բառը ն՝ գրաբարում, ն՝ աշխարհաբարում երկարժեք է, սակայն գրաբարի բառարաններում գործածվում է ն՝ որպես մակբայ՝ *հիրավի, ճշմարտապես*՝ «Մի՛ **արդարեւ** պատմեսցի այս ի Գեղ» (193), ն՝ որպես ածական՝ *իրական, ստույգ*: «Այդպիսի իսկ **արդարեւ** աղանդոց վայել էր բուսանել» (193): Իսկ արդի հայերենում *մակբայ* է ն *եղանկավորող բառ*, որից հետևում է, որ խոսքիմասային փոխանցմամբ կրկին նոր բառ է ստեղծվել:

Օրինակ՝ «Նա, **արդարեւ**, չէր կարող մինչև այդ կետն ստորանալ» (Մուրացան):

**Բարի**- ՆՀԲ-ում բառը երկարժեք է. այն գործածվում է որպես գոյական ն որպես ածական: Որպես գոյական գործածվում է մի քանի իմաստով՝ *1.բարություն, բարեգործություն, 2.ինչք, գույք, ունեցվածք, 3. հաջողություն, ողջություն*: Որպես ածական նշանակում է *լավ, գովելի, ընտիր*: Փարպեցին բառը գործածել է որպես գոյական. «...չհատուցանեին **գբարի** ...փոխանակ քո տեառն բարոյն» (204): Արդի հայերենում այս բառը գործածվում է թե՛ որպես ածական և թե՛ որպես մակբայ: «Եթե մարդիկ չեն կարող **բարի** հիշել իրար, զոնե թող բաժանվեն՝ ինչպես գնացքում, երբ գալիս է կայարանը, որ ինչ-որ մեկի համար վերջինն է» (Վ. Պետրոսյան):

**Արդեօք**- Բառը ՆՀԲ-ում եռարժեք է. գործածվում է որպես մակբայ՝ *հիրավի, ստուգապես, իսկապես, այժմ, հիմա, արդ*, որպես թարմատար՝ *մի՞ թե*, որպես շաղկապ՝ *ուրեմն, սպա*: «Թղթում» գործածված է որպես

հարցական բառ, հավելադիր. «Չիցե՞ն **արդեօք** արեղեանս Հայոց արժանի ողորց » (190): «**Արդեօք** տարա՞ն զիս ի սենեակ» (199): Փարպեցին այն գործածել է նաև **իրոք** իմաստով **թերեւս** բառի հետ, այսինքն՝ որպես մակբայ, ինչպես նշվում է ՆՀԲ-ում՝ *տարակոյսը ստուգութեան վերածելով*: «Յաղագս ատելոյ զիս, **թերեւս արդեօք** եւ ըստ անարժանութեան, քորեպիսկոպոս ոք չարար» (193): Արդի հայերենում այս բառը միարժեք է և հանդես է գալիս որպես եղանակավորող բառ, որով ևս խոսքիմասային փոխանցմամբ առաջացել է նոր բառ՝ «**Արդոք գալո՞ւ է մի օր, ժամանակ, տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ**» (Գաֆֆի):

**Խնորել**՝ գրաբարում կա նաև **որոնել, փնտրել** իմաստը, որն էլ գործածել է հեղինակը՝ «Եւ դու յայց ելեալ **խնորել** զիս եւ գտեալ յաշխարհին յայնմ» (188): Արդի հայերենում ունի հետևյալ իմաստները՝ 1. Խնորանքով որևէ մեկին դիմել՝ մի բան անելու ստանալու և այլն: 2. Հրավիրել: 3. Պահանջել: Արդի հայերենում առաջացել է նաև «**առաջարկել**» իմաստը: Նշանակում է՝ տեղի է ունեցել **բառիմաստի ընդլայնում**: Օրինակ՝ «**Խնորեմ, ասացեք, այստեղ ունի Դրուե սպրո՞ւմ է** (թրգմ.):

**Նախանձ**՝ ՆՀԲ-ում նշված է միայն որպես **գոյական** հետևյալ իմաստներով՝ 1. *Մախանք, չարակնություն, 2. Նախանձավորություն, վրեժխնդրություն, 3. Եռանդ, փոյթ*: «**Նախանձու** բանսարկուին եմուտ մահ յաշխարհ» (186): Արդի հայերենում և՛ **գոյական** է՝ 1. Ուրիշի հաջողություններից՝ բարեկեցությունից՝ առավելություններից և այլն մարդու մեջ ծագող չարության զգացում:

2. (ժողովրդ.) *խանդ, և՛ աձական*՝ նախանձոտ, ուրիշներին նախանձող: Խոսքիմասային փոխանցմամբ տեղի է ունեցել ձևաբանական իմաստի ընդլայնում՝ «Տիկին Էլիզբեթ **նախանձով** նայեց այդ պարզ երիտասարդ գեղեցկությանը» (Ա. Բակունց):

**Ծախել**՝ ՆՀԲ-ում արձանագրված են հետևյալ իմաստները. 1. Ծախսել, վճարել, 2. Ոչնչացնել, վերացնել. «Ի պետո տեղուդ **ծախելի**» (197): **Ծախսել** իմաստը արդի հայերենում չկա: Տեղի է ունեցել իմաստի կորուստ: Արդի հայերենում բառն ունի հետևյալ իմաստները՝ 1. Վաճառել, 2. (փոխաբ.) դավաճանել, խարդավանել, դավել: 3. (փոխաբ., խոսակց.) խաբել, խոստումը չկատարել: 4. (հնացած) մաշել, փչացնել, սպառել, ոչնչացնել: 5. (փոխաբ.) մեկի վզին փաթաթել:

«Գիտեր, որ նա հարազատ որդուն անգամ կարող է **ծախել**, միայն թե հասնի իր կամեցածին» (Ա. Խանգաղյան): «Մեծ տղայիդ կարծիքներն ես ինձ վրա **ծախում**» (Վ. Դաքեայան): «-Ա՛յ տղա, ի՞նչ **ես ծախում**, կանչում է մի ծանոթ ձայն» (Ա. Բակունց):

**Կազմած**՝ ՆՀԲ-ում՝ 1. կազմություն, 2. մարմնի կազմվածք, 3. նաև սարք, 4. կահկարասի, 5. տուն ու տեղ, ունեցվածք, 6. զարդարանք,

պատերազմական զենքեր: Այս իմաստն է Թղթում, և գործածված է որպես՝  
1. **գոյական**՝ «...ոչ իբրև զաղքատ գոք ի կազմածէն...» (188): «...ոչ իբրև  
ունեցվածքից զուրկ աղքատի»: Արդի հայերենում՝ կազմած 1. հարակատար  
դերբայ կազմել -ի: 2. **ածական**՝ կազմով, կազմ ունեցող, կազմած զիրք: 3.  
**Գոյական**՝ կազմվածք:

Օրինակ՝ *Հմայակը բերեց իր կազմած պլանը ձեր ամուսնուն ցույց տալու, ես  
էլ կամեցա ձեզ հետ մի քիչ գրույց անել* (Ալ. Շիրվանզադե):

**Փոխանակ**-Գրաբարում **գոյական** է՝ 1. փոխանորդ, տեղակալ: 2.  
Փոխհատուցում, փրկանք: 3. **Նախադրություն**՝ դիմաց, տեղը: Թղթում  
գործածված է որպես գոյական՝ «Բազում նկրտելին լինել իմ *փոխանակ*»  
(186): Նաև գործածված է որպես նախադրություն՝ «Չհատուցանելին զբարի  
փոխարենս *փոխանակ* քո տեառնդ բարոյն» (204): Արդի հայերենում բառն  
արձանագրված է որպես՝ 1. **կապ** (մեծ մասամբ՝ նախադասության սեռական  
խնդրով)՝ «*Փոխանակ* ազգի, հայրենիքի, մարդկության լավ անդամ լինելու՝  
մենք դարձել էին նրանց ուտիչ, ապականիչ ցեցը» (Բաճեֆի): 2. **ածական**  
(հնացած)՝ *փոխարինող*՝ մեկին՝ մի բանի փոխարինելու հարաբերություն:  
Տեղի է ունեցել խոսքիմասային փոխանցում՝ խոսքիմասային նոր իմաստի  
առաջացում: «Նա ամեն կերպ փորձում էր իվել  
թագին *փոխարինող* գլխարկը, որը կախված էր Պոլոնիուսի բռնած երկար  
ձողից» (Մամուլ, «Առավոտ»):

**Կարգել**-ՆՀԲ-ն նշում է բազմաթիվ իմաստներ՝ 1. կարգի բերել, 2.  
նշանակել պաշտոնի, 3. շարադրել: Փարպեցին գործածել է *շարադրել*  
իմաստով՝ «...եւ զճգունս մեծամեծ պարծանօք գրեալ մի ըստ միոջէ  
կարգեաց» (196): Արդի հայերենում երրորդ իմաստը բացակայում է:  
Արձանագրված են հետևյալ իմաստները՝

1. Որևէ պաշտոնի՝ աշխատանքի նշանակել, որևէ գործի դնել՝  
«Կարգի՛ր մի բանի, //Գնա իր համար աշխատանք անի» (Հ. Թումանյան):  
2. Որոշել, սահմանել՝ «Բոլոր գավառներում աղքատանոցներ հիմնեց և  
նրանց համար ապրուստ *կարգեց*» (Բաճեֆի):  
3. (եկեղ.) ձեռնադրել, եկեղեցական աստիճան շնորհել՝ «Նրան այդ տարի  
երեց *կարգեց*» (թրքով.): 4. (արևմտահայերեն) ամուսնացնել, պսակել՝ «Տան  
բժիշկը իրենց երթալեն հետո ըսած էր, թե որչափ կարելի է շուտ *կարգե*  
աղջիկը» (Ա. Արփիարյան): Տեղի է ունեցել **բառիմաստի ընդլայնում**:

**Աշխատասիրել**- Այս բառը Փարպեցին գործածել է *շրջել, ման գալ*  
իմաստով: Հետաքրքիր է, որ բառը այսպիսի բացատրություն չունի  
գրաբարի և աշխարհաբարի բառարաններում: «Սոքա զօրեն  
վաճառականաց ընդ ծով եւ ընդ ցամաք *աշխատասիրեալք...*» (185): ՆՀԲ-ում  
բառը բացատրվում է՝ *սիրով աշխատել, նեղություն կրել, ճգնել  
հոժարությամբ*: Արդի հայերենում նշվում է նաև *գիրք գրել, հեղինակել*

իմաստը, այսինքն՝ տեղի է ունեցել *իմաստի նեղացում*: Օրինակ՝ «Հ. Վահրամյանը **աշխատասիրել է** «Պատմական ժամանակագրությունը» և «Սատենագրությունը» (Սամուլ, «Հայրենիքի ձայն»):

**Լուր**՝ գործածված է *լսված խոսք* իմաստով՝ «Ընդ լրոյ դատել գոք ոչ կամեի»(190): «Քաղցր ախորժեղով **զլուր** այդպիսի բանից» (190): Արդի հայերենում նշանակում է միայն **տեղեկություն**, որն ակնհայտորեն **բառիմաստի նեղացում** է: Օրինակ՝ «Մի անգամ, հիշեց պրոֆեսորը, **լուր** տարածվեց Երևանում, որ զիշերը կոմունիստական մի ջոկատ գերի էր վերցրել կաթողիկոսին և մի քանի եպիսկոպոսների... » (Վ. Թորոպենց):

**Կարդալ**-ՆՀԲ-ում՝ 1. ձայնել, գոչել, 2. ընթերցել, 3. կոչել, անվանել: Այս վերջին իմաստով ևս գործածել է Փարպեցին՝ «... Եթե զիս Բեղզեբուղ **կարդացին**՝ ո՞րչափ եւս առաւել զձեզ» (189): Այս իմաստը կորել է: Արդի հայերենում բառը բացատրված է՝ 1. գրերով կամ գրային այլ նշաններով գրվածը կամ տպագրվածը ընկալել, գրած կամ տպագրած որևէ բան վերարտադրել բարձրաձայն կամ լուռ, ընթերցել: 2. Արտասանել, անգիր ասել: 3. Վերծանել: 4. Դասախոսել, զեկուցել: 5. (ժողովրդ.) Սովորել, ուսանել: 6. (փոխաբ.) արտաքին զանազան նշաններից իմանալ, գուշակել ներքին բովանդակության իմաստը՝ հուզմունքը՝ եղելությունը, կռահել, հասկանալ, թափանցել: 7. (փոխաբերական) երգել, կանչել, ճովողել (թոշունի): Օրինակ՝ «Թիֆլիս է **կարդում**...երկու տարի հետո կվերջացնի զիմնագը» (Ա. Բակունց): Թագավորը, որը խանդակաթ էր դեպի թագուհին, **կարդաց** նրա աչքերի մեջ հայտնի վշտից առաջացած տխրությունը (Մուրացան):

Ինչպես տեսնում ենք, ժամանակի ընթացքում առաջացել են մի շարք այլ իմաստներ, այսիքին՝ տեղի է ունեցել **բառիմաստի ընդլայնում**:

**Սնուցանել**-ՆՀԲ-ում՝ 1. Սնունդ տալ, 2. Խնամել, դաստիարակել: Նույն բացատրություններն առկա են Ստ. Մալխասյանցի Հայերեն բացատրական բառարանում: «Թղթում» գործածված է երկրորդ իմաստով: «...**սնուցանե՛** մայրն ձեր օրհնեալ» (180): Ժամանակակից հայերենում **սնուցանել** (նույնը՝ **սնուցել**) բայն ունի նաև հետևյալ իմաստը՝ 1. սնել, 2. տածել, իր մեջ որևէ զգացմունք՝ գաղափար և այլն ունենալ՝ պահել՝ պահպանել: Տեղի է ունեցել **բառիմաստի ընդլայնում**: Օրինակ՝ Մի՛ **սնուցանիք** սրտումդ կասկած (Հ. Թումանյան):

**Ցանկ**՝ մակբայ՝ 1. մինչև վերջ: ՆՀԲ-ում արձանագրված են հետևյալ իմաստները՝ 1. Մինչև վերջ, իսպառ: 2. Մշտապես, անդադար: 2. միշտ : Ղ. Փարպեցին գործածում է վերջին իմաստով՝ «...Որ բողոքե **ցանկ**, թե մի՛ բազում վարդապետս լինիք» (193): Փարպեցին ունի նաև **ցանգ**՝ «Զոր յաւետարանչացն կարդան **ցանգ**» (191): Ստ. Մալխասյանցն ավելացնում է

նան հետևյալ իմաստը՝ «նորածին երեխայի շապիկը, ընկերք»: Արդի հայերենի բառարաններում, սակայն *ցանկ* բառը չկա *ցանկություն, իղձ* իմաստով, այլ վերջինիս արտահայտման համար գործածվում է *ցանկություն* բառը: Հնացած է նաև Փարպեցու գործածած *միշտ* իմաստով մակբայը: Գրանցված են հետևյալ իմաստները՝ 1. Գրքի գլուխների ցուցակ: 2. Ցանկություն, իղձ: 3. Պատնեշ, անջրպետ, ցանկապատ: Տեղի է ունեցել *բառիմաստի նեղացում*: Օրինակ՝ «Հայերենի եղանակավորող բառերի բավականին լայն *ցանկ* ներկայացնող Ս. Աբրահամյանը նույնպես այս կարգի բառերը չի մտցնում եղանակավորող բառերի իր նկարագրած իմաստային որևէ տեսակի մեջ» (Հ. Բարսեղյան):

**Քաղաքավարություն**՝ ՆՀԲ-ում՝ գոյական՝ 1. Քաղաքի կառավարում, 2. Կենցաղավարություն, ապրելակերպ, գործունեություն: «Թղթում» գործածված է *ապրելակերպ* իմաստով՝ «...որ ի մարմնի զանմարմնոցն բերելով *քաղաքավարություն*՝ հրեղեն կառօք ի հոգեղենս վերացալի կեանս» (191):

Արդի հայերենում՝ 1. Վարմունքի՝ վարվելակերպի հարգալից ու բարեկիրթ բնույթ: 2. Հարգալից վերաբերմունքի՝ վարվեցողության կանոնների ամբողջությունը: 3. Քաղաքավարի լինելը: Օրինակ՝ *Եվ դա ոչ թե քաղաքավարություն էր կամ տուրիստի հետաքրքրություն, որ միայն նայում է և շատ բան չի տեսնում, նայում է ու անցնում*: (Ստ. Ջորյան): Այստեղ տեղի է ունեցել *իմաստի անցում կամ փոխհաջորդում*:

#### Եզրակացություն

Փարպեցու «Թղթի» բառային կազմի տարժամանակյա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր լեզվի զարգացման տարբեր փուլերում շատ բառերի իմաստային կառուցվածքում տեղի են ունեցել տարաբնույթ փոփոխություններ, որոնք հանգեցրել են ձևաբանական իմաստի և արժեքի տեղաշարժերի: Այդ տեղեշարժերն ընթացել են բառիմաստի զուգորդման, բառի կամ բառաձևի բառաքերականական իմաստի մթազմման, բառիմաստի փոխանվանաբար գործածվելու հիման վրա:

Сирарпи Карапетян

Семантические сдвиги в словарном составе произведения Казара Парпеци

«Бумага» на армянском языке

(диахроническое исследование)

Заключение

**Ключевые слова и выражения:** грабар, современный армянский, письмо, словосочетание, прямой смысл, переносный смысл, изменение значения, конверсия, литература, диахронический.

Данная статья посвящена изучению произведения историка V века Казара Парпеци «Бумага». Нами было проведено диахроническое исследование, выбирая те слова, используемые в «Бумаге», которые претерпели морфологические смысловые изменения, либо подверглись полисемии в разные периоды языкового развития. Подобные слова демонстрируют морфологические сочетания разных частей речи, например, морфологические сочетания имен существительного/прилагательного, прилагательного/ наречия и т. п.

Рассматривая частеречную полисемию в произведении К. Парпеци «Бумага к Вагану Мамиконяну» и изучая их на диахроническом уровне, нами были выделены слова, объяснение которых было извлечено из лексикографических памятников грабара, свидетельствующих о наличии этих слов с их грамматическими значениями. Для каждого слова были представлены соответствующие доказательства из оригинала. Нами были выделены слова, претерпевшие как двузначные, так и трехзначные перемещения. Семантико-смысловые частеречные переходы происходили преимущественно от частей существительных, прилагательных или наречий. Частеречные и семантические значения этих слов четко различаются в их отдельном употреблении на синтаксическом уровне. В статье также рассмотрены семантические изменения выделенных нами слов в течение времени.

Sirarpi Karapetyan

**Semantic shifts of the vocabulary of Ghazar Parpetsi's "Paper" in armenian  
(Diachronic investigation)**

**Conclusion**

**Key words and expressions:** Grabar (Old Armenian), Modern Armenian, letter, word stock, direct meaning, metaphoric meaning, change of meaning, conversion, literature, diachronic

The article is devoted to the "Paper" written by Ghazar Parpetsi - a historian of the 5<sup>th</sup> century. We conducted a diachronic study as the words that we considered in the article underwent a morphological-semantic change or gained polysemy during different periods of language development. There can be lexical combinations of different parts of speech in a language, for nominal/ adjective lexical combinations, etc.

Various Armenian and foreign linguists have referred to part-of-speech combinations of words. Even commentators on the grammar of *Dionysios Thrax* noticed combinations of part-of-speech meanings of more than one word. Considering morphological polysemy in the "Paper to Vahan Mamikonyan" by

Parpetsi at the diachronic level, we extracted the explanations of the words which we selected from Grabar Old Armenian lexical monuments, giving evidence proving for these words with their grammatical meanings.

Corresponding evidence was provided for each word. In our selection, we singled out words that underwent both two-and three-meaning shifts. Semantic transitions were made mainly from parts of nouns, adjectives, or adverbs. The morphological meanings and semantic meanings of these words are clearly distinguished by their individual uses at the syntactic level. In the article, we also considered the semantic changes of the words in our choice in the course of time.

### Օգտագործված գրականություն

1. Ալեքսանյան Ա., Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան» երկը միջնադարյան նամակի տեսության լույսի ներքո, Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 9, Եր., 1987:
2. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:
3. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:
4. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987:
5. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Եր., 1926:
6. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
7. Աւետիքեան Գ, Միրմելեան Հ., Աւգերեան Մ., Նոր հայկազեան բառարան(ՆՀԲ), հ. 1, Եր., 1979, հ. 2, Եր., 1981:
8. Էմին Ս., Ղազարայ Փարպեցոյ Թուղթ առ Վահան տէրն Սամիկոնէից, Մոսկվա, 1853:
9. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., 1969:
10. Խաչատրյան Լ., Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր, Եր., 2003:
11. Խաչատրյան Լ, Լեզվաբանության ներածություն. ուսումնական ձեռնարկ, Եր., 2008:
12. Խաչատրյան Լ., Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1996:
13. Խաչատրյան Լ., Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Եր., 1985:
14. Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, Եր., 2000:
15. Ղազարյան Ռ., Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001:
16. Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան (ՀԲԲ), Եր., 1944:

***Խմբագրություն է ուղարկվել 07.07.2022թ.***

***Հանձնարարվել է գրախոսության 25.07.2022թ.***

***Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ***

ՍՈՒՄԱՆԱՍ ՏԻՌՅԱՆ  
ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի  
անվան լեզվի ինստիտուտ  
Բան. գիտ. թեկնածու  
Էլհասցե՝ [susannatioyan@yahoo.com](mailto:susannatioyan@yahoo.com)

**ՓՈԽ(Ա)– ՆԱԽԱԾԱՆՑՈՎ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**Ամփոփում**

Ժամանակի ընթացքում լեզվի բառապաշարը, դրա առանձին միավորները իմաստային այլևայլ փոփոխությունների են ենթարկվում՝ նորագույն հասկացությունների և երևույթների ազդեցությամբ. բառակազմական այս կամ այն մասնիկը՝ ածանցը (նախածանցը, միջածանցը կամ վերջածանցը) կարող են կիրառական փոփոխություններ կրել՝ բառակազմական արդյունավետ կամ արգասավոր միավորից վերածվելով անարգասավորի կամ՝ հակառակը: Փոխա- նախածանցի իմաստային վերլուծությունից պարզ դարձավ, որ այն վերածվել է ավելի գործուն մասնիկի՝ մեր օրերի աշխարհաքաղաքական զարգացումների համահունչ օրինակ՝ փոխհանդուրժողականություն, փոխահաբեկչություն, փոխանվստահություն, փոխբացառում, փոխընդունելի, փոխինտեգրացվել և այլն: Ուսումնասիրությամբ նաև ճշգրտում մտցվեց փոխա- նախածանցով կազմված բառերի ցանկում. այսպես, «երկրորդը ըստ պաշտոնի, աստիճանի, կոչման՝ նախատիպի ցույց տվածի նկատմամբ» բառակազմական նշանակության օրինակների շարքում՝ փոխարքա, փոխգնդապետ, փոխծովակալ, փոխհյուպատոս, փոխնախագահ և այլն, փոխգնդապետի առկայությունը հիմնավորված չէ, քանի որ այն ինքնուրույն սպայական կոչում է հետևյալ շարքում՝ մայոր→ փոխգնդապետ → գնդապետ →գեներալ→ գեներալ մայոր → գեներալ լեյտենանտ → գեներալ գնդապետ, որտեղ ոչ մեկը հաջորդի ստորա-ն չէ: Նույնը վերաբերում է նաև փոխծովակալ գոյականին, որը ռազմածովային նավատորմի ծովակալական կոչում է՝ ծովակալի և ենթածովակալի միջև, այդ կոչումը կրող մարդ<sup>22</sup>: Այսինքն, զինվորական և ռազմական կոչումները այլ սանդղակով պետք է ներկայացվեն:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** նախածանց, վերջածանց, նախատիպ, կիրառական, բառակազմական նշանակություն, արգասավոր,

---

բառապաշարի զարգացում, բազմանախաձանց, կառուցվածքային ուսումնասիրություն:

### Ներածություն

Ժամանակակից հայերենի նախաձանցները, վերջաձանցների համեմատությամբ, փոքրաթիվ են<sup>1</sup>, և այդ ցանկում այս՝ համեմատաբար «մեծ ուշադրության» չարժանացած և ոչ այնքան արգասավոր նախաձանցով կազմված բառերը արևմտահայերենի նոր բառերի ցանկում բառակազմական - իմաստային ուշագրավ պատկեր են ներկայացնում. դա արդյունքն է արևմտահայերենի և, առհասարակ, հայերենի բառապաշարի շարունակաբար զարգացման ու հարստացման՝ բառապաշար մուտք գործած և գործող նոր բառերի և բառիմաստների շնորհիվ: Արևմտահայերենի նորաբանությունների բառախմբում, ի մասնավորի, **փոխ(ա)-** նախաձանցով բառերը յուրահատուկ իմաստային ու կառուցվածքային յուրահատկություններ են դրսևորում, ինչին անդրադառնում ենք ստորև:

### Մեթոդաբանություն

Թեմայի ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք հայ և օտարազգի լեզվաբանական գրականության մեջ ընդունված ու լայնորեն կիրառվող բառակազմական վերլուծությունների մեթոդներից:

\*\*\*

Նախ մի քանի դիտարկում **փոխ(ա)-** նախաձանցի մասին. «Փոխ-// փոխ(ա)- ածանցը,- գրում է Ս. Գալստյանը,- գործածական է մի քանի բառակազմական նշանակություններով:

ա. Փոխա- տարբերակով կազմվող բառերի մի խումբ ցույց է տալիս մի տեղից մի այլ տեղ կատարվող գործողություն. **փոխաբեռնել, փոխաբերել, փոխադրել, փոխանցել, փոխատնկել** և այլն: Բառերի մի այլ խմբում **փոխ-** ածանցը ունի «նախատիպի ցույց տված գործողությունը այլ ձևով կատարելու» բառակազմական նշանակություն. **փոխակերպել, փոխաձևել, փոխարկել** և այլն: Իսկ **փոխհատուցել** բաղադրությունը նշանակում է *փոխարենը, փոխադարձաբար*<sup>2</sup>: Ընդգծված բառերի ածանցյալները

<sup>1</sup> Տե՛ս է.դ. Աղայան, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Ե., Մանմար, 2014, էջ 1273:

<sup>2</sup> Մեր կարծիքով, այս շարքում **փոխհատուցելը** ի թիվս այլ օրինակների թվարկելը այնքան էլ հիմնավորված չէ, քանի որ, հարգարժան պրոֆեսորի նշած իմաստներում այն հանդես է եկել երկու, իրարից տարբեր նշանակություններով՝ ա) մեկի

պահպանում են նշված բառակազմական նշանակությունը՝ *փոխաբերություն, փոխադրական, փոխանցիկ* և այլն: Այս մասնակադապարդ գործուն է:

բ. – ություն, ինչպես նաև -ում ածանց ունեցող նախատիպ հիմքերին **փոխ-** ածանցը տալիս է «փոխադարձ կերպով, փոխադարձաբար» ընդհանուր բառակազմական նշանակությունը. **փոխազդեցություն, փոխհարաբերություն, փոխգործողություն, փոխօգնություն, փոխհրաձգություն, փոխներարկում, փոխզիջում** և այլն: Այս մասնակադապարդ ևս գործուն է

գ. Գոյական այլ նախատիպերից **փոխ-** ածանցով կազմվել ու կազմվում են բաղադրություններ «նախատիպի ցույց տվածի փոխարեն, տեղը դրվող, օգտագործվող» բառակազմական նշանակությամբ՝ **փոխանուն, փոխնիշ** (տպագր.) և այլն:

Այս իմաստի հետ է կապվում «երկրորդը ըստ պաշտոնի, աստիճանի, կոչման՝ նախատիպի ցույց տվածի նկատմամբ» բառակազմական նշանակությունը, որ առկա է **փոխարքա, փոխզնդապետ, փոխ-ծովակալ, փոխ-հյուպատոս, փոխնախագահ** և այլ բաղադրություններում: Այս բառակազմական նշանակությամբ ևս ածանցը գործուն է»:<sup>3</sup> Այստեղ մեկ նկատառում, ավելի ճիշտ՝ շտկում պետք է անենք. խոսքը **փոխզնդապետ** ածանցյալի մասին է. սա ոչ թե երկրորդը ըստ պաշտոնի, աստիճանի, կամ **ենթա-** իմաստի կրողն է, այլ ինքնուրույն սպայական կոչում է՝ մայոր և գնդապետ կոչումների միջև<sup>4</sup>. այդ թյուրըմբռնումը ուսումնական դասընթացներն ու գիտական ուսումնասիրությունները մեկը մյուսին նմանակելով՝ փոխանցում են գրքից գիրք՝ առանց ճշգրտելու, պարզաբանելու սպայական կոչման իմաստը (մանրամասն՝ ստորև):

---

փոխարեն և բ) փոխադարձաբար, ըստ որում, ներկայումս հիմնականում և առավելաբար նախաածանցը դրսևորում է իր առաջին իմաստը, օրինակ, «Պետությունը **կփոխհատուցի** լաստանավով փոխադրմամբ առաջացած ծախսերը» (կարդում ենք Հայկական հեռուստատեսության լուրերի՝ 21-ի սահող տողում): ԱՐԵՎԱԿԻ 429 համատեքստերում գերադասում է հենց նշված իմաստը՝ այսպիսի բառակապակցություններում. փոխհատուցել վնասը, փոխհատուցել պակասը, փոխհատուցել ծախսերը, փոխհատուցել գումարը, փոխհատուցել կորցրածը փոխհատուցել հողակտորի արժեքը և այլն: ,

<sup>3</sup> Ս. Գալստյան, Ախանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., Եր.համ. հրատ., 1978, էջ 238- 239:

<sup>4</sup> Տե՛ս էդ. Աղայան, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Ե., Մանմար, 2014, էջ 1273:

Էդ. Աղայանի բառարանում այս նախածանցը երեք իմաստներով է ներկայանում.

փոխ<sup>1</sup> – **փոխարինաբար** (փոխ տալ, փոխ առնել), փոխ<sup>2</sup> – բարդությունների առաջին բաղադրիչ՝ **փոխարինող**, օգնական, տեղակալ իմաստներով...<sup>5</sup>:

Արևելահայերենի ազգային կորպուսի՝ ԱՐԵՎԱԿԻ ծավալուն ընտրանքում<sup>6</sup> **փոխա-** նախածանցով 10 համատեքստ կա, որոնցում այն հիմնականում հանդես է գալիս **փոխարեն**, **փոխադրել**, **փոխակերպել** իմաստներով. օրինակ, «Ընդլայնել Ում հաջողվել է կատարելությունը նվաճելու ճանապարհին տառապանքը **փոխակերպել** բերկրանքի ու դիմանալ մեծ գայթակղությունների որոգայթում հասունացող տեսողության ցավին», այս խոսքերը, որ գրել է Արա Գուրգադյանը Ուիլյամ Տոլստոյի «Շառաչ եւ ցասում» հայերեն թարգմանության առաջաբանում, այնքան բնորոշ է իր կենսափիլիսոփայությանն ու ապրած երկրային կյանքին» Ազգ, 2004.09.16:

Արևմտահայերենի դասագրքերում<sup>7</sup>, այլև արևմտահայերենի բառապաշարն ընդգրկող բառարաններում կարդում ենք, որ **փոխա-** ն հանդես է գալիս իբրև «նախադրութիւն **փոխանակ**, **փոխարեն**, **տեղը**, **դիմաց**» իմաստներով:

«ՓՈՒՄ ... մասնիկ, որով բարդվում են շատ բառեր՝ **փոխել**, **փոխարինել** ընդհանուր նշանակութիւն», (Ստեփան Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Ե., ՀՄՍՌ Պետհրատ., 1944, էջ 2270):

Արևմտահայերենի առկա բառարաններում<sup>8</sup> նման սեղմ արձանագրված, սակայն արևմտահայ մամուլում (ի մասնավորի «Ազգակ» օրաթերթում) հաճախ հանդիպող հետևյալ կազմությունները՝ ածանցյալները<sup>9</sup>, բառակազմական – իմաստային հարուստ պատկեր են ներկայացնում՝ կապված վերոնշյալ նախածանցի իմաստային դրսևորումների հետ. դրանք նաև «Նոր բառեր արևմտահայերենի մէջ» Գիրք

---

<sup>5</sup> Տես՝ ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան. շարունակություն, Ե., Հայաստան, 1976., էջ 1524:

<sup>6</sup> Ի դեպ, թեև նշված Ազգային կորպուսը կոչվում է արևելահայերենի, սակայն այնտեղ մեծապես ներառնված են արևմտահայերեն տեքստեր ևս:

<sup>7</sup> Ի մասնավորի տե՛ս Յարութիւն Թ. Գայայեան, Բառարան Գանձարան Հայերեն Լեզուի, Գահիրե, Տպ. Գալֆա, 1938, էջ 519:

<sup>8</sup> Տե՛ս Նայիրի առցանց բառարանը:

<sup>9</sup> Փոխախոյան, փոխգիջումնային, փոխընդունելի, փոխընկալում, փոխընտրանք, փոխկապակցել, փոխհամաձայնել, փոխհատուցել, փոխհրամանատար, փոխնախարար, փոխճանաչել, փոխշահավետ, փոխվարչապետ, փոխտնօրեն, փոխքաղաքապետ, փոխադրամիջոցային, փոխանցորդ և այլն:

Ա-ում<sup>10</sup> և Բ-ում<sup>11</sup> **փոխ (ա)** նախածանցով արձանագրված ածանցյալներն են՝ հետևյալ իմաստային դրսևորումներով.

1. **«փոխադարձ»** - փոխզիջումնային, փոխընդունելի, փոխընկալում, փոխկապակցել, փոխհամաձայնել, փոխձանաչել, փոխշահավետ,
2. **«ենթա-, ստորա-»** - փոխհրամանատար, փոխախոյան, փոխնախարար, փոխվարչապետ, փոխտնօրեն , փոխքաղաքապետ<sup>12</sup>,
3. **«փոխանակ, փոխարեն՝ վնասի դիմաց»** - փոխհատուցել և
4. **«այլ, ուրիշ»** - այլընտրանք<sup>13</sup> (ալտերնատիվ), փոխընտրանք:

Փաստորեն վերը ներկայացրած տեսական գրականության, այլև գրական հայերենի բացատրական բառարաններում արձանագրված **փոխա-** նախածանցի դրսևորած բոլոր իմաստները հիմնականում համընկնում են մեր կողմից արձանագրած իմաստների հետ՝ իմաստային որոշ նրբերանգների տարբերությամբ և այս կամ այն իմաստի՝ ժամանակի պահանջներին համընթաց աշխուժացմանը կամ մթագնմանը համապատասխան:

Մեր դիտարկումներից ակնհայտ դարձավ **փոխա-** նախածանցի բառակազմական արգասավորության աճը. հատկապես արդիական ու կիրառունակ են դրա՝ «փոխադարձ, փոխադարձաբար» **փոխհանդուրժողականություն, փոխահաբեկչություն, փոխանվստահություն, փոխբացառում, փոխընդունելի փոխինտեգրացվել, փոխօգտակար** և «ենթա-, ստորա-» իմաստների դրսևորումները՝ **փոխարտգործնախարար, փոխմարզպետ** (այլ նյութերից՝ **փոխտնօրեն, փոխվարչապետ, փոխնախագահ** և այլն), և բազմաթիվ նման բազմաբաղադրիչ կազմությունները<sup>14</sup>:

Բացի այդ, հստակեցում ու ճշգրտում մտցվեց **փոխզնդապետ** բառի իմաստային դրսևորման մեջ, այն է՝ ինքնուրույն սպայական կոչում, որը առնչություն չունի ենթա-, ստորա- իմաստների հետ:

<sup>10</sup> Նոր բառեր արևմտահայերենի մեջ, Գիրք Ա, առցանց,

<sup>11</sup> Սա դեռ ձեռագիր վիճակում է:

<sup>12</sup> Այս խմբի բառերի շարքում է և փոխզնդապետ-ը, որը զինվորական, սպայական կոչում է և իմաստային որևէ աղերս չունի փոխա- նախածանցի հետ:

<sup>13</sup> Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերեն-արևելախայերեն նոր բառարան «Տիգրան Մեծ» հրատ., Ե., 2011, ցուցակ 1, էջ 361:

<sup>14</sup> Ի մասնավորի տե՛ս Սեդա Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարանը, Ե., Նաիրի, 2002, էջ 469-470:

Ստորև բերում ենք արևմտահայերենում **փոխա-** նախածանցով արձանագրված նորաբանություններն օրինակներով՝ ասվածը հիմնավորելու նկատառումով. օրինակները, բնականաբար, արևմտահայերեն տեքստերից են:

1. ՓՈՒՄԱԽՈՅԵԱՆ, ած., Նոյն դասակարգին մեջ, 18 տարեկան Սուրեն Գրիգորեան բարձրացնելով 328 քկ (145+186), հանդիսացաւ Եւրոպայի **փոխախոյեան** (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 7):
2. ՓՈՒՋԻՋՈՒՄՆԱՅԻՆ, ած., Փութին Էրտողանի հետ հանդիպումի ընթացքին ընդգծած է Լեռնային Ղարաբաղի տագնապի **փոխզիջումնային** լուծումներու անհրաժեշտութիւնը (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 1),:
3. ՓՈՒԸՆԴՈՒՆԵԼԻ, ած., «Փոխարէնը չափազանց կարելոր է կարելիութիւն ստեղծել **փոխընդունելի** հանգուցալուծումներ գտնելու համար», ըսած է Զայցել (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 1):
4. ՓՈՒԸՆԿԱԼՈՒՄ, գ., Ոչինչ կրնայ համարժէք ըլլալ կենդանի կատարումի եւ կենդանի սրահի **փոխընկալումը**: Այդ կախարդական մթնոլորտը ստեղծել անկարելի է, երբ եւ հանդիսատեսները եւ դերակատարները կը գտնուին տարանջատ խուցերու մէջ (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):
5. ՓՈՒԸՆՏՐԱՆՔ, գ., Նման միաձայնութիւն չի նշանակեր հակաժողովրդավարութիւն, ազատութիւններու սահմանափակում կամ իսկական բազմակարծութեան ոտնակոխում, որովհետեւ բազմաթիւ ենթառոյթներ ունեցող ճամբան մէկ է եւ կը հարկադրէ միասնութիւն՝ ձախողած ըլլալը փաստած իշխանաւորներուն **փոխընտրանքին** բիրեղացումով (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):
6. ՓՈՒԿԱՊԱԿՅԻԼ, բ., «Հայաստան» համահայկական հիմնադրամի առաքելութիւնը համահայկական ցանցային համակարգի ձեւաւորումն է, որուն նպատակը Հայաստանի, Արցախի, ինչպէս նաեւ աշխարհասփիւռ հայկական համայնքներու համաչափ, կայուն եւ **փոխկապակցուած** զարգացման ապահովումն է՝ հիմնուելով ընդհանուր ինքնութեան վրայ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 7):
7. ՓՈՒՀԱՄԱԶԱՅՆԻԼ, բ., Քեմալա-պոլշեիկեան **փոխհամաձայնեցում** ռազմաքաղաքական համագործակցութեան հետեւանք հանդիսացող Մոսկուայի 1921 թուականի մարտի 16-ի եւ անոր ածանցեալ Կարսի 1921 թուականի հոկտեմբերի 13-ի պայմանագիրները հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներու

- կոպիտ ոտնահարումներ են եւ Մերի դաշնագիրի չէզոքացման փորձ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 2):
8. ՓՈՒՀԱՏՈՒՑԵԼ, ք., Պրկախտի հակամարմինները աւելի արագ կը քայքայուին, սակայն պատուաստանիւթը կը ստիպէ մարմնին արտադրել շատ աւելի շատ, քան անհրաժեշտ է՝ **փոխաստուցելով** անոնց անկումը (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 5,8):
  9. ՓՈՒՀՐԱՄԱՆԱՏԱՐ, գ., Նոյն ծիրին մէջ Ազգային անվտանգութեան ծառայութիւնը խուզարկեց նաեւ զինուած ուժերու ընդհանուր **փոխհրամանատար** Ստեփան Գալստեանի բնակարանը (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 1):
  10. ՓՈՒՃԱՆԱՉԵԼ, ք., Իրաւականօրէն կայ ուրեմն խոցելի բաժին. էթէ Կարսը իրաւականօրէն ուժի մէջ ըլլար, այդ պարագային ինչո՞ւ նման նախապայման պիտի արծարծէր Անգարան՝ նոր պայմանագիրով տարածքներն ու սահմանները **փոխճանաչելու** (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1): - էջ 1
  11. ՓՈՒՆԱԽԱՐԱՐ, ած., Թուրքիոյ պաշտպանութեան նախարարութեան պատուիրակութիւնը **փոխնախարար** Մուսիին Տերէի գլխաւորութեամբ այցելած է Նախիջեւան (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 8):
  12. ՓՈՒՇԱՀԱԻԷՏ, ած., Փութին նաեւ յայտնած է, որ ռուս-հայկական կապերու զարգացման գործին մէջ զգալի դեր կը խաղայ միջշրջանային գործակցութեան, որ կ'արտօսէ **փոխշահաւէտ** նախագիծեր իրագործել տնտեսական, ընկերային, ենթակառուցային, մարդասիրական եւ բազմաթիւ այլ ոլորտներու մէջ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 8):
  13. ՓՈՒՔԱՂԱՔԱՊԵՏ, գ., Յատկանշական է, որ Գորիսի մէջ քուէներու բացարձակ առաւելութեամբ՝ ստանալով 6269 քուէ կամ ընտրողներու ձայներուն 60,28 առ հարիւրը, վերընտրուեցաւ քաղաքապետ Առուշ Առուշանեան, որ կը գտնուի բանտը, իսկ մինչեւ անոր սզատ արձակումը քաղաքապետի պարտականութիւնները ժամանակաւորապէս կը կատարէ **փոխքաղաքապետ** Մենուա Յովսէփեան (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 2):
  14. ՓՈՒՄՆՅՈՐԴ, գ., Ահա այս է դերը թարգմանիչին: Տեսակ մը միջնորդ երկլեզու գրողի երկու Շտերուն, երկու գրողական գիտակցութիւններուն, երկու մշակոյթներու կամ աշխարհներու միջեւ: **Փոխանցորդ** մը, սահմանորդ մը (*Գ. Պ., 2017, էջ 17*):
  15. ՓՈՒԼՐԱՏՈՒՅԻՉ, ած., Այս պատճառներով ալ մեր արտաքին քաղաքականութիւնը աշխարհաքաղաքական բարդ, յարափոփոխ

- պայմաններուն մէջ չպիտի շարունակէ հաւասարակշիռ, **փոխըացուցիչ** վարքագիծը՝ առաւելագոյն անվտանգութիւնը ապահովելու համար անկախութեան (Ազ., 28. 5. 2019):
16. ՓՈՆԿԱՌԱՎԱՐԻՉ, գ., Դոկտ. Յարութիւն Մամուլեանի՝ Լիբանանի կեդրոնական դրամատան նախկին **փոխկառավարիչի** յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ (Ազ., 15. 10. 2020, էջ 3):
17. ՓՈՆՄԻՋՆՈՐԴՈՒՄ, գ., Գրական շարժումներու նման յաջորդականութիւն չէր կրնար անդրադարձներ չունենալ Փարիզի հայ գրողներուն մօտ: Յղումները, մէջբերումները, **փոխմիջնորդումները**, փոխանակումները մեծաթիւ են ու սերտ, նոյնիսկ երբ հազուադէպ են թարգմանութիւնները (Գ.Պ., 2017, էջ 56):

### Եզրակացություն

Ինչ են տալիս նման ուսումնասիրությունները. ժամանակի ընթացքում լեզվի բառապաշարը, դրա առանձին միավորները իմաստային և կառուցվածքային այլևայլ փոփոխությունների են ենթարկվում՝ ի հայտ եկած նորագույն հասկացությունների և երևույթների ազդեցությամբ: Բացի այդ, բառակազմական այս կամ այն մասնիկը՝ ածանցը (նախածանցը, միջածանցը և վերջածանցը) նույնպէս կարող է կիրառական փոփոխություններ կրել բառակազմական արդյունավետ կամ արգասավոր միավորից վերածվելով անարգասավորի կամ՝ հակառակը: **Փոխանախածանցի** իմաստային վերլուծությամբ ճշգրտվեցին դրա իմաստային դրսևորումները, պարզ դարձավ, որ այն վերածվել է ավելի գործուն մասնիկի՝ մեր օրերի աշխարհաքաղաքական զարգացումների համահունչ: Վերն արձանագրված օրինակներն ասվածի վառ ապացույցն են. ահա դրանցից մի քանիսը. **փոխհանդուրժողականություն, փոխահաբեկչություն, փոխանվտառություն, փոխբացառում, փոխբացարկ, փոխընդունելի, փոխինտեգրացվել** և այլն: Պարզաբանվեց կամ հստակեցում մտցվեց **փոխա-** նախածանցով կազմված բառերի ցանկում. ի մասնավորի՝ «երկրորդը ըստ պաշտոնի, աստիճանի, կոչման՝ նախատիպի ցույց տվածի նկատմամբ» բառակազմական նշանակութան օրինակների շարքում՝ **փոխարքա, փոխգնդապետ, փոխծովակալ, փոխյուպատոս, փոխնախագահ** և այլն, **փոխգնդապետ** և **փոխծովակալ** գոյականների առկայության անհամատեղելիությունը: Ինչպէս նշել ենք շարադրանքում, դրանք ինքնուրույն սպայական կոչումներ են. առաջինը՝ մայրը և գնդապետ կոչումների միջև, հետևյալ շարքում՝ **մայր- փոխգնդապետ – գնդապետ – զեներալ – զեներալ մայր – զեներալ լեյտենանտ – զեներալ գնդապետ**,

որտեղ աստիճանը հանդես է եկել իր՝ ոչ թե երկրորդը, ստորա-ն, այլ կոչումների առաջնորման աստիճանական շարք նշանակությամբ. երկրորդը՝ **փոխծովակալ**, ռազմածովային նավատորմի ծովակալական կոչում է՝ ծովակալի և ենթածովակալի միջև, այդ կոչումը կրող մարդ<sup>23</sup>: Այսինքն, զինվորական և ռազմական կոչումները այլ սանդղակով պետք է ներկայացվեն, քանի որ դրանք ոչ թե երկրորդն են ըստ պաշտոնների, աստիճանի, կոչման, այլ ինքնուրույն սպայական կոչումներ ծառայողական յուրօրինակ շարքում:

Ուսումնասիրությամբ վեր հանված բազմաբարդ ածանցյալները նաև աղերս ունեն կառուցվածքային ուսումնասիրության, քանի որ դրանց մեջ առկա են բազմանախածանց՝ **փոխանվստահություն, փոխներարկում, փոխհամաձայնեցում, բազմավերջածանց՝ փոխահաբեկչություն, փոխընտրանքայնություն** և բազմանախածանցավերջածանցավորներ՝ **փոխհանդուրժողականություն, փոխհամատեղելիություն**, որ ինչպես կառուցվածքային, այնպես էլ ածանցման պատճառաբանվածության տեսակետներից անչափ ուշագրավ պատկեր են ներկայացնում:

Сусанна Тиоян

**Неологизмы с приставкой «փոխ» (пох) в современном западно-армянском языке**

**Заключение**

**Ключевые слова и выражения:** префикс, суффикс, прототип, прикладное, словообразовательное значение, продуктивный, развитие словарного запаса, многопрефиксный, структурное исследование.

Лексический состав языка, его отдельные единицы со временем подвергаются разнообразным изменениям по мере появления новых концептов и явлений. Аффикс слова – префикс, инфикс или суффикс – могут видоизменяться, при этом превращаясь из продуктивной единицы в непродуктивную и наоборот. Из семантического анализа приставки –փոխս становится ясно, что она превратилась в более продуктивную единицу в силу геополитического развития в наши дни, например: **փոխհանդուրժողականություն, փոխահաբեկչություն, փոխանվստահու-**

<sup>23</sup> Տե՛ս էդ. Աղայան, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Ե., Մանմար, 2014, էջ 1273:

թյուն, փոխբացառում, փոխընդունելի, փոխինտեգրացվել և т.д.В результате анализа был уточнен список слов, которые начинаются с приставкой –փոխ. Так, например, в списке примеров со словообразовательным значением “второй по должности, степени, званию”, а именно - փոխարք, փոխգնդապետ, փոխծովակալ, փոխհյուպատոս, փոխնախագահ - наличие փոխգնդապետ не обосновано, поскольку оно является отдельным воинским званием в следующем семантическом ряду: մայր- փոխգնդապետ – գնդապետ – գեներալ – գեներալ մայր – գեներալ լեյտենանտ – գեներալ գնդապետ, где ни одно из указанных званий не ниже следующего. То же самое относится существительного փոխծովակալ, которое в морском флоте является воинским званием адмиралтейства, то есть “человек, который носит данное звание”. Это означает, что воинские и армейские звания нужно представлять в отдельной лексической шкале.

Susanna Tioyan

### Neologisms with the Prefix փոխ (pokh) in Western Armenian

#### Conclusion

**Keywords and expressions:** prefix, suffix, prototype, applied, word-formation meaning, productive, vocabulary development, multi-prefix, structural research.

In the course of time, vocabulary units of a language are bound to undergo various changes, being influenced by up-to-date concepts and phenomena. Word-forming units such as prefix, infix and suffix are likely to undergo functional changes, thus being transformed from a productive unit into a non-productive one and the other way round. The semantic analysis of the prefix փոխ has revealed that it has become a productive unit due to the recent geopolitical changes, for example: փոխհանդուրժողականություն, փոխահաբեկչություն, փոխանվտասահություն, փոխբացառում, փոխընդունելի, փոխինտեգրացվել and others. The analysis has also clarified the list of words formed with the prefix փոխ. Thus, in the range of words with the derivational meaning “the second in order” փոխարք, փոխգնդապետ, փոխծովակալ, փոխհյուպատոս, փոխնախագահ and some others, the word փոխգնդապետ is not justified, since it is a separate military title in the range մայր- փոխգնդապետ – գնդապետ – գեներալ – գեներալ մայր – գեներալ լեյտենանտ – գեներալ գնդապետ, where none of the units is subordinate to the following one. The same refers to the noun “vice-admiral”, which is a military title

in Navy, a rank between «admiral» and «subadmiral». This implies that military titles should be presented in a different scales.

### Օգտագործված գրականություն

1. Էդ. Աղայան, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Ե., Մանմար, 2014, 1327 էջ:
2. Ս. Գալստյան, Ախանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., Եր.համ. հրատ., 1978, 324 էջ :
3. Յարութին Թ. Գայայեան, Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի, Գահիրէ, Տպ. Գալֆա, 1938, 544 էջ:
4. Ռ. Սաքալետոյան, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, «Տիգրան Մեծ» հրատ., Ե., 2011, ցուցակ 1, 382 էջ:
5. Սեղա Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարանը, Ե., Նաիրի, 2002, 492 էջ:

*Խմբագրություն է ուղարկվել 07.10.2022թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 22.10.2022թ.*

*Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.*

**ՏԱԹԵՎԻԿ ՄԱՖԱՐՑԱՆ**

ՀՀ ԳԱՍ Հրայրյա Աճառյանի անվան

լեզվի ինստիտուտ

Բան. գիտ. թեկնածու

Էլհասուցե՝ [tatevik.safaryan1979@gmail.com](mailto:tatevik.safaryan1979@gmail.com)

**ԳՈՑԱԿԱՆԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ  
ԿԱՊԿԱԾ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅՏԵՐԵՆՈՒՄ**

**Ամփոփում**

Լեզուն՝ որպես հանրային գործածության միջոց, անընդհատ զարգացող և փոփոխվող երևույթ, բնականորեն տարաբնույթ սխալների ներթափանցման հնարավորություն է ստեղծում: Բանավոր ու գրավոր խոսքում հանդիպող այդ շեղումները կարող են այնքան հաճախադեպ լինել, որ թվում է՝ հեշտ չէ խմբավորել և կանոնակարգել դրանք: Հաղորդակցական գործառույթի ընթացքում դրանց փոքր մասը, կապված նաև աշխարհաքաղաքական փոփոխությունների հետ, կարող է դուրս մղվել, ինչպես՝ *դիրքետկոր, ռևոյուցիա, սովետական* և այլ բառեր: Շեղումների մի մասը կարող է պահպանվել որպես լեզվական փաստ, ինչը նկատելի է, օրինակ, *ոչ մեկ, որոշներ* սխալ գործածություններում: Ձևաբանական և շարահյուսական մակարդակներում հանդիպող սխալների քննությունն սկսելով գոյականից՝ դիտարկում ենք որոշ օրինաչափություններ հոգնակի թվի կազմության և հոլովական ձևերի մեջ, քանի որ արդի հայերենում կայունացող շեղումները կապվում են ոչ միայն բառակազմական և իմաստաբանական արտահայտչաձևերի, այլև խոսքի մասի թեքված ձևերի հետ: Ուստի բնական է, որ գոյականի քերականական հատկանիշներից բխող շեղումներն առնչվում են հոլովման և թվի քերականական կարգերի հետ:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** հնչյունափոխություն, վերջնահնչյուն, գաղտնավանկ, հոգնակիակերտ, իմաստային նրբերանգ, զուգաձևություն, բառարմատ, հոլովական համակարգ, օրինաչափություն, շեղում, արմատական հնչյուն, ռճական նրբերանգ, խոսակցական լեզու, գրաբարյան տարբերակ:

**Մեթոդաբանություն**

Աշխատանքը կատարված է լեզվաբանական հետազոտության համաժամանակյա, այն է՝ նկարագրական մեթոդի արտաքին և ներքին մեկնաբանության եղանակներով:

\*\*\*

Լինելով նյութական իմաստ արտահայտող խոսքի մաս՝ գոյականը թանձրացական և վերացական, անձնանիշ և իրանիշ ու այլ տեսակներով կարող է հարաբերվել ուրիշ խոսքի մասերի հետ՝ *աղքատություն-աղքատ* (ածական), *շարժում-շարժել* (բայ), հոլովի և թվի կարգի մեջ կառուցվածքային յուրահատկություններ հանդես բերել և երբեմն դառնալ սխալների հիմք:

Որոշ միավանկ գոյականների հոգնակիի կազմության ժամանակ բնական է *ի>ը, ու>ը* հնչյունափոխությունը՝ *միրգ-մ(ը)րգեր, գիծ-գ(ը)ծեր, շուն-շ(ը)ներ, մուկ-մ(ը)կներ*: Բայց այս օրինաչափության տարածումը բերում է ակնհայտ շեղումների այնպիսի բառերում, ինչպիսիք են *թիմ-թ(ը)մեր* (ճիշտը թիմեր), *նիշ-ն(ը)շեր* (ճիշտը նիշեր), *ռուս-ռ(ը)սներ* (ճիշտը ռուսներ): Այդպես նաև *ժողովուրդ* բառի հոգնակին են հաճախ կազմում *ժողովրդներ* սխալ ձևով (ճիշտը՝ ժողովուրդներ): Արդեն գործածական է դարձել *սկզբներ* ոչ ճիշտ ձևը, և աստիճանաբար դուրս է մղվում *սկիզբներ*-ը: Շատ ավելի հստակ է գրաբարում «ն» արմատական վերջնահնչյուն ունեցող միավանկ բառերի՝ *-ներ* մասնիկով հոգնակի թվի կազմությունը (*գառներ, թոռներ, հարսներ, մատներ, ոտներ, ծնկներ, ձկներ, էզներ*), ուստի անընդունելի են այսպիսի սխալ կիրառությունները՝ *հարսեր, մատեր, ծնկեր*: «Խաղողի մատեր» փոխաբերությունը հասկանալի է դարձնում «եր»-ով հոգնակին:

Հոգնակի թվի կազմության սխալ գործածություն են հանդես բերում - *ը* գաղտնավանկ ունեցող մի շարք գոյականներ. *սպա, շտաբ* բառերը երկվանկանի են՝ *ըս-սպ, ըշ-տաբ* (ինչպես՝ *սկիզբ, ստոր, սկյուռ* և այլն, որոնց հոգնակիում այդպիսի շեղում չի լինում), հետևաբար հոգնակի թիվը պետք է կազմվի *-ներ* ածանցով՝ *սպաներ, շտաբներ*, և կոպիտ սխալ են այժմ արդեն լայն կիրառություն ունեցող ձևերը՝ *սպաեր, շտաբեր*: Այստեղ գործում է նաև մի այլ օրինաչափություն. եթե երկվանկանի բառերի սկզբում է գաղտնավանկի *-ը*-ն, ապա հոգնակին կազմվում է *-ներ*-ով (*դպրոց-ներ, սրբիչ-ներ, ժպիտ-ներ, կղզի-ներ վրան-ներ* և այլն): Իսկ եթե այն երկրորդ վանկում է, հոգնակին կազմվում է *-եր*-ով՝ *տես(ը)ր-տետրեր, արկղ-արկղեր, սանր-սանրեր, անգղ-անգղեր* և այլն: Դժվար չէ նկատել, որ *սպա, շտաբ* բառերը պատկանում են առաջին խմբին, ուստի ենթարկվում են *-ներ* հոգնակիի կազմությանը: Այս առումով որոշ վերապահությամբ պետք է ընդունել նշանավոր լեզվաբանի դիտարկումը, որ երկրորդ խմբի որոշ «բառերի գոնե մի մասը ազատ կերպով հոգնակի կարող են կազմել նաև

ՆԵՐ մասնիկով, ինչպես՝ անգղ-անգղներ, արկղ-արկղներ»<sup>1</sup>: Այսպիսի գուգաձևությունը բացատրվում է *սպա*, *շտաբ* գոյականների պարագայում:

Գոյականի հոգնակի թվի կազմության հետ կապված շեղումների մի այլ խումբ է առաջանում վերջին միավանկ բաղադրիչ ունեցող բարդ բառերի մեջ: Կանոնը պահանջում է հիշել, որ երբ այդ միավանկ բաղադրիչը բայական իմաստ ունի, հոգնակի թիվը պետք է կազմել *-ներ* ածանցով՝ *պատմագիրներ* (*գրող-գրել*), *գնդագիրներ* (*ցրող*), *բանտապահներ* (*պահող*), *խաչակիրներ* (*կրող*), *ազգասերներ* (*սիրող*), *ժամացույցներ* (*ցույց տվող*) և այլն: Իսկ երբ այդ երկրորդ բաղադրիչը գոյականական իմաստ ունի, հոգնակին կազմվում է *-եր* մասնիկով՝ *ձեռագրեր* (*ձեռքով գրված գիրք*), *նստացույցեր* (*նստած ցույց*), *արոտավայրեր* (*վայր*), *բանավեճեր* (*վեճ*), *հորաքույրեր* (*քույր*), *տեղաշորեր* (*շոր*) և այլն: Ուստի պետք է խուսափել *ձեռագիրներ*, *նստացույցներ*, *պատմագրեր* և նման այլ կարգի շեղումներից:

Հասկանալի է, որ այս դեպքում դեր է խաղում նաև իմաստային նրբերանգը, որը միշտ կարող է շեղումների առիթ դառնալ: Օրինակ՝ *ձեռագիր*-ը կարող է ընկալվել նաև *ձեռքի գրածը* իմաստով, ինչը հասկանալի կդարձնի *-ներ* հոգնակիակերտով կազմությունը: Բայց, ասենք, *հեռագիր* նշանակում է *հեռվից եկած գիր*, ուստի *հեռագիրներ* ձևը սխալ է (ճիշտը՝ *հեռագրեր*): Բառիմաստի տարբերությունն է հուշում այն, որ *մեծատուն* բառը ստանում է *-ներ* ածանցը (*մեծատուններ*), քանի որ նշանակում է «մեծ տուն ունեցող, հարուստ», իսկ *վերնատուն* բառի հոգնակին կազմվում է *-եր*-ով (*վերնատներ*), որովհետև բառը նշանակում է «վերևի տուն»: Ըստ էության դեր է խաղում այն, որ «բառի երկրորդ միավանկ բաղադրիչը պահպանում է իր հիմնական նշանակությունը»<sup>2</sup>:

Արդյո՞ք այս հիմունքով կարելի է բացատրել *վարչապետ*, *գյուղապետ*, *թաղապետ* և նման բառերի *-ներ* հոգնակիական կազմությունը (*գյուղապետներ*, *թաղապետներ*), երբ ըստ կանոնի՝ ճիշտը *-եր*-ով ձևն է՝ *գյուղապետեր*, *թաղապետեր*: Համենայն դեպս, *-ներ*-ով հոգնակին վավերացվել է տեսականորեն ևս. «Ներ հոգնակերտ մասնիկով են հոգնակի թիվ կազմում նաև «պետ, նիշ» արմատներով վերջացող բաղադրյալ բառերը՝ նամականիշներ, չափանիշներ, վարչապետներ, սպարապետներ»<sup>3</sup>: Եթե հստակ է, որ *նիշ* արմատը *-ներ*-ով հոգնակի է կազմում, որովհետև բայական իմաստ ունի՝ «նշել», ապա *պետ* գոյականը արդյո՞ք կարելի է

<sup>1</sup> Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989, էջ 55:

<sup>2</sup> Մ. Ե. Ասատրյան, Նշվ. աշխ., էջ 56:

<sup>3</sup> Գ. Գևորգյան, Լեզվագործածության սխալներ գրական արևելահայերենում, Ե., 2015, էջ 10-11:

ընկալել «պետ լինել» հարադրությամբ, որպեսզի բացատրվի լեզվի մեջ օրինականացվող շեղումը: Բոլոր դեպքերում գուգաձևության մեջ այստեղ գործածական է մնացել շեղումը:

Գոյականի հոգնակի թվի կազմության որոշ շեղումներ կապվում են բառարմատի սխալ ընկալման կամ բառակազմության հետ: Եթե *Ֆիդայի* բառի հոգնակին հաճախ գրվում է *Ֆիդայիներ*, ինչպես և *նոսաձայն-նոսաձայններ* ոչ ճիշտ ձևով (փոխանակ *Ֆիդայիներ*, *նոսաձայներ*), ապա *պատճեն* բառի եզակի թվի ուղղական հոլովի *պատճե* կոպիտ սխալը հիմք է դառնում *պատճեներ* շեղումի (միակ ճիշտը՝ *պատճեններ*): Գործածական են դառնում նաև անհոգնական հավաքական գոյականների հոգնակի կիրառությունները՝ *երիտասարդություններ*, *ուսանողություններ*, *բանջարեղեններ* և այլն:

Հավաքականությունը դիտվում է որպես մեկ ամբողջություն, և աննկատ է մնում մեկից ավելի քանակային առկայությունը այնքան, որ գործածվել է նաև «հավաքական թիվ» ձևակերպումը: Հետաքրքիր դիտարկում է այն, որ «հին լեզուներում (հին սլավոներեն, հին հունարեն, գրաբար, լատիներեն և այլն) հավաքական թիվը շատ մեծ տարածում ունի, իսկ նոր լեզուներում նա վերանում է՝ փոխարինվելով սովորական հոգնակի թվով»<sup>4</sup>. «*Ուսանողությունը մասնակցեց միջոցառմանը*», «*Ուսանողները մասնակցեցին միջոցառմանը*»: Այսինքն՝ այս և այլ դեպքերում գուգաձևության և շեղումների առկայությունը կապվում է պատմական հիմքի հետ:

Գոյականի քերականական հատկանիշների հետ կապված շեղումների զգալի քանակ կա **հոլովական** համակարգում: Ուղղական հոլովը՝ որպես բառի ուղիղ ձև, կարծեք պիտի բացառեր շեղումները: Սակայն *տատ*, *պապ* բառերի ուղղականը դարձրել ենք *տատի*, *պապի* (հավանաբար *-իկ* քնքշացուցիչ մասնիկի *կ*-ի գեղչումով), որի հիմքի վրա, որպես *ի* ձայնավորով վերջացող բառ, գոյականը ենթարկվել է *ու* հոլովման՝ որոշակիորեն կայունացնելով սխալը՝ *տատու*, *պապու*: Նույն երևույթի փոքր-ինչ ավելի հասկանալի և շատ սակավադեպ տարբերակն է *ջրնուղու*, նաև երբեմն՝ *գազանուղու* սեռականի սխալ ձևը, որի պատճառ է դարձել երկրորդ բաղադրիչի այլափոխումը. այն ոչ թե *ուղի* գոյականն է, այլ *մղել* բայը, հետևաբար այստեղ չկա *ի*-ով վերջացող գոյականի *ու* հոլովման տարբերակը: Եվ ճիշտ չէ «*Ջրնուղու աշխատողները միշտ ուշանում են*» ձևը (ճիշտը՝ «*ջրնուղի աշխատողները*»):

<sup>4</sup> Է. Բ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Ե., 1963, էջ 362:

«Ենթակայի, ինդրի և հատկացուցչի հարաբերությունն արտահայտող հոլովների առաջացումը արդյունք է առարկայի ներգործող կամ ներգործվող լինելու հասկացությանը»<sup>5</sup>: Մա կարող է դեր խաղալ այն քանում, որ ուղղական հոլովի հետ կապված շեղումները քիչ են հանդիպում և մեծ մասամբ կապվում են խոսակցական լեզվի հետ: Միայնները այլ կարգի բացատրություն ունեն մյուս հոլովներում. զգալի քանակ են կազմում թեք հոլովներից առավելապես սեռականը և տրականը:

Ի հոլովման գերակայող դերակատարումը առաջ է բերում զուգաձևություններ, որոնց մի մասը արդեն ընդունելի է դարձել գրական հայերենում: Երևույթը որոշակի քանակ է կազմում *ա* և *ան* հոլովման բառերում: Որքան էլ ճիշտ ձևն է *ուրախության, կատարման, ծագման, ցամաքի, գառան, թռռան, ձյան* սեռական-տրականը, բայց քիչ նկատելի չեն նաև *ուրախությունի, կատարումի, ծագումի, ցատումի, գառի, թռռի, ձյունի* շեղումները: Եթե *ուս* ածանց ունեցող շատ բառերում (*լուծում, անկում, մոտեցում, պնդում, կուտակում խախտում, խզում, նվազում, բուժում, հատուցում, ստուգում, քարացում, թերացում, վերացում*) այս կամ այն հոլովական ձևի գերակայությամբ պահպանվում է զուգաձևությունը, և շեղումը վերածվում է լեզվական կայուն ընդունելի ձևի (*անկման-անկումի, կուտակման-կուտակումի, հատուցման-հատուցումի*), ապա, օրինակ, *ուս* ածանցով *դիմում, շահում* բառերը այլևս ենթարկվում են միայն *ի* հոլովման՝ *դիմումի, շահումի* (բայց ոչ *շահման*):

Լեզուն կենդանի ապրող երևույթ է, շեղումները կարող են վերածվել օրինաչափության, և անգամ՝ հակառակը: Պետք է պայքարել տվյալ ժամանակի մեջ սխալ դիտարկվող երևույթի դեմ՝ անկախ դրա ստուգաբանական հիմնավորումներից: Եթե գոյության իրավունք են ստացել *Մեղրու-Մեղրիի, Գյումրու-Գյումրիի, Ըաֆֆու-Ըաֆֆիի, Լոռու-Լոռիի-Լոռվա* զուգաձևությունները, ապա *Անիի, Շուշիի, Բջնիի, Փարպիի, Մոչիի* ճիշտ սեռական-տրական հոլովաձևերի կողքին անընդունելի են *Անու, Շուշու, Բջնու, Փարպու, Մոչու* շեղումները, որքան էլ կանոնը պահանջում է *ի*-ով վերջացող բառերը ենթարկել *ու* հոլովման: Կոպիտ սխալ պետք է համարել *սիրո* այլաձև հոլովման փոխարինումը խոսակցականից եկած *սիրու* ձևով («*Քո սիրու համար...*»): Այդպես նաև եթե ընդունելի է *սկեարոջ-սկեսուրի, տալոջ-տալի* զուգաձևությունը, ապա *ընկեր բառի ոջ* հոլովման փոխարինումը *ի*-ով (*ընկերի*) դեռևս դիտվում է որպես շեղում: Խոսակցականից են փոխանցվել *անոր, տեգոր* շեղումները (ճիշտը՝ *աներոջ, տեգորջ*):

<sup>5</sup> Է. Բ. Աղայան, Նշվ. աշխ., էջ 364:

Ձուգաձևությունների ընդունելի և ոչ ընդունելի համակարգ ենք տեսնում նաև ժամանակ ցույց տվող *վա* հոլովման բառերում: Ոճական որոշակի առանձնահատկություններով ընդունելի է *օրվա-օրի, ժամվա-ժամի, ամսվա-ամսի, գիշերվա-գիշերի* բառերի զուգահեռ կիրառությունը: Բայց սխալ է հազվադեպ հանդիպող *ցերեկի* ձևը (ճիշտը՝ *ցերեկվա*): Մինչդեռ *վա* հոլովմամբ չեն գործածվում *րոպե, դար* ժամանակ ցույց տվող բառերը, և երբեմն հանդիպող *րոպեյվա* սխալը գալիս է խոսակցական լեզվից, իսկ *դարու* ոչ այնքան նախընտրելի ձևը՝ պատմական ակունքից: Նույն կերպ տարվա չորս եղանակների անուններից *ամառն* ու *ձմեռը* հավասարապես ենթարկվում են *ան* և *վա* (*ամռան-ամառվա, ձմռան-ձմեռվա*), իսկ *աշունը, գարունը*՝ միայն *ան* հոլովման (*աշնան, գարնան*), և *աշունքվա, գարունքվա* ձևերը բարբառային են, որոնք չեն կայունացել գրական հայերենում:

Ձուգաձևությունների, նրանց հետ կապված շեղումների կարգը ի վերջո ենթարկվում է հետևյալ ընդհանրացման. «Ձուգաձևությունների առկայությունը բացատրվում է՝ ա) ժամանակակից հայերենի ընդհանրական հոլովման **Ի** հոլովման գերիշխող դիրքով, բ) ձևային, իմաստային և ձևաիմաստային հոլովումների փոխներգործություններով, գ) ժամանակակից հայերենի հոլովական ձևերին զուգահեռ գրաբարյան հոլովական ձևերի առկայությամբ»<sup>6</sup>: Օրինակներ բերվել են, իսկ վերջին կետի հայտնի դրսևորումներից են *դուստրի-դստեր, կայսրի-կայսեր, պատվի-պատվո, հույսի-հուսո, սգի-սգո, հրի-հրո, խնդրի-խնդրո, մամուլի-մամլո, ծնունդի-ծննդյան, կորստի-կորստյան* ձևերը: Այս կրկնակներից երկրորդի զգալի մասը պաշտոնական կամ հանդիսավոր և սահմանափակ ոճական կիրառություն ունի (*պատվո տախտակ, հուսո առաջաստ, սգո հանդես, հրո ճարակ, խնդրո առարկա, մամլո ասուլիս*), և շեղումներ պետք է համարել, ասենք, «Պատվո խնդիր էր առաջացել», «հուսո վերջին նշույլը», «հրո դեմ ծանր կռիվ», «խնդրո լուծումը», «մամլո աշխատակիցներ» նախադասությունն ու կապակցությունները:

Հոլովական համակարգի հետ կապված որոշ շեղումներ առկա են գործիական, ինչ-որ չափով՝ ներգոյական հոլովներում: *Ում, ություն* ածանցներով բառերի գործիականը զուգաձևության հակում է հանդես բերում *-ամբ* և *-ով* վերջավորությունների պահպանումով՝ *ծագում-ծագմամբ-ծագումով, շարժում-շարժմամբ-շարժումով, ուրախություն-ուրախությամբ-ուրախությունով, մեծություն-մեծությամբ-մեծությունով*: - *Ով* գործիականը բնորոշ է խոսակցական լեզվին, «դեռ ավելին... գնալով

<sup>6</sup> Մ. Ե. Ասատրյան, Նշվ. աշխ., էջ 85:

ավելի ու ավելի գերիշխող է դառնում»<sup>7</sup>, այնքան, որ *պետությունով* ընդունված ձևի կողքին կարող է շեղում դիտարկվել *պետությամբ* բառը:

Հ. Բարսեղյանը նկատում է, որ «Ժամանակակից հայերենի գործիականի -ով վերջավորությամբ ձևերին զուգահեռ՝ գրաբարից անցած -ամբ վերջացող ձևերը կա՛մ մակբայ են, կա՛մ հիմնականում մակբայական գործածություն ունեն (հմտ. մասով-մասամբ, հպարտությունով-հպարտությամբ, արագությունով-արագությամբ, տխրությունով-տխրությամբ)»<sup>8</sup>: Օրինակներ՝ «*Աշխատանքի այդ մասով բավարարված էին բոլորը*», «*Նրա առաքելությունը մասամբ է արդյունք տվել*». «*Իր տխրությունով վարակեց ներկաներին*», «*Տխրությամբ հրաժեշտ տվեց հարազատներին*»: Շեղումը կարող է առաջանալ պատմականորեն փոխանցված մակբայական ձևի՝ գոյականական իմաստով գործածումից. «*Իր տխրությամբ փորձում էր ազդել շատերի վրա*»: Թեպետ խոսքիմասային նման անցումներից առաջացած կիրառությունները արդեն ընդունելի զուգաձևություններ են: Մ. Աբեղյանը երևույթը բացատրում է նրանով, որ -ամբ գործիականով ձևերը, թեպետ ինչ-որ չափով զրկվում են առարկայական իմաստից, բայց լիովին չեն վերածվում մակբայի, «... որովհետև պահում են իրենց հոլովական ձևերը և հոլովների հատուկ նշանակությունները»<sup>9</sup>, հետևաբար կարևոր է մնում գոյականական հատկանիշը:

Ի ձայնավորով վերջացող բառերի գործիական հոլովի շեղումներն առնչվում են այդ արմատական հնչյունի պահպանման կամ զեղչման հետ: Եթե կիրառելի զուգաձևություններ են *ոսկիով-ոսկով*, *լուցկիով-լուցկով*, *գինիով-գինով*, *ուղիով-ուղով*, *այգիով-այգով*, ապա *տարիով-տարով* գույզի առաջինը աստիճանաբար քիչ գործածելի է, *մատանիով-մատանով*, *սպակիով-սպակով* զուգահեռ ձևերից երկրորդը արդեն կարելի է շեղում համարել, իսկ *պատանիով-պատանով*-ի երկրորդ ձևը պարզապես սխալ է:

Ոճական նույնպիսի նրբերանգներ կան նաև ներգոյական հոլովի կազմության մեջ: Այստեղ ևս *այգիում*, *ոսկիում*, *գինիում* դեռևս կիրառելի ձևերի կողքին կայունանում են *այգում*, *ոսկում*, *գինում* զուգահեռները, բայց շեղում են մնում *սպակում*, *մատանում* ձևերը: Ներգոյական հոլովում հաջորդ շեղման հնարավորություն է ստեղծվում նրանից, որ կա բառերի մի խումբ, որ ներգոյական հոլով չի ընդունում, բայց երբեմն կազմում են:

<sup>7</sup> Մ. Ե. Ասատրյան, Նշվ. աշխ., էջ 78:

<sup>8</sup> Հ. Խ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1980, էջ 478:

<sup>9</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 382:

Դրանք վերացական (*հույսում, երջանկությունում*), անձնանիշ (*եղբորում, բանվորում, Աշոտում*), նաև *գարունում, ձյունում* և նման բառերն են:

### Եզրակացություն

Գոյականի ձևաբանական հատկանիշների հետ կապված շեղումները հիմնականում առնչվում են հոգնակի թվի կազմության և հոլովական համակարգի հետ: Հոգնակիի շեղումներն առաջանում են հնչյունափոխության, գրաբարում *ն* ունեցող միավանկ, նաև *ը* զաղտնավանկով երկվանկանի բառերի հոգնակին *-եր* ածանցով կազմելու, երկրորդ միավանկ բաղադրիչ ունեցող բարդ բառերի իմաստային անհասակ ընկալման, բառի կազմության ոչ ճիշտ պատկերացման հետևանքով, ինչպես նաև հավաքական գոյականների մեջ: Հոլովական համակարգում հանդիպող շեղումները զգալի են թեք հոլովներում, մանավանդ սեռականում և տրականում: Ընդհանրական դառնալու հակում ունեն *ի* հոլովման գերիշխող դերից բխող սխալները, որտեղ առաջանում են զուգաձևություններ, որոնք որոշակի քանակ են կազմում *ա* և *ան* հոլովման բառերում, և որոնց օրինաչափ դառնալը կարող է շեղումներ առաջացնել: Միայն գործածությունների որոշ քանակ փոխանցվում են խոսակցական լեզվից, զուգաձևության պատճառ են դառնում գրաբարյան տարբերակները: Զուգաձևություններն ունենում են նաև խոսքիմասային պատկանելիության և ոճական նրբերանգների արտահայտչաձևեր:

Միայն կիրառությունների ուսումնասիրությամբ ընդհանրացնում ենք այն օրինաչափություններն ու միտումները, որոնք հանգեցնում են այդպիսի շեղումների, այդ կերպ ցույց ենք տալիս դրանցից խուսափելու և դրանք հաղթահարելու ուղիները:

Tatevik Safaryan

### The distortions in the morphological peculiarities of the Noun in contemporary Armenian

#### Conclusion

**Key words and expressions.** alternation, suffix, hidden syllabic, plural, meaning nuance, word stem, case system, rule, deviation, stem sound, stylistic nuance, colloquial speech, grabar (Old Armenian) version.

The distortions in the morphological peculiarities of the Noun in contemporary Armenian mostly refer to the formation of plural and grammatical case system. The distortions in the Plural are caused by an unnecessary alternation, monosyllabic words containing «ն» in Old Armenian (Grabar), the formation of plural with «եր» with an affix of two-syllabic works containing «ը»

hidden-syllabic, vague understanding of the meaning of the words with monosyllabic second components. The distortions in the system of the grammatical case are observed in inflections. The general mistakes contain cases with «ի» inflection, where convergences arise, the tendency of which to become regular can lead to deviations. Certain deviations come from colloquial language, the grabar versions of the words also become convergent. The observation of the phenomenon is obvious in Genitive Case and Dative Case as well as in Instrumental Case.

**Татевик Сафарян**

**Отклонения (ошибки) в современном армянском языке связанные с морфологическими особенностями существительного**

**Заклучение**

**Ключевые слова и выражения:** фонетическое изменение, окончание, скрытый слог, частица множественного числа, смысловой оттенок, конформация, корень слова, система падежей, закономерность, отклонение, корневой звук, стилистический оттенок, разговорной язык, древнеармянский вариант слова.

Отклонения морфологических свойств существительных связаны с образованием множественного числа и системой падежей.

Отклонения множественного числа возникают при не обоснованных фонетических изменениях, при использовании суффикса «իր» для образования множественного числа односложных древнеармянских (грабар) слов содержащих на конце «ի», а также двусложных слов содержащих скрытый слог «ր», при не точном смысловом восприятии сложных слов, содержащих второй односложный компонент, в следствии не правильного представления состава слова.

Отклонения в системе падежей значительны в косвенных падежах. Имеют свойство стать обобщенными отклонения исходящие от доминирующей роли спряжения «ի», где образуется конформации являющиеся основанием для превращения отклонений в закономерности.

Некоторое количество отклонений передаются из разговорной речи, причиной возникновения аналогий становления древнеармянские варианты. После встречи со значительным количеством отклонений в родительном и дательном падежах это явление в некоторой степени выявляется также в конформациях творительного падежа, а также в существительных указывающих на личность, или при обязанности внутрисуществительных падежей на некоторые существительные.

**Օգտագործված գրականություն**

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:
2. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989:
3. Բարսեղյան Հ., Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1980:
4. Գևորգյան Գ., Լեզվագործածության սխալներ գրական արևելահայերենում, Ե., 2015:

*Խմբագրություն է ուղարկվել 23.09.2022թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 10.10. 2022թ.*

*Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.*

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
ՀՀ ԳԱԱ Հրայրյա Աճառյանի անվան  
լեզվի ինստիտուտ  
Բան. գիտ. թեկնածու  
Էլիասուցե՝ [aramkhachatryan@mail.ru](mailto:aramkhachatryan@mail.ru)

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Ամփոփում**

Բառապաշարի հարստացման գործում առանձնահատուկ դեր ունեն նորակազմությունները (նորաբանությունները): Նորաբանությունների ուսումնասիրությունը մշտապես եղել է լեզվաբանների ուշադրության առարկան:

Ուսումնասիրության նյութը եղել է 2018-2021 թվականների հրապարակված արևմտահայ մամուլից (Հայրենիք, Նոր Յառաջ, Հորիզոն) դուրս բերված այն բառերը, որոնք ամրագրված չեն բառարաններում:

Արևմտահայերենի բարդ բառերի գերակշռող մասում հիմնական իմաստային կենտրոնը վերջին բաղադրիչն է: Վերջինս արտահայտում է այնպիսի իմաստ, որը կոնկրետանում է առաջին բաղադրիչի միջոցով: Ընդ որում, գերադաս բաղադրիչը կարող է լինել անվանական կամ բայական:

Այն դեպքում, երբ բայարմատը հանդես է գալիս սերող հիմքի դերում, դրսևորվում է հիմնականում բայահիմքով և դերբայական հիմքով: Հարկ է նշել, որ բայարմատի՝ բաղադրող հիմքում լինելու համեմատությամբ սերող հիմքի պարագայում այն ավելի սակավադեպ է, քանզի բայը հազվադեպ է լրացում դառնում այլ խոսքի մասերին:

Արևմտահայերենի (այդ թվում նաև՝ արևելահայերենի) անկախ դերբայներից անորոշը, ենթակայականը բաղադրություններում (բարդ և ածանցավոր բառեր) բառակազմությանը մասնակցում են նաև առանց փոփոխության՝ պահպանելով ոչ միայն ներածանցները, այլև՝ բայական բառակազմական ածանց-վերջավորությունները (-ել, -ալ, -ող):

Նյութի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ բայահիմքը սերող հիմքերի դերում ավելի քիչ է մասնակցում բառակազմությանը, քան որպես բաղադրող հիմք: Սերող հիմքերի դերում ավելի հաճախ հանդիպում են անորոշ և ենթակայական դերբայական հիմքերը՝ երբեմն պահպանելով նաև բայական վերջավորությունները:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** նորակազմություն, բարդություն, արևմտահայերեն, բառակապակցություն, կաղապար, բառակազմական հիմք, դերբայ:

### **Ներածություն**

Բառապաշարի հարստացման գործում առանձնահատուկ դեր ունեն նորակազմությունները (նորաբանությունները): Նորաբանությունների ուսումնասիրությունը մշտապես եղել է լեզվաբանների ուշադրության առարկան:

Բառապաշարը անհրճելի փոփոխվելու, հարստանալու, զարգանալու հատկություն ունի: Դա բացատրվում է նրանով, որ հասարակական կյանքի, բնագավառների, կենցաղի փոփոխությունները իրենց ազդեցությունն են ունենում բառապաշարի վրա: Բառապաշարի հարստացումը շարունակական գործընթաց է, որը բխում է վերը նշված փոփոխությունները արտահայտելու, սահմանելու և հաղորդակցում ապահովելու անհրաժեշտությունից:

Լեզվաբանական ուսումնասիրություններում նորաբանությունների սահմանումները տարբեր են: Գ. Սևակը, օրինակ, գտնում է, որ «Լեզվի յուրաքանչյուր փուլում նրա բառապաշարի մեջ մտնող նոր բառերը կոչվում են նորաբանություններ (նեոլոգիզմներ)»<sup>1</sup>: Էդ. Աղայանը փաստում է. «Ամեն մի նոր բառ, սեփական թե փոխառյալ, նախապես հանդես է գալիս որպես նորաբանություն: Լայն առումով նորաբանություն է կոչվում ամեն մի նոր իրականություն կամ իրողություն: Նեղ առումով, բառագիտական տեսակետից, նորաբանություն է ամեն մի նոր բառ, կայուն բառակապակցություն, դարձված, առանձնահատուկ արտահայտություն, բառի նոր իմաստ, բառագիտական նոր իրողություն»<sup>2</sup>:

Նորաբանությունների ուսումնասիրությանն անդրադարձել են նաև Ս. Էլոյանը, Ա. Մուքիսայանը, Ս. Աբրահամյանը, Ա. Մարտիրոսյանը, Փ. Մեյթիխանյանը և այլք:

### **Մեթոդաբանություն**

Մի կողմ թողնելով նորաբանությունների սահմանման հարցերը և չխորանալով դրանց տարբերությունների և ընդհանրությունների մեջ՝ մենք այս հոդվածում անդրադառնալու ենք նոր բառերի բառակազմական առանձնահատկություններին:

---

<sup>1</sup> Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, 142 էջ:

<sup>2</sup> Է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, 169-170 էջ:

Ուսումնասիրության նյութը եղել է 2018-2021 թվականներին հրապարակված արևմտահայ մամուլից (Հայրենիք, Նոր Յառաջ, Հորիզոն) դուրս բերված այն բառերը, որոնք ամրագրված չեն բառարաններում:

\*\*\*

Հաշվի առնելով, որ մամուլում մեզ հանդիպած նոր բառերը հիմնականում բարդություններ են (բուն կամ իսկական, ածանցավոր), ուստի նախ և առաջ հարկ է նշել, որ ըստ էդ. Ադայանի՝ «Բուն կամ իսկական բարդությունների բնորոշման հիմքերը պետք է համարել այն, որ դրանք բնութագրվում են երկու բաղադրական հիմքերի՝ սերող և բաղադրող հիմքերի անպայման առկայությամբ»<sup>3</sup>:

Սերող է այն բաղադրական հիմքը, որին ավելանում է որևէ բաղադրական հիմք կամ ածանց և կազմում է նոր բառ: Իբրև կանոն՝ բարդ (ածանցավոր) բառերի աջակողմյան բաղադրիչը սերող հիմքն է, ձախակողմյանը՝ բաղադրող (օրինակ՝ դժվարաշարժ բարդության մեջ սերող հիմքն է *դժվար*-, որին *ավելացել է -շարժ* բաղադրող հիմքը՝ կազմելով նոր բառ):

«Հիմքը լեզվական բաղադրյալ միավորի մի մասն է, լեզվական ցանկացած մակարդակի բաղադրյալ միավորի այն հատվածը, որը մնում է, երբ նրանից անջատում ենք այդ միավորի կազմության վերջին քայլում ավելացած բաղադրիչը»<sup>4</sup>:

Ինչպես գիտենք, բայր, լինելով բարդության գերադաս անդամ (բաղադրող հիմք) և արտահայտվելով բայարմատով, բայահիմքով, բառաբարդման դեպքում հիմնականում կազմում է ածականներ, գոյականներ:

Այն դեպքում, երբ բայարմատը հանդես է գալիս սերող հիմքի դերում, դրսևորվում է հիմնականում բայահիմքով և դերբայական հիմքով: Հարկ է նշել, որ բայարմատի՝ բաղադրող հիմքում լինելու համեմատությամբ սերող հիմքի պարագայում այն ավելի սակավադեպ է, քանզի բայը հազվադեպ է լրացում դառնում այլ խոսքի մասերին:

Ուսումնասիրության ընթացքում մեզ հանդիպել են այնպիսի կաղապարներ, որտեղ բայը (բայահիմքը, բայարմատը), որպես սերող հիմք, դրասևորվել է կամ դերբայական ձևով, կամ այնպիսի կապակցություններում, երբ դրանք բառակապակցության ենթ վերածում, ապա արտահայտում են անորոշ դերբայի սեռական հոլովաձևի իմաստ.

---

<sup>3</sup> Նույն տեղում, 271 էջ:

<sup>4</sup> Ս. Ա. Գալստյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2003, 107 էջ:

*ժխտավայր, ճնշամիջոց, գործադաշտ, գաղթաշարժ, կրթանպաստ, կիզակեղրոն, ժխտածն, ճեմաստան (անորոշ դերբայի սեռական հոլովածն), գործելածն, ասելավառություն, աշխատելադաշտ, ասելախանձություն, զգալակերպ, գոյատևելիություն (անորոշ դերբայի ձևով):*

Վերը բերված օրինակներում անորոշ դերբայը (սեռական հոլովի նշանակությամբ) դրսևորում է ն՛ գոյականական նշանակություն (եթե բաղադրող հիմքը գոյական է), ն՛ բայական նշանակություն՝ դառնալով ինդրային լրացում (եթե բաղադրող հիմքը բայական է):

Լ. Հովսեփյանը իր «Գրաբարի բառակազմությունը» աշխատության մեջ վերը նշված կաղապարով (անորոշ դերբայը իր վերջավորություններով որպես սերող հիմք) հիշատակում է միայն մեկ բառ՝ *լալետող* (լացատեղ, ողբավայր)<sup>5</sup>, մինչդեռ այս կաղապարը հայերենի երկու տարբերակներում էլ այժմ շատ կենսունակ է նոր բառերի կազմության ժամանակ:

Հետաքրքիր դրսևորում ունի ենթակայական դերբայի գործածությունը, քանի որ վերջինս իր առանձնահատկություններով (դերբայական, անվանական) բավականին կենսունակ է նոր բառերի կազմության գործում:

Արևմտահայերենի՝ մեր ուսումնասիրած մամուլի էջերում մեզ հանդիպել են նոր բառեր, որտեղ ենթակայական դերբայը հանդես է եկել ն՛ սերող, ն՛ բաղադրող հիմքերում.

**Ենթակայական դերբայը որպես սերող հիմք.** *դիտողագիր, հարձակողապաշտ, անձնատուողական, խոսողություն, կառուցողապաշտ, հիմնողական, մագլցողական, տրամատողական, փոխադրողչէք,*

**Ենթակայական դերբայը որպես բաղադրող հիմք.** *աստամնաշարող, արքունքոտող, ըղձանկարուող, հրաշագրող, ոճրագրող, ուժակարող:*

### Եզրակացություններ

Նյութի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ

- արևմտահայերենի (այդ թվում նաև՝ արևելահայերենի) անկախ դերբայներից անորոշը, ենթակայականը բաղադրություններում (բարդ և ածանցավոր բառեր) բառակազմությանը մասնակցում են նաև առանց փոփոխության՝ պահպանելով ոչ միայն ներածանցները, այլև՝ բայական բառակազմական ածանց-վերջավորությունները (-ել, -ալ, -ող),
- բայահիմքը սերող հիմքերի դերում ավելի քիչ է մասնակցում բառակազմությանը, քան որպես բաղադրող հիմք,

<sup>5</sup> Տե՛ս, Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 80

• սերող հիմքերի դերում ավելի հաճախ հանդիպում են անորոշ և ենթակայական դերբայական հիմքերը՝ երբեմն պահպանելով նաև բայական վերջավորությունները:

**Արամ Хачатрян**

**Об отношениях словообразующих западноармянских новых слов.**

**Заключение**

**Ключевые слова и выражения:** неологизм, осложнение, западноармянский, словосочетание, шаблон, словообразующая основа, причастие.

В обогащении словарного запаса особую роль играют новые слова (неологизмы). Их изучение всегда было в центре внимания лингвистов.

Изучаемый материал был взят из статей, опубликованных с две тысячи восемнадцатого по две тысячи двадцать первый годы в западноармянской прессе (Айреник, Нор Арач, Оризон). Эти слова не были закреплены в словарях.

В преобладающей части сложных западноармянских слов в основном смысловая нагрузка падает на последнюю составляющую. Эта составляющая выражает такой смысл, который конкретизируется первой составляющей частью. Основная составляющая может быть выражена именной или глагольной частью.

В том случае, когда корень глагола выступает как словообразующая основа, выражается в основном основой глагола или основой причастия. Следует отметить, что в этих случаях глагол редко становится дополнением для других частей речи.

Как видим, в западноармянском (в том числе восточноармянском) неопределенная форма глагола и субъективное причастие в составных и префиксальных словах участвуют без изменений, сохраняя глагольные словообразующие суффиксы - окончания (-ել, -ալ, -ալի).

Изучение материала позволяет нам сделать вывод, что основа глагола меньше участвует в словообразующей роли, чем в качестве дополнительной основы. В словообразующей роли чаще встречаются основы неопределенных форм глагола и субъектных причастий, иногда сохраняя также глагольные окончания.

Aram Khachatryan

**About /on/ the relationship between the formation of new words in western  
Armenian  
Conclusion**

**Key words and expressions.** Innovation, Complexity, Western Armenian, word combination, pattern lexical basis, adverbial modifiers.

New formations /new words / have a special role in vocabulary enrichment. The study of neologisms has always been the subject of linguists' attention.

The material of the study was the words taken out from the Western Armenian press /Hayrenik, Nor Yaraj, Horizon/ published in 2018-2021, which are not fixed in the dictionaries. In the majority of Western Armenian complex (complicated) words, the main semantic center is the last component. The latter expresses such a meaning that is concretized by the first component. Moreover, the superior component can be nominal or verbal.

In the case when the root of the verb acts as a root, it is manifested mainly by the root of the verb and the root of the adverbial modifier.

It should be noted that in the case of the stem root, it is more rarely compared to being in the compound root, because the verb rarely becomes a compliment to other parts of speech.

As we have seen, among the independent verbs of the Western Armenian (including Eastern Armenian) the indefinite, subjective compounds (complex and derivational words) also participate in word formation without change, preserving not only infinitives but also the verbal word-forming suffix-endings (-el, -al, -ogh) , (ing), (to do, doing).

The study of the material allows us to conclude that the verb base, as a stemming base, participates less in word formation than as a compound base. Indefinite and subjunctive verb bases are more often found in the role of seed bases, sometimes preserving verb endings as well.

**Օգտագործված գրականություն**

1. Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, 1-2 հ. Երևան, 1976:
2. Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984:
3. Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987:
4. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:

5. Ս. Ա. Գալստյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2003:
6. Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, Երևան, 1991:
7. Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Երևան, 2011:

*Խմբագրություն է ուղարկվել 25.10.2022թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 13.10. 2022թ.*

*Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.*

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**AELITA DOLUKHANYAN**  
MEMBRE CORRESPONDANTE DE  
L'ACADÉMIE DES SCIENCES DE LA RA,  
DOCTEUR DE PHILOLOGIE, PROFESSEUR,  
CHEF DE LA CHAIRE DE LA LITTÉRATURE  
ARMÉNIENNE ANCIENNE ET MÉDIÉVALE  
ET DES METHODES DE SON ENSEIGNEMENT  
*Էլհույուգտ՝ [aelita.dolukhanyan@gmail.com](mailto:aelita.dolukhanyan@gmail.com)*

**LE POÈME *REQUIEM* DE RAZMIK DAVOYAN**

**Introduction**

L'une des meilleures œuvres de Razmik Davoyan, le poème *Requiem*, est l'une de ses premières œuvres. On a beaucoup écrit sur ce poème<sup>1</sup>. L'écrivain est entré dans la littérature arménienne en tant que poète. Son premier recueil intitulé *Mon monde* a été publié en 1963. Déjà ce premier livre, petit, mais très remarquable par son thème et la perfection de son langage poétique, a servi de base à Davoyan pour être admis à l'Union des écrivains de l'URSS en 1964. C'était une période où des poètes notables tels que Parouyr Sévak, Hovhannes Chiraz, Hamo Sahian, Vahagn Davtian, Hratchya Hovhannissian, Sylva Kapoutikian et Maro Margarian étaient membres de l'Union des écrivains d'Arménie.

Par la suite, Davoyan a publié de nombreux recueils, s'est affirmé en tant que romancier en écrivant un long roman en deux parties intitulé *Si Dieu le veut*. Dans ce roman, il y a un titre significatif, « Époque de grandes secousses ». Avec de la subtilité dans l'observation et de l'humour, Davoyan met en lumière les déviations inverses d'une Arménie devenue indépendante, affranchie de l'idéologie soviétique, libérée des contraintes, celles qui ont conduit parfois à la permissivité : « Vous exigez la liberté d'expression, il semble qu'il n'y a plus de limite, et vous présentez à votre guise la personne, la figure, le groupe que vous voulez... surtout le dirigeant que vous voulez... vous déclarez génies les gens dépourvus de talent, traîtres les talentueux, vous acceptez comme devise et ligne directrice d'activité les excréments cérébraux de la médiocrité... »<sup>2</sup>. La poésie et la

---

<sup>1</sup> Voir N. Ghazarian, *L'écorce ouverte de la poésie*, Erevan, 2001 (en arm.) ; F. Bakhchinian, *Le monde poétique de Razmik Davoyan*, Erevan, 2002 (en arm.), et d'autres.

<sup>2</sup> R. Davoyan, *Si Dieu le veut*, Erevan, 2005, p. 296 (en arm.).

prose de Davoyan ont une profondeur philosophique particulière. Les sujets et les thèmes de ses œuvres tournent autour des problèmes de l'existence, dans lesquels l'écrivain tente et réussit à trouver la place et le rôle de sa nation dans le système général de la vie humaine du passé à nos jours. En 1998, il a publié un ouvrage de caractère philosophique intitulé *La théorie de l'énergie vitale*<sup>3</sup>.

Davoyan a écrit un livre autobiographique remarquable intitulé *Famille*.

En 2015, une œuvre intéressante de l'écrivain a été publiée, écrite en prose et en vers, et intitulée *Tzovinar*, basée sur la première partie de l'épopée ancienne arménienne *Les fous de Sassoun*. Je ne sais si Davoyan connaissait l'article d'Avetik Issahakian *Essai sur la mythologie de notre épopée*, dans lequel il y a des explications sur les temps préhistoriques de la formation de notre nation, de nouveau liés à Tzovinar, mère des titans de l'épopée *Les fous de Sassoun*<sup>4</sup>.

Dans toutes ses œuvres, en prose ou en vers, l'écrivain est intéressé par le mystère de la vie.

**Mots clés:** Razmik Davoyan, *Requiem*, génocide, prose, poésie, nomade, service commémoratif, Diogène, Judas, Jésus.

### LE REQUIEM ET LA DESTINÉE DU PEUPLE ARMÉNIEN

Selon Davoyan, le poème *Requiem* a été écrit en 1963-1965. Il a été publié pour la première fois en livre séparé en 1969.

Dans le livre *Poèmes*, publié en 1980, au début du *Requiem*, le poète a placé deux épigraphes éloquentes, tirées du contenu du poème :

- Laissez debout notre arbre généalogique.
- Dans tous les coins de l'univers, il y a une larme,  
Inévitablement suspendue au-dessus des gouffres<sup>5</sup>.

Pourquoi Davoyan a-t-il écrit ce *Requiem* et pourquoi a-t-il présenté son poème au lecteur sous ce titre ? Dans l'encyclopédie *Petit Robert-1* de l'Académie française, on lit : « Requiem - premier mot de la prière latine (donnez-leur le repos éternel) 1. Prière, chant liturgique catholique pour les morts. Messe de requiem pour le repos de l'âme du mort. *Requiem* de Mozart, de Verdi ». <sup>6</sup>

Le chant liturgique de l'Église catholique est devenu un guide pour de nombreux compositeurs célèbres du monde, et des *Requiem*s ont été écrits non

---

<sup>3</sup> Pour la critique du livre, voir Aelita Dolukhanian, *The Theory of Vital Energy according to Well-Known Writer* ("Wisdom", № 1, 2017, p. 77-80).

<sup>4</sup> Voir A. Issahakian, *Œuvres en six tomes*, t. 5, Erevan, 1977, p. 156-171.

<sup>5</sup> R. Davoyan, *Poèmes*, Erevan, 1980, p. 241

<sup>6</sup> *Petit Robert – 1*, Paris ; 1881, p. 1681.

seulement par W. Mozart et G. Verdi, mais aussi par H. Berlioz, F. Liszt et d'autres. Des *Requiem*s ont été également écrits par des compositeurs arméniens : A. Haroutyunian, A. Adjémian, T. Mansourian, V. Balian et d'autres<sup>7</sup>. V. Davtian est l'auteur d'un *Requiem* dans la littérature arménienne. Le *Requiem* d'Anna Akhmatova est célèbre dans la littérature russe.

Le poème *Requiem* de Davoyan vient de nos hymnes médiévaux, du *Livre de lamentations* de Grigor Narekatsi, du roman historique *Les plaies de l'Arménie* de K. Abovian, de l'œuvre *Office des morts* de H. Toumanian. Existe-t-il un requiem qui prenne d'assaut le monde émotionnel de l'âme humaine plus que ces paroles réelles et révélatrices de Toumanian à la mémoire des âmes des victimes innocentes du grand Génocide arménien ?

Je me tenais austère, seul et d'aplomb, comme le Mont Massis,

J'ai appelé ces âmes malheureuses, dispersées à jamais

Jusqu'en Mésopotamie, jusqu'en Assyrie et la mer d'Arménie,

Jusqu'aux Dardanelles, jusqu'aux rives ondulées du Pont.

- Reposez-vous, mes orphelins... l'émotion est vaine, vaine et inutile...

L'homme, cette bête mangeuse d'hommes, restera longtemps pareil...<sup>8</sup>

Toumanian était un vrai prophète : il voyait que les dirigeants de la Turquie, à commencer par Abdul Hamid, commettaient un génocide contre les Arméniens devant les yeux des hommes d'État du monde civilisé, et il n'y a pas eu de condamnation. Et cette attitude existait aussi lors de la jeunesse de Davoyan, et elle existe encore aujourd'hui.

Anna Akhmatova, dont le fils, Lev Gumilyov, a été condamné et exilé à plusieurs reprises, a ajouté une explication importante à son poème *Requiem* (1935-1940), intitulée *Au lieu de préface* ("Вместо предисловия"). "Pendant les années terribles du pouvoir de Yéjov, j'ai passé dix-sept ans dans les queues de la prison de Leningrad. Une fois, quelqu'un m'a « reconnue ». Puis la femme au lèvres bleues, qui se tenait derrière moi et qui, bien sûr, n'avait jamais entendu mon nom de sa vie, s'est réveillée de l'engourdissement qui nous était propre à tous et m'a demandé à l'oreille (tout le monde chuchotait) :

- Et vous, pouvez-vous décrire cela?

Et j'ai dit

- Je peux.

---

<sup>7</sup> *Dictionnaire encyclopédique*, t. 2, Erevan, 2018, p. 772

<sup>8</sup> H. Toumanian, *Œuvres complètes en dix tomes*, t. 1, Erevan, 2018, p. 298.

Puis quelque chose comme un sourire a traversé ce qui avait été son visage autrefois »<sup>9</sup>. Akhmatova a écrit cette petite préface au poème *Requiem* en 1957. Le poème n'a pas été publié de son vivant.

Davoyan a écrit son poème à une époque où aucun monument aux victimes du Grand Génocide arménien n'était encore érigé à Erevan et où certains pays humanitaires de la communauté mondiale n'avaient pas encore condamné le Génocide arménien. Cependant, comme tous les intellectuels avertis, il a estimé que ce génocide pouvait se répéter, sinon il n'aurait pas adressé une telle demande à l'humanité :

Laissez debout notre arbre généalogique...

Bien sûr, on ne trouverait pas dans le poème d'images de génocide, on ne verrait pas les noms des Jeunes Turcs qui ont perpétré le massacre, mais avec l'élan musical du chant du génocide, l'histoire universelle de l'humanité est décrite comme la dure réalité du processus régulier et séculaire des forces du bien et du mal. N'est-ce pas à cause de la multiplication des péchés humains que Dieu a puni l'homme pécheur en causant un déluge et ne sauvant que la génération de Noé ?

Au sommet de l'Ararat,  
Aux temps anciens,  
Seul dans un petit bateau  
Un rescapé du déluge<sup>10</sup>.

Des pensées philosophiques venant directement de l'« Ecclésiaste » de l'Ancien Testament de la Bible traversent le texte du poème de Davoyan. Comme chaque homme, chaque nation a son propre rêve, aussi désirable que le mythique oiseau bleu.

Notre cœur est  
Une ombre flamboyante  
Un oiseau bleu (p. 262).

Le chemin du peuple arménien s'est réfléchi dans un chant national qu'ont chanté tous nos écrivains, et ce chant cherchait des voies sûres. Cependant, le chant s'est interrompu. « Et un nomade incrédule, laissant toutes surprises de côté, s'est soudain dressé devant nous en disant : « Votre chant est chanté ».

Les premières attaques des Turcs Seldjoukides, qui ont commencé en Arménie au début du XI<sup>e</sup> siècle, ont amené dans notre pays un peuple nomade,

---

<sup>9</sup> A. Akhmatova, *Œuvres en dix tomes*, t. 1, Moscou, 1990, p. 196 (en russe).

<sup>10</sup> R. Davoyan, *Poèmes*, p. 246. Ci-après, les pages des citations du poème *Requiem* seront données dans le texte - A.D.

païen, guerrier et inculte, encore ignorant les connaissances religieuses et scientifiques.

Davoyan, en tant que chrétien, rappelle Judas qui a trahi Jésus, et dont les imitateurs continuent leur œuvre.

Judas était certainement croyant.

Et avec un succès allant de génération en génération

Il règne toujours sur le monde (p. 270).

Les descendants de Judas ont une position plus forte dans le monde que les âmes créatrices dotées de la bonté divine, sinon pourquoi :

Et les gens semblent venir au monde

En tant que tueurs,

Ou comme leurs poursuivants... (p. 275).

Avec Judas, l'empereur romain Néron (ayant régné entre 54-68) apparaît dans l'imagination du poète, avec ses actes sanglants qui ont servi de sujets aux œuvres littéraires dans les genres les plus divers. Le roman *Néron, poète sanglant* de l'écrivain hongrois Déjő Kosztolanyi<sup>11</sup> est bien connu, et il a été traduit dans de nombreuses langues du monde. Thomas Mann (1875-1955), romancier et critique littéraire allemand, a écrit des paroles admiratives sur ce roman.

De temps en temps, le mal commence à célébrer sa victoire sur le monde. Le mal, le diabolique, qui poursuit l'homme depuis des temps immémoriaux, dans différentes nations, dans différentes parties du monde, suppose le bouclier d'autodéfense des forces du bien. « C'est vous, l'esprit maléfique, la force maléfique, le démon maléfique, le mal du monde maléfique, qui espionne autour de nous à chaque instant, et l'homme doit le tenir au moins à une distance de lance, anxieux de voir lequel fera le premier saut » ( page 330). Si Dieu ne peut pas maîtriser les maux sur terre, comment les prophètes, les sages, qui ont deviné où mène l'avenir de l'humanité et quel est le vrai sens de la vie humaine, le pourraient-ils ?

Nous trouvons dans le poème les pensées des sages du monde antique. L'un d'eux était Diogène, qui méprisait la richesse, toutes les bonnes choses de la vie sociale, vivait dans un tonneau et se promenait le jour dans les rues d'Athènes avec une lanterne, à la recherche d'un homme véritable<sup>12</sup> :

Est-ce que nus et sans abri

Ne se sont-ils pas assis dans leurs barils cassés et délabrés.

Et tenant de petites lampes de poche dans leurs mains,

---

<sup>11</sup> Déjő Kostolany, *Néron, poète sanglant*, Moscou, 977, p. 235-236 (en russe).

<sup>12</sup> *Petit Robert-2*, Paris, 1988, p. 527.

N'ont-ils pas cherché un homme  
Dans cette foule grise infinie.  
Et qu'est-ce qu'ils nous ont laissé sinon  
Une magnifique légende ?

Sinon un mythe, un conte étonnamment lumineux (pp. 344-345).

Les tragédies qui se produisent dans la vie humaine et qui sont créées par les gens eux-mêmes, se répètent au cours des siècles et on n'en voit pas venir la fin. Et Dieu et les sages prophètes voient avec douleur que l'univers s'effondre à cause des péchés humains et que l'âme humaine est déchirée par toutes sortes de douleurs :

Et j'ai vu douloureusement que, hélas,  
Le déchirement de l'âme humaine

N'aura pas encore de fin dans ce monde (p. 366).

Depuis des siècles, l'homme a aspiré à ce qu'un Christ, fils de Dieu, apparaisse et expie tous les péchés de l'homme par son exemple, en montant sur sa croix. Le lien de la terre et de l'homme, le lien entre l'univers et l'homme revient sans cesse dans toute la trame du poème avec de puissantes images poétiques. L'homme appartient à la fois à la terre et à l'univers, l'homme appartient à la fois à la vie réelle et à l'avenir déterminé par le jugement de Dieu.

Le pain est l'un des symboles de Jésus dans la religion chrétienne, le pain est la base de la vie véritable, et le pain est gagné par un travail honnête dans la vie véritable. Le pain se nourrit de la terre et la terre est la patrie, la terre est sacrée, elle ne doit pas être trahie. Dans ce sens, Davoyan envoie un grand message à l'humanité et particulièrement à ses proches :

Et tout ce que je raconterai au monde  
Je ne veux pas qu'on ait soudain pitié de moi.  
Il y a une loi sage dans ma vie,  
On ne doit pas être ennemi du pain,  
On ne doit pas trahir la terre (page 380).

Dans ce poème, plein de pensées philosophiques, le poète avoue à la fin qu'il n'ignore pas les souffrances et les peines endurées par sa nation pendant sa longue voie et il veut apporter la paix aux victimes innocentes avec son *Requiem*, mettant ainsi fin aux douleurs endurées.

Et agenouillé devant ton Soleil,  
Je te supplie :  
- Oh, que mon nom ne soit pas  
Une fleur de souffrance... (page 383)

**Résumé**

Le poème *Requiem* de Davoyan, bien qu'il ait été écrit dans les années où l'Arménie vivait une vie paisible au sein de l'Union Soviétique et augmentait constamment sa conscience nationale, mais l'intelligent intellectuel arménien était bien conscient que la catastrophe nationale de 1915 pourrait survenir à nouveau.

L'inquiétude de Davoyan est liée au fait que la faiblesse peut conduire à de nouveaux désastres, et pour que pour l'arbre généalogique reste fort, il faut toujours se souvenir des sages leçons de la vie. Après tout, le Livre Saint du Christianisme dit : « Celui qui vient avec une épée, tombera de l'épée ».

Les livres de Davoyan ont été traduits en russe et en tchèque, et une sélection de ses poèmes a été publiée en anglais à Londres.

Le poème *Requiem* restera à jamais dans l'histoire de la littérature arménienne comme une puissante exigence philosophique de protéger la justice et la destinée de la Patrie.

**Աեյիտա Դոլոխանյան  
Ռազմիկ Դավոյանի «Ռեքվիեմ» պոեմը  
Եզրակացություն**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Ռազմիկ Դավոյան, ռեքվիեմ, ցեղասպանություն, արձակ, պոեզիա, քոչվոր, հոգեհանգիստ, Դիոգենես, Հուդա, Հիսուս:

Դավոյանի «Ռեքվիեմ» պոեմը թեև գրվել է այն տարիներին, երբ Հայաստանը խաղաղ կյանքով ապրում էր Խորհրդային Միության կազմում և գնալով առավել մեծացնում էր իր ազգային ինքնագիտակցությունը, սակայն խելացի հայ մտավորականը հրաշալի գիտակցում էր, որ 1915 թվականի ազգակործան աղետը վերստին կարող է նորից կանգնել իր առաջ:

Դավոյանի տազնապները կապվում են այն ճշմարիտ իրողության հետ, թե խեղճությունը կարող է բերել նոր աղետներ, իսկ տոհմածառը կանգուն պահելու համար հարկավոր է կյանքի իմաստուն դասերը մշտապես հիշել: Չէ որ քրիստոնեական սրբազան գրքում ասվում է. «Մրով եկողը սրից կընկնի»:

Հողի և մարդու կապը, տիեզերքի և մարդու կապը շարունակ ու բանաստեղծական հզոր պատկերներով շրջանառության մեջ է պոեմի ողջ շղթայում: Մարդը և՛ հողին է, և՛ տիեզերքին, մարդը և՛ իրական կյանքին է, և՛ Աստծու դասաստանով սահմանված ապագային:

Հացը քրիստոնեական կրոնում Հիսուսի խորհրդանիշներից է, հացը իրական կյանքի հիմքն է, իսկ հացը վաստակում են իրական կյանքում արդար աշխատանքով: Հացը սնվում է հողից, հողը հայրենիք է, հողը սրբություն է, որին չպետք է դավաճանել: Այդ առումով Դավոյանը հիանալի պատգամ է հղում մարդկությանը և հատկապես իր ազգակիցներին

Դավոյանի գրքերը թարգմանվել են ռուսերենով, չեխերենով, իսկ նրա քանաստեղծությունների ընտրանին լույս է տեսել Լոնդոնում՝ անգլերենով:

«Ռեքվիեմ» պոեմը հավերժորեն մնալու է հայ գրականության պատմության մեջ՝ որպես արդարության ու հայրենիքի ճակատագրի պաշտպանության փիլիսոփայական հզոր պահանջ:

*Аэлита Долуханиян*

### Поэма «Реквием» Размика Давояна

#### Заключение

**Ключевые слова и выражения:** Размик Давоян, реквием, геноцид, проза, поэзия, кочевник, панихида, Диоген, Иуда, Иисус.

Поэма «Реквием» Давояна, хоть и была написана в годы, когда Армения жила мирной жизнью в составе Советского Союза и все больше повышала свое национальное самосознание, но умный армянский интеллигент прекрасно понимал, что национальная катастрофа 1915 года может снова постичь её.

Опасения Давояна связаны с тем, что слабость может привести к новым бедствиям, а для того, чтобы генеалогическое древо устояло, необходимо всегда помнить мудрые уроки жизни. Ведь в христианской священной книге сказано: «Кто придет с мечом, тот от меча и погибнет».

Книги Давояна переведены на русский и чешский языки, а подборка его стихов опубликована на английском языке в Лондоне.

Поэма «Реквием» навсегда останется в истории армянской литературы мощным философским требованием защиты справедливости и судеб Родины.

*Խմբագրություն է ուղարկվել 18.09.2022թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 05.10.2022թ.*

*Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.*

ԱՇՈՒՂ ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԸ ԵՎ ԻՐ ԵՐԳԵՐԸ

Ներածություն

Հայ աշուղ Քուչակին և (կամ) նրա ստեղծագործությանն անդրադարձել են Ղ. Ալիշանը<sup>1</sup>, Ա. Տեկանցը<sup>2</sup>, Կ. Կոստանյանցը<sup>3</sup>, Տ. Պալյանը<sup>4</sup>, Մ. Աբեղյանը<sup>5</sup>, Հովհ. Թաղևադյանը<sup>6</sup>, Ա. Չոպանյանը<sup>7</sup>, Հ. Աճեմյանը<sup>8</sup>, Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը<sup>9</sup>, Աս. Մնացականյանը<sup>10</sup>, Օ. Եգանյանը<sup>11</sup>, Շ. Գրիգորյանը<sup>12</sup>, Մ. Մկրյանը<sup>13</sup>, Ս.

<sup>1</sup> Տե՛ս **Ղ. Ալիշան**, *Հուշիկը հայրենյաց հայրոց*, հտ. Բ, Վենետիկ, 1870:

<sup>2</sup> Տե՛ս **Ա. Տեկանց**, *Հայերգ, մեղեդիք, տաղք և երգք*, Թիֆլիս, 1882:

<sup>3</sup> Տե՛ս **Կ. Կոստանյանց**, *Միջնադարյան հայոց տաղեր ու ռոսանավորներ*, պրակ Ա և Բ, Թիֆլիս, 1892:

<sup>4</sup> Տե՛ս **Տ. Պալյան**, *Անյիշատակ հայ աշուղ մը*, Հանդես ամսօրյա, 1897, էջ 344-345:

<sup>5</sup> Տե՛ս **Մ. Աբեղյան**, *Երկեր*, հտ. Բ, Ե., 1967:

<sup>6</sup> Տե՛ս **Հովհ. Թաղևադյան**, *Քուչակ Նահապետի երգերը*, Թիֆլիս, 1903:

<sup>7</sup> Տե՛ս **Ա. Չոպանյան**, *Նահապետ Քուչակի դիվանը*, Փարիզ, 1902, նաև *Հայրեններու բուրաստանը*, Փարիզ, 1940:

<sup>8</sup> Տե՛ս «*Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության*» ժողովածուն, Էջմիածին, 1917, էջ 91-96:

<sup>9</sup> Տե՛ս **Ֆրիկ**, *Դիվան* աշխատասիրությամբ **Տիրայր Արքեպիսկոպոսի**, Նյու-Յորք, 1952, էջք 138, 551-558:

<sup>10</sup> Տե՛ս **Աս. Մնացականյան**, Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, *Պատմա-բանասիրական հանդես*, Ե., 1958, թիվ 2, էջ 234-257, **Աս. Մնացականյան**, Միջնադարյան սիրո հայրենների անդրանիկ ժողովածուն և հայրենների հարցը, տե՛ս *Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության*, Ե., 1971, էջ 96-126, Հայրեններ, աշխ. **Աս. Մնացականյանի**, Ե., 1995, էջ 8-40:

<sup>11</sup> Տե՛ս **Օ. Եգանյան**, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, *Բանբեր Մատենադարանի*, թիվ 5, 1960:

<sup>12</sup> Տե՛ս **Շ. Գրիգորյան**, *Հայ հին գուսանական երգեր*, Ե., 1971, **Շ. Գրիգորյան**, Ո՞վ է ի վերջո, Նահապետ Քուչակը, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Ե., 1984, № 7, **Շ. Գրիգորյան**, Ո՞վ է իրականում Նահապետ Քուչակը, *Բազմավեպ*, 2000, ՃՕԸ 1-4, էջ 231-246, **Շ. Գրիգորյան**, *Հայ աշուղական գրականության պատմություն*, Ե., 2002, էջ 76-102:

<sup>13</sup> Տե՛ս **Մ. Մկրյան**, Նահապետ Քուչակ, տե՛ս *Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր*, Ե. 1976, էջ 464-476:

Հարությունյան<sup>14</sup>, Հ. Սահակյան<sup>15</sup>, Կ. Քիպարյան<sup>16</sup>, Պ. Խաչատրյան<sup>17</sup>, Խ. Ամիրյան<sup>18</sup>, Հ. Թամրազյան<sup>19</sup> և այլք, նաև թյուրքալեզու գրականության մեջ<sup>20</sup>:

Նահապետ Քուչակի աշուղական երգերի քննությամբ է պայմանավորված սույն հոդվածի **արդիականությունը**, որով ևս հիմնավորապես հերքվում է հայրենների՝ Նահապետ աշուղ Քուչակին վերագրելու վարկածը:

Ուստի մեր **նպատակն** է ընդգծել, որ հայագիտության մեջ Քուչակին թյուրիմացաբար վերագրված հայրենները նրա երգերը չեն. Քուչակ Վանեցին մի ինքնատիպ աշուղ է, որը գրել է հայերեն, հայերեն-պարսկերեն և թյուրքերեն աշուղական երգեր: Մեր ուսումնասիրության **խնդրառարկան** աշուղ Քուչակ Վանեցու անձի և նրա աշուղական երգերի քննությունն է, որ կատարում ենք պատմական, պատմահամեմատական, կուլտուր-պատմական մասնագիտական և վերլուծական, համադրական ընդհանուր **մեթոդների** կիրառմամբ:

---

<sup>14</sup> Տե՛ս **Ս. Հարությունյան**, Նահապետ Քուչակ, տե՛ս *Հայկական սովետական հանրագիտարան*, հտ. 8, Ե., 1982, էջ 172-173, **Ս. Հարությունյան**, Հայրենների խնդիրը և Ասատուր Մնացականյանի գիտական նոր համահավաքը, *Պատմա-բանասիրական հանդես*, 1996, թիվ 1-2, էջ 153-168:

<sup>15</sup> Տե՛ս *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը*, աշխ. **Հ. Սահակյանի**, հտ. Ա., Ե., 1986:

<sup>16</sup> Տե՛ս **Կ. Քիպարեան**, *Պատմություն հայ հին գրականության*, Վենետիկ, 1992, էջ 630-632:

<sup>17</sup> Տե՛ս *Գանձարան հայ հին բանաստեղծության*, աշխ. **Պ. Խաչատրյանի**, Ե., 2000:

<sup>18</sup> Տե՛ս **Խ. Ամիրեան**, *Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանյան Կայսրություն. 16-20րդ դարեր*, Փարիզ, 1993:

<sup>19</sup> Տե՛ս *Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը*, աշխ. **Հ. Թամրազյանի**, Ե., 2001:

<sup>20</sup> Տե՛ս **Ա. Երևանլի**, *Հայ-ադրբեջանական ժողովրդական բանահյուսության կապերը, Эрмэни-азэրбайчан шифаһи халг эдэбийяты элагэлэри*, Երևան, 1958, էջ 177, **Vasfi Mahir Kocatürk**, *Saz Şiiri Antolojisi*, Ayyıldız, Mtb. Ank. 1963, s. 21, **Əzizə Cəfərzadə**, *Azərbaycanın aşiq və şair qadınları*, Bakü, 1974, էջ 152-156, **Բարաֆիլ Ապպասով**, *Ազերպայջան Ֆոլկլորու XIX Էսր Էրմէնի Մէնպալէրինտէ*, Բարսու, 1977, էջ 23-32, **К. Pamukciyan**, *Ermeni Harfli Türkçe Metinler*, Aras yay. Ist., s. 107, **Mehmet Bayrak**, *Alevi-Bektasi Edebiyatında Ermeni Aşıkları (Aşuğlar)*, Ankara, 2005, **Azad Nəbiyev**, *Azərbaycan xalq ədəbiyyatı*, II hissə, Bakı, 2006, էջ 93-101 /<http://elibrary.bsu.az/kis/1615.pdf>, հասանելի էր 24.02.2017/, նաև *Azərbaycan dastanları* (toplayib nəşrə hazırlayan A. Nəbiyev-dir), Bakı, 1977, էջ 119-129 և այլն:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Վանեցի Քուչակ, աշուղական երգերի տաղաչափություն, հայրենների յամբ-անապետոյան տաղաչափություն, եռալեզու աշուղ:

**Քուչակ Վանեցու անձի մասին:** Քուչակի մասին կենսագրական տեղեկություններ գրեթե չկան: Ստույգ վկայություն է Ստեփանոս Ջուղայեցու ձեռագիր հիշատակարանը. «Յիշեցեք զՔուչակ և միւս կենակից Թանգխաթուն: Դարձեալ յիշեցեք զՔուչակ և զմեծ պապն իւր՝ Նահապետ վարպետն, որ մականունն Աշըղ Քուչակ ասի»<sup>21</sup>: Ապա Ջուղայեցին նշում է նաև ձեռագրի ստացման թիվը. «Յիշեցեք զվերջին ստացող սորա, որ ստացաւ ի հալլալ ընչից իւրոց Քուչակն, ի թուին Հայոց ՌՁՁ (1637)»<sup>22</sup>:

Փաստենք, որ սա 17-րդ դարի ձեռագիր հիշատակարան է, և պետք է համարել վավերական աղբյուր՝ հիմնվելով հենց այս վկայության վրա: Արդ՝ ըստ այս հիշատակարանի՝ **գոյություն են ունեցել պապ և թոռ Քուչակներ: Հստակ է նաև, որ թոռ Քուչակի կինը Թանգխաթունն է, իսկ պապ Քուչակն անվանվել է Նահապետ, ով աշուղ Քուչակն է, իսկ թոռ Քուչակը կենդանի է եղել հայոց ՌՁՁ (1086+551=1637) թվին:**

Այս փաստերը պետք է համարել Քուչակի անձի և գործի պարզաբանման մեկնակետերը:

Ի դեպ, Նահապետ Քուչակի մասին այս վկայությունը հաստատում է նաև Քուչակյան տոհմի վերջին շառավիղը՝ Աշտարակի Հադս (այժմ՝ Աղձք) գյուղի վերաբնակիչ, ծնունդով խառակոնիսցի Փանոս Չիչագյանը, ով 1940 թ. Վանա բարբառով պատմել է քուչակյան մի ավանդավեպ, որը գրառել է Ս. Ավագյանը: Ըստ այդ ավանդության՝ Խառակոնիսում և ընդհանրապես Արձակի գավառում հայտնի «աշըղ Չիչակը (Քուչակը) խառակոնիսցի Նախոն (Նահապետն) է եղել, որն իր շնորհն ու աշուղի իր անունը երագով ստացել է Արձակի լճի ձիթքեր բաշխող «խրեղեն մարթուց»<sup>23</sup>:

Պապ Քուչակն անվանվել է նաև Նահապետ վարպետ աշըղ Քուչակ, Չիչակ, Վանեցի Քուչակ կամ Վանլի Քոչակ: Ծննդյան ստույգ թվականը հայտնի չէ:

Ես Քուչակս եմ Վանեցի,  
Ի գեղէն Խառակոնիսայ,  
Լցեր եմ հարիւր տարին,  
Էլ չի գար մտքիկս ի վերայ,

---

<sup>21</sup> Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ, հտ. Բ, Ե., 1978, էջ 716:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխ. Հ. Թամրազյանի, էջ 99:

Ով ինձ ողորմի ասի,

Ողջ կենայ իւր կենաց վերայ<sup>24</sup>:

Ինչպես այս հատվածից է պարզվում, **Վանեցի Քուչակի ծննդավայրը Խառակունիս գյուղն է.** այն անվանվում է նաև Խառակունիս, Խարագունիս, Խարականիս, Խարակունիս և այլն. (այդ գյուղում է ծնվել նաև Նաիրի Ջարյանը): Վասպուրական աշխարհի Արճակ գավառում՝ Արճակ լճի հյուսիս-արևելքում է գտնվում Խառակունիս գյուղը, որն այժմ անվանվում է Կարագյունդուզ:

Բանաստեղծական այս հատվածից հնարավոր է նաև ենթադրել, որ 100 տարի ապրողը Նահապետն է, ոչ թե թոռը (ինչպես սխալմամբ կարծել են), ուստի նա ծնվել է 15-րդ դարի վերջին՝ հավանաբար 1490-ական թվականներին, քանի որ նրա գերեզմանաքարի արձագրությունից հայտնի է մահվան թվականը՝ 1592 թ.:

Քուչակի կրթության մասին որևէ տեղեկություն չի պահպանվել: Սակայն այդ մասին Շ. Գրիգորյանը որոշակի դատողություն է անում. «Երևում է, որ Քուչակն իր ժամանակի կրթված, բազմակողմանիորեն զարգացած մարդկանցից մեկն է եղել»<sup>25</sup>:

Նահապետ աշուղ Քուչակի վարպետ լինելու մասին մի կողմնակի ապացույց է Խրիմյան Հայրիկի հուշը, ըստ որի Քուչակն ունեցել է մի աշակերտ՝ աշուղ Մուշոն, ով ևս վանեցի է եղել. «Աշրդ Մուշոն բնիկ մեր գիւղի գաւակն է, եւ աշուղ Չիչակիին աշակերտ եղեր է, որոյ գերեզման ցոյց կուտան այսօր Խարակունիս գիւղի սուրբ Թորոս եկեղեցւոյ դարի վրան»<sup>26</sup>:

Գ. Ասատուրը գրի է առել նաև Քուչակի մասին Խրիմյան Հայրիկի հուշերը. «Գիղացի ծերունիներ կը պատմեն, թէ զուարճաբան մարդ մը եղած է Քուչակ: Սօտակայ գիւղերէն կը կանչեն եղեր զինքը հարսանիք: Քուչակ ալ կառնէ եղեր իր քեման ու կերթայ: Անգամ մըն ալ՝ գիւղի մը չըհասած՝ գայլեր զինքն կը պաշարեն: Քուչակ արագութեամբ կելնէ ծառին գլուխ և կը նուագէ: Գիւղացիներ կառնեն քեմանին ձայն և կը հասկնան, որ Քուչակ եկեր է: Կելնեն, կը փնտռեն և կը գտնեն զինքն, որ ելած ծառին մը գլուխ անուշ կը նուագէ, իսկ գայլեր՝ ծառին բոլորտիք շարուած՝ լուռ մտիկ կընեն»<sup>27</sup>: Ըստ ավանդության, որը Հովհ. Թադևոսյանին պատմել է Ս. Հայկունին, Քուչակը մրցակցել է սուլթանի աշուղների հետ և հաղթել նրանց,

---

<sup>24</sup> Հայրեններ, աշխ. Աս. Մնացականյանի, Ե., 1995, էջ 583:

<sup>25</sup> Շ. Գրիգորյան, Ո՞վ է ի վերջո Նահապետ Քուչակը, *Լրաբեր հասարակական գիտությունների*, էջ 40:

<sup>26</sup> Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 85:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 94:

իսկ վերջիններս «տեսնում են, որ աշրդ Չիչակը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի կարճ, փոքրիկ, տձև եւ անշնորհք (ըստ արտաքինի) մարդ, ուստի ասում են՝ «Մա ոչ թե չիչակ (ծաղկի պէս գեղեցիկ) մարդ է, այլ մի քեօչէկ մարդ է. սրա հետ խօսել և մրցել չարժէ էլ»<sup>28</sup>:

Հովհ. Թաղևոսյանը գրում է, թե Ս. Հայկունին այս ավանդությունը պատմել է ժողովրդական կենդանի աղբյուրից, որի մեջ եղած «Մուլթանի աշուղների և թե Չիչակի երգերը տաճկերէն են,- վերջինները ոչ մաքուր բովանդակութեամբ»<sup>29</sup>:

Բնականաբար **Նահապետ Քուչակն ամուսնացած է եղել**, քանի որ հայտնի է նաև թոռ Քուչակի գոյությունը, ում կնոջ անունը Թանգխաթուն է: Ն. Ջարյանը Նահապետ Քուչակի կին է անվանել այս Թանկթախունին, սակայն Ստեփանոս Ջուղայեցու հիշատակարանի համաձայն Թանգխաթունը թոռ Քուչակի կինն է. «Յիշեցեք զՔուչակ և միւս կենակից Թանգխաթուն: Դարձեալ յիշեցեք զՔուչակ և զմեծ պապն իւր՝ Նահապետ վարպետն, որ մականունն Աշրդ Քուչակ ասի»<sup>30</sup>:

Ըստ Ն. Ջարյանի պատմած ավանդության՝ Քուչակը երագում տեսնում է ձիթհանքի տիրոջ աղջկան՝ Թանկխաթունին, որ ոսկե թասով անմահական ջուր է տալիս իրեն, և Քուչակն ամուսնանում է նրա հետ, դառնում հայտնի աշուղ<sup>31</sup>: Այս շփոթը, բնականաբար, ժողովրդական ավանդության հետևանք է, քանի որ ավանդության «համաձայն «աշրդ» են մկրտում ընտրեալ մարդիկ, երբ երագում իմում են աշուղական արուեստի «փիր»-ի՝ առաջնորդ-ռահվիրայի կամ սիրուհու կողմից թասով նրանց տրուած սիրոյ կամ աստուածային սիրոյ անմահական օշարակը՝ շարբաթը»<sup>32</sup>: Հետաքրքիր է, որ Փ. Չիչագյանի պատմած ավանդության մեջ ևս Քուչակի ամուսնանալու մասին կա վկայություն. «Չիչագն ի՛ կրմնա ուր տուն, կըփսակվի, կըտանա ճիծ-պըժի տեր: Համ ռենջբարութեն կանի, համ աշըղութեն»<sup>33</sup>:

Եվ Ս. Հայկունու, և Փ. Չիչագյանի պատմած ավանդությունների համաձայն՝ **աշուղ Քուչակը ունեցել է մի քույր**: Ըստ Փ. Չիչագյանի՝ «Չիչագին էլ մեյ քյոր էլ կըլնի, էրկու աչքով կոր, համա շատ իմաստուն

---

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 97:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 98:

<sup>30</sup> *Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ*, հտ. Բ, էջ 716:

<sup>31</sup> Տե՛ս *Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը*, էջ 119:

<sup>32</sup> **Խ. Ամիրեան**, *Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանյան Կայսրություն. 16-20րդ դարեր*, էջ 18:

<sup>33</sup> *Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը*, էջ 102:

ախչիկ կըլնի»<sup>34</sup>: Նույն ավանդության մեջ նաև հիշվում է, որ Քուչակը Ստամբուլ գնալուց առաջ հանդիպում է Արճակի հոտադներին, ովքեր մի հանելուկ են ասում, իսկ աշուղը չի կռահում պատասխանը, գալիս է տուն, և կույր քույրը մեկնում է հանելուկը. «Էտը չարուխն ի, մեյ քիթ, քառսուն աչկ»<sup>35</sup>:

Հովհ. Թադևոսյանը Ս. Հայկունու պատմած մի ավանդության մեջ հիշում է, որ Նահապետ «Քուչակը Վանի շրջակայքում յայտնի էր աշուղ Չիչակ անունով: Նա ունեցել է մի քոյր (անունը չկայ), որը բանաստեղծական և աշուղական ձիրքերով եղբորից անելի է օժտուած լինում»<sup>36</sup>:

Ն. Զարյանի գրառած ավանդության մեջ նաև հիշատակվում է այդ քրոջ անունը. «Նունուֆար անունով մի քույր ուներ»<sup>37</sup>:

Ն. Զարյանը այս ավանդությունը լսել է իր մորից: Ըստ այդ ավանդության՝ Ստամբուլում սուլթանի թագուհին երեխա է ունենում, և քարանում է նրա կուրծքը, կանչում են Քուչակին, ով իր երգով արցունք է բերում կնոջ աչքերից և կաթ՝ ստինքներից<sup>38</sup>: Քուչակի այս հրաշապատում արարքն ավելի հետաքրքիր մանրամասներով պատմում է Փ. Չիչագյանը<sup>39</sup>: Ըստ այս ավանդության՝ Քուչակին տանում են սուլթանի կնոջ ապարանքի մոտ, քանի որ Քուչակը «մի քիչ շոռաչկ» է լինում, որոշում է ներս չգնալ ու չտեսնել այդ կնոջ երեսը, քանի որ «ջրհեղ կնիկ տիսնալ, աչքով-ընքով չանել» չէր կարող: Սուլթանի վեզիրը ստիպում է, որ ներս մտնի, իսկ Քուչակը պահանջում է կապել իր աչքերը, մինչդեռ վեզիրը պնդում է, որ չկապեն: Հնարամիտ Քուչակը դեմքով հակառակ է կանգնում կնոջը և երգում:

Ըստ Ն. Զարյանի՝ սուլթանի կինը պառկած էր վարագույրից այն կողմ, իսկ «Քուչակը չոքեց վարագույրի առաջ, իր սազը սեղմեց կրծքին և սասց էն խաղերը, որ Թանկխաթունին երագում տեսնելուց հետո ասել էր Արճակա ձիթահանքում»<sup>40</sup>:

Ըստ Ն. Զարյանի պատմած ավանդության՝ սուլթանն իր կնոջն ու երեխային փրկելու համար թագավորական թանկագին շալ կապեց Քուչակի գլխին (Ս. Հայկունու պատմածի համաձայն՝ սուլթանը Քուչակին շալ է նվիրել իր աշուղներին հաղթելու համար)<sup>41</sup>: Սուլթանի ապարանքից դուրս

---

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 101:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 104:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 97:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 121:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 122:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 105-108:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 122:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 98:

գալուց հետո Քուչակն այդ շալն արձակում, կապում է փորին: Սուլթանի երգիչներից մեկը չարախոսում է՝ այդ մասին պատմելով սուլթանին: Ապարանք կանչված Քուչակն արդարանում է՝ ասելով, որ գլխին կապած շալը տեսնում են բոլորը և փառք տալիս սուլթանին, իսկ ինքը չի տեսնում: Դրա համար էլ կապել է փորին, որ ինքն էլ տեսնի ու փառք տա սուլթանին:

Ապա չարախոս երգիչը կրկին փորձում է սուլթանին տրամադրել Քուչակի դեմ՝ ասելով, որ Քուչակը գաղտնի բաց է արել վարագույրը, տեսել է թագուհուն ու սիրահարվել, դրա համար էլ պագել է սուլթանի կուրծքը, քանի որ այն դիպել է թագուհու կրծքին: Հնարամիտ Քուչակը պատասխանը գտնում է՝ ասելով, թե ինքը չի պագել սուլթանի կուրծքը, այլ պագել է ալլահի ձեռքը, քանի որ եթե ալլահի ձեռքը չլինի սուլթանի կրծքին, ապա նա չի կարող աշխարհի դեկավարել:

Սուլթանը գլխատել է տալիս իր չարախոս երգչին, իսկ Քուչակին խոստանում տալ նրա ուզածը: Աշուղ Քուչակը յոթ մզկիթի, յոթ եկեղեցու, յոթ կամրջի ծախս է ուզում սուլթանից: Ստամբուլից մինչև Վան շինելով յոթ մզկիթ, յոթ կամուրջ ու եկեղեցի՝ գալիս հասնում է Խառակոնիս, որտեղ էլ շինում է յոթերորդ եկեղեցին՝ Սուրբ Թեոդորոսը: Ապա բարձրանում է եկեղեցու գմբեթի ծայրը, տնկում է խաչը՝ ասելով, որ այնտեղից թռնում է, որտեղ ընկնի, թող այնտեղ էլ թաղեն: Ցած է նետվում, սակայն հրեշտակները նրան թևեր են տալիս, և նա կամաց իջնում է գետնին:

Փ. Չիչագյանի գրույցում ևս Քուչակն ընկնում է տանիքից, բայց չի մեռնում. «Չիչագի աչկեր կրկապեն, կրխանեն ժամու տանիս, թարանջեն կառնեն տակ, ուրանքյ կըթողնեն կուկյան կըմտնեն ժամ՝ ուրանց պատարաքյ կանեն: Կըպըռծընեն կըլնեն տյուս՝ կըտիսնան որ ինչ, Չիչագն ինգեր ի պատի տակ, սաղ-սալամաթ, ըսկի մեյ տեղ էլ չի ցավցե»<sup>42</sup>:

Ըստ Խրիմյան Հայրիկի հուշի՝ «Գիւղացիներ մըտիկ չեն ըներ, կը կարծեն, թէ Քուչակ գուարճաբանութիւն կընէ: Սակայն նա ինքզինքը վար կը նետէ և կը մեռնի: Եւ Քուչակին գերեզման այդ օրէն ուխտատեղի մը եղած է գիւղացիներէ»<sup>43</sup>: Ա. Ղանալանյանի «Ավանդապատում»-ում ևս Քուչակը «ցած է նետվում վանքի կատարից և տեղն ու տեղը մահանում: Այդտեղ էլ թաղում են նրան»<sup>44</sup>:

---

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 94-95:

<sup>44</sup> Ա. Ղանալանյան, *Ավանդապատում*, Ե., 1969, էջ 274:

Նահապետ Քուչակը թաղված է Խառակոնիսի Ս. Թեոդորոս եկեղեցու բակում, որը դարեր շարունակ եղել է սրբատեղի: Ըստ Չիչագյանի՝ «Ինոր կյերեզման մուրազատուր էր»<sup>45</sup>:

Ն. Զարյանը երեխա ժամանակ տեսել է Քուչակի գերեզմանը, որի վրա, ինչպես ինքն է հիշում, գրված է. «Քուչակ Նահապետ և կողակիցն նորա Թանկխաթուն»<sup>46</sup>: Շփոթն ակնհայտ է, ըստ Ստ. Ջուղայեցու հիշատակարանի՝ Թանգխաթունը թոռ Քուչակի կինն է: Ըստ Ս. Աբեղյանի՝ Ա. Քալանթարը 1917 թ. լուսանկարել է գերեզմանը, որի վրա գրված է. «Սա արեւ Քուչակ թվ ՌԻՄ Աձ ՔՄ»<sup>47</sup>: Ըստ այդմ՝ Քուչակը մահացել է հայոց ՌԻՄ (1041) թվականին, այն է՝ 1592 թվին: Ցավոք, Քուչակի գերեզմանն այժմ չի պահպանվել<sup>48</sup>:

**Աշուղ Քուչակի երգերը:** Առայժմ աշուղ Քուչակի անունով մեզ հայտնի են 11 հայերեն երգ, որից 6-ը քառյակ, որոնք տպագրել է Հ. Աճեմյանը: Դրանց վերջում չի հիշատակվում Քուչակի անունը, 1 հայերեն-պարսկերեն

---

<sup>45</sup> Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 110:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 118:

<sup>47</sup> Ս. Աբեղյան, *Երկեր*, հտ. Բ, էջ 19:

<sup>48</sup> Նահապետ Քուչակի գերեզմանը որոնելու նպատակով 2016 թ. հուլիսի 27-ին բանաստեղծ Խաչիկ Մանուկյանի, Լեոնիկ Հակոբյանի, Ջոն Թորոսյանի և Հենրիկ Մարտիրոսյանի հետ Վանում գտնվող Ագոավաքարից մեկնեցինք Վանի գավառի Խառակոնիս գյուղ, որն այժմ անվանվում է Կարագյունդուզ: Գյուղը գտնվում է Արճակ լճի հյուսիս-արևելյան ափին: Երբ անցանք Խառակոնիս գետի կամուրջը, մեր ճանապարհը փակեց ոչխարի հոտը: Մեր հարցին չոբանը պատասխանեց, թե եկեղեցին մնացել է ետևում: Երբ ետ եկանք, մեզ հանդիպեց մի թուրք, ով ասաց, որ եկեղեցին իր տան մոտ է: Այն գտնվում է հին գյուղատեղիում՝ Խառակոնիս գետի աջ ափին, իսկ դեպի հյուսիս՝ գետի մյուս կողմում, կառուցված են նորակառույց տներ: Պարզ նկատելի է, որ հին գյուղի մի մասը ծածկվել է Արճակի ջրերով, հին տների ավերակների մի մասը ջրածածկ է, մյուս մասը տեղի բնակիչները ամրացրել և օգտագործում են: Լճի՝ համատարած սփռված հարթ ափին վեր է բարձրանում մի փոքրիկ բլուր, թուրքը մեզ ուղեկցեց դեպի այդ բլուրը և ասաց, որ դա է եկեղեցու տեղը: Բլրի վրա կանգնած ոչինչ նկատելի չէր, երբ իջանք բլրից դեպի լիճ, նկատեցինք մի խորշ, որը տանում է դեպի հողածածկ եկեղեցու ներքը: Տեղագնությունից պարզվեց, որ Ս. Թեոդորոս եկեղեցին ծածկել են հողով: Ավա՛ղ, հողածածկ է նաև Նահապետ Քուչակի սրբատեղի դարձած գերեզմանը: Ցավով հասկացանք, որ Նահապետ Քուչակի գերեզմանի մեր որոնումներն ապարդյուն եղան: Սակայն, ով գիտե, գուցե այդ հողալիցք բլրի տակ՝ եկեղեցու բակում, դեռևս պահպանվում է նաև սրբի գերեզմանը, ինչպես պահպանվում է եկեղեցու գավիթը, որը բլրի լճահայաց ճակատից բացված խորշից կարոտով սպասում էր ուխտագնաց հայերիս ներկայությանը:

երգ և 17 թուրքերեն երգ, որից 2-ը տողացի թարգմանել է Հ. Աճեմյանը, իսկ դրանք աշուղական չափով թարգմանել է Վ. Եղիազարյանը, 7 երգ թարգմանել է Օ. Եգանյանը, 2 երգ՝ Աս. Մնացականյանը: Ապա Մաշտոցի անվան մատենադարանի թիվ 3316 ձեռագրի<sup>49</sup> «Սուրմայ չաքմիշ» սկսվածքով անտիպ 1 թուրքերեն երգ թարգմանել է թյուրքագետ Անի Ավետիսյանը, իսկ 5 թուրքերեն տպագիր երգեր էլ թարգմանել է թյուրքագետ Վերա Սահակյանը:

Նախ՝ նշենք հայերեն երգերը.

1. ԳՈՎԱՆՔ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՈՒՄԵՄՆ ԳՕՍԱՆԷ՝ ՔՕՉԱԿ ՎԱՆԵՑՈՅ, ՕԳՆԵԱ ՀՈԳԻԴ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ: «Աղբիր կենդանի» սկսվածքով այս հայերեն այս երգը տպագրել է Հ. Սահակյանը<sup>50</sup>, բնագիրը կազմելիս օգտագործել է Մաշտոցյան մատենադարանի թիվ 2079, 3411, 2566, 9322, 7717, 9597, 1636, 10006 ձեռագրերը և մինչ այդ եղած տպագիրները: Տպագրվել է «Ճռաքաղ»-ում<sup>51</sup>, ապա տպագրել է Տ. Պալյանը 1897 թ. «Տաղ սուրբ Աստվածածնին» խորագրով<sup>52</sup>, այնուհետև Ա. Չոպանյանը<sup>53</sup>, Հովհ. Թաղևոսյանը<sup>54</sup>: Կ. Պոլսի Անտոնյան միաբանության թիվ 106 ձեռագրից տպագրել է նաև Տիրայր արքեպիսկոպոսը<sup>55</sup>: Ավելի ուշ՝ Հ. Սահակյանի կազմած բնագրից հատվածներ է տպագրել Պ. Խաչատրյանը<sup>56</sup>:

2. ԻՆՉ ՈՐ ԷԼ ՏԱՔ ԻՆՉ: Աշուղ Քուչակի անունով այս անտիպ երգն անհայտ բանավոր աղբյուրից գրի է առել բանահավաք Գ. Թարվերդյանը և 1937 թ. տպագրել<sup>57</sup>:

<sup>49</sup> Մաշտոցի անվան մատենադարանի 3316 ձեռագրում Քուչակի երգի գոյության մասին տեղեկանում ենք «Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի» Ա հատորից (տե՛ս «Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հտ. Ա. Ե., 1965, էջ 987):

<sup>50</sup> Տե՛ս *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը*, աշխ. Հ. Սահակյանի, էջ 56-62:

<sup>51</sup> Տե՛ս «Ճռաքաղ», 1861-1862, հտ. Գ, էջ 69-71:

<sup>52</sup> Տե՛ս **Տ. Պալյան**, Անյիշատակ հայ աշուղ մը, *Հանդես ամսօրյա*, 1897, էջ 344-345:

<sup>53</sup> Տե՛ս «Անահիտ», 1907, թիվ 6-7, էջ 130-131:

<sup>54</sup> Տե՛ս «Լուսնայ», 1902, թիվ 5, էջ 166-169, նաև **Հովհ. Թաղևոսյան**, *Քուչակ Նահապետի երգերը*, Թիֆլիս, 1903, էջ 17-20:

<sup>55</sup> Տե՛ս **Տրիկ**, *Դիւան*, Նյու-Յորք, 1952, էջ 555-558:

<sup>56</sup> Տե՛ս *Գանձարան հայ հին բանաստեղծության*, աշխ. **Պ. Խաչատրյանի**, Ե., 2000, էջ 680-681:

<sup>57</sup> Տե՛ս *Հայ աշուղներ, անտիպ յերգերի ծողովածու*, Ա, հավաքեց յեվ կազմեց **Գ. Թարվերդյան**, յԵրեվան, 1937, էջ 5:

3. ԱՌԱԿ ԼԱԻ ԵՒ ՊԻՏԱՆԻ: Այս տաղը Վենետիկի Ս. Ղազարի թիվ 1823 ձեռագրից, որը 1690 թվականի ձեռագիր տաղարան է, առաջին անգամ տպագրել է Տիրայր արքեպիսկոպոսը<sup>58</sup>:

4. ՄԱՆԱՄԷՐ-ՔԱԻՈՐ: Այս տաղը տպագրել է Հ. Սահակյանը<sup>59</sup>՝ գրելով, որ երգի վերջում հիշատակվում է «Վանլի Քիւչար», սակայն Հ. Սահակյանը ենթադրաբար գրում է. «Չնայած այս հիշատակությանը՝ այդ երգը, մեր կարծիքով, ոչ թե Քուչակ Վանեցունն է, այլ հորինված մեկ ուրիշի կողմից, Քուչակի ոտանավորի նմանությամբ»<sup>60</sup>: Հ. Սահակյանն այս երգը քաղել է 1904 թ. «Ազգագրական հանդես»-ից<sup>61</sup>: Երգի տպագրող Ե. Լալայանը նշում է աղբյուրը. «Այստեղ գետեղուած աշուղական երգերը թէև լռեցիների շարադրածը չեն, բայց Լոռում բաւական տարածուած են, նրանց գրի է առել երջ. Եղիշէ Երզնկեանը»<sup>62</sup>: Ի շարս այլ աշուղների երգերի՝ լռեցի աշուղը երգել է նաև Վանեցի Քուչակի այս երգը, որ գրառել է Ե. Երզնկյանը և տպագրել Ե. Լալայանը:

5. ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՄՈՍԿՈՎՈՒ ԹԱԳԱՒՈՐԻՆ: Այս տաղն առաջին անգամ տպագրել է Ա. Տևկանցը «Հայերգ»-ում<sup>63</sup>, ապա Մաշտոցյան մատենադարանի 1978 ձեռագրի (17-րդ դար) և Տևկանցի տպագրի համեմատական քննությամբ հրատարակել է Աս. Մնացականյանը ժողովրդական հայրենների շարքում<sup>64</sup>:

Նույն տաղի մեկ այլ տարբերակ էլ Աս. Մնացականյանը տպագրել է Մարկավազ երգչի անունով<sup>65</sup>, որը պահպանվել է Մաշտոցյան մատենադարանի երեք ձեռագրերում՝ հաջորդաբար 17-րդ, 18-րդ, 19-րդ դարերի՝ 9600 ձեռագրում (թերթ 86ա-87ա), 3417 ձեռագրում (թերթ 25ա-25բ), 9934 ձեռագրում (թերթ 9բ-10ա):

Իսկ Մաշտոցյան մատենադարանի ևս չորս ձեռագրերում տաղը պահպանվել է Կիրակոս երեցի անունով՝ հաջորդաբար 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ դարերի ձեռագրերում՝ 5614 ձեռագիր (թերթ 18բ-19ա), 7726 ձեռագիր (թերթ 31բ-32բ), 9271 ձեռագիր (թերթ 127ա-127բ), 1990 ձեռագիր (թերթ 50բ-51ա):

---

<sup>58</sup> Տե՛ս **Ֆրիկ**, *Դիվանը աշխատասիրությանը Տիրայր Արքեպիսկոպոսի*, Նյու-Յորք, 1952, էջ 551-554:

<sup>59</sup> Տե՛ս *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը*, հտ. Ա, էջ 588-589:

<sup>60</sup> Աւղ, էջ 588:

<sup>61</sup> Տե՛ս *Ազգագրական հանդես*, գիրք 11, Թիֆլիս, 1904, էջ 78-80:

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>63</sup> Տե՛ս **Ա. Տևկանց**, *Հայերգ, մեղեդիք, տաղք և երգք*, Թիֆլիս, 1882, էջ 63-66:

<sup>64</sup> *Հայրեններ*, աշխ. **Աս. Մնացականյանի**, էջ 581-583:

<sup>65</sup> Աւղ, էջ 584-586:

Պարզ է, որ հնագույն ձեռագիրը 16-րդ դարից է, երբ ապրում էր Քուչակը և Քուչակի դարում այս երգը գրչագրվել է Կիրակոս երգչի անունով: Միաժամանակ փաստենք, որ տաղը Քուչակի անունով պահպանվել է 17-րդ դարի միակ ձեռագրով, մինչդեռ Կիրակոսի անունով պահպանվել է 4 ձեռագրով, Սարկավագի անունով՝ 3 ձեռագրով: Աս. Մնացականյանն իրավամբ այն զետեղել է ժողովրդական հայրենների շարքում: Մենք հավանական ենք համարում և չենք բացառում, որ Քուչակը երգել է նաև այս ժողովրդական երգը, որը 17-րդ դարում գրչագրվել է նրա անունով: Այդ նկատառումով էլ նրա հեղինակի հարցը վիճելի ենք համարել: 6-11. ՔԱՌՅԱԿՆԵՐ: Այս վեց քառյակները տպագրել է Հայկ Աճեմյանը. «Գրի առած եմ 1914-ի ապրիլին, Արճէշի Մատղավանք գիւղին մէջ, կոյր աշուղ Յակոբէն, որը այդ քառեակները մեղմ ու հաճելի եղանակով մը իր չունգուռին վրայ նուագելէ յետոյ, երբ հարցուցի թե՛ «ո՞ր տեղէն սովրած ես» պատասխանեց. -Աստուած խոզին լուսաւորի Աշուղ Տալիպին, իմ ուսթէն (վարպետ) էր. լուխոզին կ'ասէր որ էսա «եարի» երգերն ասողը խառակոնիսցի «աշըղ Չիչակ»ն ի (աշուղ Քուչակ)<sup>66</sup>:

Հարկ ենք համարում նշել, որ թէև այս քառյակները չեն հիշատակում որևէ հեղինակի անուն, սակայն չենք էլ բացառում, որ այդ երգերը երգած լինի նաև աշուղ Քուչակը, ինչպես վկայել է աշուղ Հակոբը: Պետք է դիտել նաև, որ այս քառյակները հայրենային տաղաչափությամբ չեն գրված, նույնիսկ իրենց լեզվական առանձնահատկությամբ տարբեր են հայրեններից, ավելին՝ Աս. Մնացականյանի կազմած հայրենների երգաշխարհում նման երգեր չկան:

Քուչակից մեզ է հասել նաև հայերեն-պարսկերեն երկլեզվյան մեկ երգ:  
12. ԳՈՎԱՍՄԱՆՈՒԹԻԻՆ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԻՄԻ ԱՍՍՅԵԱԼ Է, ԸՆՏԻՐ ԵՒ ԱՆՈՅՇ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ: Հայերեն-պարսկերեն այս երգն առաջին անգամ տպագրել է Հ. Մահակյանը Մաշտոցյան մատենադարանի թիվ 7707, 3422 ձեռագրերից՝ գրելով. «Երկու օրինակներն էլ սխալաշատ են: Չնայած որոշ ճշտումներ ենք կատարել, բայց մի քանի տողերի իսկական պատկերը կասկածելի է»<sup>67</sup>:

Առայժմ մեզ հայտնի են նաև Քուչակի անունով հայատառ թուրքերեն 17 աշուղական երգեր:

13. ԽԵՂԻՄ ԱՅԱՂԻ ՎԱՐ: Մաշտոցյան մատենադարանի թիվ 8741 ձեռագրից (թերթ 12ա) առաջին անգամ տպագրել և հայերեն է թարգմանել Օ.

---

<sup>66</sup> «Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության» ժողովածուն, Էջմիածին, 1917, էջ 91:

<sup>67</sup> Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, հտ. Ա, էջ 588:

Եզանյան<sup>68</sup>, որտեղից որպես հանելուկ տպագրել է նաև Աս. Մնացականյան<sup>69</sup>:

14. ՄԱՆԻՆԵՐ Է: Մաշտոցյան մատենադարանի թիվ 7716 ձեռագրից (թերթ 51բ-52ա) առաջին անգամ տպագրել և հայերեն է թարգմանել Օ. Եզանյան<sup>70</sup>, որտեղից երկու տուն է տպագրել Աս. Մնացականյան<sup>71</sup>:

15. ՀԷՐ ՄԱԲԱՀ: Մաշտոցյան մատենադարանի թիվ 9686 ձեռագրից (թերթ 17բ-18ա) առաջին անգամ տպագրել և հայերեն է թարգմանել Օ. Եզանյան<sup>72</sup>: Օ. Եզանյանի բառացի թարգմանության հիման վրա աշուղագետ Շավիղ Գրիգորյանը փորձել է տաղաչափել այս երգի մի մասը՝ տպագրելով «Հայ աշուղական գրականության պատմություն» գրքում<sup>73</sup>: Երգի՝ Օ. Եզանյանի կողմից կատարված թարգմանությունը փորձել է նորովի սրբագրել Ի. Ստեփանյան<sup>74</sup>:

16. ՆԷ ԿՅՈՒԶԱԼ ՕԼՄԻՇ: Մաշտոցյան մատենադարանի թիվ 7707 ձեռագրից (թերթ 310բ-313 բ) առաջին անգամ տպագրել և հայերեն է թարգմանել Օ. Եզանյան<sup>75</sup>:

17. ՊՈՒՄՍՅ ՏԱՂԼԱՐԻ: Թիֆլիսի Վրացական Պետ. Թանգարանի թիվ 188 ձեռագրից (թերթ 25ա-25 բ) առաջին անգամ տպագրել և հայերեն է թարգմանել Օ. Եզանյան<sup>76</sup>:

18. ՎԱՐՍԱՂ ՔՕՉԱԿԻՆ/ ՎԱՐՍԱՂ ՔՕՉԱԿԻՆ: Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆոնդ՝ Ռուսաստանի հարաբերությունները հայերի հետ /АВНР/: 1724 թ. առաջին անգամ տպագրել և հայերեն է թարգմանել Օ. Եզանյան<sup>77</sup>:

---

<sup>68</sup> Օ. Եզանյան, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, *Բանբեր Մատենադարանի*, թիվ 5, 1960, էջ 467-468:

<sup>69</sup> Աս. Մնացականյան, *Հայ միջնադարյան հանելուկներ*, Ե., 1980, էջ 434:

<sup>70</sup> Օ. Եզանյան, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, *Բանբեր Մատենադարանի*, թիվ 5, 1960, էջ 468-469:

<sup>71</sup> Աս. Մնացականյան, *Հայ միջնադարյան հանելուկներ*, էջ 435:

<sup>72</sup> Օ. Եզանյան, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, *Բանբեր Մատենադարանի*, թիվ 5, 1960, էջ 469-471:

<sup>73</sup> Շ. Գրիգորյան, *Հայ աշուղական գրականության պատմություն*, Ե., 2002, էջ 93:

<sup>74</sup> Ի. Ստեփանյան, Նահապետ Քուչակի երեք թուրքերեն տաղի թարգմանության փորձ, տե՛ս <http://www.sayat-nova.am/nm-5.html>:

<sup>75</sup> Օ. Եզանյան, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, *Բանբեր Մատենադարանի*, թիվ 5, 1960, էջ 471-476:

<sup>76</sup> Անդ, էջ 476-477:

<sup>77</sup> Անդ, էջ 477-479:

19. ՎԱՆԼԻ ՔԵՕՉԱԿԻՆ/ ՎԱՆԵՑԻ ՔՈՒՉԱԿԻ: Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆոնդ՝ Ռուսաստանի հարաբերությունները հայերի հետ, /АВНП/, 1724 թ., N 3 թղթապանակ, առաջին անգամ տպագրել և հայերեն է թարգմանել Օ. Եգանյանը<sup>78</sup>:

20. ԴՆԸԴԼԸ ԲՅՈՒԼԲՈՒՅԼ: 1917 թ. տպագրել է Հ. Աճեմյանը՝ գրելով, որ ««Դարդլի Բիւրիւ» և «Բենդի-Մահու» երգերը եւ գրի առած եւ 1917-ի մարտին, Աշտարակի մէջ, խառակոնիսցի Ուսթա Ղազարէն, որ ցառտ աչքերով 60 տարեկան յաղթանդամ մարդ մըն է: Քուչակին վերագրուած թուրքերէն երգերը Ուսթա Ղազարը սորված է ասկէ 30 տարի առաջ, իրենց գիւղացի աշուղ Կուլիջանէն, որը աշակերտած էր Պոլսոյ նշանաւոր աշուղ Լիսանին»<sup>79</sup>:

21. ԲԵՆԴԻ-ՄԱՀՈՒ: 1917 թ. տպագրել է Հ. Աճեմյանը<sup>80</sup>: Սուֆիական, այլաբանական տաղի օրինակ է:

22. ԴՈՒԼԱՂ ԱՍՈՒՆ: Ա. Ղազինյանը դեռևս 1979 թ. տեղեկացնում է, որ Մատենադարանի 8908 ձեռագրի 63 ք էջում պահպանվել է «Ղուլաղ ասուն» սկսվածքով թուրքերեն երգը<sup>81</sup>: Ավելի ուշ՝ 1980 թ., Աս. Մնացականյանը այս երգի հայատառ թուրքերեն տարբերակը և թարգմանությունը ներկայացրել է «Հայ միջնադարյան հանելուկներ» գրքում<sup>82</sup>:

23. ՍՈՒԲՄԱՅ ՉԱՔՄԻՇ: Քուչակի անտիպ թուրքերեն երգերից մեկը՝ «Սուրմայ չաքմիշ» սկսվածքով, Մաշտոցի անվ. Մատենադարանի թիվ 3316 ձեռագրի 218 ք էջից, հայատառ թուրքերեն տեքստը պատրաստել և հայերեն թարգմանությունը կատարել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Արաբատառ ձեռագրերի նկարագրության և ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող, թյուրքագետ Անի Ավետիսյանը:

24. ԹԵՋՆԻՍ: Այս թուրքերեն երգը՝ «Bir yiğit öğüt almayınca pîrinden» սկսվածքով տպագրել է Մեհմեդ Բայրակը<sup>83</sup>:

25. ԷՅ ԷՐԵՆԼԵՐ: Թուրքերեն այս երգը՝ «Ey erenler aldı beni bir dert bir bela bir mihnet» սկսվածքով, տպագրել է Մեհմեդ Բայրակը<sup>84</sup>:

---

<sup>78</sup> Անդ, էջ 479-481:

<sup>79</sup> «Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության» ժողովածուն, Էջմիածին, 1917, էջ 93:

<sup>80</sup> Անդ, էջ 95-96:

<sup>81</sup> Տե՛ս «Գարուն», 1979թ. թիվ 3:

<sup>82</sup> Տե՛ս Աս. Մնացականյան, *Հայ միջնադարյան հանելուկներ*, Ե., 1980, էջ 436:

<sup>83</sup> Տե՛ս **Mehmet Bayrak**, *Alevi-Bektasi Edebiyatında Ermeni Aşıkları (Aşuğlar)*, Ankara, 2005:

<sup>84</sup> Նույն տեղում:

26. ԿԵԼ ՍԵՆՂԵՆ ԽԱԲԱՐ ԱԼԱՅԻՄ/ ԱՐԻ ՔԵԶՆԻՑ ԽԱԲԱՐ ԱՌՆԵՄ: Այս երգը 1958 թ. տպագրել է Աբպեր Երևանյին<sup>85</sup>, նաև 2006 թ. Ազադ Նաբիևը<sup>86</sup>՝ արտատպելով Բաքվում 1983 թ. տպագրված մի գրքից<sup>87</sup>:

27. ԲԱՀԱՐ ՖԵՍԼԻ ՅԱԶ ՕԼՈՒՆԴԱ/ ԳԱՐՆԱՆ ԹԱԳՈՎ ԱՄԱՌ ԵԿԱՎ: Այս թուրքերեն երգը տպագրել է Ա. Նաբիևը<sup>88</sup>՝ օգտվելով 1983 թ. Բաքվում տպագրված մի գրքից<sup>89</sup>:

28. ԷՅ ԷՐԵՆԼԵՐ, ՄՈՒՍՈՒԼՄԱՆԼԱՐ/ ՈՎ ԳԻՏՈՒՆՆԵՐ, ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ: Այս թուրքերեն երգը տպագրել է Ա. Նաբիևը<sup>90</sup>՝ օգտվելով 1977 թ. Բաքվում տպագրված մի գրքից<sup>91</sup>:

29. ԹԷՄԱՄ ՕԼՏԻ ԻՇԸՄԸԶ: Տպագրվել է Ծովականի գրքում<sup>92</sup>, որտեղ Ծովականն նկարագրել է Սրբոց Հակոբյանց վանքի թիվ 1760 ձեռագիրը, որը գրչագրվել է 1701թ. Լին անապատում: Ձեռագիրն ունի նաև Մանր յիշատակագրությունը գրչի՝ 1699-1700 թվականների: Հենց ձեռագրի գրչի մանր հիշատակագրության մեջ էլ պահպանվել է այս պատառիկը: Այս գրույցն աշուղական մրցության մի վկայություն է, ըստ որի, Քուչակը Բաղեշ քաղաքում մրցակցել է թուրք աշուղի հետ ու հաղթել նրան: Աս. Մնացականյանը «Հայ միջնադարյան հանելուկներ» գրքում զետեղել է այս գրույցը<sup>93</sup>՝ քուչակյան երգերով համեմված:

Եվս մի թուրքերեն երգ «Kimse beni bilmez idi» սկսվածքով որպես Քուչակի երգ տպագրել է Մեմեդ Բայրակը<sup>94</sup>, որը ինչպես պարզել ենք, Մաշտոցի անվ. Մատենադարանի բազմաթիվ ձեռագրերում պահպանվել է Հովհաննես Թլկուրանցու անունով, ինչպես օրինակ՝ թիվ 695 ձեռագրում,

<sup>85</sup> Տե՛ս **Ա. Երևանյի**, *Հայ-ադրբեջանական ժողովրդական բանահյուսության կապերը, Երմանի-ազերբայժան փախի քաղ ԷԶԵՆԻՅԱԿԵ ԷԼԱԳԷՐԻ*, Երևան, 1958, էջ 177:

<sup>86</sup> Տե՛ս **Azad Nəbiyev**, *Azərbaycan xalq ədəbiyyatı*, II hissə, Bakı, 2006, էջ 98, նաև <http://elibrary.bsu.az/kis/1615.pdf>, հասանելի էր 24.02.2017:

<sup>87</sup> Տե՛ս **El Çələngi**. *Dünya uşaq ədəbiyyatı kitabxanası*, Bakı, 1983, էջ 285:

<sup>88</sup> Տե՛ս **Azad Nəbiyev**, *Azərbaycan xalq edebiyatı*, II hissə, Bakı, 2006, էջ 99, նաև <http://elibrary.bsu.az/kis/1615.pdf>, հասանելի էր 24.02.2017:

<sup>89</sup> Տե՛ս **El Çələngi**. *Dünya uşaq ədəbiyyatı kitabxanası*, Bakı, 1983, էջ 23:

<sup>90</sup> Տե՛ս **Azad Nəbiyev**, *Azərbaycan xalq ədəbiyyatı*, II hissə, Bakı, 2006, էջ 99-100, նաև <http://elibrary.bsu.az/kis/1615.pdf>, հասանելի էր 24.02.2017:

<sup>91</sup> Տե՛ս *Azərbaycan dastanları* (toplayib nəşrə hazırlayan **A. Nəbiyev-dir**), Bakı, 1977, էջ 119-129:

<sup>92</sup> **Ն. Էպս**. *Պոդարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց*, հուն. Ջ, Երուսաղեմ, 1972, էջ 101 (ձեռ. 1760, ժամանակ՝ 1701թ.):

<sup>93</sup> **Աս. Մնացականյան**, *Հայ միջնադարյան հանելուկներ*, Ե., 1980, էջ 436:

<sup>94</sup> **Mehmet Bayrak**, *Alevi-Bektasi Edebiyatında Ermeni Aşıkları (Aşuğlar)*, Ankara, 2005:

որի նկագրության մեջ հստակ է հեղինակը. «242բ- 243ա ՃՀԹ. Տաղ ի վերայ Քրիստոսի այլազգեաց բառիւ – Քիմսայ պանի պիլմագիտի, /Կալտում քի այեան էլլայիմ... /Ես՝ Յովաննէս Թուկուրանցի...»: Պարզ է, որ այդ երգի թերի օրինակը Մեհմեդ Բայրակը սխալմամբ է տպագրել Քուչակի անունով:

Այսպիսով, առածմ մեզ հայտնի են աշուղ Քուչակի թվով 29 երգ, թեև տեղյակ ենք, որ դեռևս կան Բաքվում տպագրված այլ երգեր ևս<sup>95</sup>, որոնք այս պահին հնարավոր չեղավ ձեռք բերել: Կարծում ենք, ապագայում այլ տպագրերից ու աշխարհի տարբեր ձեռագրատուն-մատենադարաններում պահպանված այլալեզու ձեռագրերից Քուչակի անունով ի հայտ կգան նոր երգեր ևս, որոնք նորովի կբացահայտեն աշուղ Քուչակի ստեղծագործությունը:

Քուչակի աշուղական երգարվեստի և նրան վերագրվող հայրենների տարբերությունն ակնհայտ դարձնելու նպատակով այստեղ քննարկենք մի թուրքերեն երգ:

Ալագեօզլի դարդլի բիւբիւ,  
Մէն աղլամա՛, բէ՛ն աղլարըմ,  
Իքի գեօզըն եաշլի կալսըն,  
Մէն աղլամա՛, բէն աղլարըմ:

Բիւբիւ կանաղի յեշի,  
Գեյթի եագի գեյլդի կըշի,  
Աղլամաք բանա՛ եաքըշըր,  
Մէն աղլամա՛, բէն աղլարըմ:

Բիւբիւըն կանաղի սարի,  
Բէն աղլարըմ զարի զարի,  
Իրիթմիշ ըմ նազլու եարի,  
Մէն աղլամա՛, բէն աղլարըմ:

Բիւբիւ կանաղի աղի,  
Գեօյնիմի շեքտիլար դաղի,  
Վանլի Չիչակ նէ իյնէր բաղի,  
Մէն աղլամա՛, բէն աղլարըմ:

Երգի մեջ հեղինակն այլաբանության միջոցով ներկայացնում է մարդու՝ տվյալ պարագայում աշուղի՝ սիրո երգչի հոգու և կենսաբանական

---

<sup>95</sup> Տե՛ս Սի՛ւ **Օզիզօ Ըֆօրզաձօ**, *Azərbaycanın aşiq və şair qadınları*, Bakü, 1974:

հասունացման անհամատեղելիությունը: Բլբուլը խորհրդանշում է մարդու աչքը և գիտակցությունը: Այսինքն՝ տեսողական, ընկալողունակ օրգան, որով մարդը տեսնում է իրականությունը, կշռում և ըստ այդմ դատում, վերլուծում իր շրջապատը: Աշուղն աչքով է ընկալում նաև սերը, գիտի աչքերով սիրելու արվեստը: Սակայն, որքան էլ տեսողականը իրական ռեալ կյանքի արտացոլանքն է, այնուամենայնիվ այն միևնույն ժամանակ անհամատեղելի է հոգևոր ընկալման և հոգու հարաստև երիտասարդ մնալու գաղափարի հետ:

Առաջին տան մեջ պատկերված է աշուղը՝ պատանեկան տարիքի մեջ, ուր դիմելով իր գույգ աչքերին՝ փոխաբերաբար սոխակի բիբերին, ասում է, որ աչքն այլևս չլացի, քանի որ աչքերն արդեն կարմիր են, **արցունքը պահի աչքերի մեջ, որ չթափվի**, /քի գեօզըն եաշլի կալսըն/, որովհետև արդեն իր հոգին է լալիս, իսկ հոգու լացն առավել է, քան աչքի արտասուքը:

Երկրորդ տան մեջ կրկին աշուղն է՝ արդեն երիտասարդ տարիքում, երբ անցյալում են մնացել պատանեկան մտորումները, իրագործված ու անկատար մնացած երազանքները: Սիրելիի կարոտն աշուղին ստիպում է դառնորեն փստսալ, և հոգին հոնգուր-հոնգուր լաց է լինում:

Երրորդ տան մեջ աշուղն արդեն կանաչ՝ հասուն տարիքում է, անցել է ամառ-երիտասարդությունը, եկել է աշուն-հասունությունը, որն իր հետ բերել է նոր փորձություններ: Այս տան մեջ ևս երկխոսությունն ընթանում է հոգու և աչքի միջև: Եվ աշուղը դիմելով սոխակին՝ տեսողական ընկալմանը, ասում է՝ հոգու տխրությունն առավել է, և լացը հարիր է հոգուն:

Չորրորդ տան մեջ արդեն սոխակի բիբն է սպիտակ, որով այլաբանվում է աշուղի ալեգարդ ծերունական տարիքը: Հատկանշական է, որ այս տաղի մեջ աշուղ Քուչակն իրեն հավերժացրել է Չիչաք (ծաղիկ) մականվամբ, քանզի աշուղն իրեն զգում է հավերժորեն երիտասարդ՝ հավերժական ծաղիկ, որ ծերունագարդ տարիքում անգամ հոգով երիտասարդ է, և նրա ուշքն ու միտքը դեռ այգին ու պարտեզն է:

Ամփոփելով նշենք, որ քառատուն այս աշուղական դյուբեյթը վարդի և սոխակի ավանդական այլաբանական մի երգ է, որում մարդու՝ տվյալ դեպքում աշուղ Քուչակի կյանքի այլաբանորեն ներկայացված շրջափուլներն են՝ պատանեկություն, երիտասարդություն, հասունություն և ծերություն, որոնց աշուղը հակադրում է իր հոգու հավերժական երիտասարդությունը:

Պարզ է, որ Նահապետ Քուչակի ինքնատիպ աշուղական բանաստեղծական այս երգաշխարհը ոչ մի կապ չունի գուսանական հայրենների երգարվեստի հետ: Ուստի ավելորդ է հայ հին

գուսանաժողովրդական երգերը՝ հայրենները, կապել Նահապետ Քուչակի անվան հետ, միննույնն է, առանց դրանց էլ հայ աշուղական դպրոցի ակունքներում կանգնած այս ինքնատիպ աշուղն ունի հոգեզմայլ երգեր, որոնց մասին իմաստուն ու գեղեցկախոս աշուղն ինքն է ասել.

Բավ է, ով իմ սիրտ, տխրես դու այդքան,  
Շաղ տուր գանձերդ առանց վարանման,  
Մեզանից հետո շատերը կգան,  
- Հեքիաթն այս, կասեն, ինչ գեղեցիկ է<sup>96</sup>:

### Եզրակացություն

Նահապետ Քուչակը գրել է հայերեն, հայերեն-պարսկերեն, թուրքերեն աշուղական տաղաչափությամբ հորինված երգեր՝ **ղափուլլամա, վարսաղ, թեջնիս, դիվանի, դյուբեյթ**, ինչպես նաև այլ աշուղական երգեր, որոնց տաղաչափությունը բոլորովին տարբեր է և ոչ մի կապ չունի գուսանաժողովրդական հայրենների յամբ-անապետոյան տաղաչափության հետ: Նկատենք, որ աշուղ Քուչակը երգերի վերջում թողնում է երգչի՝ իր անունը, մինչդեռ հայրեն պարունակող ոչ մի ձեռագրում Քուչակը չի հիշատակվում որպես որևէ անհատական հայրենի հեղինակ: Հայրենների լեզուն միջին հայերենն է, մինչդեռ Քուչակի անունով մեզ հասած երգերի լեզուն՝ գրաբարախառն հայերենը, պարսկերենն ու թուրքերենը: Նահապետ Քուչակի մասին մեզ հասած ավանդությունները վկայում են, որ նա սուլթանի կնոջը բուժել է իր երգով: Բնականաբար, Նահապետի երգը հնչել է թուրքերեն, ինչպես մեզ հասած նրա աշուղական երգերը: Արդ՝ Նահապետ Քուչակը հայ առաջին աշուղ-երգիչներից է, հայ աշուղական դպրոցի ակունքներում կանգնած ինքնատիպ մի աշուղ, որը բացարձակապես կապ չունի հայրենների երգարվեստի հետ:

Այսպիսով, առաժմ մեզ հայտնի են աշուղ Քուչակի թվով 29 աշուղական երգերը, որոնք գրված են բացառապես աշուղական տաղաչափությամբ: Դրանցից 11-ը հայերեն երգեր են, 1-ը հայերեն-պարսկերեն և 17-ը թուրքերեն, որն այդ շրջանում աշուղության հիմնական լեզուն էր:

Ինչ վերաբերում է թոռ Քուչակի գրական ժառանգությանը, ապա պետք է փաստել, որ այդ մասին որևէ ստույգ վկայություն մեզ չի հասել:

---

<sup>96</sup> **Օ. Եզանյան**, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, *Բանբեր Մատենադարանի*, թիվ 5, 1960, էջ 475:

Արդ՝ Վանեցի Քուչակը՝ հայ աշուղների նահապետ երգիչը, մեր առաջին եռալեզու աշուղն է, որի հանգույն հետազայում երեք լեզուներով ստեղծագործեց նաև աշուղ Սայաթ-Նովան:

Vano Yeghiazaryan

### Ashugh Nahapet Kouchak and his Songs

#### Conclusion

**Key words and expressions:** Kouchak of Van, metrics of ashugh songs, iamb-anapestic metrics of Hirens, trilingual ashugh.

Nahapet Kouchak created songs in ashugh style in Armenian and Armenian-Persian, Turkish as “dapull, ama, varsagh, tejnīs, divani, dyubeit, as well as some other ashugh songs, metrics of which is quite different and have nothing to do with iambic-anapestic metrics of gousan-folk hayrens(the Natives). It should be mentioned that Ashugh Kouchak left his name at the end of his songs, whereas in no manuscript Kouchak was mentioned as an author of individual hayren. The language of hayrens is Middle Armenian, whereas the language of Kouchak’s songs known to us is mixed-Arabic Armenian, Persian and Turkish. It is known that Kouchak cured the Sultan’s wife owing to his song. No doubt that Nahapet’s song was in Turkish, the same is for his ashugh songs. Thus, Nahapet Kouchak was one of the first ashugh-singers, a unique ashugh, who didn’t have anything to do with the hayren vocal art.

Thus, 29 songs by Ashugh Kouchak are written in ashugh style. 11 of them are Armenian songs, 1 written in Armenian- Persian and 17-in Turkish. The latter was the main language of ashughs at that time. As to Kouchak’s grandson’s literary heritage, it should be stated that we haven’t known anything about it so far.

Thus, Kouchak of Van, the Patriarch of Armenian ashughs, is the first trilingual ashugh, owing to whom later Sayat-Nova also created in three languages.

Вано Егиазарян

### Ашуг Наапет Кучак и его песни

#### Заключение

**Ключевые слова и выражения:** Кучак из Вана, метрика ашугских песен, ямбо-анапестное стихосложение айренов, трехязычный ашуг

Наапет Кучак слагал песни, используя армянские, армяно-персидские, турецкие ашугские метрики: **капуллама, варсаг, теджнис, дивани, дюбейт**, а

также другие разновидности ашугских песен, метрика которых полностью отличается и не имеет ничего общего с народно-поэтическим (гусанским) ямбо-анапестным стихосложением айренов. Следует отметить, что ашуг Кучак всегда ставил свое имя в конце песен, в то время как ни в одной рукописи, содержащей айрены, Кучак не упоминается как конкретный автор какого-либо отдельного айрена. Язык айренов – среднеармянский, между тем как язык песен, дошедших до нас под именем Кучака, – армянский, смешанный с древнеармянским, персидский и тюркский. Согласно преданиям, Наапет Кучак излечил жену султана своими песнями. Разумеется, песни Наапета звучали на турецком языке, как и многие дошедшие до нас его ашугские песни. Следовательно, Наапет Кучак был одним из первых армянских ашугов-певцов, самобытный ашуг, стоящий у истоков армянской ашугской школы, который не имеет никакого отношения к песенному искусству айренов. Таким образом, нам на сегодня известны 29 ашугских песен ашуга Кучака, которые написаны исключительно ашугской метрикой. 11 из них представляют собой песни на армянском языке, 1 – армяно-персидская песня и 17 песен написаны на турецком языке, который в ту эпоху был основным языком для ашугов. Что касается литературного наследия внука Кучака, то надо отметить, что об этом до нас никаких точных сведений не дошло.

**Следовательно, Кучак из Вана (Ванеци Кучак) – родоначальник армянской ашугской песни, наш первый трехязычный ашуг, дело которого впоследствии продолжил ашуг Саят-Нова, также писавший на трех языках.**

### Օգտագործված գրականություն

1. **Արեղյան Մ.**, Երկեր, հտ. Բ, Ե., 1967:
2. Ազգագրական հանդես, գիրք 11, Թիֆլիս, 1904:
3. **Ալիշան Ղ.**, Հուշիկը հայրենյաց հայոց, հտ. Բ, Վենետիկ, 1870:
4. **Ամիրեան Խ.**, Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանյան Կայսրութիւն. 16-20րդ դարեր, Փարիզ, 1993:
5. «Անահիտ», 1907, թիվ 6-7:
6. **Ապպասով Բարաֆիլի**, Ազերպայճան Ֆոլկլորու XIX Էսր Էրսէնի Մէնպալէրիստէ, Բաքու, 1977:
7. Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ. **Պ. Խաչատրյանի**, Ե., 2000:
8. «Գարուն», 1979թ. թիվ 3:
9. **Գրիգորյան Շ.**, Հայ աշուղական գրականության պատմություն, Ե., 2002:
10. **Գրիգորյան Շ.**, Հայ հին գուսանական երգեր, Ե., 1971:

11. **Գրիգորյան Շ.**, Ո՞վ է, ի վերջո, Նահապետ Քուչակը, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1984, № 7:
12. **Գրիգորյան Շ.**, Ո՞վ է իրականում Նահապետ Քուչակը, Բազմավեպ, 2000, ՃՕԸ 1-4:
13. **Եզանյան Օ.**, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, Բանբեր Սատենադարանի, թիվ 5, 1960:
14. **Երևանլի Ա.**, Հայ-աղբբեջանական ժողովրդական բանահյուսության կապերը, Эрмени-азербайчан шифахи халг эдэбийяты элагэлэри, Երևան, 1958:
15. **Թաղևոսյան Հովհ.**, Քուչակ Նահապետի երգերը, Թիֆլիս, 1903:
16. «Լուսնայ», 1902, թիվ 5:
17. «Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության» ժողովածուն, Էջմիածին, 1917:
18. **Կոստանյանց Կ.**, Միջնադարյան հայոց տաղեր ու ոտանավորներ, պրակ Ա և Բ, Թիֆլիս, 1892:
19. Հայ աշուղներ, անտիպ յերգերի ժողովածու, Ա, հավաքեց յեվ կազմեց **Գ. Թարվերդյան**, յերեվան, 1937:
20. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հտ. Բ, Ե., 1978:
21. Հայրեններ, աշխ. **Աս. Մնացականյանի**, Ե., 1995:
22. **Հարությունյան Ս.**, Նահապետ Քուչակ, տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 8, Ե., 1982:
23. **Հարությունյան Ս.**, Հայրենների խնդիրը և Ասատուր Մնացականյանի գիտական նոր համահավաքը, Պատմա-բանասիրական հանդես, 1996, թիվ 1-2:
24. **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Ե., 1969:
25. «Ճոքաքաղ», 1861-1862, հտ. Գ:
26. **Սկրյան Ա.**, Նահապետ Քուչակ, տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, Ե. 1976:
27. **Մնացականյան Աս.**, Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, Պատմա-բանասիրական հանդես, Ե., 1958, թիվ 2:
28. **Մնացականյան Աս.**, Միջնադարյան սիրո հայրենների անդրանիկ ժողովածուն և հայրենների հարցը, տե՛ս Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության, Ե., 1971:
29. **Մնացականյան Աս.**, Հայ միջնադարյան հանելուկներ, Ե., 1980:
30. Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխ. **Հ. Թամրազյանի**, Ե., 2001:
31. **Չոպանյան Ա.**, Նահապետ Քուչակի դիվանը, Փարիզ, 1902:
32. **Չոպանյան Ա.**, Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940:
33. **Պալյան Տ.**, Անյիշատակ հայ աշուղ մը, Հանդես ամսօրյա, 1897:
34. **Պողարեան Ն.**, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. Զ, Երուսաղեմ, 1972:
35. **Ստեփանյան Ի.**, Նահապետ Քուչակի երեք թուրքերեն տաղի թարգմանության փորձ, տե՛ս <http://www.sayat-nova.am/nm-5.html>:

36. **Տևկանց Ա.**, Հայերգ, մեղեդիք, տաղք և երգք, Թիֆլիս, 1882:
37. «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հտ. Ա. Ե., 1965:
38. Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխ. **Հ. Սահակյանի**, հտ. Ա., Ե., 1986:
39. **Քիպարեան Կ.**, Պատմություն հայ հին գրականության, Վենետիկ, 1992:
40. **Տրիկ**, Դիվան աշխատասիրությամբ **Տիրայր Արքեպիսկոպոսի**, Նյու-Յորք, 1952:
41. **Azad Nəbiyev**, Azərbaycan xalq ədəbiyyatı, II hissə, Bakı, 2006:
42. Azərbaycan dastanları (toplayıb nəsrə hazırlayan A. Nəbiyev-dir), Bakı, 1977:
43. **El Çələngi**. Dünya uşaq ədəbiyyatı kitabxanası, Bakı, 1983:
44. **Əzizə Cəfərzadə**, Azərbaycanın aşiq və şair qadınları, Bakı, 1974:
45. **Mehmet Bayrak**, Alevi-Bektasi Edebiyatında Ermeni Aşıqları (Aşuğlar), Ankara, 2005:
46. **Pamukciyan K.**, Ermeni Harfli Türkçe Metinler, Aras yay. Ist., s. 107:
47. **Vasfi Mahir Kocatürk**, Saz Şiiri Antolojisi, Ayyıldız, Mtb. Ank. 1963:

*Խմբագրություն է ուղարկվել 20.10.2022թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 05.11.2022թ.*

*Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.*

**ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ**

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Էլհասուցե՝ [meline.gilavyan@mail.ru](mailto:meline.gilavyan@mail.ru)

**ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԸ՝ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ**

**Ամփոփում**

Պարույր Սևակը, ով գրական ասպարեզ է իջել 1948թ. հրատարակած «Անմահները հրամայում են»<sup>1</sup> ժողովածուով, հետագա տասնամյակներում դարձավ մեր բանավեպի ամենանշանավոր դեմքերից մեկը:

Նրա թողած հարուստ (ոչ քանակական առումով) գրական ժառանգության մեջ յուրահատուկ տեղ է գրավում մանուկ ընթերցողներին հասցեագրված «Ձեր ծանոթները», թեպետ փոքրիկ, բայց բոլոր առումներով արժեքավոր, ժողովածուն, որը դարձավ ընթերցողների ամենասիրելի գրքերից մեկը:

Ժողովածուի բանաստեղծությունների «հերոսները» կենդանական աշխարհի ներկայացուցիչներ են, որոնք օժտված են մարդկային բնավորության արատավոր, նաև դրական գծերով ու հատկանիշներով:

Պ. Սևակը «ձնհալի» տարիներին գրական-գեղարվեստական զարգացումները մղեց առաջընթացի նոր հուն, իր հողվածներով ու բանաստեղծություններով, որոնցից շատերը ծրագրային նշանակություն ունեն, մաքրեց նախորդ տասնամյակների գրականության «ավզյան ախոռները», պոեզիան դուրս բերեց աշուղականության ճահճուտից:

Ծրագրային կարելի է համարել նաև «Ձեր ծանոթները» ժողովածուն, որտեղ Պ. Սևակն առաջադրում է բանահյուսության թեմաներն ու մոտիվները նորովի ներկայացնելու մեթոդներ ու եղանակներ:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** արագիլ, կաքավ, չղջիկ, կատու, վագր, շունն ու գայլը, մանուշակ, մանկական պոեզիա:

---

<sup>1</sup> Մինչև առաջին ժողովածուի հրատարակությունը Պ. Սևակն առանձին բանաստեղծություններով հանդես է եկել գրական մամուլում: 1949թ. «Սովետական գրականություն» ամսագրում տպագրվում են 18-ամյա պատանու առաջին բանաստեղծությունները՝ Պարույր Սևակ ստորագրությամբ:

### Ներածություն

Պարույր Սևակը գրել է ընդամենը տասներկու մանկական բանաստեղծություններ, որոնք 1971 թվականին լույս են տեսել «Ձեր ծանոթները» ընդհանուր խորագրով: Այնուհետև ժողովածուն ունեցել է մի քանի հրատարակություններ (վերջինը՝ բանաստեղծ Դավիթ Հովհաննեսի առաջաբանով և նկարիչ Գագիկ Բսահակյանի շքեղ նկարազարդումներով<sup>2</sup>): Ժողովածուն առաջին իսկ հրատարակման ժամանակից սեղանի գիրք է դարձել մանուկ ընթերցողների համար, իսկ նրա բանաստեղծություններից մի քանիսը զետեղվել են դպրոցական ընթերցարաններում, տարրական դասարանների դասագրքերում:

Պ. Սևակի «Ձեր ծանոթները» ժողովածուի բանաստեղծությունները, Դ. Հովհաննեսի դիպուկ բնութագրությամբ, «Ժանրային պատկանելության տեսակետից այնքան էլ մանկական չեն: Սրանցում լայնորեն օգտագործված է առակային- այլաբանական այն հարուստ փորձը, որ ժամանակի ընթացքում կուտակել է հայ բազմադարյան գրականությունը»<sup>3</sup>:

Ավելին, Պ. Սևակը մանկագիր բանաստեղծներին առաջարկում էր մանկական բանաստեղծության բովանդակային, ձևակառուցվածքային մի ծրագիր, որը խիստ օգտակար եղավ 1960-1980-ական թվականներին գրականություն եկած բանաստեղծների համար, ովքեր հանդես են եկել նաև մանուկ ընթերցողներին հասցեագրված ստեղծագործություններով:

Պ. Սևակի մանկական բանաստեղծությունների զգալի ազդեցությունը կարելի է տեսնել Արմեն Մարտիրոսյանի, Ղուկաս Միրունյանի, Անահիտ Պարսամյանի, Էդուարդ Միլիտոնյանի ստեղծագործություններում, ինչն ավելի նկատելի է բանահյուսական թեմաների ու մոտիվների նորովի զեղարվեստականացման փորձերում:

Սույն հոդվածի նպատակն է՝

1. Գրականագիտական մտքի արդի պահանջների համապատկերում քննել ու արժևորել Պ. Սևակի մանկական բանաստեղծությունները:
2. Դրանք արժևորել մեծ բանաստեղծի գրական ժառանգության համապատկերում:
3. Բացահայտել այդ բանաստեղծությունների և հետագա տասնամյակների մանկագիր բանաստեղծների ստեղծագործությունների տիպաբանական աղերսակցությունների եզրերը:

---

<sup>2</sup> Սևակ Պ., Ձեր ծանոթները, Եր: «Արևիկ» հրատ: 1996:

<sup>3</sup> Նույն տեղում, տե՛ս «Ձեր ծանոթները» ժողովածուի Դ. Հովհաննեսի առաջաբանը:

**Մեթոդաբանություն**

Պ. Սևակի «Ձեր ծանոթները» ժողովածուի քննության և արժևորման ընթացքում կիրառել ենք գեղարվեստական ստեղծագործության քննաբանության մի շարք մեթոդներ՝ վերլուծական, քննական, համեմատական: Մեծապես օգտվել ենք Պ. Սևակի գրականագիտական հոդվածներից, որոնց մեջ մեծ բանաստեղծն առաջադրում է պոեզիայի առաջընթացը բնականոն հուն մղելու համարձակ ծրագրեր, որոնք կարևոր նշանակություն ունեցան նաև մանկագիր բանաստեղծների համար:

\*\*\*

Մանուկներին հասցեագրված բանաստեղծություններում Պ. Սևակը նույնքան բծախնդիր էր, ինչքան «Մարդը ափի մեջ» և «Եղիցի լույս» ժողովածուների բանաստեղծություններում ու պոեմներում: Բանաստեղծն առանձնապես հետևողական էր համեմատությունների, փոխաբերությունների, մակդիրների ընտրության ու տեղին գործածության հարցերում, ինչն ակնառու դրսևորվում է «Ձեր ծանոթները» ժողովածուի բանաստեղծություններում:

Այս առումով ավելորդ չենք համարում հիշել դեռևս ուսանողական տարիների նրա կարդացած գեկուցումը Նաիրի Զարյանի մասին: «Բանաստեղծի համար մի բառը մի աշխարհ է» տեսանկյունից նայելով Ն. Զարյանի բանաստեղծություններին՝ նա գեկուցման մեջ ասում է. «Զարյանը էպիտետների ընտրության մեջ հաճախ անփույթ է: Նրա էպիտետները մեծ մասամբ ճիշտ են ընտրված: Սակայն խնդիրն այդ չէ: Ճիշտ էպիտետ ընտրելը դեռևս չի նշանակում գտնել որոշիչ էպիտետ: Այն էպիտետը, որ կարելի է հեշտությամբ փոխել կամ մի ուրիշ առարկայի վրա դնել, միանգամայն անհաջող է և սխալ ընտրված: Էպիտետի ընտրության մեջ կամ մի այլ տեղ, պարզ երևում է հեղինակի ճաշակը և վարպետությունը: Էպիտետի ընտրությունը պահանջում է ուժերի գերագույն լարում, թույլ դիմադրության ճանապարհով չգնալու խիզախություն»<sup>4</sup>:

Պ. Սևակի համար սեղանի գրքեր էին բառարանները: Ա. Արիստակեսյանը գրում է. «Մեծ սեր ու հետաքրքրություններ ուներ բառերի, նրանց ծագման ու կազմության նկատմամբ: Եվ դա երևում էր ոչ միայն ստեղծագործական երկունքի պահերին կամ նախապատրաստական

---

<sup>4</sup> Հղումն ըստ Ա. Արիստակեսյանի «Պարույր Սևակ» մենագրություն, Եր; «Սովետական գրող», 1984, էջ 89:

աշխատանքներում, այլև առօրյա կյանքում, խմբագրական աշխատանքներում»<sup>5</sup>:

«Ձեր ծանոթները» ժողովածուում Պ. Սևակը նորովի է մեկնաբանում բանահյուսական թեմաներն ու մոտիվները, և ճիշտ չեն այն գրականագետները, որոնք փորձում են ցույց տալ, թե Պ. Սևակը արդի բանաստեղծության «հիմնական տիպարը, երաժշտական տերմինով ասած», համարելով «համանվագայինը» (սիմֆոնիզմը), ժխտում է բանահյուսության դերն ու նշանակությունը, ըմբոստանում «ֆոլկլորային մտածողության» դեմ: Իսկ «Գրական թերթի» 1966թ. փետրվարի 15-ի, ապրիլի 15-ի, 27-ի և «Սովետական Հայաստան» թերթի նույն թվականի հունվարի 30-ի համարներում ուղղակի «ճակատային գրոհ» է սկսվում «Հանուն և ընդդեմ «ռեալիզմի նախահիմքերի»» հոդվածի դեմ:

Այդ հոդվածում տեսնում են «զարմանալի հակակրանք դեպի ժողովրդական բանահյուսությունը», ընդգծում որ «Պ. Սևակը իր նախասիրություններից դուրս գտնվող պոեզիան համարում է թոնրատնային»:

Նա դեմ էր «ֆոլկլորային, թոնրատնային, խաղիկ-ջանգյուլումային մտածողությանը»: «Ֆոլկլորային, թոնրատնային, խաղիկ-ջանգյուլումային» ասելով՝ Պ. Սևակը նկատի է ունեցել «հետամնացությունը, խեղճ ու կրակ մտածողությունը»<sup>6</sup>: Նկատի է ունեցել, որ արդի բանաստեղծությունը չի կարող լինել «»հեքիաթանաղլական, որ նույնն է, թե պատմողական-նկարագրական: Նա պիտի լինի թելադրական-հուշարարական: Նրա առավել դիպուկ բնորոշումը, ըստ իս, ճիշտ ու ճիշտ համընկնում է այն բնութագրին, որ ունի դասական տեսակի աննման նժույզը. «Նա ոտները գետնին չի դիպցնում»<sup>7</sup>: Միով բանիվ՝ Պ. Սևակը դեմ էր «գեղեցիկ-լպստված» խոսքերին, որոնք գարշահոտում են պոեզիայի «ավգյան ախոռներում»:

1971 թվականին լույս ընծայված «Ձեր ծանոթները» ժողովածուն յուրահատուկ պատասխան էր բոլոր նրանց, ովքեր բանաստեղծին մեղադրում էին բանահյուսությունն արհամարելու, նրա դերն ու նշանակությունը ժխտելու մեջ:

Պ. Սևակը, որպես քաղաքացի ու բանաստեղծ, ընդհանրապես ատում, ժխտում, արհամարհում էր ստորաքարշությունը, կեղծավորությունը, ստախոսությունը, բամբասանքն ու գրպարտանքը և մարդկային

---

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 71:

<sup>6</sup> «Սովետական գրականություն», 1971, N2:

<sup>7</sup> Սևակ Պ; Երկերի ժողովածու երեք հատորով, հ. 3, Եր; «Սովետական գրող», 1983 , էջ 189 :

բնավորության բոլոր տարատեսակ արատավոր գծերը, ինչը ցայտուն արտահայտում է «Մարդը ափի մեջ» ժողովածուի առանձին բանաստեղծություններում ու շարքերում («Ատում եմ», «Ձեմ հարգում», «Վիճում եմ», «Ողբում եմ», «Ժխտում եմ», ինչպես նաև ութնյակներում ու «Վերնագիրը վերջում» շարքում):

Նույն ժողովածուում նա նաև գովերգում-փառաբանում է մարդկային բարձր արժեքները («Գովերգում եմ», «Ներում եմ», «Արդարացնում եմ» և այլն):

Դժվար չէ նկատել, որ նա իր այս տրամադրությունները մատչելի եղանակով ու կատրառական բարձր վարպետությամբ ներկայացնում է նաև «Ձեր ծանոթները» ժողովածուում, որտեղ կենդանական աշխարհի ներկայացուցիչները «փաստորեն վերհանում են մարդկային բնավորության այս կամ այն գիծը, հատկանիշը, որը հեղինակը գովերգում կամ պախարակում է»<sup>8</sup>:

Բանաստեղծն արժանապատիվ ապրելու դասեր է տալիս իր մանուկ ընթերցողներին, պարզաբանում ապրելու իմաստը: «Մարդը ափի մեջ» ժողովածուում կարդում ենք.

—Ապրել, ապրել, այնպես ապրել,

Որ մայր հողը երբեք չզգա քո ավերորդ ծանրությունը<sup>9</sup>:

Աշխարհի հետ հաղորդակցվելու, ճիշտ ապրելու այս գաղափարը Պ. Սևակը մանուկ ընթերցողներին բացատրում է ավելի պարզ, մատչելի եղանակով. արագիլը, որը «գարնան օրագիրն է», անչափ ծանր է տանում իր բեռը և եթե երկու ոտքով կանգնի հողին, «փափկած հողում» կխրվի մինչև հատակը: Դրա համար էլ միշտ կանգնում է ոչ թե երկու, այլ մի ոտքի վրա.

Արագիլն էմ,

Արագիլն էմ,

Ձեր փրկության հեռագիրն էմ:

Դուք մի հարցրեք սրան-նրան,

Թե ինչո՞ւ եմ ես միշտ կանգնում

Ոչ թե երկու ոտի վրա,

Այլ՝ մի ոտի:

Ով չգիտի

Թող հիմա նա

<sup>8</sup> Տե՛ս «Ձեր ծանոթները» ժողովածուի Դ. Հովհաննեսի առաջաբանը:

<sup>9</sup> Սևակ Պ.; Երկերի ժողովածու 3 հատորով, հ. 1, էջ 388: Այսուհետ այս հատորից կատարված հղումների էջը կնշվի շարադրանքում:

Լավ իմանա.

Ես կանգնում եմ միշտ մի ոտի,  
Որ դրանով թեթևանա  
Ձեր աշխարհի ծանրը բեռը,  
Որ ձեր հողն էլ, ինչպես մերը,  
Շատ չփափկի ձեր բեռան տակ,  
Ու չխրվեք մինչև հատակ  
Կամ ստիպված առնեք թևեր,  
Ձեր հին բույնը թողնենք ավեր...<sup>10</sup>

Շատախոսության ու ճռռմաբանությունը քննադատող մի շարք բանաստեղծությունների կարող ենք հանդիպել «Մարդը ավի մեջ» ժողովածուում: Նույնը այլաբանորեն Պ. Սևակը ներկայացնում է «Ձեր ծանոթները» գրքում: «Երգ չսիրող ու խռպոտած հավք ու թռչուն» չար նախանձից գանգատվում են արծիվի մոտ.

Կաքավները մեզ չեն տալիս հանգիստ ու քուն.  
Արթնանում են առավոտվա ժամը վեցին,  
Ամբողջ օրը հա՛ երգում են, գլո՛ւխ տանում,  
Անպետքները չե՛ն հասկանում,  
Որ իրենց պես

Մենք անբա՛ն չենք, գո՛րծ ենք անում (8):

Այդպես նաև կյանքում է պատահում. «կեղծավորը հաղթում է շիտակին, ճառող թերասը խոհուն գիտակին»: Երգ չսիրողն ատում է լավ երգողին, մեծ ու փոքր իշխանավորներն ատում են ազատ խոսքը.

Երգ չէր սիրում Արծիվն ինքը  
(Ինքն էր, իր որսն ու երկինքը):  
Եվ նա խոժոռ շուրջը նայեց,  
Տեղնուտեղը հրամայեց,  
Որ այլևրս չերգեն նրանք.

«Գլուխներըս, ճի՛շտ որ, տարաք» (8):

«Մարդը ավի մեջ» ժողովածուում Պ. Սևակը քննադատում է ստորաքարշությունը, հարմարվողականությունը, անտարբերությունը.

Ատում եմ նաև այն խելոք սուսիկ - փուսիկությունը,  
Որտեղ դժվար է տարբերել անգամ երեսն աստառից,  
Եվ այն հարկադի՛ր, ոչ թե ի ծնե, կուզիկությունը,  
Որ ստացվում է... ցած առաստաղից (402):

---

<sup>10</sup> Սևակ Պ; «Ձեր ծանոթները», էջ 10: Այսուհետ այս հատորից կատարված հղումների էջը կնշվի շարադրանքում:

Մարդկային բնավորության այս գծերն ու հատկանիշները Պ. Սևակը քննադատաբար մանուկ ընթերցողներին է ներկայացնում «Շունն ու գայլը», «Նորից շունն ու գայլը», «Չղջիկը» և մի քանի ուրիշ քանաստեղծություններում:

«Արքայական դատարանի կաշառակեր անդամները» հին օրենքի ուժով դատապարտում են չղջիկին: Բանաստեղծը, սակայն, գովաբանում է չղջիկի՝ ոչ մեկի առջև չտողալու, չդողդողալու հաստատակամությունը.

Ամբողջ կյանքում հալածվելով  
Երկու դաժան թագավորից՝  
Քարանձավ է խեղճը մտնում  
Եվ այնքան է ապրում մթնում,  
Որ գույգ աչքով կուրանում է,  
Լույս ասածն էլ մոռանում է:  
Կուրան՝ մ, բայց չի՛ կռանում  
Արքաների ուժի առջև:  
Կուրան՝ մ, բայց չի՛ մոռանում,  
Որ ավելի լավ է կառչել  
Քարանձավի խոնավ պատին,  
Քան թե ամեն տեսակ պետի  
Առաջ սողալ

Ու դողդողալ... (28):

«Մարդը ավի մեջ» ժողովածուում Պ. Սևակը մանուկ ընթերցողի մեջ որոշակի վերաբերմունք է մշակում դեպի ստորաքարշությունը, որն ամենապախարակելին է մարդկային բնավորության մեջ:

Չեմ հարգում շանն էլ, որին չար տերը  
Անտեղի տեղը որքան ծեծում է,  
Այնքան նա լիզում տիրոջ ոտերը՝  
Իրեն տրորո՞ղ-ջարդո՞ղ ոտերը,  
Եվ կծելու տեղ լոկ կաղկանձում է (404):

Կար մի ժամանակ, երբ գայլերն ապրում էին մարդկանց հետ, իսկ շները՝ անտառներում: Եվ շները մի օր խնդրում են գայլերին՝

Անտառում ապրեք միառժամանակ,  
Իսկ մենք՝ խեղճերս, մարդկանց մոտ մնանք (16):  
Եվ եղավ այնպես, ինչպես հաճախ է կյանքում պատահում.  
Իրենց նոր կյանքը, հոտած բները  
Շա՛ տ հավանեցին նորեկ Շները:  
Քիչ խանգարում էր լոկ շղթան վզի,  
Բայց հացի հո՛ տը, բա հա՛ մը մսի:  
Ավելի լավ չէ՞՞ վզների շղթան,

Քան սոված-ծարավ դես ու դեն վագ տան,  
Դողողողան ցրտից, փոշտան, հագան,  
Ի նչ է թե կոչեն անշղթա գագան,  
Եվ ազա՛տ կոչեն:  
Չէ՛, հիմար հո չե՛ն... (16):

Բանաստեղծը բոլոր պարագաներում կոչ է անում չկորցնել մարդկայինը, ազնվությունը, բարությունը, չլինել ագահ, ստորամիտ ու  
Թե կարող են՝

Իրենց հիմար արատներից  
Թող ամաչեն ու ետ քաշվեն... (446):

Պ. Սևակը նոր էջ բացեց հայ մանկագրության մեջ «Ձեր ծանոթները» ժողովածուով:

### **Եզրակացություններ**

«Պարույր Սևակը՝ մանուկներիին» թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգել ենք մի շարք եզրահանգումների՝

1. Պարույր Սևակին, բառի բառարանային նշանակությամբ, մանկագիր, բնականաբար, չենք կարող համարել, սակայն չենք կարող չարձանագրել, որ նա «Ձեր ծանոթները» մանկական բանաստեղծությունների ժողովածուով առաջընթացի նոր հուն մղեց նաև մանկագրությունը, բանահյուսության թեմաներն ու մոտիվները մանուկ ընթերցողներին նորովի մատուցելու վարպետության դասեր տվեց իր ժանանակակից և հետագա տասնամյակներում ասպարեզ իջած մանկագիրներին:

2. Պարույր Սևակն իր մանկական բանաստեղծություններով ցույց է տալիս, որ պետք է առաջնորդվել ընթերցողների տարիքային ու հոգեբանական զարգացման առանձնահատկությունները հաշվի առնելով, մանկական բանաստեղծությունները չծանրաբեռնել ոչ տեղին գործածված համեմատություններով, փոխաբերություններով, մակդիրներով:

Այս առումով կարելի է եզրահանգել, որ բանաստեղծը մանկագիր բանաստեղծներին առաջարկում էր մանկական բանաստեղծության ինչպես բովանդակային, այնպես էլ ձևակառուցվածքային, լեզվառճական ծրագիր, որ խիստ օգտակար եղավ մանկագիր բանաստեղծների համար:

3. «Ձեր ծանոթները» ժողովածուի բանաստեղծություններով Պ. Սևակը մանուկ ընթերցողներին կարևոր դասեր է տալիս, որոնք նրանց խիստ անհրաժեշտ են հետագա ողջ կյանքի համար: Նա ընթերցողներին խրատներ ու խորհուրդներ չի տալիս, այլ գեղարվեստական պարզ ու մատչելի եղանակներով քննադատում է մարդկային բնավորության

արատավոր գծերն ու հատկանիշները՝ եզրակացությունները թողնելով ընթերցողներին:

Նրա մանկական բանաստեղծությունների «հերոսները» կենդանական աշխարհի ներկայացուցիչներ են, որոնց բանաստեղծը յուրահատուկ կերպով մարդեղենացնում է, օժտում մարդկային բնավորությանը բնորոշ արատավոր ու գնահատելի հատկանիշներով ու գծերով:

4. Պ. Սևակի մանկական բանաստեղծություններն աչքի են ընկնում կատարողական բարձր վարպետությամբ, պատումի անպաճույճ ոճով, համեմատությունների, փոխաբերությունների, մակդիրների տեղին գործածությամբ, երաժշտականությամբ:

Բանաստեղծը խորհուրդներ ու խրատներ չի տալիս մանուկ ընթերցողներին, այլ նրանց հետ զրուցում է կենդանական աշխարհի ներկայացուցիչների մասին, պատասխանում նրանց հետաքրքրող «ինչու»-ներին և «ինչպես»-ներին:

**Мелине Гиравян**

### **Обращение Паруйра Севака к детям**

#### **Заключение**

**Ключевые слова и выражения:** аист, куропатка, летучая мышь, кот, тигр, собака и волк, фиалка, детская поэзия.

При исследовании темы «Обращение Паруйра Севака к детям» мы пришли к ряду выводов:

1. Паруйра Севака в словарном смысле слова, конечно, детским писателям не можем считать, однако, и не можем не констатировать, то что он со сборником детских стихов «Ваши знакомые» на новое русло прогресса побудило и детских писателей, сборник юным читателям дал уроки мастерства как по новому преподнести темы и побуждения фольклора своим современникам и в ближайшем десятилетии вышедшим детским писателям.

2. Своими детскими стихами Паруйр Севак показывает, что нужно руководствоваться учитывая свойства возрастных и психологических развитии читателей, не перегружая детские стихи с не уместным использованием сравнений, метафор, эпитетов.

В связи с этим можно сделать вывод, что поэт детским писателям предлагал как содержательный, так и структурный план языкового стиля, что стал довольно полезным для детских писателей.

3. Стихотворениями сборника «Ваши знакомые» П. Севак даёт важные уроки юным читателям, которые им будут нужны в будущем. Он не даёт советы и наставления читателям, а художественным простым и доступным

способом критикует порочные свойства и черты человеческого характера, выводы оставляя читателям. «Герои» его детских стихотворений являются представителями животного мира, которых поэт своеобразным способом делает человеком, наделяет порочными и ценными качествами и чертами свойственными характеру человека.

4. Детские стихотворения П. Севака выделяются высоким исполнительным мастерством, неприкрашенным стилем рассказа, уместным использованием сравнений, метафор, эпитетов, мелодичностью. Поэт не даёт советы и наставления юным читателям, а разговаривает с ними о представителях животного мира, отвечает на интересующих их вопросы «почему» и «как».

**Meline Gilavyan**

### **Paruyr Sevak to the children**

#### **Conclusion**

**Key words and expressions:** a stork, a partridge, a bat, a cat, a tiger, the dog and the wolf, a violet, children's poetry.

As a result of studying the theme “Paruyr Sevak to the children”, we have come to a number of conclusions:

1. Naturally, Paruyr Sevak cannot be considered a children's writer in the dictionary meaning of the word, but we can't help but record that he gave a new path of progress to pediatrics with his collection of children's poems "Your Acquaintances". The collection taught children's writers of his generation and those who appeared in subsequent decades masterful lessons in presenting the themes and motifs of folklore to child readers in a new way.

2. With his children's poems Paruyr Sevak shows that one should be guided by taking into consideration the features of the readers' age and psychological development and not to burden children's poems with inappropriately used comparisons, metaphors, and adverbs.

In this sense, it can be concluded that the poet offered the children's poets not only a content, but also a form-structural, and a linguistic guide to the children's poem, which was very useful for the children's poets.

3. With the poems of his collection of "Your Acquaintances" P. Sevak teaches child readers important lessons they will need for whole their life. He does not give advice to the readers, but criticizes the flawed traits and characteristics of human character in simple and accessible artistic ways, leaving the conclusions to the readers.

The "heroes" of his children's poems are representatives of the animal world, whom the poet humanizes in a unique way, endows them with flawed and appreciable qualities and traits that are characteristic of a human character.

4. P. Sevak's children's poems stand out for their high performance skills, uncomplicated narrative style, appropriate use of comparisons, metaphors, adverbs, and musicality.

The poet does not give advice and admonitions to child readers, but talks with them about representatives of the animal world giving appropriate answers to their interesting "why"-s and "how"-s.

### Օգտագործված գրականություն

1. Սևակ Պ., Ձեր ծանոթները, Եր; «Հայաստան», 1971, 33 էջ:
2. Սևակ Պ., Երկեր երեք հատորով, հ. 1, Եր; «Սովետական գրող», 1982, 596 էջ:
3. Սևակ Պ., Երկեր երեք հատորով, հ. 3, Եր; «Սովետական գրող», 1983, 592 էջ:

*Խմբագրություն է ուղարկվել 10.09.2022թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 26.09.2022թ.*

*Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.*

**ԼԻԼԻԹ ՄԵՅՐԱՆՅԱՆ**

Երևանի պետական համալսարան  
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ  
Էլհասցե՝ [nazeliseyranyan@yahoo.com](mailto:nazeliseyranyan@yahoo.com)

## ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

### Ամփոփում

Հոդվածում քննաբանվում է հայ մշակույթի մեծ երախտավոր, մշակութաբան, գրականագետ-քննադատ, հրատարակիչ, խմբագիր, ազգային-հասարակական գործիչ, բանաստեղծ, գրող, դրամատուրգ, թարգմանիչ, հայ մշակույթի միջազգայնացմանը նախանձախնդիր Ա. Չոպանյանի գրամշակութային ժառանգության կարևոր շերտերից մեկը՝ պոեզիան:

Չոպանյանի խոհապրումի նկարագիրը պայմանավորված է իր նուրբ ու խոր հոգեկառույցի առանձնահատկություններով, ազգային հոգեկերտվածքի և բանաստեղծական մտածողության ժառանգորդմամբ, համաշխարհային մշակութային դաշտի ներագրմամբ: Խորհրդապաշտական ուղղության գաղափարագեղագիտական կառույցը, մասնավորապես ֆրանսիական և ռուսական խորհրդապաշտությունը խոր կնիք են թողել Չոպանյանի գեղարվեստական մտածողության վրա, սակայն դրա ինքնօրինակ նկարագիրը ձևավորվել է ազգային խորհրդապաշտական պատկերամտածողության տիրական ներկայության շնորհիվ: Դա առավելապես նկատելի է հայ միջնադարյան բանաստեղծության, մասնավորապես Նարեկացու ժառանգության չոպանյանական ընկալումներում: Այդու գեղարվեստական շատ լուծումներում, համանման գուգահեռ պատկերակերտումներում, երբ ուրվագծվում է այլ մշակութային ազդակ, Չոպանյան-բանաստեղծը նախապատվությունը տալիս է ազգային ընկալումներին:

Արշակ Չոպանյանի պոեզիայի հիմնարար թեմատիկ-գաղափարական դաշտն ընդգրկում է ազգային-հայրենասիրական թեման և կյանքի ու մահվան թեման: Առանձնահատուկ դեր ունեն լռության մոտիվը, պահի և հավիտենության, կյանքի հեքիաթի և ձանձրության, կյանքի և երազի փոխառնչության խորհուրդը, ճերմակի գեղագիտությունը, բույրի գեղագիտությունը: Չոպանյանի բանաստեղծական աշխարհի հենքակառույցը կազմակերտվում է մի շարք փոխկապակցված խորհրդապատկերների կիրարկմամբ: Թիթեռի, շուշանի, աստղի, ասուպի, ծովի խորհրդապատկերները՝ կյանք-ծով, ծով-կին, կին-կյանք և կին-մահ գուգահեռներով, ուշագրավ նշանային համակարգ են կազմում:

Չոպանյանի սեղմ ու ծավալուն, չափածո և արձակ քերթվածները, ճերմակ, կապույտ կամ մռայլ հնչյակները, գեղոնները, տաղերն ու ռոնդոները անձնական ու անանձնական թափանցումներով, ազգային ու համամարդկային ընդգրկումով հանդերձ ի վերջո ուղղված են գոյության առեղծվածի բացահայտմանը:

Չոպանյան բանաստեղծը տիեզերական խոհը և սիրապրումը պատկերավորորդ մի շարք քերթվածներով, մասնավորաբար «Ատե, բայց մի մոռնար զիս» կրկնատողով բանաստեղծությամբ անուրանալիորեն կարող է ներկայանալ համաշխարհային պոեզիայի դատին:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Արշակ Չոպանյան, պոեզիա, պահ, հավիտենություն, բույրի գեղագիտություն, թիթեռ, շուշան, աստղ, ասուպ, երազ-կյանք, ծով-կյանք, կին-ծով, կին-կյանք, կյանք-մահ, կին-մահ:

### Ներածություն

Հայ մշակույթի մեծ երախտավոր, մշակութաբան, գրականագետ-քննադատ, հրատարակիչ, խմբագիր, ազգային-հասարակական գործիչ, բանաստեղծ, գրող, դրամատուրգ, թարգմանիչ, հայ մշակույթի միջազգայնացմանը նախանձախնդիր Ա. Չոպանյանի գրամշակութային գործունեության կարևոր շերտերից մեկը իր պոեզիան է: Մեծ չէ Չոպանյան բանաստեղծը, բայց ինքնահատուկ է իր նուրբ ու խոր պատկերամտածողությամբ և այդու՝ հմայիչ, անպայմանորեն դիտելի և դիտարկելի հայ բանաստեղծության երկնակամարում: Ասված է՝ աստղը աստղից տարբեր է փառքով:

Արշակ Չոպանյանի գրական մուտքը համընկավ արևմտահայ գրականության այն օրերին, երբ ասպարեզից հեռացել էր Դուրյանը, պոեզիան տեղապտույտի նշաններ էր դրսևորում, և որոշակիորեն առկա էր բանաստեղծության մահվան, ինչպես շուտով պարզվեց, անհիմն մտահոգությունը: Իրար հետևից պիտի լույս տեսնեին Ա. Չոպանյանի, Վ. Թեքեյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Իստրայի, Մ. Մեծարենցի առաջին ժողովածուները: 1894 թվականին Չոպանյանը կանխատեսում է բանաստեղծական նոր մտածողության հայտնությունը, որը «մարդկային մտքի շրջման վայրկյանի» արտահայտությունը պիտի լիներ՝ 20-րդ դարի մշակութային դիմագծի նկարագիրն ուրվագծելով: «Գրականությունը փետուր փոխելու վրա է»<sup>1</sup>, - հայտնատեսում էր Չոպանյանը: Եվ այդ նոր

---

<sup>1</sup> Ա.ՉՈՊԱՆՅԱՆ, Գթություն, «Հայրենիք», 1904, № 731:

խոհապրումը պիտի խոսեր բանաստեղծության լեզվով, և պոեզիան հայտնվեր առաջնագծում:

Գրականագիտական միտքն իրավացիորեն Թերզյան-Աճեմյան-Սեթյան եռյակի պոեզիայի ընդհանրական նկարագրին, որոնց «քերթողության անփոփոխ ստորոգելիներն էին ողջախոհ միտքն ու մաքուր բարոյականի հավատամքը», հակադրել է Չոպանյանի բանաստեղծական մտածողությունը հայտանշող «կյանքի կենդանի ու լիարյուն հոսքով հարստացած գեղարվեստական իրականությունը»<sup>2</sup>՝ այն դիտարկելով իբրև XX դարասկզբի բանաստեղծական բուռն տեղաշարժերի ելագիծ ու նախապատմություն<sup>3</sup>: Եվ, օրինաչափորեն, 1891 թվականին լույս տեսած «Արշալույսի ձայներ» առաջին ժողովածուի «Առ ընթերցողն» առաջին բանաստեղծության մեջ Չոպանյանը, դիմելով «բոցահոգի և վարդադեմ պատանիներին», գաղափարին հանդիպադրում էր պատկերը, «հասուն մտածությամբ»՝ «հուր զգացումը» ու պարզում նրանց իր գիրքը՝ որպես «համակ երազ և համակ սիրտ»: Համատիեզերական ընդգրկումների, բարդ կրթերի ու սուր բախումների, ծանրախոհ հաճումների չոպանյանական հակակշիռը առօրյայի, բնականի ու անմիջականի ներթաքույց հմայքն է, իրականության բանաստեղծականությունը, պարզ հրաշքը կյանքի: Չոպանյանի բանաստեղծական հայացքը հանրահայտ, մեծադորդ կենսական ճշմարտությունների կոշտ կեղևի տակ տեսնում է թրթռումները<sup>4</sup>՝ մի պահ շողարձակող ու անհետացող զգացողությունը, պահի մեջ իմաստավորվող և պահն իմաստավորող զգայությունը, անակնկալ հայտնվող նրբիմաստը, նրբերանգը, բույրը, որ ակնարկում-կռահումով են վկայում իսկության մասին: Թովմաս Թերզյանին ձոնված համանուն բանաստեղծության մեջ կարծրի տակ թաքնված փխրունի գեղագիտությունը բառավորվում է մարդկային մարմնի թանձր կավի պատյանից ազատված հոգու պատկերով<sup>5</sup>: Այդպես «Կապույտ հնչակ» հատկանշական վերնագրով քերթվածում Չոպանյանը կնոջ հոգին է գուրգուրում՝ երազելով այն տեսնել «կրքերու թանձր աղբյուսից»

---

<sup>2</sup> Վ.Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Արևմտահայ բանաստեղծությունը 1890-1907թ.թ., Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1985, էջ 23:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>4</sup> «Թրթռումներ» խորագիրն ունի իր երկրորդ՝ 1892 թվականին լույս տեսած ժողովածուն:

<sup>5</sup> Տե՛ս Ա. ՉՈՊԱՆՅԱՆ, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1988, էջ 46: Այստեղ և այսուհետ Չոպանյանի պոեզիայից արված մեջբերումները այս գրքից: Փակագծում կնշվի էջը:

բարձրացած, իբրև շուշան, որպես տեսիլ, համակ լույս ու անբիժ հրեշտակ: «Թող մեջդ կինն անհետի» (էջ 58), - աղերսում է նա:

Խոհազգացական այս համատեքստում ամեննին պատահական չէ պատկերավոր բնորոշմամբ՝ քողայնությունը, ճերմակի գեղագիտությունը, շուշանի խորհրդապատկերի հաճախադեպ կիրառությունը: Սա ներհատուկ է ոչ միայն նշված ժողովածուի քերթվածներին, այլև չոպանյանական բանաստեղծական կերտումներին առհասարակ, նաև «Քերթվածներ» վերնագրով ժողովածուի երկերին:

### Մեթոդաբանությունը

Արշակ Չոպանյանի բանաստեղծական աշխարհի սույն ուսումնասիրության ընթացքում, նկատի առնելով առկա արժեքավոր մետաբնագիրը, զուգակցվել են կառուցվածքային-նշանագիտական, հոգեբանական, պատմահամեմատական մեթոդներ, պատմամշակութային քննաբանման սկզբունքներ, միջգիտակարգային մոտեցումներ:

\*\*\*

Չոպանյանի պոեզիայի հիմնական մեղեդին՝ երաժշտական թեման, մեծափառ հավիտենության հանդարտ ու խոր շնչառությունն է: Հավիտենությունը հույուրեն հորանջում է ասես: Ճառագայթը շոյում է մրափից նոր արթնացած ծովի մորթը, ու ծովը սարսռում է մի պահ («Արևուն լույսը կփռվի, կպանկի», էջ 25-26): Պոեզիան կյանք-ծովի այդ ակնթարթային սարսռումն է թերևս: Շատ քերթվածների պատկերակառույցն է ձևակերտվում հանդարտություն-շարժում-հանդարտություն շարժընթացով: Այդպես անշարժ ավազանի նիրհող ջուրը, հանդարտ տևումը վրդովում է պատահականորեն նետված քարը. աննշան վրդովում և էլի ջրերի անխռով մրափը («Ասուպներ», էջ 97-98): Բասյոյի «Օեր լճակ././Ջրի մեջ գորտ թռավ//Ու լռությունը շաղ եկավ»<sup>6</sup> (Թարգմանությունը՝ Ն.Մովսիսյանի) հոքքուի տրամադրությունը<sup>7</sup> հիշեցնող առաջին պատկերին զուգադրվող տեսարանը պատուհանին հենված աղջկա՝ «պարապի մեջ թափառահած» միտքը խռովող պատանու հայտնությունն է. էլի սարսռու, ու հետո.

Կանցնի ու անհետ կըլլա պատանին.

Սարսուռին թախիժ կհաջորդե սուր՝

<sup>6</sup> БАСЕ, Стихи, Москва, „Художественная литература,, 1985, ст. 48:

<sup>7</sup> Դիպուկ է այս պատկերի Ակուտագավայի՝ մի առիթով արված մեկնաբանությունը. «Այգու ձեր լճակի մեջ թռած գորտը փշրեց հարյուրամյա թախիժը», տե՛ս Акутагава Рюноске, Из "Слов пигмея", [http://www1.lib.ru/INOFANT/RUNOSKE/4a-36.txt\\_with-big-pictures.html](http://www1.lib.ru/INOFANT/RUNOSKE/4a-36.txt_with-big-pictures.html)

Մոռացումն հետո կուգա վերըստին,  
Ու նորեն հոգին կնիրհե թափուր («Մսուպներ», էջ 98):

Հատկանշական է վերնագիր-բնագիր պարատեքստային լուծումը՝ «Մսուպներ»-ը: Ա և Բ պատկերներից յուրաքանչյուրը ասուպի նման մի պահ ճեղքում է խաղաղ տևումի՝ երկնքին նմանադրվող անծայրությունը:

Ահա կյանքի հանդարտ ու անխռով համայնապատկերը՝ որպես մեծահաստատ գոյի մշտակայուն հենքանկար, արևի համատարած լույսը, և լույսյան ու անշարժության միջից հաղթամարմին կովի խաղաղ երևումը՝ «մեծաշուք վեհությանը», գլուխը ծանրորեն ճռճելով, պարարտ, հզոր մարմինը տարուբերելով, հեռուն նայելով, ծովն ու երկինքը հայացքով ընդգրկելով, թոքերից քարձրացող լայն ու խորին բառայունով, որ ճեղքում է լույսությունը մի պահ: Ու կրկին վերահաստատվում է նույն հանդարտ ու անխռով համայնապատկերը («Կովը, էջ 115»):

Այս առումով հատկանշական է հավիտենության գիրկը հանդարտորեն սուզվելու Չոպանյանի երազը համանուն բանաստեղծության մեջ. ծովերում կորած հեռավոր բյուրեղ պալատը, ինքն ու սիրելին՝ այդ վեհ առանձնության մեջ, լուռ, անշարժ ժայռերը, ամպերը շղարշ, երկնքի ու ծովի բաժանման գիծը՝ «խաժ հորիզոնը», ծովի խորին շշունջը, և հանդարտ օրորումով այդ տևումը, մինչև մահը գար («Երագ», էջ 62):

Խոշոր ձևաչափով պատկերագծված հանրագումարային դիտարկումը պարզում է հետևյալ իրողությունը. Չոպանյանի սեղմ ու ծավալուն, չափածո և արձակ քերթվածները, ճերմակ, կապույտ կամ մռայլ հնչյակները, գեղոնները, տաղերն ու ռոնդոները անձնական ու անանձնական թափանցումներով, ազգային ու համամարդկային ընդգրկումով հանդերձ ի վերջո ուղղված են տիեզերական առեղծվածի բացահայտմանը: Առեղծվածն ինչպես միշտ և ընդմիշտ մնում է գոց, սակայն բանաստեղծությունը հերթական փորձն է արել այն նվաճելու:

Ինչպես և շատ այլ հեղինակների պարագայում, քառյակների մեջ է բյուրեղանում նրա բանաստեղծական խոհը. իրերի անվախճան շրջապատույտում հավերժն ի վար հոսում են օրերը, և անծայրապարփակ տիեզերքում կյանքն ու մահը հավիտենական համբույրի մեջ են: Ոչնչի ծոցում պարում է փոշին, մի խելագար ոգի վարում է այդ պարը, իսկ այդ խելագար ու անիմաստ, հեքոտ պարի միջից լսվում է ձանձրույթի սույլը: Թախիծը, տրտմությունը, սին հոգնությունը, հույսի բոցը, չարագույն հուշերը հաջորդում են իրար ամեն երեկո,

Ու վաղը, վա՛ղն, ո վ ձանձրություն,  
Պիտի կրկնել միշտ նույն բան... («Իրիկվան երգը», էջ 64):

Գոյը իր ձանձրությամբ ու հեքիաթով Չոպանյանին պատկերանում է որպես անավարտ մի երգ, որ հնչում է տարտղնված առանց ծածկի ու սյունի առկախ տան մեջ, իսկ էությունը՝ է-ն, հոգնել է շարժումից և իբրև մշտաբաց մի այք՝ կարոտ է քնի: Սա է: Իսկ մնացածը սրա բառավորումն է, պատկերավորումն ու կերպավորումը: Ի՞նչ է լռությունը, եթե ոչ փակ շրթունքներով քաղցր աստվածուհի, որ անհուն Ոչինչի ցուլացումն է, և կյանքը դրա մեջ չնչին արկած է... Մենք մի պահ այդ ոչնչից գոյանում-էանում ենք ու ի վերջո սուզվում այդ ոչնչի զով գիրկը: Դարձյալ մշտանույն անխոռով հավիտենությունը՝ մեր կյանք արկածից առաջ ու հետո:

Կյանք-քարայրում լոկ ստվերներ են թե՛ տարփանքից խոցված սերը, թե՛ հավատը, թե՛ բանաստեղծությունը, թե՛ պատրանքը, թե՛ երազը, ստվերներ են բոլորը... Հերթով սահում անցնում են, իսկ այդ քարայրի՝ ծփուն մարմնով, հաղթական քայլվածքով, գոռոզ ու նենգ ժպիտով, օձագալար ու նրբին տիրուհին տարակույսն է, միակը, որին հնագանդվում է մարդկային սիրտը («Ստվերները», էջ 29-31):

Չոպանյանի բանաստեղծական աշխարհի առանցքային խորհրդապատկերներից են աստղերը՝ որպես Արարչի հրեղեն աչքերից ցայտած քարացած արցունքներ՝ ի տես իր ստեղծած աշխարհն ավերող տառապանքի: Մահից հետո ամեն հոգի լույս է դառնում՝ ըստ Չոպանյանի, սակայն եթե սեր վայելած հոգիները աստղերի են փոխվում, ցավ ճաշակած էակները փոսուռաներ կայծոռիկներ են դառնում («Փոսուռաները», էջ 104-105):

Մեծ մշակութաբանը կարողանում է այլազան բանաստեղծական մեկնաբանություններ ստացած, բանաստեղծորեն մշտապես խաղարկվող հանրահայտ իրողությունները նորովի մեկնաբանել ու պատկերավորել: Այդպես Ադամի վիշտն ըստ Չոպանյանի մայր չունենալն էր: Այդպես մահից անդին տարածվող անիմանալին նրան պատկերանում է իբրև սքոռյալ անսահման կին, որի դեմքը ցայսօր ոչ ոք չի տեսել: Սիրտը հիմա մի սափոր գինի է, մարմինը վաղը՝ մի ափ մոխիր, բայց մահից անդին հողի տակ ոսկորները պիտի մի պահ սարսռան, երբ կանացի մի մանրիկ ոտիկ անցնի շիրիմի վրայով («Մեռնիլ», Եղիա Տեմիրճիպաշյանին, էջ 67-69):

Ուշագրավ է Բլոկի «Եկեղեցու մեջ աղջիկն էր երգում» բանաստեղծությանը ինքնատիպորեն աղերսվող «Աղջիկ մը որ կաղոթե» քերթվածը, ուր առանձնահատուկ դեր ունի Չոպանյանի պոեզիայի համար հատկանշական բույրի գեղագիտությունը: Այդ աղջիկը նրա ընկալմամբ թրթռուն փանդիո է, անուշահոտ կնդրուկի ոլորներ արձակող ոսկե բուրվառ, շուշան. «Շուշան, որուն թափանցիկ//Ու փափուկ//Բաժակն ի վեր ուղղածիզ,//Անշըշուկ/Կը սլանա բույրն համբարձիկ//Խուսափուկ» (էջ 73-74): Այստեղ աղոթքի ձայն-անձայնությունը տարածվում է որպես բույր:

Բոլորի քերթվածի միջտեքստային հետազոտությունը հայտնվում է նաև արևելահայ բանաստեղծական մեջ ու կրկին, ինչպես Չոպանյանի պարագայում, թերևս ազգային բանաստեղծական մտածողության ներազդմամբ՝ բույրի գեղագիտության բաղադրիչով: Վ. Դավթյանի «Տաղ երգի» քերթվածում<sup>8</sup> աղջիկն է երգում ավերակ վանքում և մխում իբրև կենդանի բուրվառ: Այդ երգ-աղոթքից ժամանակը հսկումի է կանգնում ճառագայթի պես: Դա գոյության փառքի երգն է, զոհաբերության խորհուրդը: Այդ պատկերին դավթյանական պատկերամտածողությամբ նմանադրվում են լեռնային վայրի ծաղիկների սուր բուրմունքը և քամու՝ երկնքից առած շնչառությունը: Խոնարհված վանքը բարձրանում է այդ երգից, դանդաղ էլնում է ծունկի:

Պետք է նկատել, որ, ի տարբերություն Բոլորի պատկերային լուծման, թե՛ Չոպանյանը և թե՛ Դավթյանը երգող-աղոթող աղջկան իբրև կենդանի բուրվառ են պատկերացնում և պատկերավորում: Այս պարագայում անշուշտ հայտնատեսելի է երկուսի համար ընդհանուր ազգային բանաստեղծական ավանդույթը: Նարեկացիական «Մեղեդի ծննդյան» տաղի՝ վարդի ու մանուշակի բույրերի խորհրդաբանությամբ հայտանշվող Աստվածամոր շնորհագեղ պատկերի արձագանքն են չոպանյանական և դավթյանական ընկալումները.

.....  
Կամար կապած թները գիրգ՝  
Երգում էր նա այնտեղում ու գեղգեղուն

.....  
Բերանն երկթերթ, շրթունքներից վարդ էր կաթում.  
Լեզվի տավիղն էր քաղցրերգում հուզումնահորդ.

.....  
Դաստակներն են մանուշակի ծիրանի փունջ:  
Բուրում էր նա կնդրուկի պես  
Աստվածային հրով լցված մի բուրվառի.  
Ձայնն էր մեղուշ, քաղցրանվազ<sup>9</sup>:

Ա.Չոպանյանի բանաստեղծությունն անշուշտ կրում է ֆրանսիական և ռուսական խորհրդապաշտության կնիքը, սակայն իր ուրույն

---

<sup>8</sup> Տե՛ս Վ. ԴԱՎԹՅԱՆ, Երկեր երկու հատորով, Հ. 1, Երևան, «Սովետական գրող», 1985, էջ 252-253:

<sup>9</sup> ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Մատյան ողբերգության, տաղեր, Թարգմանությունը՝ Վ. Գևորգյանի, Երևան, «Զանգակ-97», 2007, էջ 404-405:

պատկերամտածողության ավագանը ազգային բանաստեղծական ավանդույթն է:

Բույրի գեղագիտությունն անուղղակիորեն առնչվում է լռության մոտիվներին: Բույրը երևույթի լռելյայն վկայությունն է: Ճիշտ է նկատված՝ բույրը հոգու հագուստն է՝ աննյութեղենի շղարշային նյութականությունը: Չոպանյանը դարձյալ հոգին պատկերագրելու իր գեղարվեստական նախասիրության շրջանակում է:

Ձայնը, բույրը, շարժումը փոխատեղման տարակերպ անցումներով դառնում են ոգեղենի պատկերավորման հնարքներ: Լռին երաժշտություն է համանուն բանաստեղծության (էջ 83-84) շնորհագեղ էակը, որի բոլոր հրապույրները երգում են լռելյայն. դեղձան մագերի բուրումների նուրբ ու թափանցիկ երգին ձուլվում է աչքերի անուրջների հրեղեն գեղոնը: Անուրջը հայտնվում է որպես աչքերի փայլ, շնչառության ելևէջի շնորհիվ տարածվող բույրը դառնում է ձայնային լռող պատկեր, հնչում որպես բուրումների երգ, ինչպես Նազենիկի շարժումն է խորենացիական հայտնի դրվագում պատկերավորվում որպես լռին երգ: «Շուշան ծոծրակով» այդ աղջկա կրքոտ լռության պատկերը սիրո սպասում և խոստում է ու հիշեցնում է Գյուստավ Մորոյի՝ գեղանկարչությանը տրված բնորոշումը<sup>10</sup>:

Բույրի գեղագիտության նմուշ է նաև Չոպանյանի «Անջինջ բույրը» բանաստեղծությունը (էջ 84-85). ինչպես օձանելիքի պարպված սրվակը դեռ պահում է երբեմնի բույրը, այդպես երբեմնի ցամաքած սիրո բույրն է մնում թափուր սրտի մեջ՝ պարզելով գեղարվեստական պատկերի բույր-հուշ առնչակցության՝ գրական տարբեր ավանդույթներում առկա իրողությունը:

Չոպանյանն իր հետքն է թողնում նաև անվան գեղագիտության ազգային բանաստեղծական համատեքստում: Ծովեզերքի ավազի վրա գրված սիրեցյալի անունը ավերում-սրբում են ալիքները, ձյունեղեն փափկության վրա դրոշմված անունը ծածկում-կորցնում են դիզվող փաթիլները, իսկ սրտին դաջված անունը մնում է, մնում է անխաթար («Տաղ», էջ 95): «Գիտե՛ս» ռոնդոյում սիրելիի անունը երկնահամ է:

Միրո հոգեբանության շերտերից մեկի բացահայտման բացառիկ նմուշ է «Ատե, բայց մի մոռնար զիս» բանաստեղծությունը՝ կատարյալ թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ: Ահա առաջին տունը.

Դիպվածը մեզ օր մ՝ իրարու հանդըպցուց  
Ու սիրեցինք մենք զիրար,  
Գտած ըլլալ կարծեցինք՝ ինչ որ վաղուց

<sup>10</sup> «Գեղանկարչությունը կրքոտ լռություն է»՝ ըստ ֆրանսիացի նկարիչ, սիմվոլիզմի ներկայացուցիչ Գյուստավ Մորոյի, <https://time365.info/aforizmi/aforizm/452831>

Կփնտրեինք անձկաբար,  
Հինա կզգանք որ, ա իս, խաբեր ենք մենք մեզ,  
Ու կզատվինք, սիրելի՛ս,  
Գիտե՞ս քենե ի՞նչ պիտի լոկ խնդրեմ ես, -  
Ատե՛, բայց մի՛ մոռնար զիս (էջ 75):

Եթե յուրաքանչյուր պոետից մի քերթված ընտրելու լինենք՝ բանաստեղծության տաճարի պատերին դրոշմելու արժանի, Չոպանյանից թերևս սա պիտի ընտրենք:

Ոչ միայն մահը և կյանքի առեղծվածը, այլև ծովն է կանացի էությանը հայտնակերպվում՝ ըստ Չոպանյանի՝ հետևյալ դիպուկ որակումով. «Ծովը մեծ կինն է, դյութող, աղետավոր հրապույրով//Եվ կինը զայն կսիրե իբրև իր քույրն անդրանիկ» («Լոգուհիները», էջ 106): Հատկանշական է պատանու երազը՝ «Կուզե ծովուն մեջ այլակ մըլլալ գոնե մեկ վայրկյան» (նույն տեղում): Հարադրվող մտահասանելի ակնարկը մարդու գոյության պատկերն է ասես. ի՞նչ է մարդկային կյանքը, եթե ոչ աշխարհ-ծովի հոծ տարուբերումից մի պահ առանձնացող, հայտնվող ու անհետացող մի այլակ: «Ծովուն մոտ» շարքում բացվում է երևույթի խորհրդապատկերային տարողությունը. քնած ծովի խորքում պահված՝ դարանակալ սպասում է ահավոր մրրիկը՝ բացահայտելով կին-կյանք-ծովի քմայքները՝ հանդարտ շողացումն ու ներթափույց փոթորիկը: Այդպես փրփուրը հուզված ծովի խաժ հոգու հառաչանքն է, որ մի պահ հեշտագին պարում ու ցնդում է իսկույն: Ծովը կին-կյանքն է, բայց նաև մահը.

Կպաշտեմ զքեզ, մեծ կո՛ւյս մուլեզին,  
Եվ կնախանձիմ երջանիկ ձուկին,  
Որ կապրի ընդմիշտ ծոցիդ մեջ անգին:

.....  
Կպաշտեմ զքեզ և կբաղձամ, որ  
Երբ որ ես մեռնիմ, ինձի ահավոր  
Վիհդ ընեն շիրիմ, ո՛վ հրեշ աղվոր («Ծովուն», էջ 110-111):

Մուլեզին մեծ կույսի՝ ծովի շառաչը Չոպանյանը մեծ ու խորին աղոթերգ է անվանում: Միրո և կրքի, հզոր տարփանքի և բուռն երանության բանաստեղծական պատկերման ինքնօրինակ նմուշ է երկնքի հայացքի ներքո հովի և ծովի, օդի և ջրի ահռելի գիրկընդխառնումի պատկերը համանուն բանաստեղծության մեջ՝ որպես վաղնջական հոգևոր կերպրնկալումների, միֆամտաճողության արտացոլում: Արձակ բանաստեղծություններից այս առումով ուշագրավ է «Կապույտին տակ սև» դրվագը (էջ 223-224): Ծովն անվանելով մարմնավորված վիթխարի երազ,

երկրի աչքը անհուն՝ ծավի արցունքով լցված՝ դրսին՝ ծիծաղկոտ երեսին, հակադրում է ընկղմված նավերի բերկորներով, խեղդված մարդկանց ոսկորներով, օձերով ու արհավիրքներով լցված խորքերը՝ ներսը: Եվ համեմատվող եզրը դառնում է սիրեցյալի աչքերի կապույտը, որի մեջ իր սիրտն է նավում, սակայն այդ կապույտի անդունդը նավաբեկված սրտերի բեկորներ, հեղձամահ սերերի կմախքներ է թաքցնում գուցե: Սրանով անշուշտ բացվում է կին-ծով գուգահեռի շերտերից մեկը:

«Կոհակները» քերթվածում մարդկային սերունդների հերթագայումը, կյանքի ու մահվան շրջապտույտը նրան պատկերանում են տարուբերումի ու ալեկոծության տեսքով, փոթորիկից հետո հետզհետե հանդարտվող ծովի նմանաբերմամբ.

Ու բոլորն ալ կարծր ափունքին

Զարնվելով կատաղորեն,

Կքայքայվին ու կմեռնին

Խուրձ մը արցունք վեր նետելեն («Կոհակները», էջ 116-117):

Կյանքի փոթորիկը, գալարումն ու բզկտումը հանդարտվում են մի օր մահվան խավար ափերի մոտ, ու ի՞նչ է մնում՝ այն վեր նետված մի խուրձ արցունքը: Այդպես «Ծովուն» քերթվածում ծովին՝ խաժահեր թագուհուն է դիմում՝ բանաստեղծը եղբայրության սուտ քողի տակ լեղի թաքցրած, իրար հոշոտող, սև աստվածների անվամբ իրար ջարդող մարդկանց ու նրանց զազիր աշխարհը կրկին խավարի՝ վաղնջական քառսի գիրկը վերադարձնելու, վերընկղմելու խնդրանքով:

Բանաստեղծը շատ քերթողների ու իմաստասերների պես օրինաչափորեն փորձում է ճշտել երջանկության բանաձևը: Երջանկությունը, ըստ Չոպանյանի, չգիտեն ո՛չ լեռը, որ իր ձանձրույթը գիտի միայն, ո՛չ հովերը, որ հսկա ցավերի հառաչներն են, ո՛չ աստղերը և ո՛չ իսկ Տերը: Առեղծվածը մնում է գոց նաև ահա «Անձկություն» շարքում: Կգտնի՞ աղամորդին ծովի գրկում իր սերը, հոգու խաղաղությունը... Ու սարսափով մտածում է, որ ստում է նաև ծովը, ու աշխարհը մի մեծ սուտ է («Գիշերին մեջ»): Գոյի առեղծվածը համանուն քերթվածում ևս առնչակցվում է կանացի եությանը: Կյանքը պայծառ պարտեզում նստած լուսահեր բամբիշի խաղն է, որ իր վարդավառ մատներով թիթեռներ է բռնում, փետոտում, սպանում, ապա լալիս, իր արցունքներով հարություն տալիս թիթեռներին՝ կրկին փետոտելով սպանելու և հարություն տալու համար, ու այսպես անվերջորեն կրկնվում է այս խենթ ու մթին խաղը:

Չոպանյանի պոեզիայում հաճախադեպ է նաև թիթեռի խորհրդապատկերը: Հատկանշական է «Իմ սիրտս» քերթվածը, ուր սիրտը խոր տուփ է անվանում բանաստեղծը՝ մեռած սերերը չորացած թիթեռների

հետ համեմատելով: Փխրուն գոյի երևութականությունը արձակ բանաստեղծություններից մեկում Չոպանյանը պատկերում է թիթեռի և շուշանի կրկնադիր խորհրդանիշներով:

– «Ձիս պիտի սիրե՛ս միշտ»,– ըսավ շուշանը առտվան պայծառության մեջ իր թարմ սպիտակությունը օրրելով:

– «Հավիտյա՛ն»,– հծծեց թիթեռնիկն իր երփներանգ թևերը շարժելով:

Ու զեփյուռը, որ կանցներ, խնդաց տրտմորեն:

Թերթերը թուլցած ու մորթը ճմրթկած, իրիկվան ստվերներուն մեջ՝ շուշանը կկախվեր մեռած:

Տղու մը քարեն ճգմված, թիթեռնիկը անշարժ գետինը պառկած կմնար:

Ու զեփյուռը, որ կանցներ, խնդաց տրտմորեն («Մերը», էջ 231):

«Սփինքսը» քերթվածում բանաստեղծը հավերժական առեղծվածի բացահայտմանն ուղղված հարցումով դիմում է նշանավոր «անագորոյն ու վեհափառ ճիվաղ»-ին, որը խոստանում է գաղտնիքը հայտնել նրան՝ ականջին շշնջալով: Սփինքսը կատարում է խոստումը և տալիս է պատասխանը. գաղտնիքն այն է, որ գաղտնիք չկա, բայց թող գաղտնի մնա դա:

Չոպանյանի ազգային զգացումը ևս հատկանշվում է նուրբ և խոր ընկալումով: Երբեմնի փառքի տեսիլը բացվում է վերհիշումների համանուն շարքի առաջին քերթվածում: Տեսիլում հոյաշեն մայրաքաղաքն է, մեծափառ, խոհուն արքան, խրոխտորեն ապրող ցեղը և ինքը՝ դեռատի աշուղը՝ հայոց հին երգերը շուրթերին: Հաջորդը ռազմի տեսարան է, որ արտապատկերում է հայ կորովը՝ ահեղ թափով ծառս եղած, արքայի՝ արիական վճիտ ոգով բոցավառված արևային երևումը, որ սրտեր է հրկիզում, իսկ ինքը այնտեղ է էլի՝ հրափայլակ հերոսների սուրբ պայքարի երգը շուրթերին: Երրորդ պատկերում մարում է տեսիլն, ու բացվում է ներկայի մոռալամած պատկերը: Ամոթի ցավագին դողով համակված քերթողը երբեմնի բամբիռն է երագում, որ երգի ստրկության անարգ մոխիրից բարձրացած դյուցազնական ցեղի զարթոնքը: Այդպես «Օրոր Մայր Հայաստանին» քերթվածում ճամփեզրին նստած ճերմակահեր սզացող կնոջ կերպարում երբեմնի սև աչքերով լուսավոր աղջկա, նաև ոսկեմայր Անահիտի պատկերներն է նշմարում բանաստեղծը ու երագում կրկին աստղաբիբ տեսնել դիցուհուն՝ Բոնության սև խորանը խորտակած: Անցյալներկա, լույս-խավար հակադրումի բանաձևն է գործում այս երկերում՝ լույսի երագով ու հավատով կնքված: «Երգ հարության» բանաստեղծության մեջ ևս Քրիստոս-Հայաստան գուգահեռումով, հացի և գինու խորհրդաբանությամբ, հարության կոչ-մաղթանքով Չոպանյանը հավատարիմ է մնում ազգային բանաստեղծության հայրենասիրական

համատեքստին: Նույնը կարելի է ասել նաև 1892-1917 թվականների միջակայքում գրված «Հայկական դյուցազներգությունը» երկի մասին: Մինչ այլք հայությանը պատուհասած աղետը մեծագույն, անօրինակ ողբերգություն էն որակում, ինքը դյուցազներգություն է անվանում մեր ողջ պատմությունը՝ դարերի անհուն կտավի վրա տեսնելով մեր ցեղի հյուսած հերոսական վեպը: Ուղեղով Արևմուտք, Մրտով Արևելք՝ այդպիսին է նա, որն, իր ինքնությանն անդավաճան, կոչված է բարբարոսներին Արևմուտքի ազատ ոգին քարոզելու, Արևմուտքին՝ «մոգություններն Ասիո», որի առաքելությունը փառավոր, բայց դժնդակ է, որը թվով փոքր է ու ճակատագրով մեծ: Երկի գաղափարական առանցքում Չոպանյանի՝ Արևելքի և Արևմուտքի՝ ազատության հաղթական լույսի մեջ եղբայրանալու վեհ ու անհնար երազանքն է, մարդկային անասունի պարտության և Ոգի-Մարդու հաղթանակի, Ուժի նահանջի և Բանականության տիրապետումի իղձը:

Անկեղծության առանձնահատուկ զգացումով են հատկանշվում հորը և մորը ձոնված քերթվածները: Հիշում է ոսկերիչ հոր միամիտ վեհությամբ կնքված դեմքը: Հորից է ժառանգել արևոտ արյունը, գեղեցկության բարությունը և բարության գեղեցկությունը զգալու կարողությունը, ու հիմա էլ ինքն է զարդանախշեր կերտում, բայց արդեն զգացումների և խոհերի՝ մետաղի, բառերի պայծառ ակունքների վրա՝ երազելով մահից հետո մորը՝ իր հոգու անվանելի ցնորքին միանալ:

### **Եզրակացություն**

Հայ մշակույթի մեծ երախտավոր, մշակութաբան, գրականագետ-քննադատ, հրատարակիչ, խմբագիր, ազգային-հասարակական գործիչ, բանաստեղծ, գրող, դրամատուրգ, թարգմանիչ, հայ մշակույթի միջազգայնացմանը նախանձախնդիր Ա. Չոպանյանի բանաստեղծությունն անշուշտ կրում է խորհրդապաշտական ուղղության գաղափարա-գեղագիտական կառույցի, ի մասնավորի՝ ֆրանսիական և ռուսական խորհրդապաշտության կնիքը, սակայն իր ուրույն պատկերամտա-ծողության ավազանն իր նուրբ ու խոր հոգեկառույցն է, նաև ազգային բանաստեղծական ավանդույթը:

Արշակ Չոպանյանի բանաստեղծական աշխարհի սույն ուսումնասիրության ընթացքում, նկատի առնելով առկա արժեքավոր մետաբնագիրը, զուգակցվել են կառուցվածքային-նշանագիտական, հոգեբանական, պատմահամեմատական մեթոդներ, պատմամշակութային քննաբանման սկզբունքներ, միջգիտակարգային մոտեցումներ: Ուսումնասիրության մեջ առանձնացվել և շեշտադրվել են Չոպանյանի

բանաստեղծական աշխարհի հիմնարար թեմաները, մոտիվները և խորհրդանիշները, որոնց շարքում դիտարկվել են ազգային-հայրենասիրական թեման, կյանքի ու մահվան թեման, լռության մոտիվը, ճերմակի գեղագիտությունը, բույրի գեղագիտությունը, պահի և հավիտենության խորհուրդը, կյանքի հեքիաթի և ձանձրույթի, կյանքի և երազի փոխառնչությունը, թիթեռի, աստղի, ասուպի, շուշանի, ծովի խորհրդապատկերները, ծով-կյանք, ծով-կին, կին-կյանք և կին-մահ գուգահեռները: Նշված խորհրդապատկերներն ուրույն նշանային համակարգ են կազմում, որոնց իմաստային նրբերանգների և փոխազդման դաշտի խորքային ուսումնասիրության, պատմամշակութային համատեքստի վերլուծության, պատմահամեմատական քննության, միջգիտակարգային որոշ դիտարկումների շնորհիվ հնարավոր է դարձել պարզել Չոպանյանի բանաստեղծական աշխարհի ընդհանուր նկարագիրը:

Չոպանյանի պոեզիայի տիեզերական խոհը և սիրապրումը պատկերավորող մի շարք բանաստեղծություններ, մասնավորաբար սիրո հոգեբանության շերտերից մեկը բացահայտող «Ատե, բայց մի մոռնար զիս» կրկնատողով բանաստեղծությունը անուրանալիորեն կարելի է ներկայացնել համաշխարհային պոեզիայի դասին:

Չոպանյանի սեղմ ու ծավալուն, չափածո և արձակ քերթվածները, ճերմակ, կապույտ կամ մռայլ հնչյակները, գեղոնները, տաղերն ու տոնդրները անձնական ու անանձնական թափանցումներով, ազգային ու համամարդկային ընդգրկումով հանդերձ ի վերջո ուղղված են գոյության առեղծվածի բացահայտմանը:

**Лилит Сейранян**

**Л.Сейранян-Поэтический мир Аршака Чопаняна**

**Заключение**

**Ключевые слова и выражения:** Аршак Чопанян, поэзия, момент, вечность, эстетика аромата, бабочка, лилия, звезда, метеор, мечта-жизнь, море-жизнь, женщина-море, женщина-жизнь, жизнь-смерть, женщина-смерть.

Поэтика великого деятеля армянской культуры, культуролога, литературоведа-критика, издателя, редактора, национально-общественного деятеля, поэта, писателя, драматурга, переводчика, пропагандиста армянской культуры на Западе А. Чопаняна, несомненно, несет печать идеологии и поэтики символизма, в частности, французского и русского символизма, однако тонкая и глубокая структура его уникального образного мышления

основана на традиции национальной поэзии, также обусловлена его темпераментом.

В процессе исследования поэтического мира Аршака Чопаняна, с учетом имеющегося ценного метатекста, сочетались структурно-семиотический, психологический, сравнительно-исторический методы, принципы историко-культурного исследования, междисциплинарные подходы. Были выделены и акцентированы основные темы, мотивы и символы поэтического мира Чопаняна, среди которых рассматривались национально-патриотическая тема, тема жизни и смерти, мотив молчания, эстетика белого, ольфакторные мотивы, взаимосвязь мгновения и вечности, сказки и скуки жизни, мечты и реальности, символы бабочка, звезда, падающая звезда, лилия, море, параллели море-жизнь, море-женщина, женщина-жизнь и женщина-смерть. Эти символы образуют уникальную знаковую систему. При помощи изучения смысловых нюансов и взаимодействий этих символов, анализа историко-культурного контекста, сравнительно-исторического исследования, некоторых междисциплинарных наблюдений была выявлена общая картина поэтического мира Чопаняна.

Ряд стихотворений Чопаняна о любви, о вселенской думе, в частности, стихотворение с рефреном «Ненавидь, но не забывай меня», раскрывающий один из пластов психологии любви, можно представить на суд всемирной поэзии.

Короткие и длинные стихи, стихотворения в прозе, белые, синие или „мрачные,, сонеты, рондо, гегоны и таги Чопаняна с личными, национальными и общечеловеческими проникновениями в конечном итоге направлены на раскрытие тайны существования.

Lilit Seyrayan

## The poetic world of Arshak Chopanyan

### Conclusion

**Key words and expressions:** Arshak Chopanyan, poetry, moment, eternity, aesthetics of fragrance, butterfly, lily, star, meteor, dream-life, sea-life, woman-sea, woman-life, life-death, woman-death.

The poetics of the great figure of Armenian culture, cultural critic, literary critic, publisher, editor, national public figure, poet, writer, playwright, translator, propagandist of Armenian culture in the West A. Chopanyan undoubtedly bears the stamp of ideology and poetics of symbolism, in particular, French and Russian

symbolism, but the subtle and deep structure of his unique imaginative thinking is based on the tradition of national poetry, also due to his temperament.

In the process of researching the poetic world of Arshak Chopanyan, taking into account the available valuable meta-text, structural-semiotic, psychological, comparative-historical methods, principles of historical and cultural research, interdisciplinary approaches were combined. The main themes, motifs and symbols of Chopanyan's poetic world were highlighted and emphasized, among which the national-patriotic theme, the theme of life and death, the motif of silence, the aesthetics of white, olfactory motifs, the relationship of the moment and eternity, fairy tales and boredom of life, dreams and reality, symbols butterfly, star, shooting star, lily, sea, parallels sea-life, sea-woman, woman-life and woman-death. These symbols form a unique sign system. By studying the semantic nuances and interactions of these symbols, analyzing the historical and cultural context, comparative historical research, and some interdisciplinary observations, the overall picture of Chopanyan's poetic world was revealed.

A number of Chopanyan's poems about love, about the cosmic thought, in particular, a poem with the refrain "Hate, but don't forget me", revealing one of the layers of the psychology of love, can be presented to the court of world poetry.

Short and long poems, poems in prose, white, blue or, gloomy, sonnets, rondos, geghons and taghs with personal, national and universal significance are ultimately aimed at revealing the mystery of existence.

### Օգտագործված գրականություն

1. Վ. Դավթյան, Երկեր երկու հատորով, Հ. 1, Երևան, «Սովետական գրող», 1985:
2. Վլ. Կիրակոսյան, Արևմտահայ բանաստեղծությունը 1890-1907թ.թ., Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1985, էջ 23:
3. Գ. Նարեկացի, Մատյան ողբերգության, տաղեր, Թարգմանությունը՝ Վ. Գևորգյանի, Երևան, «Զանգակ-97», 2007:
4. Ա. Չոպանյան, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1988:
5. Р. Акутагава, Из "Слов пигмея", [http://www1.lib.ru/INOFANT/RUNOSKE/4a-36.txt\\_with-big-pictures.html](http://www1.lib.ru/INOFANT/RUNOSKE/4a-36.txt_with-big-pictures.html)
6. Басе, Стихи, Москва, „Художественная литература,“, 1985:

***Խմբագրություն է ուղարկվել 19.10.2022թ.***

***Հանձնարարվել է գրախոսության 06.11.2022թ.***

***Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.***

DOI:

**ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ** 

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ.  
գրականության ինստիտուտ  
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ  
*Էլհասցե՝ [nairahambardzumyan@yahoo.com](mailto:nairahambardzumyan@yahoo.com)*

DOI:

**ՄԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ** 

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ.  
գրականության ինստիտուտի ասպիրանտ  
*Էլհասցե՝ [iranush.parsadanyan.2014@mail.ru](mailto:iranush.parsadanyan.2014@mail.ru)*

**ԷՍ ԿԻՆ ԵՄ ԱՍՏՅՈՒՄԸ ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ  
«ՄԻԼԻՀՏԱՐԻ ՊԱՐՏԵԶՆԵՐ» ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊՈՒՄ<sup>1</sup>**

**Ամփոփում**

Ուսումնասիրության մեջ քննվում են արևմտահայ կին հեղինակ Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզներ» ինքնակենսագրական վեպի բառապաշարի իմաստաբանական տիրույթները, ինչպես նաև՝ տրվում են կին-տղամարդ հիմնախնդրի մեկնաբանության ուղիները:

Ուսումնասիրության *նպատակն է՝ կանացիություն* ֆենոմենը ամրագրող բառապաշարի իմաստաբանական տիրույթում վերլուծել *էս կին էմ* ասացումը, որը իրացվում է *անգիտակցության* խոսքային-իմաստային բաց ենթակարգերի շղթայում:

Ուսումնասիրության *խնդիրն է՝* ներկայացնել կանացի արտահայտության բացահայտ դրսևորումները՝ ներառյալ ինքնավարությունները և պատկանելությունները, որոնք իրացվում են *էս կին էմ* ասացման՝ որպես ֆենոմենի, իմաստաբանական տիրույթում՝ լեզվի հիմնական բառապաշարային-իմաստային ենթակարգերի ընդգծումների միջոցով: Լեզվական առանձնահատկությունների արտահայտության ուղղակի ձևը իրացվում է «Միլիտարի պարտեզներ» վեպում խոսքային-իմաստային ենթակարգերի (*ընտանիք, տուն, բարեկամներ (հավաքական*

---

<sup>1</sup> Ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային «Կանանց հիմնախնդիրները 19-րդ դարի երկրորդ կեսի՝ արևմտահայ գրականության մեջ» թեմատիկ ծրագրի շրջանակներում: Ծածկագիր՝ 2IT-6B118:

իմաստով), մանկական խաղալիքներ, ազգություն, կրոն, սեռ, ուսուցում, բնակավայր) միջոցով, անփոփոխում է վեպի ենթագլուխներում և պարունակում է (կին, աղջիկ, օրիորդ, կույս, տիկին, տատիկ, մայր, մորաքույր, հորեղբոր կին) իգական էներգիա հատկանշող անվանակարգեր, ուստի՝ դրանց հարաբերակցությունը *կանացիի* հետ հիմնված է տրամաբանական և զգայական կապերի վրա: Ինքնակենսագրական այսօրինակ տեքստում նույնացված լեզվական միջոցները ծառայում են գրողի կողմից իգական սեռի հետ նույնացվելու և ինքնորոշվելու փաստի ընդգծմանը:

Եսայանի համար գրականությունը *սահմանները հաղթահարելու* միջոց է: Եվ այդ իրողության մեջ նրա դիրքորոշումը առավել արմատական է հնչում, չնայած՝ կին-սոցիում պատերազմը շարունակվում է այլ միջոցներով, առավել անմիջական՝ *Ես կին եմ* ասացման, լեզվով:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Զապել Եսայան, ինքնակենսագրական վեպ, «Միլիտարի պարտեզներ», սուբյեկտ, բառապաշարի իմաստաբանական կարգեր, լեզվական ընդգծումներ:

### Ներածություն

Գինոքննադատության ոլորտում<sup>2</sup> կանանց ուսումնասիրությունները հիմնված են կին-տղամարդ խոսքային վարքագծի տարբերությունների վրա, որոնք ընդհանուր առմամբ սեռերի *գոյաբանական տարբերական* արդյունք են: Այդ տարբերությունը անխուսափելիորեն դրսևորվում է անձի կյանքի բոլոր ոլորտներում և ուղղակիորեն արտացոլվում է լեզվում:

Այս համատեքստում, ինքնակենսագրական վեպը որպես անձնական կյանքի *վերապրում-հուշագրություն*, առավել, քան մյուս բոլոր գրական ժանրերը, ներհյուսվում է պատմողի անձի, ներաշխարհի և շրջապատող աշխարհի շուրջ: Ինքնակենսագրությունների տեքստերը ունեն ընդգծված սուբյեկտիվ բնույթ: Դրանք մեծապես առնչվում են և պայմանավորված են իրենց հեղինակների (ըստ սեռի) առանձնահատկություններով: Հարկ է նշել, որ տպագրվել և ներկայում էլ տպագրվում են տեսական աշխատություններ, որոնք առնչվում են և նվիրված են այս ժանրի ուսումնասիրությանը: Այս առումով, ուշագրավ են Monica Latham<sup>3</sup>-ի, Lisa Ortiz-Vilarelle<sup>4</sup>-ի, Dennis Schep<sup>5</sup>-ի, Marija Krsteva<sup>6</sup>-ի,

<sup>2</sup> Showalter, E. (1977) *Literature of Their Own: British Women Novelists from Brontë to Lessing*. Princeton N.J.: Princeton University Press.

<sup>3</sup> Latham Monica, Virginia Woolf's Afterlives: The Author as Character in Contemporary Fiction and Drama, May 31, 2021: Routledge, 262 p.

Kate Douglas<sup>7</sup>-ի մենագրությունները, Joan Ramon Resina<sup>8</sup>-ի, ևն խմբագրությամբ լույս տեսած հետազոտությունները: Նշված թեման ուսումնասիրելու համատեքստում առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում 20-րդ դարասկզբի արևմտահայ կին հեղինակ Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզներ»<sup>9</sup> (1935) ինքնակենսագրական վեպը: Ինքնակենսագրական վեպի ժանրային առանձնահատկություններին անդրադարձել է նաև գրականագետ Սևակ Արզումանյանը իր «Սովետահայ վեպը» հինգհատորյակի առաջին հատորում՝ «Ժանրային բնույթով տարատեսակ և բազմազան է մեմուարային գրականությունը՝ գեղարվեստական կենսագրություն, ընտանեկան խրոնիկա, օրագիր, կենցաղային հուշապատում, ինքնակենսագրություն, հուշ-խոստովանանք, կենսագրական հուշեր այս կամ այն գրողի, գործչի մասին, պարզապես հուշագրություն, գրառում-նոթեր և այլն: Ինքնակենսագրական վեպի ժանրը տարբերվում է մեմուարային գրականության մյուս ձևերից, բայց և մի որոշ չափով պահպանում է իրականության վերարտադրման նրանց առանձին սկզբունքները: Երկու դեպքում էլ գլխավոր գործող անձը հեղինակն է, պատմությունն առաջին դեմքով ներկայացնող հերոսը, որ ինքնակենսագրական երկում ձեռք է բերել գեղարվեստական ընդհանրացման ուժ <...>»:<sup>9</sup>

Ուսումնասիրության ընթացքում պարզել ենք, որ Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզներ» ինքնակենսագրական վեպում ամենաշատը նշվել են **ընտանիք, տուն, բարեկամներ (հավաքական իմաստով), մանկական խաղալիքներ, ազգություն, կրոն, սեռ, կրթություն, բնակավայր** բառապաշարային և խոսքային իմաստաբանական կարգերը: Ավելին, հեղինակը վեպի տարբեր ենթագլուխները վերնագրել է հենց այս

<sup>4</sup> Ortiz-Vilarelle Lisa, *Americanas, Autocracy, and Autobiographical Innovation: Overwriting the Dictator*, November 4, 2020: Routledge, 246 p.

<sup>5</sup> Schep Dennis, *The Autobiography Effect: Writing the Self in Post-Structuralist Theory*, July 31, 2019: Routledge, 268 p.

<sup>6</sup> Krsteva Marija, *Towards a Theory of Life-Writing: Genre Blending*, November 21, 2022, Routledge, 128 p.

<sup>7</sup> *Research Methodologies for Auto/biography Studies*, Edited By Kate Douglas, Ashley Barnwell, June 19, 2019 by Routledge, 276 p.

<sup>8</sup> *Inscribed Identities: Life Writing as Self-Realization*, Edited By Joan Ramon Resina, January 17, 2019 by Routledge, 242 p.

<sup>9</sup> Եսայան Զ., Միլիտարի պարտեզներ, Ե., 2018, «Անտարես», 198 էջ:

<sup>9</sup> Արզումանյան Ս., Սովետահայ վեպը: Ինքնակենսագրական վեպի ժանրը, Ե., 1967, «Հայաստան» հրատ., էջ 317-373:


առաջնահերթություններով՝ («Մեր ընտանիքը», «Տունը», «Մեր փողոցը», «Արթին ամուճան», «Խաչիկ մորեղբայրս», «Պուպրիկներու տունը», «Կարապետ աղայի դպրատանը», «Արտաքին աշխարհի սեմին վրա», «Դպրոցը», «Դուրյանի շիրիմը», «Տիկին Տյուսաբ և Թովմաս Թերզյան», ևն):

Վեպում Եսայանի կողմից առանձնահատուկ ուշադրության է արժանանում կանանց կողմից կիրառվող *խոսքային-իմաստային* կարգաբանությունը, որի ներկայացումը իրականացվում է ինչպես **Ես կին եմ** բացահայտ ասացումով, այնպես էլ նույնի անուղղակի հատկանշումով: **Ես կին եմ** ասացման լեզվական ֆենոմենի խոսքային-իմաստային ենթակարգի դրսևորման բաց ձևին բնորոշ են որոշակի ցուցիչներ, որոնք ինքնավարություններ են, ներգրավված են վիպական տեքստում և փոխկապակցված են *կին-սուբյեկտի* առանձնակիության և անհատականության հետ, ինչպես սեփական *ես*-ի անունից պատմելն ու գրելն է:

### **Ես կին եմ ասացման իմաստաբանական տիրույթը**

Եսայանի «Միլիտարի պարտեզներ» վեպի *բառապաշարային մակարդակում* անուղղակիորեն գործում են որոշ անվանակարգեր, որոնց ներգրավումը և փոխհարաբերակցությունը *կանացի(ություն)* ֆենոմենի հետ (որպես կարգի), հաստատվում է *տրամաբանական և զգայական* փոխադարձ կապերի հիման վրա (կանանց զգացմունքների և փորձառության, հանդերձանքի, ամուսնության, կենցաղային աշխատանքների նկարագրությունները, ևն), որոնք առանձնացրել ենք իմաստաբանական համապատասխան տիրույթներում՝ բառապաշարի ներքին մակարդակներում ընդգծելով՝ *զգացմունքների աշխարհ, արտաքին հատկանիշներ, տուն-ընտանիք-կենցաղ, կրթություն* քրոնոտոպերը:

**Պատկեր 1:** Բառապաշարային մակարդակում ընդգծվող *կանացի(ություն)* իմաստաբանական տիրույթը՝ ըստ Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզներ» կենսագրական վեպի:



Անդրադառնալով բառապաշարի իմաստաբանական *Ես կին եմ* ասացման տիրույթին, նշենք, որ նրան բնորոշ է *կանացի* խոսքային-իմաստաբանական կարգի արտահայտության բացահայտ ձևերի դիտարկումը: Այս ենթակարգը ներկայացված է *կին, աղջիկ, օրհորդ, կույս, տիկին, տատիկ, մայր, մորաքույր, հորեղբոր կին իգական էներգիա* հատկանշող բառերով և կապակցություններով, դրանց հոմանիշներով ինչպես նաև՝ *Մրբուհի Տյուսաբի* կերպարի միջոցով («Տիկին Տյուսաբ և Թովմաս Թերզյան»):

Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզներ» ինքնակենսագրական վեպը կին-տղամարդ իրավունքների, հավասարության, ազատության բարձրաձայնման և արտացոլման յուրօրինակ դրսևորում է: Վեպի ինքնակենսագրականության մեջ *կանացիի* հանդեպ հեղինակի ընդգծված դիրքորոշումը, ուղղակիորեն պայմանավորված է նրա առաջադեմ ֆեմինիստական հայացքներով: Եսայանի համար գլխավորը *կանացիի* և *սուբյեկտայնության* գիտակցումն է, որը նա բացահայտում է վեպում, երբ անդրադառնում է այդ հիմնախնդրին՝ «Կինը աշխարհ չէ եկած մինակ հաճելի ըլլալու համար: Կինը եկած է իր խելքը, մտային, բարոյական և ֆիզիքական յատկությունները զարգացնելու համար: Ինքզինքնին յարգող

բոլոր կիներուն իտեալը միայն հաճելի ըլլալը պէտք չէ ըլլայ, այլ երկրիս վրայ գործօն բարերար տարր մը դառնալը»<sup>10</sup>:

«Միլիհտարի պարտեզներ» վեպի տարբեր հատվածներում, կին կերպարների միջոցով ընդգծելով տարիքային տարբեր փուլերը (**մանկություն** «Մեր ընտանիքը», «Տունը», «Մեր փողոցը», **պատանեկություն** «Արտաքին աշխարհի սեմին վրա», «Դպրոցը», **երիտասարդություն** «Դուրյանի շիրիմը», «Տիկին Տյուսաբ և Թովմաս Թերգյան»), Եսայանը ընթերցողին տանում է սեփական ինքնորոշման և կայացման ճանապարհով՝ նույնականանալով **կանացիություն** ֆենոմենին՝ «Հորս խոսքերը, որ կը բղխեին իր բարոյական սկզբունքներեն, մեծ գոհացում կուտային ինձ: Իմ պատանեկան եռանդս կը հագնար հորս տված բացատրություններով և պատվերներով: Անոնք կը հաջողեին աստիճանաբար կարգ ու սահման դնել այն խռովահույզ քառսին, որ իմ ներքին էությունս էր: Իմ մեջ տեղի կ'ունենային ընդհարումներ, հաղթանակներ և պարտություններ, որոնք ինձ կը նետեին հակասական զգացումներու մեկ ծայրահեղութենեն մյուսը, բայց հորս խոսքերու ազդեցության տակ համերաշխություն առաջ կուգար իմ ներքին էության մեջ և աստիճանաբար կը հասնեի իմ հոգեկան միության»:<sup>11</sup>

Եսայանը սեփական սուբյեկտայնությունը ստեղծում է կանացի տարաբնույթ կերպարներ, միավորելով: Նա հաճախ է օգտագործում *մենք* ներառական դերանունը՝ նկատի ունենալով իրեն և ընտանիքի մյուս անդամներին՝ հայրիկին, մայրիկին, մորաքույրներին, քեռիներին, տատիկին, միաժամանակ ընդգծելով *կանացի* ներքին համերաշխության փաստը: Եսայանը բացահայտում է, նախ և առաջ, իր կանացիությունը և սուբյեկտայնությունը: Ինչ վերաբերվում է *կանացի* բառի իմաստային արտահայտության անուղղակի գաղտնագրված ձևին, ապա այն ներառվում է և գերիշխող է դառնում **զգացմունքների աշխարհ** տիրույթում, որի լեզվական իրացումը բնութագրվում է որոշակի զգացմունքային և հուզական բառապաշարով, որն ինքնին բնորոշ է կանանց մեծամասնությանը:

Հատկանշական է, որ «Միլիհտարի պարտեզներ» վեպում հեղինակի կողմից հիմնականում մերժվում է *հուզականությունը*, որը առավել հստակ դրսևորվում է տեքստի այն հատվածներում, որոնցում հեղինակը վերհիշում է իր մանկության տարիները՝ հատկապես Խաչիկ մորեղբորը և մորաքույրներին առնչվող հատվածներում: Այս հանգամանքը կարող է

---

<sup>10</sup> Եսայան Զ., Միլիհտարի պարտեզներ, Ե., 2018, «Անտարես», 198 էջ:

<sup>11</sup> Եսայան Զ., Միլիհտարի պարտեզներ, էջ 125:

վկայել հեղինակի կայացման և հասունացման գործընթացի բարդության, ինչպես նաև՝ 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին աղջիկների խիստ դաստիարակության մասին՝ «Ոչ իմ տարեկիցները և ոչ ալ մեծերը կը հասկնային իմ հոգեկան խռովքները, և ընդհանուր կարծիքն այն էր, որ բուռն և անգույթ երեխա եմ: Բայց ուրիշներու կարծիքը կշիռ չունէր ինձ համար, ոչ թե որովհետև այնքան դատողութիւն ունէի, այլ որովհետև շատ ամբողջական կերպով ենթակա էի իմ ներքին, հաճախ անգիտակից մղումներու»: <sup>12</sup>

«Միլիհտարի պարտեզներ» վեպում փակ է Եսայանի՝ դեպի այլ տղամարդը ունեցած անձնական զգացմունքների տիրույթը: Նա չի գրում ոչ վաղ տարիքում առաջին սիրահարվածության և ոչ էլ հետագայում ունեցած ապրումների մասին. միայն «Նավակը» խորագիրը կրող հատվածում հպանցիկ նշում է իր և Միհրանի (իրենց տան վարձակալների տղայի), ով այնքան նման էր «Ձմբայենց Պետրոսին» (Պետրոս Դուրյանին) պատանեկան սիրո մասին, որ ամփոփվում էր «իրարու ցանկով բաժնված պատշգամբին վրա» հանդիպելու, «բանաստեղծություններու մասին» խոսելու, «իմե համիկի փունջեր» <sup>13</sup> ստանալու, ևն մեջ: Սակայն գրում է առավել ուշ ունեցած անկեղծ զգացմունքների մասին, որոնք նա զգացել է իր պատանության և երիտասարդության տարիներին տարբեր մարդկանց հանդեպ ունեցած վերաբերմունքի տիրույթում (ինչպես՝ *էրբ հայրը որոշում է ուղարկել նրան Սորբոնի համալսարանում սովորելու*, դրվագն է): Եսայանի վեպում **կանացիությունը** դրսևորվում է նաև մյուս տղամարդ կերպարների (հոր, մորեղբոր, մանկության ընկերների, Թովմաս Թերգյանի) հանդեպ հեղինակի վերաբերմունքի, զգացմունքների և աշխարհայացքի նկարագրության միջոցով, ընդ որում, այդ զգացմունքների մասին հեղինակը խոսում է հուզական տարբեր մակարդակներում՝ «Հայրս և Թովմաս Թերգյանը կը խոսէին նոր սերունդին, մանավանդ, աղջկանց դաստիարակության հարցերուն վրա: Ես վերացած մտիկ կ'ընէի: Թովմաս Թերգյանի երկը ինձ ծանոթ էր և բերնոց գիտէի անոր մեկ բանաստեղծությունը»: <sup>14</sup>

Ընտանիքի անդամների և բարեկամների հանդեպ ունեցած վերաբերմունքը նույնպես մանրամասնորեն նկարագրված է վեպում: Եսայանը ամենափոքր մանրամասներով ընդգծում է նաև իր հույզերն ու զգացմունքները բարեկամների հանդեպ, այդ թվում՝ դրական

---

<sup>12</sup> Եսայան Զ., Միլիհտարի պարտեզներ, Ե., 2018, «Անտարես», էջ 120:

<sup>13</sup> Եսայան, 146:

<sup>14</sup> Եսայան, 152: Այսուհետ, էջերը՝ մեջբերումների կողքին:

տրամադրություն ստեղծող իմաստաբանական միավորներով՝ «Մասնավորապես ջերմ սիրով կը սիրեի Յուդաբեր մորաքույրս, որ Կոկո կը կոչէի: Ան քույրերուն ամենէն մեծն էր և ոչ միայն ինձ, այլև մայրիկիս համար ուներ մայրական զգացում» (23),

Ընտանիքի անդամների հետ իր փոխհարաբերությունների մասին նա խոսում է բանականության զուսպ, ընդգծված դրսևորմամբ՝ տեքստի համապատասխան հատվածներում ակնարկելով բոլոր այն բացասական զգացմունքները, որոնք նա ապրել է՝ ունենալով որոշակի տարածայնություններ և վերապրելով դրանցից ծնված հույզերը: Լեզվական բոլոր հնարքները, որոնք առկա են Եսայանի «Միլիտարի պարտեզներ» ինքնակենսագրական վեպում, իրացվում են սեռով պայմանավորված *զգացմունքների աշխարհ*-ում՝ միաժամանակ ընդգծելով հեղինակի ընկալումները *ենթագիտակցության* և *բնագրի* տիրույթներում, որ բնորոշ են կանանց: Վեպում *կանացի սկզբի* արտահայտության անուղղակի դրսևորումները արտաքին հատկանիշներն են: Եսայանը, ամենայն մանրամասնությամբ և խորը ակնածանքով նկարագրում է բոլոր կերպարների՝

**արտաքինը՝** «Կոկո նուրբ կազմվածքով, բաց շագանակագույն մազերով, խորը ինկած սև աչքերով կիս մըն էր, հոգածու իր արդուգարդին: Մազերը կը կտրեր ճակտին վրա և տանը մեջ միակ կիսն էր, որ բրնձափոշի կը գործածեր, հակառակ այդ մասին եղած մեղադրանքներուն» (23),

**զգեստները՝** «Կը սիրեր գունազեղ կերպասները և կը հիշեմ, որ տարիներով ցանկություն ունեցած է կարմիր թավիշե հագուստ մը շինելու, ինչ որ անկարելի եղած է տանը մեջ տիրող մայրական խիստ կարծիքին պատճառով» (23),

**հագուստի տարբեր բաղադրիչները, գլխանոցը՝** «Յեկեղեցիեն վերադարձին Լուսիկ և իր ազգականները կհանդիպին յենիչերիներու: Անոնք անմիջապես կհարձակին մատղաշ աղջկան վրա, ֆերաճեն կպատռեն այն առարկությամբ, վոր կանանչ գույնով զարդեր ունի. կանանչ գույնը իսլամներու համար սուրբ գույն էր և կյավուրները իրավունք չունեյին կրելու: Բայց, ինչ վոր ավելի ծանրակշիռ էր, այն էր, վոր **Լուսիկի յաշմազը կվերցնեն յերեսեն...**» (16),

**բնավորությունները, տրամադրությունները՝** «Երբեմն Կոկո կ'իյնար մելամաղձոտության մեջ և, ինչպես եթե քեն ըրած ըլլար բոլոր տնեցիներուն, մոայլ և տխուր կ'աշխատեր, ձախ ձեռքը դրած քունքին, որովհետև գլխի ջղային շարժում մը ուներ, որ կը սաստկանար այդ օրերուն, և արցունքը աննկատ կը սահեր նիհար այտերուն վրա» (24), «Մաքրիկ մորաքույրս, ընդհակառակն, բուռն բնավորության տեր էր և հանկարծակի իր տրամադրությունը կը փոխվեր: Կենսուրախ էր և օժտված հարուստ

խառնվածքով» (24), «Թե՛ մորեղբայրներս, թե՛ Մաքրիկ մորաքույրս – Յուզաբեր մորաքույրս հեզ էր և համակերպվող» (25),

**տան սենյակները, կահ-կարասին՝** «Բարեբախտաբար, տանը մեջ կային երկու օվասիսներ, ուր սակայն իմ մուտքս հազվադեպ էր: Անոնցմե մեկն էր Երանիկ մորաքրոջս սենյակը, ուր մինակը յազմա կը բաներ: Երանիկ մորաքույրս խստիվ կը պաշտպաներ իր առանձնությունը և ինձ համար իր սենյակը խորհրդավոր որջ մըն էր, ուր մտնելու երանությունը կը համարեի անհասանելի երագ» (22): «Մյուսը՝ տանը ամենեն ընդարձակ սրահն էր, ուր մորաքույրներս երբեմն դեմ դեմի, երբեմն առանձին թեզկեհներու վրա յազմա կը բանեին: Այդ սրահը հրաշալի աշխարհ մըն էր ինձ համար: Գետինը ծածկված էր փասիաթով, որ թեթև մը կը ճռճոար մորաքույրներուս մուճակներուն տակ: Բազմոցը ծածկված էր նկարեն կտավով: Վարագույրները դեղնորակ էին կարմիր խիտ գիծերով» (23),

**մաքրությունը և հիզիենան՝** «Մաքրության աններող սովորություններ, մեծ մորս հրամայական պահանջով, վանել կուտային ոևէ առարկա, որ կարող էր քիչ մը հաճելի անկարգություն, քիչ մը ֆանթազիա բերել մեր կենցաղին մեջ: Բոլոր սենյակներուն պատերը սվարած և ջնարակված էին ճերմակ գույնով: Գետինը տախտակ էր, բացի երկու սենյակե, որոնք ծածկված էին փսիաթով: Այդ տախտակները այնքան հաճախակի կը լվացվեին և ավագով կը շփվեին, որ թաց տախտակի հոտը սովորական դարձած էր ռունգերուն: Սենյակներուն ճակատը մեկ պատեն մյուսը կ'երկարեր բազմոցը, միշտ ծածկված ձյունաթույր ծածկոցով» (21):

Դրանցում շատ պարզ դրսևորվում են վեպի կին կերպարների իրական կանացի էությունները:

Հագուստի և զարդերի դերերի կարևորությունը Եսայանի կյանքում հաստատվում է նրանով, որ նույնիսկ մոր առողջ և հիվանդ տարիների մասին խոսելիս հեղինակը նկարագրում է նրան բացառապես առանց զգացմունքային զեղումների և ամենայն մանրամասնությամբ՝ «Մորս համր տխրությունը տևեց օրեր և օրեր: ...Մորս հիվանդությունը, որ կը կոչեին մելամաղձոտություն, մեծապես ազդեց մեր տան վիճակին վրա: Հայրս, բանը գործը թողած, մեկ կը վերադառնար տուն հոգալու համար հիվանդին վրա: Մորս տխրությունը սկսավ տիրապետել ամբողջ տանը: Երբ մենք, փոքրերս, ոևէ բան ուզեինք, կամ խաղի մը ձեռնարկեինք, մեզի կ'ըսեին սաստող ձայնով. «-Մարդ հիվանդ է, խելոք կեցե՛ք...» (89):

Եսայանին հաջողվել է արվեստով պատկերել նաև իր հանդերձները: Դրանք հիշատակվում են տարբեր դրվագներում, տեսնում ենք նաև պատկերներ նաև Գարապետ աղայի դպրոցից, որտեղ նա սկզբնապես սովորում էր, ապա՝ Մուրբ Խաչ վարժարանից, ևն: Առանձնահատուկ պատկերվում է Ալեմտաղին, Միլիհտար թաղամասը, որտեղ տեղափոխվում

է նրանց ընտանիքը, երբ մայրը տառապում էր տարօրինակ հիվանդությամբ:

Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզներ» ինքնակենսագրական վեպում *հարսանիք* և *ամուսնություն* նշանակելիները կրում են գրողի ապրած հայրիշխանական դարաշրջանի և բռնապետական օսմանյան կայսրության ահռելի ազդեցությունը: Դրանք արտահայտված են հեղինակի տատիկի (Լուսիկ տուտուի), Մաքրիկ մորաքրոջ, Խաչիկ մորեղբոր, հոր և մոր, և ընդհանրապես, ընտանիքի մյուս անդամների անձնական հարաբերություններում և կյանքում:

### **Անձի իրացման երգիստենցիալ անհնարինությունը**

19-րդ դարի կինը, տարբեր ոլորտներում, *սահմանափակված լինելով սեփական անձի իրացման հնարավորություններով*, ստիպված էր կյանքի հիմնական նպատակը տեսնել ընտանեկան փոխհարաբերություններում և կենցաղում: Ամուսնության տեսարաններ հեղինակը չի նկարագրում, այլ պատկերում է ամուսնության հետ կապված այնպիսի խնդիրներ և հանգամանքներ, որոնք կարող էին ի հայտ գալ *փակ-բռնապետական* և *հայրիշխանական* սոցիումներում, ինչպիսին օսմանյան կայսրությունն էր: Լավագույն օրինակը, թերևս, Եսայանի Լուսիկ տուտուին տասնչորս տարեկանում ամուսնացնելու պատմությունն է, Խաչիկ մորեղբոր ամուսնությունը հույն կնոջ հետ, Մաքրիկ և Յուզաբեր մորաքույրների ամուսնանալ-չամուսնալանու հիմնահարցերը:<sup>15</sup>

Ուշագրավ է, որ հեղինակը կերպարները նկարագրելիս հաճախ պարզաբանում է նաև նրանց *ծննդյան հանգամանքները, սեռի նախապատվությունը* և *կին-տղամարդ տարբերությունները* ընտանիքներում, որոնք պայմանավորված են հայրիշխանական հասարակության չգրված բարոյական և սոցիալական օրենքներով և ընկալումներով: Այս հանգամանքը ժառանգական հիմնախնդիրների պատճառով արդիական էր և առանձնահատուկ կշիռ ուներ ոչ միայն 19-րդ կամ 20-րդ դարերում, այլև այսօր:

Գրականության և փիլիսոփայության փոխներթափանցումների միջոցով հեղինակը բացահայտում է *կնոջ ինքնության* հիմնախնդիրները, որոնք արտացոլվում են *Ես կին եմ* ասացման միջոցով: Վեպի գլխավոր կին կերպարը՝ հեղինակն ինքն է, ով նկարագրում է մարդկանց և աշխարհի փոխառնչությունները՝ դրանց ներտիրոյթում ներգրավելով նաև իր փոխհարաբերությունները մարդկանց հետ, որոնց միաժամանակ կնոջ

---

<sup>15</sup> Եսայան Զ., Միլիտարի պարտեզներ, Ե., 2018, «Անտարես», 198 էջ:

զգայական աշխարհը փիլիսոփայորեն բացահայտող ենթատեքստ է հաղորդում: Այս առումով, ուշագրավ է վեպի «Տիկին Տյուսաբ և Թովմաս Թերզյան» խորագիրը կրող հատվածը, որում ընդգրկված Սրբուհի Տյուսաբի, Էոժենի, Վերգինեի (Տիրան Չրաքյանի կինը) Արշակունի<sup>16</sup> (Թեղդիկ), Սիպիլի<sup>17</sup> կերպարների միջոցով Եսայանը ներկայացնում է 19-րդ դարի երկրորդ կեսին արևմտահայ իրականության մեջ և 20-րդ դարակզբին և ավելի ուշ սփյուռքահայ տիրություն ի հայտ եկած կանանց ազատագրության, առաջադիմության, կրթության, դաստիարակության և իրավունքի հիմնախնդիրները՝ «Անոնցմե մեկը՝ Էոժենի, ամեն իրիկուն տուն կը դառնար գլխիկոր, փարախը մտնող ոչխարի պես և կ'ենթարկվեր անտրտունջ բարբարոս հորը զայրություններուն: Սյուսը՝ Վերգինե, որ քանի մը տարի հետո դարձավ Տիրան Չրաքյանի (Բնտրայի) կինը, ավելի ըմբոստ էր և իր անկախությունը ապացուցանելու համար կը դիմեր արտասովոր միջոցներու: Ան կտրել տվավ իր մազերը – ինչ-որ շատ անսովոր բան էր այն ժամանակ – կը հագնվեր չափազանց պարզ և տղամարդու փողկապ կը կրեր: ...Անոնք երկունս ալ կը խոսեին այն բանի մասին, թե պետք է դուրս գալ «տափակ կյանքե» և բան մը ընել, բայց ի՞նչ ընել... Իրենք ալ չէին գիտեր ու հաճախ կ'իյնային տխրության և հուսահատության մեջ»:<sup>18</sup>

«Սիլիհտարի պարտեզներ»-ում Եսայանը մատնանշում է կանանց՝ օսմանյան կայսրությունում *դանդաղ մահվան մեջ մնալու*, սեփական ներուժը չիրացնելու, ի վերջո, նրանց *չգոյության, ես կին եմ* ասելու անհնարինության հանգամանքները: Հեղինակի տեքստերում իրացվում են հոգեբանական, սեռերի տարբերակման և լեզվական այն բոլոր էատարրերը,

<sup>16</sup> Ըստ Եսայանի՝ Արշակունին շնորհ ունեցող գրագիտուհի էր, սակայն հայրիշխանական սոցիումի և ավանդապաշտական հայացքների պատճառով չէր հասել «իր հատկությունների» լիարժեք բացահայտմանը՝ «Շատ վախկոտ էր և զգույշ և իր գլխավոր հոգն էր ունեցնում չխրտնչեցնել հասարակությանը»: Տե՛ս Եսայան Զ., Սիլիհտարի պարտեզներ, էջ 151:

<sup>17</sup> Եսայանը Սիպիլին ուրվագծում է մեկ պարբերությամբ, սակայն չափազանց ուղիղ-թիրախային է բնութագրում նրա գործունեությունը՝ «Նոր աստղ մը կը փայլեր Պոլսո հայ գրական երկնակամարին վրա՝ Սիպիլը: Ան էր պաշտոնական գրագիտուհին: Կարդացեր էի Սիպիլի վիպակները և բանաստեղծությունները և այն ժամանակ հանդգնությունը ունեի չի հավանելու այդ սեռի գրականության, հակառակ ընդհանուր հիացումին: Ես այն կարծիքը ունեի, որ ժանյակներու բանաստեղծուհին չնչին և անկարևոր նյութերով կզբաղի: Բմ մտավորական նորագարթ ու մեծ ախորժակս հագուրդ չէր գտներ այդ գերանուրբ փափկություններով»: Տե՛ս Եսայան Զ., Սիլիհտարի պարտեզներ, էջ 150:

<sup>18</sup> Եսայան Զ., Սիլիհտարի պարտեզներ, էջ 148:

որոնք ձևավորում են կնոջ ինքնությանն առնչվող հակասությունները: Նա կնոջը սահմանում է որպես տղամարդու *Ուրիշ*, տղամարդուն՝ կնոջ *Ուրիշ*:<sup>19</sup> Կնոջ նույնականացումը «Սիլիհտարի պարտեզներ»-ում տեղի է ունենում ոչ միայն միջանձնային հարաբերությունների միջոցով, այլև՝ հայրիշխանական սոցիումի չգրված օրենքների, որոնց հետևանքով Եսայանի կերպարները տառապում են:

Սրբուհի Տյուսաբի կերպարի միջոցով Եսայանը առաջադրում է կանացի *ես*-ի գոյության պայմանականությունը և դրանից բխող էքզիստենցիալ անհնարինությունը՝ «Տիկին Տյուսաբ լսելով, որ գրական ասպարեզին թեկնածու մըն էմ, ինձ նախագգուշացուց, ըսելով, որ այդ ասպարեզը կնոջ համար ավելի շատ տատակներ ուներ, քան դափնիներ: Ինձ ըսավ, թե մեր իրականության մեջ դեռ անհանդուրժելի կը համարեն, որ կին մը հրապարակ գա և ուզե իր տեղը գրավել: Հաղթահարելու համար այդ բոլորին, պետք էր միջակութենէն վեր ըլլալ: «Էրիկ մարդ գրագետը ազատ է միջակ ըլլալ, բայց ո՛չ կին գրագետը»»: <sup>19</sup> Նրա կերպարները թեն հակասության մեջ են իրենց համար նախասահմանված կանացի դերերի հետ, այնուամենայնիվ, նույնանում են դրանց և գիտակցաբար խաղում ի վերուստ սահմանված իրենց դերերը<sup>20</sup>: Եսայանի համար գրականությունը **սահմանները հաղթահարելու** միջոց է: Եվ այդ իրողության մեջ նրա դիրքորոշումը առավել արմատական է, չնայած՝ կին-սոցիում պատերազմը շարունակվում է այլ միջոցներով, առավել անմիջական՝ *Ես կին եմ* ասացման, լեզվով:


«Սիլիհտարի պարտեզներ» վեպում Զապել Եսայանը ուշադրություն է դարձնում նաև ընթերցանության թեմային, ինչը, ըստ նրա, պարտադիր էր կնոջը ընտանեկան փոխհարաբերությունների նախապատրաստելու

<sup>19</sup> Beauvoir, Simone De. The Second Sex. Translated and Edited by H.M. Parshley. Jonathan Cape: Thirty Bedford Square London. 1956. London. 701 p.

<sup>19</sup> Եսայան Զ., էջ 150:

<sup>20</sup> 1933 թվականին Եսայանի տեղափոխությունը Խորհրդային Հայաստան ճակատագրական էր: Նա աշխատանքի հրավեր ստացավ ԵՊՀ-ից: Ժամանակաշրջանը համընկավ ստալինյան բռնապետության տարիներին: 1936 թվականին գրողների միությունում Եսայանի էլույթին հաջորդում է այդ տարիներին իրացվող գանգվածային երևույթը՝ բռնությունը, ձեռքազրկությունը: Բաքվի բանտից նրա գրած նամակները խոսում են՝ նույն առույգ, խիզախ կեցվածքը: Նրա ողբերգական մահվան հանգամանքները մինչ այժմ անհայտ են: Որոշ տվյալներով, Եսայանը մահացել է 1943 թվականին, 65 տարեկանում: Մահվան հանգամանքներն անհայտ են: 14 տարի անց՝ 1957 թվականին, ԽՍՀՄ զինվորական կոլեգիան հետմահու արդարացրեց նրան ճանաչելով անմեղ:

գործում՝ «Միասին կը կարդայինք տիկին Տյուսաբի գիրքերը և ֆեմինիստ հեղինակին երկին մեջ կը ջանայինք դարման մը գտնել մեզ հուզող հարցերուն»:<sup>21</sup>



«Միլիտարի պարտեզներ» ինքնակենսագրական վեպում Զապել Եսայանի՝ որպես հեղինակի, բառապաշարի ներքին տիրույթում գերակշռում են *կանացի(ություն)* ֆենոմենը բնութագրող իմաստային միավորները, որոնք իրացվում են *Ես կին եմ* ասացման միջոցով և օրինականացվում *զգացմունքների աշխարհ, արտաքին հատկանիշներ, տուն-ընտանիք, դպրոց, ամուսնություն-կենցաղ* խորհրդանշական տիրույթներում: *Կանացի(ություն)* ֆենոմենը դրսևորվում է նաև վեպի կին ներկայացուցիչներին մատնանշող տարբեր անվանակարգերում՝ *մայր, մորաքույր, տատիկ, հորեղբոր կին, ընկերուհի*, ևն, որոնց շարքում գրողը տեսնում է նաև իրեն:

### Եզրակացություն

Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզներ» ինքնակենսագրական վեպի գոյաբանական տիրույթում գոյություն ունեցող *տրամաբանական* և *զգայական* կապերի հիման վրա ստեղծված *կանացի(ություն)* ֆենոմենը իրացվում է *Ես կին եմ* ասացման միջոցով՝ հատկանշելով կնոջ

<sup>21</sup> Եսայան, 148:

**զգացմունքների աշխարհը**, ինչպես նաև՝ **արտաքին հատկանիշներ**, **տուն-ընտանիք**, **կին-հասարակություն**, **կրթություն** խորհրդանշական տիրույթների հետ փոխառնչությունները:

Ուշագրավ է նաև վերոնշյալ դեպքերի ու երևույթների իրագործման-իրացման տարածաժամանակային քրոնոտոպը՝ 19-րդ դարը: Ու թեև վեպը գրվել է 1935 թվականին, այնուամենայնիվ, ամբողջացվում է օսմանյան բռնապետական, փակ-հայրիշխանական կայսրության ուրվագիծը և այդ կայսրությունում, որպես ազգային փոքրամասնություն, իր էքզիստենցիալ-գոյաբանական իրավունքների համար պայքարող հայ սոցիումը:

Ուսումնասիրելով Եսայանի «Միլիտարի պարտեզներ» վեպում **Ես կին եմ** *սասցման* իմաստաբանական-փիլիսոփայական տիրույթը, հնարավոր է նշել, թե ինքնակենսագրականության սուբյեկտիվ բնույթն ու արտահայտչականությունը նպաստում են հեղինակի ներաշխարհի առավել հստակ դրսևորումների բացահայտմանը՝ միաժամանակ շեշտելով *սենային* պատկանելությունը: Այս առումով, ինքնակենսագրության ժանրը կին-սղամարդ փոխհարաբերությունների տիրույթում, ունի նաև գինոքննադատական հետազոտության ներուժ:

**Наира Амбарцумян, Сирануш Парсаданян**  
**Выражение «Я – женщина» в автобиографическом романе**  
**Забел Есаян «Сады силихтара»**

**Заключение**

**Ключевые слова и выражения:** Запел Есаян, автобиографический роман, «Сады Силихтара», тематика, семантические порядки лексики, языковой фокус.

В исследовании рассматривается семантический диапазон лексики автобиографического романа западноармянской писательницы Забел Есаян «Сады Силихтара», а также способы интерпретации гендерных проблем.

Целью исследования является анализ выражения «Я – женщина» в семантической категории лексического состава, в котором зафиксирован феномен женственности, реализованный в цепи открытых словесно-семантических подсистем бессознательного.

Задача исследования – представить эксплицитные проявления женской экспрессии, включая самостоятельность и аффилированность, которые реализуются в семантической категории выражения «Я – женщина» и проявляются через манифестацию основных лексико-семантических подсистем языка. Непосредственная форма выражения языковых признаков, реализуется в романе «Сады Силихтара» через словесно-смысловые подкатегории,

обобщается в подкатегориях - семья, дом, друзья (в совокупности), детские игрушки, национальность, религия, пол, образование, место жительства, обобщается в подглавах романа и содержит определенные номинации с женской энергетикой - *женщина, девушка, дева, девственница, дама, бабушка, мать, тетя, двоюродная сестра*, поэтому их отношения с женским началом строятся на логико-чувственных связях. Языковые средства, выявленные в этом типе автобиографического текста, служат демонстрации того, что писатель отождествляет себя с женским полом и самоидентифицирует себя соответствующим образом.

Для Есяяна литература - это способ преодоления границ. И в той реальности ее позиция звучит радикальнее, хотя война с женщинами в обществе продолжается другими средствами, более прямо, с выражением Я - женщина, на языке.

**Naira Hambardzumyan, Siranush Parsadanyan**  
**The declaration “*I am a woman*” in the autobiographical**  
**novel “The gardens of Silihtar” by Zapel Yesayan**  
**Conclusion**

**Key words and expressions:** Zapel Yesayan, autobiographical novel, “Gardens of Silihtar”, subject, semantic order of vocabulary, language focus.

The study examines the semantic ranges of the vocabulary of the autobiographical novel “The Gardens of Silihtar” by Western Armenian writer Zapel Yesayan. It also provides ways of interpreting the male-female problem.

The *aim* of the study is to analyze the declaration “*I am a woman*” in the semantic domain of the vocabulary that determines the phenomenon of *femininity*. This is realized in the chain of verbal-semantic open subcategories of unconsciousness.

The *problem* of the study is to present the explicit manifestations of the expression of the feminine, including the autonomies and affiliations, which are realized in the semantic domain of the declaration *I am a woman* as a phenomenon, through highlighting the main lexical-semantic subcategories of the language. The direct form of expression of linguistic features, which is realized in the novel “The Gardens of Silihtar” via verbal-semantic subcategories, is summarized in the subcategories - *family, home, friends (collectively), children's toys, nationality, religion, gender, education, residence*, of the novel, and contains - *woman, girl, maiden, virgin, lady, grandmother, mother, aunt, cousin*, with feminine energy, so their relationship with the *feminine* is based on logical and sensual links. The linguistic means identified in this type of autobiographical text

serve to emphasize the fact that the writer identifies herself with the female gender and self-constitutes.

For Yesayan, literature is a way to overcome boundaries. And in that reality, her position sounds more radical, although the war with women in society continues by other means, more directly, with the expression *I am a woman*, on the tongue.

### Օգտագործված գրականություն

1. Արզումանյան Ս., Սովետահայ վեպը: Ինքնակենսագրական վեպի ժանրը, Ե., 1967, «Հայաստան» հրատ., 582 էջ:
2. Beauvoir, Simone De. *The Second Sex*. Translated and Edited by H.M. Parshley. Jonathan Cape: Thirty Bedford Square London. 1956. London. 701.
3. Եսայան Ջ., Միլիտարի պարսեզներ, Ե., 2018, «Անտարես», 198 էջ:
4. *Inscribed Identities: Life Writing as Self-Realization*, Edited By Joan Ramon Resina, January 17, 2019 by Routledge, 242 p.
5. Krsteva Marija, *Towards a Theory of Life-Writing: Genre Blending*, November 21, 2022, Routledge, 128 p.
6. Latham Monica, *Virginia Woolf's Afterlives: The Author as Character in Contemporary Fiction and Drama*, May 31, 2021: Routledge, 262 p.
7. Showalter, E. *Literature of Their Own: British Women Novelists from Brontë to Lessing*. Princeton N.J.: 1977, Princeton University Press.
8. Schep Dennis, *The Autobiography Effect: Writing the Self in Post-Structuralist Theory*, July 31, 2019: Routledge, 268 p.
9. *Research Methodologies for Auto/biography Studies*, Edited By Kate Douglas, Ashley Barnwell, June 19, 2019 by Routledge, 276 p.
10. Ortiz-Vilarelle Lisa, *Americanas, Autocracy, and Autobiographical Innovation: Overwriting the Dictator*, November 4, 2020: Routledge, 246 p.

**Խմբագրություն է ուղարկվել 16.11.2022թ.**

**Հանձնարարվել է գրախոսության 30.11.2022թ.**

**Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.**

**ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ  
Հայ նոր և նորագույն գրականության և նրա  
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ  
էլհասցե՝ [tatev1111@mail.ru](mailto:tatev1111@mail.ru)

**ՀՐԱՉՑԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՑԱՆԻ ՊՈՆԶԻԱՅԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

**Ամփոփում**

Հրաչյա Հովհաննիսյանի պոեզիան, սկսած առաջին «Իմ կյանքի երգը» ժողովածուից մինչև «Երկիր դրախտավայր» ժողովածուն, գտնվել է քննադատության ուշադրության կենտրոնում, արժևորվել հայ և այլազգի տասնյակ գրականագետների, բանաստեղծների կողմից:

Անդրադարձները հիմնականում եղել են բանաստեղծությունների առանձին շարքերի, ժողովածուների կապակցությամբ, թռուցիկ կերպով նշվել է նաև, որ Հր. Հովհաննիսյանի պոեզիան աչքի է ընկնում ժանրային բազմազանությամբ, պատկերավորման ու կերպարակերտման առանձնահատկություններով:

Առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել նրա պոեզիայի ժանրային համակարգը, ինչը շատ կարևոր է մի կողմից բանաստեղծի գրական դիմանկարի ամբողջացման, մյուս կողմից՝ պոեզիայի ավանդական ժանրերը նոր մոտեցումներով, կառուցվածքային նոր ձևերով հարստացնելու փորձի բացահայտման համար:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Բանաստեղծություն, պոեմ, բալլադ, սոնետ, նոնետ, չափածո նովել, կառուցվածք:

**Ներածություն**

Ստեղծագործական ճանապարհի բոլոր հանգրվաններում Հր. Հովհաննիսյանը միշտ գտնվել է որոնումների ճանապարհին՝ իր պոեզիան հարստացնելով նաև ժանրային տարբեր դրսևորումներով, տարբեր թեմաների գեղարվեստականացման համար ընտրելով ժանրի համապատասխան ձևեր:

Հր. Հովհաննիսյանի պոեզիայի ժանրային ընդգրկումները, որպես կայացած համակարգ ներկայացնելը, անտարակույս, հիմք կարող է հանդիսանալ տեսական ընդհանրացումների համար, ինչը կնպաստի բանաստեղծի գրական դիմանկարի ամբողջացմանը:

Հր. Հովհաննիսյանը ստեղծագործել է տարբեր ժանրերով՝ բանաստեղծություն, պոեմ, բալլադ, սոնետ, նոնետ, չափածո նովել և այլն,

որոնք նրա բանաստեղծական աշխարհին ամբողջացրել են կոմպոզիցիոն տարբեր մոդելներով:

Տարբեր ժանրերով գրված ստեղծագործություններում Հր. Հովհաննիսյանն ընտրում է ժանրի կոմպոզիցիայի ամբողջացման նոր ձևեր՝ գործողությունների զարգացում միագիծ, շրջանակված, գծային, խառը տարբերակներով:

Ամսագրային հոդվածի սահմանափակ տարածքում, բնականաբար, հնարավոր չէ անդրադառնալ Հր. Հովհաննիսյանի պոեզիայի բոլոր դրսևորումներին: Ուստի մեր առջև **նպատակ** ենք դրել անդրադառնալ նրա միայն տոնետներին ու նոնետներին, հատկապես, որ վերջինների մասին որևէ տեղեկություն չկա ոչ գրականագիտական ուսումնասիրություններում, ոչ բառարաններում:

### Մեթոդաբանություն

Թեմայի ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք գրական երկի քննաբանության ու արժևորման մի քանի մեթոդներ՝ քննական, վերլուծական, համադրական, կենսագրական: Մեծապես օգտվել են հայ և այլազգի գրականագետների տեսական ուսումնասիրություններից:

\*\*\*

Հրայա Հովհաննիսյանի պոեզիայի աչքի ընկնող առանձնահատկություններից են ժանրային բազմազանությունը, անսպասելի հանգուցալուծումները, խորհրդանիշների համակարգը, բանաստեղծության կառույցում դետալների համաչափությունը, երաժշտականությունը ռիթմիկ դարձնող հանգավորումը: Բացի պոեզիայի ավանդական ժանրերից (բանաստեղծություն, պոեմ, լեզենդ, բալլադ, սոնետ, քառյակ, տաղ, ձոներգ և այլն), նրա շարքերում հանդիպում ենք նաև ժանրերի, որոնք բացարձակ նորություն են: Օրինակ՝ **նոնետը**: Նույնիսկ գրականագիտական ուսումնասիրություններում, դասագրքերում, տարբեր հեղինակներին նվիրված մենագրություններում մենք չենք հանդիպել նոնետի մասին թեկուզ թուցյիկ ակնարկի: Նոնետը երաժշտության քիչ տարածված ժանրերից է և գրականության մեջ լայն տարածում չի ստացել: Այն կատարվում էր ինը երաժիշտների կողմից, և կատարման ընթացքում երաժիշտները հերթականությամբ դուրս են գալիս բեմից: Ինը տողից է բաղկացած նաև նոնետի բանաստեղծական կառույցը: Առաջին տողն ունի ինը ոտք, երկրորդը՝ ութ, երրորդը՝ յոթ և այսպես՝ մինչև վերջին տողը:

Հրայա Հովհաննիսյանի «Զիթենու ճյուղը» շարքում զետեղված են երկու նոնետներ («Նոնետ առաջին» և «Նոնետ երկրորդ»), որոնք, ճիշտ է, ինը տողից են բաղկացած, բայց մնացած բոլոր տողերում ոտքերի քանակը հավասար է: Քանի որ ժանրը երաժշտության տեսակներից մեկն է,

բնականաբար, պետք է ունենա երաժշտական ընդգծված հնչեղություն, համապատասխան ռիթմեր: Մոտավորապես այդպիսի հնչեղություն ունեն նաև Հրաչյա Հովհաննիսյանի նոնետները, որոնց մեջ, սակայն, երաժշտականությունն «ապահովվում» է արհեստականորեն: Բոլոր ինը տողերն էլ երկու նոնետներում ունեն միօրինակ հանգավորում, որոնք աղքատ, կարելի է ասել, արհեստական հանգեր են: Բերենք դրանցից մեկի օրինակը.

Թե լինեի անապատի ավազանում բոսոր,  
Եվ քո սերը ինձ հետ լիներ, լիներ գիշեր ու գոր-  
Կոբարձների, աստվա՛ծ վկա, անապատը տոչոր  
Մի երկրային կանաչ եղեմ, դրախտ արևավոր,  
Կբերեի ճամփու վրա քարավաններ մոլոր,  
Կկանչեի խարույկի մոտ բեդվիններին բոլոր,  
Ու թե հանկարծ չունենայի հողն իմ ցորենավոր,  
Ես քո սիրով կստեղծեի ինձ հայրենիք մի նոր,  
Նորից քա՛ղցր հայրենով, նորից հայրենավո՛ր <sup>1</sup>:

(«Նոնետ առաջին»)

Նույն աղբատիկ հանգերն են նաև «Նոնետ երկրորդ»-ում՝ («Փակ-  
ցամաք-կրակ-աննպատակ-ճրագ-բակ-արագ-դատարկ»):

Ավելի պարզունակ է «Հույսի նոնետ»-ի հանգավորումը.

Հույսը սեզին է, կարծես, նման.  
Բոց արեգակն է խանձում նրան,  
Բոց գերանդին է հնձում նրան,  
Բոց խորշակներն են խուժում վրան,  
Իսկ նա, շտկելով մեջք ու իրան,  
Նորից ելնում է և հուրհրան  
Ցողուն է տալիս, ծիլեր վառման  
Ինչպես հարաճուն սեզը գարնան:  
Հույսը սեզին է միայն նման (1, 348):

Այս նոնետները գրվել են 1969 թվականին Փարիզում, ամենայն հավանականությամբ՝ թերթերում տպագրվածների նմանությամբ, և հենց դա է պատճառը, որ բանաստեղծը հետագայում չգրեց և ոչ մի նոնետ: Առանձնահատկությունների բացահայտման համար ուշադրության արժանի են Հրաչյա Հովհաննիսյանի սոնետները, որոնք զետեղված են «Ծովի լռությունը», «Մատիրիկոն», «Խաղաղ անձրև» շարքերում:

<sup>1</sup> Հովհաննիսյան Հր: Ընտիր երկեր 2 հատորով, հ. 1, Եր: «Խորհրդային գրող», 1989, էջ 345: Այսուհետ այս հատորից կատարված հղումները կնշվեն շարադրանքում:

Բոլոր դեպքերում բանաստեղծը գերադասում է սոնետի 4+4+3+3 կառուցվածքը: Սակայն եթե կառուցվածքի այս տարբերակում հիմնական ասելիքը կամ «պատկերավոր միտքը՝ սոնետի բանալին» բացահայտվում է վերջին երկու տողերում, ապա Հրաչյա Հովհաննիսյանի սենետներում վերջին տողերը ոչնչով չեն տարբերվում նախորդներից և հանդես չեն գալիս որպես «սոնետի բանալիներ»: Բերենք «Ակսել Բակունցին» նվիրված «Սոնետ հեծեճանքի» ստեղծագործության օրինակը: Սոնետն ավարտվում է «Երբ հիշում եմ կյանքում քո բախտը չար, // Քո տառապանքն անլուր, եղերական, // Միրտս քառատվում է ամեն անգամ»:

«Մրտի քառատվելը» երևում է սոնետի բոլոր տողերում.

Ես ողբում եմ հավետ կորուստը քո,  
Անժամանակ հանգած քո ձիրքերի:  
Ինչպե՞ս ես դու նայել դահճի ձեռին,  
Վերջին պահին ի՞նչ ես աղաղակել,  
Որտե՞ղ ես դու պայծառ աչքդ փակել՝  
Կարոտ հայրենական սև ցելերին:  
Այս, աստվա՛ծ իմ, ինչքան ծանր է մեռնել,  
Անգո մի հանցանքի, մեղքի համար,  
Ու դեռ ջահել՝ փշե պսակ առնել (I, 244):

Սոնետներում ընդհանրապես արծարծվում են սիրային և փիլիսոփայական թեմաներ: Նրանց մեջ անչափ քիչ է կամ լիովին բացակայում է անանձնականը: Հրաչյա Հովհաննիսյանի սոնետները կամ նվիրումներ են («Ա. Բակունցին», «Գուրգեն Մահարուն»), կամ գրված են պատերազմի թեմայով («Սոնետ ափսոսանքի»), կամ ունեն ընդգծված երգիծական բնույթ՝ սուր խայթոցներով: «Սոնետ նախատինքի» ստեղծագործության մեջ, օրինակ, բանաստեղծը երգիծանքի սուր նետերն ուղղում է դեպի հարմարվողականություն, ժամանակակից երևալու ճիգ ու ջղաձգություն.

Դու միշտ, ինչպես մարդը քարանձավի,  
Ծվարում ես ժամին գոռ որոտման,  
Անտարբեր ես մնում քարի նման  
Հեռու-մոտիկ մարդկանց վիշտ ու ցավին:  
Եվ ասում ես, դարի որդի՛ն ես դու,  
Որ քեզ դարն է դարձրել խոհեմ այդպես,  
Բախտի հրամանին այդքան հլու:  
Եթե իմանայի, որ իսկապես  
Դու՛ ես դարի որդին, հավատա՛ ինձ,  
Կզգվեի՛, հաստատ, ես այդ դարից (I, 245):

Ավելի սուր են «Սատիրիկոն» շարքի «Սոնետ աստեղության» և «Սոնետ տխուր սիրո» սոնետները, որոնց մեջ բանաստեղծը աստեղության ու արգահատանքի իր խոսքն է ասում բոլոր նրանց հասցեին, ովքեր անանուն նամակներ էին գրում, պատերազմի օրերին «ամենայն ձևի ստով» մնացել էին թիկունքում և «վազում էին մթնով քողարկված կոփող զինվորի կանանց ետևից, փառք էին ճապկում և ամենից զիլ ասված ճառերով հայրենասերի սխրանքը կապկում»: Նաև խարազանում է իրենց բանաստեղծ հորջորջող այն գրչակներին, ովքեր «ծախում են արցունքները սիրո» և Հուդայի նման «երեսուն կաթիլ արցունքի դիմաց ուղիղ երեսուն տող սիրո երգ գրում»:

Հրաչյա Հովհաննիսյանի ստեղծագործություններում նկատելի է մի առանձնահատկություն. բոլոր դեպքերում, երբ նա փորձում է շեղվել բանաստեղծության կառույցի դասական ձևերից, ստեղծագործությունների և՛ կառույցներն են խաթարվում, և՛ բովանդակությունն է դառնում պարզունակ, նրա աշխարհայեցողությունից ու ձեռագրից շատ հեռու: Օրինակ «Ձիթենու ճյուղը» շարքի «Տաղեր»-ում բանաստեղծը, կոպիտ ասած, նման չէ ինքն իրեն: Շարքում գետեղված տաղերը («Մ'նջիկ աղջիկ իմ յարը», «Լուսնթագ, լո լյս պահիր յարիս», «Ողջ տարին ցավերով լեցուն», «Ծաղիկ իմ, ծաղիկ իմ գարնան», «Գինով լի գավաթ իմ, գա՛վ իմ», «Չթողին, չթողին բացվեն»), որոնք գրված են սիրային թեմայով, լավագույն դեպքում գրապատմական նշանակություն կարող են ունենալ: «Ձիթենու ճյուղը» շարքն ընդհանուր առմամբ բաղկացած է գեղեցիկ, բովանդակության առումով բանաստեղծի նախասիրություններին համահունչ գործերով, և մի տեսակ տարօրինակ է, որ շարքում գետեղվել են նաև վեց տողերից բաղկացած մի քանի տաղեր:

Ընդգծենք նաև, որ այս տիպի բանաստեղծությունները ոչ մի կերպ սովեր չեն գցում Հրաչյա Հովհաննիսյանի բանաստեղծական հարուստ աշխարհի վրա:

### **Եզրակացություններ**

Թեմայի ուսումնասիրության արդյունքում մեր եզրահանգումները հետևյալն են՝

1. Հրաչյա Հովհաննիսյանը, շարունակելով և համադրելով հայ միջնադարյան ու նոր և համաշխարհային գրականությունների ավանդույթները՝ լայնացրեց ժանրային ընդգրկումների սահմանները, հարստացրեց նոր մոտեցումներով, կառուցվածքային նոր ձևերով: Տարբեր ժանրերով գրված նրա ստեղծագործություններում աչքի են ընկնում անսպասելի հանգուցալուծումները, կառույցի ներսում դետալների համաչափությունը, ռիթմական միավորների զուգորդումները:

2. Բացի պոեզիայի ավանդական ձևերից, նրա ժողովածուներում կան նաև ժանրեր, որոնք բացարձակ նորություն են: Օրինակ՝ նոնետը, որը երաժշտության քիչ տարածված ժանրերից է և լայն տարածում չի գտել նաև գրականության մեջ: Ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ այն կատարվում էր ինը երաժիշտների կողմից, և կատարման ընթացքում երաժիշտները հերթականությամբ դուրս են գալիս բեմից: Ինը տողից է բաղկացած նաև նոնետի բանաստեղծական կառույցը: Առաջին տողն ունի ինը ոտք, երկրորդը՝ ութ, երրորդը՝ յոթ և այսպես՝ մինչև վերջին տողը: Քանի որ ժանրը երաժշտության տեսակներից մեկն է, բնականաբար պետք է եզրակացնել, որ պետք է ունենա երաժշտական համապատասխան հնչեղություն, համապատասխան ռիթմեր:

3. Մոտավորապես այդպիսի կառուցվածք ու հնչեղություն ունեն նաև Հր. Հովհաննիսյանի նոնետները, որոնց երաժշտականությունը նկատելի կերպով «ապահովվում» է արհեստականորեն: Բոլոր ինը տողերում էլ Հր. Հովհաննիսյանի նոնետներն ունեն միօրինակ հանգավորում, որոնք աղբատ, կարելի է ասել արհեստական հանգեր են: Մեր եզրահանգումը Հր. Հովհաննիսյանի նոնետների կապակցությամբ այն է, որ դրանք գրվել են փարիզյան թերթերում տպագրված նոնետների նմանությամբ, որպես փորձեր, և դա է պատճառը, որ բանաստեղծը հետագայում այլևս չանդրադարձավ այդ ժանրին:

Հրաչյա Հովհաննիսյանի ստեղծագործություններում զգալի տեղ են գրավում սոնետները:

4. Կառուցվածքի տարբեր ձևեր է օգտագործում Հր. Հովհաննիսյանը նաև սոնետներում: Մոնետներն, ընդհանրապես ունեն կառույցի ամրագրված ձևեր: Հր. Հովհաննիսյանը գերադասում է սոնետի 4+3+3+3 կառուցվածքը: Մակայն, եթե կառույցի այս տարբերակում հիմնական ասելիքը կամ «սոնետի բանալին» բացահայտվում է վերջին երկու տողերում, ապա Հր. Հովհաննիսյանի սոնետներում վերջին տողերը ոչնչով չեն տարբերվում նախորդներից և հանդես չեն գալիս որպես «սոնետի բանալիներ»:

5. Մեր ընդհանուր եզրահանգումը հետևյալն է. ստեղծագործական ճանապարհի բոլոր հանգրվաններում գտնվելով որոնումների ճանապարհին՝ Հր. Հովհաննիսյանը, ճիշտ է փորձարկեց բանաստեղծության կառույցի տարբեր ձևեր, սակայն երբեք չտարվեց նորաձև երևալու մղումներով: Միշտ հավատարիմ մնաց մեր պոեզիայի դասական ավանդույթներին և նրանց ամուր պատվանդանի վրա ստեղծեց բանաստեղծական իր յուրահատուկ կառույցը:

## Жанровая система поэзии Грачья Оганисяна

### Заключение

**Ключевые слова и выражения:** стихотворение, поэма, баллада, сонет, нонет, стихотворная новелла, структура.

Наши выводы по результатам исследования темы:

1. Грачья Оганисян продолжая и сопоставляя традиции армянской средневековой литературы с новой и мировой литературой, расширил границы жанрового диапазона, обогатил новыми подходами, новыми структурными видами. В его произведениях, написанными в разных жанрах, выделяются неожиданные развязки, симметрия деталей внутри структуры, сочетание ритмических единиц.

2. Кроме традиционных видов поэзии, в его сборниках есть еще и жанры, которые являются абсолютной новизной. К примеру, нонет, который является мало распространенным жанром музыки и не получил широкое распространение и в литературе. В результате исследований выяснили, что его исполняли девять музыкантов, и во время исполнения музыканты по очереди спускались со сцены. Из девяти строк состоит и поэтическая структура нонета. Первая строка имеет девять ног, вторая-восемь, третья-семь и так до последней строки. Поскольку жанр является одним из видов музыки, следовательно, нужно сделать вывод, что он должен иметь соответствующее музыкальное звучание, соответствующие ритмы.

3. Приблизительно такую же структуру и звучание имеют и нонеты Грачья Оганисяна, музыкальность которых заметно «обеспечивается» искусственным образом. Нонеты Грачья Оганисяна во всех девяти строках имеют однообразную рифму, довольно скудные, можно сказать, что искусственные рифмы. Наше заключение о нонетах Грачья Оганисяна состоит в том, что они были написаны на подобие нонет печатанных в парижских газетах, как эксперимент, и это является причиной того, что поэт в будущем больше не вернулся к этому жанру.

В произведениях Грачья Оганисяна значительное место занимают сонеты.

4. Грачья Оганисян использует разные виды структуры и в сонетах. Сонеты в целом имеют утвержденные виды структуры. Грачья Оганисян дает предпочтение 4+3+3+3 структуре сонета. Однако, если в этом виде структуры основная мысль или «ключ сонета» раскрывается в двух последних строках, то в сонетах Грачья Оганисяна последние строки ни чем не отличаются от предыдущих и не выступают как «ключи сонета».

5. Наши общие выводы: находясь в поисках дороги во всех пристанищах творческого пути, Грачья Оганисян, собственно говоря, экспериментировал разные виды поэтической структуры, однако, никогда не увлекся стремлением быть модным. Всегда был верен классическим традициям нашей поэзии и на их сильной основе создал свою поэтическую своеобразную структуру.

Tatevik Poghosyan

### The genre frame of Hrachya Hovhannisyan's poetry

#### Conclusion

**Key words and expressions:** a poem , a ballad, a sonnet, a nonet, a verse novel, a structure.

As a result of the study of the theme , our conclusions are as follows:

1. Continuing and combining the traditions of medieval Armenian, modern Armenian and world literatures Hrachya Hovhannisyan widened the boundaries of genre inclusion, enriched it with new approaches in new structural ways. The equability of details in the structure, the associations of the rhythmic units stand out with unexpected resolutions in his works written in different genres.

2. Apart from the traditional forms of poetry there are also some genres in his collections that are absolutely new. E.g. the nonet, which is one of the less spread genres in music and has not been widely spread in the literature, either. As a result of the study we have found out that it was performed by nine musicians and during the performance the musicians leave the stage one by one. The poetic structure of nonet also consists of nine lines, the first line has nine legs, the second one has eight legs, and the third line has seven lines and so on till the last line. As the genre is one of the types of music, one must naturally conclude, that it must have an appropriate musical sonority and appropriate rhythms.

3. Hrachya Hovhannisyan's nonets approximately have such structures and sonorities, the musicality of which are obviously provided in an artificial way. All nine nonets written by Hrachya Hovhannisyan have the same rhyming, that are quite poor. It can be said that they are artificial rhymes. Our conclusion on Hr. Hovhannisyan's nonets is that they were written in the manner of nonets printed in Parisian newspapers, as experiments, and that is the reason why the poet did not refer to that genre later. Sonnets occupy a significant place in Hrachya Hovhannisyan's works.

4. Hr. Hovhannisyan uses different forms of structure not only in nonets but also in his sonnets. Sonnets generally have fixed forms of structure. Hr. Hovhannisyan prefers the 4+3+3+3 structure of the sonnet. However, while in this version of the structure the main point or "key of the sonnet" is revealed in the last

two lines, in Hr. Hovhannisyán's sonnets, the last lines do not differ from the previous ones and do not act as "sonnet keys".

5. Our general conclusion is as follows: at all the stages of his creative journey being on the way of research Hr. Hovhannisyán truly tried different structures of poems, but he never got caught up in the urge to look fashionable: He always remained faithful to the classical traditions of our poetry and created his unique poetic structure on their solid pedestal.

### Օգտագործված գրականություն

1. Հովհաննիսյան Հր; Ընտիր երկեր 2 հատորով, հ. 1, Եր; «Խորհրդային գրող», 1989, 608 էջ:
2. Հովհաննիսյան Հր; Ընտիր երկեր 2 հատորով, հ. 2, Եր; «Խորհրդային գրող», 1990, 436 էջ:
3. Մահարի Գ., Պոեզիան և քննադատությունը, «Գրական թերթ», 1964, N 37:
4. Մեծելայտիս Էդ., Իմ կրկնակի Արարատը, Եր., «Գասպրինտ» հրատ., 2013, 276 էջ:

*Խմբագրություն է ուղարկվել 03.10.2022թ.*

*Հանձնարարվել է գրայնություն 19.10.2022թ.*

*Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.*

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ԷԴՎԱՐ ՎԱՐՇԱՄՅԱՆ**

Երևանի պետական համալսարան  
Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ  
Էլիասը՝ [edovarshamyan@mail.ru](mailto:edovarshamyan@mail.ru)

**ՊԱՊ ԱՐՇԱԿՈՒՆՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Ամփոփում**

Պապ թագավորի գահակալության պատմափուլը (370-374) հայոց պատմության ամենահետաքրքրական ու էական ժամանակաշրջաններից է: Այն իր մեջ պարունակում է իրադարձություններ, որոնք հենքային նշանակություն ունեցան հայոց թագավորության հետագա զոյության համար: Խնդրո առարկա դարաշրջանին կամ դրա առանձին ենթափուլերի զարգացումներին անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ: Նրանցից յուրաքանչյուրը հայոց թագավորի գործունեությունը քննության է առել ավել կամ պակաս մանրամասնությամբ՝ քիչ լուսաբանելով դրա դարաշրջանային բնույթն ու հանգուցային նշանակությունը: Այն, փաստորեն, ցայսօր ամբողջական և խորքային ուսումնասիրության կարոտ է մնում, և առաջանում է անհրաժեշտություն հավուր պատշաճի գնահատել Պապի գահակալության դարաշրջանը: Նրա վարած արտաքին քաղաքականության բնույթի մասին տեղեկություններն արտացոլվել են հայ և օտարալեզու պատմիչների երկերում, որոնք անգնահատելի սկզբնաղբյուր են հիմնախնդրի ուսումնասիրության համար: Ուսումնասիրության ընթացքում մեծ տեղ է հատկացվել հռոմեա-պարսկական հարաբերությունների էության բացահայտմանը՝ հավուր պատշաճի գնահատելու և ամբողջացնելու հայոց թագավորի վարած արտաքին քաղաքականությունը:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Պապ Արշակունի, Շապուհ Բ, կայսր Վաղես, Մեծ Հայքի թագավորություն, արտաքին քաղաքականություն, հայ-հռոմեական հարաբերություններ, հայ-պարսկական հարաբերություններ:

### **Ներածություն**

360-ական թթ. առաջին կեսին արտաքին քաղաքական միջավայրում տեղի ունեցած իրադարձությունները որոշակի փոխեցին ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում: Այդ իրադարձությունների կուլիմինացիոն կետը 363 թ. կնքված հռոմեա-պարսկական «ամոթալի» հաշտության պայմանագիրն էր: Մեծ Հայքի հայոց թագավորության համար պայմանագրի բացասական կողմերից մեկն էլ այն էր, որ Սասանյան Պարսկաստանը շարունակելու էր ռազմական գործողությունները Հայաստանի դեմ այն վերջնական նվաճելու համար, իսկ Հռոմեական կայսրությունը պարտավորվում էր չօգնել հայոց թագավոր Արշակ Բ-ին (350-368): 364 թ. սկսվեց հայ-պարսկական պատերազմը, որը սկզբնապես ընթանում էր փոփոխակի հաջողություններով: Սակայն, պարսկական ուժերի գերակայությունը, հայոց միջավայրում տիրող ներքին անմիաբանությունը ստիպեց Արշակ Բ-ին դադարեցնել ռազմական գործողությունները: Տիզբոնում ընթացող բանակցությունների արդյունքում պարսից արքան խաբեությամբ Անհուշ բերդում բանտարկեց հայոց թագավորին և սպարապետ Վասակ Մամիկոնյանին: Ահա այդ դժվարին պայմաններում գահաժառանգ Պապ Արշակունին ձեռնամուխ եղավ պարսիկների դեմ ազատագրական պայքարին:

Սույն աշխատանքի նպատակն է սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա վերլուծել Պապ Արշակունու արտաքին քաղաքականությունը, հայ-պարսկական և հայ-հռոմեական հարաբերությունների զարգացման էությունը:

### **Մեթոդաբանություն**

Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր քննությամբ, պատմահամեմատական վերլուծության և ժամանակագրական պրոբլեմատիկ մեթոդների կիրառմամբ: Հիմնականում օգտվել ենք հռոմեական և հայկական աղբյուրներից, ինչպես նաև, թեմայի առանձին քաղաքիչների անդրադարձած հետազոտողների աշխատանքներից:

### **Հայ-պարսկական պատերազմը եվ մեծ հայքի ազատագրումը**

364 թ. սկսած հայ-պարսկական պատերազմի հետևանքով ավերվեց ու ժամանակավորապես ռազմակալվեց Մեծ Հայքը: Շապուհ Բ-ի (309-379) արտաքին քաղաքականության գլխավոր նպատակը 363 թ. կնքված հռոմեա-պարսկական պայմանագրի կետերի իրականացումն էր, այն էր՝ Մեծ Հայքի նվաճում, Արշակունիների հարստության կործանում և պարսից արքան ամեն կերպ ձգտում էր հասնելու իր նպատակին: Ամեննին պատահական չէր, որ պարսից զորքերը ավերում էին խոշոր քաղաքները,

քանի որ դրանք թագավորական իշխանության հենարանն էին: Դրանով պարսիկները թուլացնում և ավերում էին հայոց պետությունը: Քանի դեռ Փառանձեմ թագուհին փորձում էր դիմադրել պարսից ուժերին, աղվանները օգտվելով Մեծ Հայքում տիրող քաղաքական խառն իրադրությունից, փորձեցին ընդարձակել իրենց երկրի սահմաններն ի հաշիվ Մեծ Հայքի թագավորության: Աղվանից Ուռնայր թագավորը, որն առաջիկա հայպարսկական պատերազմում Շապուհ Բ-ի ամենակտիվ դաշնակիցն էր, փորձեց հափշտակել հարևան մի շարք գավառներ: Փավստոս Բուզանդն այդ առումով փաստում է. «Եւ թափեր ՚ի նոցանէ բազում գաւառս զոր հատեալ էր նոցա ՚ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովա սահմանք գաւառք»<sup>1</sup>: Ա. Վարդանյանը նշում է, որ ռազմական այս ներխուժման հետևանքով Աղվանքի սահմանը պատմության մեջ առաջին անգամ անցավ Կուր գետը և հաստատվեց նրա աջափնյա որոշ շրջաններում<sup>2</sup>: Ուտիքի և Արցախի իշխանները՝ Գուգարաց բղէշխի գլխավորությամբ, ունենալով բավարար թվով ռազմական ուժեր, պարտավոր էին կանգնեցնել աղվանների զորաբանակը, քանի որ պետք է պաշտպանեին Մեծ Հայքի հյուսիսարևելյան սահմանները: Ընդ որում, ըստ Գահնամակի և Զորանամակի քննության, Գուգարաց բղէշխի ենթակայության տակ գտնվող զորաբաժինը հասնում էր 4500 զինվորի, իսկ հյուսիսային տարածաշրջանի ընդհանուր զորքերի թիվը՝ 18.000-ի<sup>3</sup>: Վերոնշյալ փաստերի համադրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ առնվազն 368 թ. դրությամբ կենտրոնական իշխանություն Մեծ Հայքում փաստացի գոյություն չուներ, ինչից օգտվելով մի շարք իշխաններ և Գուգարաց բղէշխը ապստամբել էին թագավորական իշխանության դեմ՝ օգտվելով խառնակ իրավիճակից:

Արտաքին քաղաքական բարդ իրադրության պայմաններում 369թ. Պապ Արշակունին (370-374) սկսեց ազատագրական պայքարը թշնամական ուժերի դեմ: Արտաքին ճակատում հաղթանակի հասնելու համար կարևոր էին նաև երկրի ներքին միասնականության ամրապնդմանն ուղղված քայլերը: Մուշեղ Մամիկոնյանի ջանքերով աստիճանաբար վերականգնվեց

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1987, (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ), էջ 322:

<sup>2</sup> Տե՛ս Վարդանյան Ա., Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Երևան, 2013, էջ 62-63:

<sup>3</sup> Տե՛ս Արոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, էջ 317, Յակոբեան Ա., «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց հայոց» եւ «Ջաւրանամակ» // «Բազմավեպ», 2011, թիւ 3-4, էջ 543:

հայոց բանակը: Հայկական բանակին միացավ վեց հազարանոց հռոմեական օգնական զորքը: Ըստ Փավստոս Բուզանդի՝ հայոց բանակը Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ հարձակումը սկսեց Դարանաղի սահմանային գավառի կողմից, որտեղ կռիվների ժամանակ սպանվեցին պարսից զորագլուխներ Զիկն ու Կարենը, իսկ պարսկական զորքերը ծանր կորուստներ կրեցին<sup>4</sup>: Հայկական զորքերը թշնամուն քշեցին մինչև հայ-պարսկական նախապատերազմյան սահման, ըստ Փավստոս Բուզանդի՝ «մինչև ՚ի բուն ՚ի սահմանսն ՚ի Գանձակ Ատրպատականի գերկիրն յիւր վտարեալ, բռնացեալ ունէր»<sup>5</sup>: Հայոց զորքը տիրացավ Այրարատի Կոզովիտ գավառի Դարյունք կամ Դարենից բերդին, որտեղ պահվում էին արքունի բազում գանձեր: Հռոմեական զորքը հաստատվեց Եռանդում ու Բախիշում և դրանց շրջակա տարածքներում: Փավստոս Բուզանդի հաղորդմամբ՝ Մուշեղ Մամիկոնյանը հայկական զորքով շրջում էր երկրով մեկ և ավերում զրադաշտական ատրուշանները: Պարսից արքայի շատ սիրելի անձանց, որոնք բերդակալներ էին հաստատվել Մեծ Հայքում, Մուշեղ Մամիկոնյանը մահապատժի ենթարկեց կամ մորթագերծ անելով՝ նրանց խրտվիլակները խոտով լցրեց և կախել տվեց բերդերի պարսիպներից՝ վրեժ լուծելով իր հայր Վասակի համար, որին պարսիկները ենթարկել էին համանման պատժի<sup>6</sup>:

Քանի որ պարսկական ներխուժման սպառնալիքն իրական էր, Մուշեղ Մամիկոնյանը, ընտրելով «արս ընտիրս միամիտս ազատս ազգայինս քառասուն հազար», շարժվեց դեպի Ատրպատականի սահման՝ կանխելու պարսկական հնարավոր ներխուժումը: Իր հերթին պարսկական զորքը, որ պատրաստվում էր Շապուհի գլխավորությամբ արշավելու Մեծ Հայք, եկավ և բանակեց Թավրեշում: Անսպասելի հարձակումով հայոց բանակը 370 թ. ջախջախեց թշնամուն: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Շապուհը «միաձի մագապուր... ճողոպրեալ փախչէր», և Մուշեղ Մամիկոնյանը «զամենայն կարևան բանակին առ հասարակ ընդ սուր հանէր... հանդերձ զօրօքն Հայոց»<sup>7</sup>: Պարսկական բանակը ծանր կորուստներ կրեց, գերեվարվեցին պարսից ավագանու բազմաթիվ ներկայացուցիչներ: Հայերի ձեռքն ընկան Շապուհ Բ-ի գանձերը և նրա կանանոցը՝ տիկնանց տիկնոջ հետ: Մուշեղ Մամիկոնյանը հրամայեց պարսից ավագանու 600 ներկայացուցիչների մորթագերծ անել, սակայն Շապուհի կանայք հայոց սպարապետի կարգադրությամբ հատուկ թիկնախմբով ուղարկեցին

---

<sup>4</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 284-286:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 290:

Պարսկաստան: Ըստ Փավստոս Բուզանդի՝ դա Շապուհին զարմացնում ու հիացնում է, և քանի որ Մուշեղ Մամիկոնյանը ճերմակ նծույգ էր հեծում, պարսից արքան իր գավաթներից մեկի վրա նկարել է տալիս հայոց սպարապետի պատկերը՝ սպիտակ ձին հեծած, և խնջույքի ժամանակ, գավաթն իր առջև դնելով, կրկնում էր «Ճերմակաձին գինի արբցե»<sup>8</sup>: Սակայն պարսից արքայի կանանոցը Պարսկաստան ուղարկելը բոլորովին աննկատ չանցավ: Շատերը դրա համար դիմելով Պապին՝ մեղադրեցին Մուշեղ Մամիկոնյանին: Փավստոս Բուզանդը վկայում է, որ հայոց թագավորը «վասն այսր իրաց ոչ ինչ սակաւ լինէր թշնամութեամբ ընդ Մուշեղ ի մինչև ի բազում ժամանակս»<sup>9</sup>: Բ. Հարությունյանը նշում է, որ Մուշեղ Մամիկոնյանը նման քայլի դիմեց, որպեսզի հետագայում կարողանա հույս դնել Շապուհ Բ-ի բարյացակամության և աջակցության վրա<sup>10</sup>: Ի մի բերելով վերոնշյալ իրադարձությունները՝ առաջնահերթ կարող ենք արձանագրել, որ կարճ ժամանակում Պապ թագավորին և Մուշեղ Մամիկոնյանին հաջողվեց ազատագրել Մեծ Հայքի տարածքը պարսկական զորքերից: Ինչ վերաբերում է վերջինիս քայլին, ապա կարող ենք հանգել երկու ենթադրության. առաջին՝ նա պարսից արքայի կանանոցը վերադարձնելով կատարեց բարոյական քայլ, քանի որ մինչ այդ մորթագերծ էր արել պարսից ավագանու 600 ներկայացուցիչների, երկրորդ՝ փորձել էր պետության արտաքին քաղաքականության մեջ որոշիչ դեր ստանձնել: Սակայն այս պարագայում հայոց թագավորի գայրույթը դեպի սպարապետը հիմնավորված էր, քանի որ ավատատիրական պետության պայմաններում միայն նրա հրամանով կարող էին նման քայլի դիմել: 371 թ. Շապուհ Բ-ը, մեծ բանակի գլուխ անցած, շարժվեց Ատրպատական և այնտեղից մտավ Հայոց միջնաշխարհ: Իր հերթին պատրաստվելով թշնամուն հակահարված հասցնելու՝ հայկական բանակը կենտրոնացավ Բագավանում, որտեղ նրանց միացան Եռանդում ու Բախիշում հաստատված հռոմեական զորքերը: Բագավանում հայոց սպարապետը կենտրոնացրեց զործող ամբողջ բանակը՝ ավելի քան 90.000 զինվոր: Պարսից արքայի դաշնակիցների թվում էր նաև աղվանից արքա Ուռնայրն իր զորաբանակով: Այդ մասին Փավստոս Բուզանդը գրում է. «Իսկ իբրև զօրահատույցն առնէր Շապուհ Պարսից թագաւորն զգօրս իւր ի վերայ աշխարհին Հայոց և ի վերայ

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 290-292:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 292:

<sup>10</sup> Տե՛ս Զարությունյան Բ., Հայաստանը Պապ թագավորի օրոք, Հայոց պատմություն, հ. Բ, Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես), գիրք Ա, (IV դարի սկիզբ – IX դարի կես) (այսուհետև՝ Հայոց պատմություն), Երևան, 2018, էջ 124:

գորացն Յունաց, Ուռնայր արքայ Ադուանից անդ էր առ թագաւորին Պարսից»<sup>11</sup>: Ներսէս կաթողիկոսի և մի շարք հոգևորականների ու նախարարների հետ Պապը բարձրացավ Նպատ լեռը: Հայոց թագավորը, կասկածելով Մուշեղ Մամիկոնյանի հավատարմությանը, որոշել էր նրան գրկել ճակատամարտը ղեկավարելու իրավունքից, սակայն տեղի տալով կաթողիկոսի հորդորներին և սպարապետի երդմանը՝ զիջեց: Հայկական բանակը 371 թ. գարնանը Ջիրավի դաշտում Մուշեղ Մամիկոնյանի զլխավորությամբ<sup>12</sup> փառավոր հաղթանակ է տանում: Տեսնելով, որ մարտը չի ավարտվելու հոգուտ պարսիկների՝ աղվանից Ուռնայր արքան, որը ճակատամարտից առաջ Շապուհից խնդրում էր, որ մարտը վստահեն իրեն, փորձեց փախուստի դիմել: Սակայն ինչ-որ պահի աղվանից գորագնդերն ընկան շրջապատման մեջ, և Մուշեղ Մամիկոնյանը «հասանէր Ուռնայրի արքային Ադուանից ի փախստեանն, և նիգակաբնան ի կառախն մատուցեալ ծեծէր բազում, ասելով՝ թէ այդմ շնորհս կալ, զի այր թագաւոր ես և թագ ունիս, ես ոչ սպանից գայր թագաւոր, թէ կարի նեղ հասցէ ինձ: Եւ ութ հեծելով թոյլ ետ նմա փախչել երթալ գնալ յաշխարհն Ադուանից»<sup>13</sup>: Պապը ճակատամարտից հետո դրա համար Մուշեղ Մամիկոնյանին հանդիմանեց և, ասաց, որ թագակրին նա չպետք է սպաներ, որովհետև թագավորները ոչ թէ նրա, այլ Պապի ընկերներն են: Եթէ հավատանք Փավստոս Բուզանդին, Պապը Մուշեղ Մամիկոնյանին գրկել է ու հայտարարել, թէ մահվան արժանի են նրան չարախոսողները, իսկ նա չի կարող ձեռք բարձրացնել իր բնիկ տերերի վրա: Ապա թագավորը սպարապետին մեծ պարգևներ ու պատիվներ, ինչպես նաև շատ գյուղեր է նվիրել<sup>14</sup>:

Վերոնշյալ իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ արդեն երկրորդ անգամ Մուշեղ Մամիկոնյանը առանց Պապի հետ համաձայնեցնելու չհիմնավորված քայլ կատարեց: Այդուհանդերձ, մենք տեսնում ենք, թէ ինչպես է պատմիչը փորձում արդարացնել սպարապետի այդ քայլը: Կարծում ենք, որ սա երկրի արտաքին քաղաքականության ասպարեզում ինքնուրույն գործելու փորձ էր (միգուցե հայոց սպարապետը փորձում էր իշխանության որոշակի հատված կենտրոնացնել իր ձեռքում, և

---

<sup>11</sup> Փավստոս Բուզանդ, էջ 294:

<sup>12</sup> Պատմահայր Մովսես Խորենացին հայոց բանակի սպարապետ է հիշատակում Սմբատ Բագրատունուն: Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 368 (այսուհետև՝ Մովսես Խորենացի):

<sup>13</sup> Փավստոս Բուզանդ, էջ 304:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 304-306:

դա կարող էր անել հռոմեացիների ծածուկ օժանդակությամբ), և, քնականաբար, չէր կարող ընդունելի լինել Պապի համար:

Ա. Վարդանյանն իրավամբ նշում է, որ թշնամի բանակի գերի ընկած հրամանատարներից մեկին կովի դաշտից բաց թողնելը արտառոց դեպք էր ճակատամարտերի պատմության մեջ: Մուշեղ Մամիկոնյանը կարող էր եթե ոչ մահապատժի ենթարկել աղվանից արքային, ապա գոնե ձերբակալել նրան: Եվ գիտենք, թե Մուշեղ Մամիկոնյանն ինչպես էր պատժում Մեծ Հայքի ամբողջականության նկատմամբ ոտնձգություն կատարողներին<sup>15</sup>: Հրանտ Արմենը նշում է. «Արքայական թագը Պապի գլխին պիտի մնար, մինչ իշխանությունը Մուշեղի ձեռքին»<sup>16</sup>: Սակայն, կարծում ենք, որ Պապն իր խելամիտ քաղաքականությամբ կարողացավ ցույց տալ, որ չի կիսելու որևէ մեկի հետ բարձրագույն իշխանությունը երկրում և չի լինելու որևէ մեկի կամակատարը:

Ի տարբերություն Փավստոս Բուզանդի և IV դարի հռոմեացի պատմիչ Ամիանոս Մարկելլինոսի, որոնք չեն հիշատակում Չիրավ դաշտի անունը, Մովսես Խորենացին գրում է, որ ճակատամարտը տեղի է ունեցել Չիրավի դաշտում: Նա հատկապես բարձր է գնահատում կովի ժամանակ Բագարատ Բագրատունու որդի ասպետ Սմբատի ցուցաբերած խիզախությունը: Ըստ Մովսես Խորենացու՝ ճակատամարտի ժամանակ Սպանդարատ Կամսարականը սպանում է Ղեկաց (Լեկաց) Շերգիր թագավորին<sup>17</sup>: Սակայն շատ ավելի արժեքավոր են նրա տեղեկությունները Մերուժան Արծրունու սպանության մասին: Վերջինս Սմբատ Բագրատունու կողմից ձերբակալվեց Կոզովտի եղեգնուտներից մեկի մոտ փախուստի ժամանակ: Ըստ պատմահոր՝ Սմբատ Բագրատունին «զմտաւ ամեալ, թէ զուցէ թափիցէ զնա մեծն Ներսէս, այնորիկ աղագաւ ոչ ամէ ի բանակն, այլ զտեղեօքն գտանէ պատրաստական առ ի կորուստ ամբարշտին զմանս խորանաւորս հուր լուցեալ, և շամփուր երկաթի՝ միս խորովելոյ. զոր ջեռուցեալ, կրկնեաց բոլորեալ որպէս պսակ, և յոյժ արտաղէկ արարեալ, ասէ. «Պսակեմ զքեզ, Մեհրուժան, քանզի ի խնդիր էիր թագաւորել Հայոց. և ինձ ասպետիս պարտ է զքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց»: Եւ մինչ դեռ տաքն էր իբրեւ զհուր՝ եղ ի գլուխն Մեհրուժանայ, և այնպէս սատակեցաւ չարն: Եւ յայնմ հետէ խաղաղեցաւ երկիրն, ընդ

---

<sup>15</sup> Տե՛ս Վարդանյան Ա., Մուշեղ Մամիկոնյանի գործունեության գնահատման հարցի շուրջ // «Բանբեր Երևանի համալսարանի», 2018, թիվ 1, էջ 17:

<sup>16</sup> Արմեն Հ., Պատմական քննարկումներ, Պէրյուօ, 1968, էջ 146:

<sup>17</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 368:

ձեռամբ Պապայ նուաճեալ»<sup>18</sup>: Ճակատամարտի հետ կապված՝ կա մի խնդիր  
 ևս: Մովսես Խորենացին այն նկարագրելիս որպես սպարապետ  
 հիշատակում է ոչ թե Մուշեղ Մամիկոնյանին, այլ Սմբատ Բագրատունուն՝  
 «առաջնորդութամբ սպարապետին իւրեանց Սմբատայ ասպետի, որդոյ  
 Բագարատայ, որ յազգէն Բագրատունեաց»<sup>19</sup>: Դատելով պատմիչի  
 հաղորդած տեղեկություններից՝ կարող ենք ենթադրել, որ կամ Սահակ  
 Բագրատունու մեկենասությունը վայելող պատմիչը դիտավորյալ  
 աղավաղել է փաստերը, կամ Պապն իրոք հրամանատարությունը  
 հանձնարարել է Սմբատին՝ Մուշեղ Մամիկոնյանին թույլատրելով  
 մասնակցել ճակատամարտին: Ավելի հավանական ենք համարում Մովսես  
 Խորենացու հաղորդումը, ըստ որի՝ Ձիրավի ճակատամարտը ղեկավարել է  
 Սմբատ Բագրատունին, և ամենին պատահական չէ, ճակատամարտից  
 հետո փախուստի դիմող Մերուժան Արծրունուն մահապատժի ենթարկելը:

Հ. Մանանդյանը կարծում է, որ ճակատամարտը տեղի է ունեցել ոչ  
 թե Ձիրավի դաշտում, այլ Բագրևանդ գավառի Բագավան ավանի  
 մոտակայքում՝ Նպատ լեռան հյուսիսային կողմում՝ ինչպես փաստում են  
 Փավստոս Բուզանդն ու Ամիանոս Մարկելլինոսը<sup>20</sup>: Բ. Հարությունյանը  
 նշում է, որ Ձիրավ անունը մինչ օրս աղավաղված Զիրո (Զիրո)  
 արտասանությամբ պահպանվել է Արածանի գետի աջափնյակում գտնվող  
 մի գյուղի հետ կապված, իսկ Բագավանը գետի ձախափնյակում էր<sup>21</sup>: Քանի  
 որ դաշտը տարածվում է Արածանիի նաև ձախափնյակում, պատմահայրը  
 ճակատամարտի վայր է նշել Ձիրավը<sup>22</sup>: Ձիրավ անունը «Զիրոյ» ձևով իր  
 «Այրարատ» աշխատության մեջ հիշատակում է նաև Ղ. Ալիշանը<sup>23</sup>:

Ամիանոս Մարկելլինոսի հաղորդմամբ՝ թե՛ հայ-հռոմեական և թե՛  
 պարսկական բանակները Ձիրավի ճակատամարտից հետո զերծ մնացին  
 վճռական գործողություններից, քանի որ հռոմեացիները ձևացնում էին, թե  
 հարազատ են մնում 363 թ. հաշտությանը, իսկ պարսիկները դեռ չէին  
 հասցրել ուշքի գալ նախորդ պարտություններից<sup>24</sup>: Ավելին՝ ըստ երևութին,  
 անգամ պարսիկների առաջարկով շատ չանցած կնքվեց զինադադար. և

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 372:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 368:

<sup>20</sup> Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Կ. Բ. մասն Ա, Երևան, 1957, էջ 205:

<sup>21</sup> Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., Հայոց պատմություն, էջ 127:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>23</sup> Տե՛ս Ալիշան Ղ., Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց տեղագրեաց, Վենետիկ, 1890, էջ 522:

<sup>24</sup> Аммианъ Марцеллинъ, История, вып. III, Киевъ, 1908, с. 141.

մինչև 371 թ. ամռան ավարտը պատերազմական գործողությունները դադարեցին: Պարսիկները հեռացան Պարսկաստան, սակայն թշնամությունը չվերացավ: Շապուհը գնաց ձմեռելու Տիգրանում, իսկ Վաղես կայսրը գնաց Անտիոք, որտեղ քիչ մնաց դավադրության զոհ դառնալ<sup>25</sup>: Հակառակ Ամիանոս Մարկելլինոսի տեղեկությունների՝ Փավստոս Բուզանդի հաղորդմամբ՝ Ձիրավի ճակատամարտից հետո ռազմական գործողությունները չդադարեցին: Ըստ էության, պատերազմի վերջնական արդյունքը՝ որպես հայ-հռոմեական զորքերի հաղթանակ, վավերացում ստացավ միայն Ատրպատականի Գանձակ քաղաքի մոտ կայացած ճակատամարտից հետո: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մուշեղ Մամիկոնյանի շնորհապարտ Ուռնայր թագավորը սպարապետին տեղյակ պահեց Մեծ Հայքի վրա Շապուհ Բ-ի հարձակվելու մտադրության մասին: Կանխելու համար թշնամու սպասվելիք հարձակումը, հայոց 30.000-ից բաղկացած բանակը հռոմեական ուժերի հետ շարժվեց Ատրպատական: 371 թ. Գանձակի ճակատամարտում պարսիկները խայտառակ պարտություն կրեցին: Յուրաքանչյուր պարսիկ զինվորին սպանելիս հայերը գոչում էին, թե նրան նվիրում են Արշակ թագավորին. «Արշակայ թագաւորին մերոյ զոհ լիջիր»: Գանձակում սահմանապահ զորագնդեր տեղակայվեցին, և զորքը մեծ ավարով հետ վերադարձավ<sup>26</sup>: Այսպիսով, Պապը, երեք գլխավոր ճակատամարտերում հաղթանակ տոնելով, կարողացավ հայ ժողովրդի գրեթե յոթնամյա պայքարից հետո փրկել հայոց պետականությունը կործանումից:

#### **Պետության տարածքային ամբողջականության վերականգնումը**

Սակայն Մեծ Հայքի թագավորության համար օրակարգի առաջնային խնդիր էր մնում երկրի տարածքային ամբողջականության վերականգնումը: Հատկապես նշանակալից ուժ էին կազմում պարսիկների հետ համագործակցած հայ նախարարները, որոնք մշտական սպառնալիք էին Պապ թագավորի համար: Այդ իսկ պատճառով, արտաքին թշնամուն հաղթելուց հետո, երիտասարդ գահակալը ձեռնամուխ եղավ դավաճան իշխանավորներին պատժելու գործին, և մի շարք կտրված երկրամասեր կրկին կցվեցին Մեծ Հայքին:

Բ. Հարությունյանը նշում է, որ մինչև Արշակ Բ-ի ձեռքակալությունը Գանձակ քաղաքի մի մասը պատկանում էր հայոց թագավորությանը,

---

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 142:

<sup>26</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 306-310:

որտեղ հայկական սահմանապահ զորքեր էին տեղակայված: Զինադադարով, փաստորեն, սահմանագիծը վերականգնվեց<sup>27</sup>:

Դատելով Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկություններից՝ Գանձակում սահմանապահ կարգված Դգդակ մարդպետը, որի հրամանատարության տակ 30.000-ից բաղկացած ընտիր զորամասեր էին, գաղտնի բանակցությունների մեջ էր մտել Շապուհ Բ-ի հետ՝ պարտավորվելով պարսիկների ձեռքը հանձնել ստրատելատ Տրայանոսին, սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին և Պապ թագավորին, որի համար հարուստ գանձեր էր ստացել: Մակայն մյուս նախարարները, մասնավորապես Գնել Անձևացին և այլք, իմացել էին այդ մասին և տեղյակ պահել Պապին: Թագավորը Դգդակին նամակով հանձնարարեց զորքերը հանձնել Գնելի հրամանատարությանը և արագ ներկայանալ իրեն՝ իբր նրան շտապ Շապուհ Բ-ի մոտ դեսպան ուղարկելու համար, քանի որ պատրաստվում է ընդունելու պարսից արքայի գերիշխանությունը: Դգդակը, դրանից ոգևորված, շատ չանցած՝ ներկայացավ Պապին և գլխատվեց<sup>28</sup>: Բնականաբար, Դգդակի այս քայլը արքունիքում դիտվեց որպես պետական դավաճանության փորձ, իսկ Պապը ցույց տվեց, որ որևէ ոտնձգություն կամ դավաճանություն ուղղված երկրի անվտանգությանը դատապարտված է նման դաժան ճակատագրի:

Հավանաբար այս դեպքերից որոշ ժամանակ անց թագավորի հրամանով Մուշեղ Մամիկոնյանը ձեռնամուխ է լինում Արշակ Բ-ի գահակալության վերջին տարիներին Մեծ Հայքից անջատված ծայրագավառների միավորմանը: Մուշեղ Մամիկոնյանն առաջին հարվածը հասցրեց հայոց թագավորի ձեռնական իշխանությանը՝ Ատրպատականին (Ատրպայական), որը Մեծ Հայքի թագավորության մաս էր դարձել երկրում Արշակունիների հաստատվելու պահից: Երկրամասը հնագանդեցվեց, տեղի իշխանական դասի շատ ներկայացուցիչներ գերվեցին, իսկ մնացածները հպատակեցվեցին և դարձան հարկատու: Այստեղից հայոց բանակը մտավ Նոշիրականի բղեշխություն, ճնշեց ապստամբությունը և, պատանդներ վերցնելով, երկրամասը հարկի տակ դրեց: Հայոց բանակը Նոշիրականից մտավ Պարսկաստանին սահմանակից Կորդուք, Կորդիք (Կորդրիք) ու Տմորիք, որտեղ նույնպես վերցրեց պատանդներ, իսկ այդ երկրամասերը դրվեցին հարկի տակ: Այս ամենից հետո Մուշեղ Մամիկոնյանը զորքով տեղափոխվեց Մարդպետական (ավելի ուշ՝ Վասպուրականի արևելյան

---

<sup>27</sup> Տե՛ս Հարությունյան Բ., Հայ Արշակունիների ձեռնական իշխանության կալվածքների հարցի շուրջը // «Պատմաբանասիրական հանդես», 1988, թիվ 4, էջ 53:

<sup>28</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 310-314:

գավառները), որը Փավստոս Բուզանդն անվանում է Մարաց կողմանք, և, խստապես պատժելով տեղի մեծամեծերին ու շատերին գերեվարելով, այլոց հարկի տակ դրեց և պատանդներ վերցրեց: Մպարապետն այդ կերպ Մեծ Հայքի թագավորությանը միացրեց Արցախը, Կասպքը՝ Փայտակարան քաղաքով, Աղձնիքը, Մեծ Ծովքը, Անգեղտունը և Անձիտը<sup>29</sup>: Արցախը հանձնվեց Սյունյաց նախարարական ընտանիքի կրտսեր ճյուղին, ինչի պատճառով իշխանական տունը ստացավ Սյունյաց երկրորդ, իսկ երկրամասը՝ Փոքր Սյունիք անունը: Ձերբակալվեց Աղձնիքի բղեշխը, որի աչքի առջև կոտորեցին նրա կանանց, իսկ երեխաներին գերեվարեցին: Բղեշխական իշխանությունը վերացվեց, և երկրամասը սկսեցին կառավարել արքունի վերակացու ոստիկանները: Դատելով Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկություններից Անգեղտունն արքունի կալվածք էր<sup>30</sup>: Բ. Հարությունյանը նշում է, որ դատելով այլ անուղղակի տվյալներից, արքունի տիրույթներ էին նաև Մեծ Ծովքը, Անձիտ գավառը և Փայտակարան քաղաքն իր շրջակայքով<sup>31</sup>:

Փավստոս Բուզանդը հատկապես ուշադրություն է դարձնում Վրաց և Աղվանից թագավորությունների դեմ կռիվներին: Դրանք, օգտվելով Մեծ Հայքի թագավորության ժամանակավոր թուլացումից, տիրացել էին նրա որոշ գավառների: Մուշեղ Մամիկոնյանը Վիրքում խաչ բարձրացրեց Փառնավազյաններին, իսկ Գուգարաց բղեշխին, որն ապստամբել էր հայոց թագավորի դեմ, գլխատեց, բղեշխական ընտանիքի արու ներկայացուցիչներին կոտորեց, իսկ կանանց ու աղջիկներին գերի վերցրեց: Պատժվեցին այդ կողմի մյուս ապստամբ նախարարները ևս, ու հինավուրց հայկական սահմանը, որն անցնում էր Կուր գետով, վերականգնվեց<sup>32</sup>: Բ. Հարությունյանը նշում է, որ Գուգարաց բղեշխի ապստամբության հետ կապված հնարավոր է կատարել երկու եզրահանգում. 1) Գուգարքը հանձնվել է Վիրքին պարսից արքունիքի համաձայնությամբ և 2) Վիրքը՝ օգտվելով քաղաքական թոհուրոհից, ինչպես նաև հայկական թագավորության թուլացումից, իր ազդեցության տակ է զցել Գուգարաց

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 318-324:

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 324:

<sup>31</sup> Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, (Արևմտյան և հարավային աշխարհներ), Երևան, 2001, էջ 136-142, *նույնի՝* Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, թիվ 12, էջ 67:

<sup>32</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 322:

բղեղիությունը<sup>33</sup>: Այնուհետև հայոց գորաբանակը մտավ Հայոց Արևելից կողմանց գավառները. «Առնէր պատերազմ ընդ երկիրն Ադուանից, հարկանէր գնոսա ի հարուածս անհնարինս: Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս, գոր հատեալ էր նոցա ի նոցանէն. գՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին գնովա սահմանք գաւառք: Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Ադուանից և ընդ երկիրն իրեանց սահման արարեալ կացուցանէին. և ի գլխատրացն բազումս սպանէին և զմնացորդսն ի հարկի կացուցանէին. և պանդանդս ի նոցանէ առնուին»<sup>34</sup>, – հաղորդում է Փավստոս Բուզանդը: Թե աղվաններին որտե՞ղ է հաղթել և ում է պատանդ վերցրել հայոց սպարապետը, պատմիչն այդ մասին լռում է: Հավանաբար, Աղվանից երկիր ասելով՝ Փավստոս Բուզանդը նկատի ունի Կուրի աջափնյա շրջանները, այն է՝ Հայոց Արևելից կողմերը, քանզի վերը թվարկված գավառները գտնվում էին Ուտիքի կազմում, Կողթը՝ Արցախի, իսկ արշավանքի ժամանակ պատժվել են արքունի պաշտոնյաները, քանի որ Ուտիքի զգալի մասն Արշակունիների սեփական տիրույթն էր<sup>35</sup>: Բ. Հարությունյանը, քննության ենթարկելով Մեծ Հայքի հյուսիսարևելյան մարզերի վարչաքաղաքական վիճակը, գտնում է, որ Ուտի, Շակաշեն գավառները եղել են արքունական տիրույթներ, միայն Գարդմանաձորն է եղել նախարարական տիրույթ<sup>36</sup>: Դատելով Փավստոս Բուզանդի հաղորդած ուշագրավ տեղեկություններից՝ կարող ենք արձանագրել երկու կարևոր իրողություններ. առաջին՝ պատմիչը Մուշեղ Մամիկոնյանի մասին գրում է, որ նա հավատարմորեն ծառայում էր Արշակունյաց տերերին, այն է՝ Պապ թագավորին, հավանաբար, փորձելով քողարկել հայոց թագավորի և սպարապետի միջև առկա լարվածությունը, երկրորդ՝ ինչպես տեսանք, Մեծ Հայքից անջատված հայկական գավառները հիմնականում սահմանակից էին Հռոմին և Պարսկաստանին, քաղաքական անիշխանության պայմաններում հեռացել էին կենտրոնական իշխանությունից: Բնականաբար, այդ գավառները վերագրավելու և

<sup>33</sup> Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի // «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, թիվ 2, էջ 192:

<sup>34</sup> Փավստոս Բուզանդ., էջ 320-322:

<sup>35</sup> Տե՛ս Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց, հրատ. Ա. Մուրբեան, Վենետիկ, 1881, էջ 33, Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 21, «Ազաթանգեղայ պատմութիւն հայոց», աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ս. Կանայեանց, Երևան, 1909, էջ 30

<sup>36</sup> Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թվականներին // «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, թիվ 2, էջ 80-81:

հնագանդեցնելու համար անհրաժեշտ էր այնպիսի առաջնորդ, ով ունակ լիներ միավորելու երկրի ցրված ուժերը, և հենց այդ պատմական անհրաժեշտությունն էր, որը Պապ թագավորը մեծ վճռականությամբ և եռանդով իրականացրեց: Այս պատժիչ պատերազմներում ժողովուրդը կարիք ուներ հզոր և եռանդուն կազմակերպչի, որի դերում Պապ թագավորն էր: Այս համատեքստում, հայոց թագավորությունը ենթարկվում էր համակարգային կերպափոխման, նոր իրողության պայմաններում վերածվելով կենտրոնաձիգ պետության: Երիտասարդ Պապն իրեն դրսևորեց որպես փայլուն դիվանագետ: Ռազմական ներուժի վերականգնումը նրան հնարավորություն ընձեռեց հստակ քաղաքականություն վարելու Վիրքի ու Ադվանքի թագավորությունների նկատմամբ, որոնք ծանր հարվածներ կրելով, ստիպված եղան պատանդներ տալ ու ընդունել հայոց թագավորի գերիշխանությունը: Նրանց զորամասերը դուրս քշվեցին Մեծ Հայքի տարածքից: Այսրկովկասյան այս երկրներում՝ իբրև գրավյալ տարածքներում, ինչպես հավաստում է «Ջորանամակ»-ը<sup>37</sup>, նախկինի նման կայազորներ հաստատվեցին:

### **Հայ-հռոմեական և հայ-պարսկական հարաբերությունները Պապ Արշակունու օրոք**

Պապի հարաբերությունները Հռոմեական կայսրության հետ հետաքրքիր էվոյուցիա ունեցան: Իր գահակալության սկզբնական շրջանում, երբ երկիրը տնտեսական և քաղաքական ծանր կացության մեջ էր, Պապը, կարծես թե, վարում էր Հռոմից կախյալ քաղաքականություն: Սակայն կարճ ժամանակ անց, երբ ամբողջությամբ վերականգնվել էր հայոց բանակը և երկրի տարածքային ամբողջականությունը, նա փորձեց տարածաշրջանում վարել ավելի ճկուն և հավասարակշիռ արտաքին քաղաքականություն, ինչը հնարավորություն էր ընձեռում երկու գերտերությունների Հռոմի և Պարսկաստանի միջև խուսանավելու: Սա պետության շահերից բխող քաղաքականություն էր: Հռոմի արտաքին քաղաքականության տեսանկյունից Մեծ Հայքի թագավորությունն ուներ ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Շապուհ Բ-ի նվաճողական քաղաքականությունը Մեծ Հայքում, Հռոմում համարում էին վտանգավոր, քանզի դա բացարձակապես չէր բխում կայսրության շահերից: Այդ իսկ պատճառով Արևմուտքում թշնամիներին հաղթելուց հետո, Վաղես կայսրը (364-378) քայլեր ձեռնարկեց Արևելքում Հռոմեական կայսրության շահերը պաշտպանելու և միջազգային

---

<sup>37</sup> Տե՛ս Արոնց Ն., նշվ. աշխ., էջ 282-283:

հեղինակությունը վերականգնելու, ինչպես նաև Մեծ Հայքի թագավորությունն իր ազդեցության ոլորտում պահելու ուղղությամբ: 370 թ. նա գործերին հաղթելուց հետո Արինթոս (Աղե, Արե) կոմսի հրամանատարությամբ նույն տարում Մեծ Հայք ուղարկեց բավականին մեծաթիվ բանակ՝ կարգադրելով Պապին գահ բարձրացնել և հայոց թագավորությունը պաշտպանել պարսկական հարձակումներից: Ըստ Ամիանոս Մարկելլինոսի վկայության՝ Հռոմեական կայսրության զործողություններն առավել հարձակողական բնույթ ստացան, երբ Շապուհը փորձեց գաղտնի բանակցել Պապի հետ՝ իբրև թե ապագայում դաշինք կնքելու նպատակով. «Շապուհը, որն անչափ խորամանկ էր և ըստ իր օգտի՝ կամ ստորաքարշ էր, կամ ամբարտավան, ապագայում հաշտություն կնքելու նպատակով ծածուկ լրաբերների միջոցով Պապին կշտամբում էր, թե նա անփույթ է իր նկատմամբ և արքայական վեհության քողի տակ Գլալի ու Արտավանի ստրուկն է դարձել»<sup>38</sup>: Այնուհետև, նա նշում է, որ բանակցությունների հաջող ընթացքն ապահովելու նպատակով Պապը գլխատել տվեց Գլալին ու Արտավանին և նրանց գլուխներն «ի նշան իր հպատակության» ուղարկեց Շապուհին<sup>39</sup>: Ամիանոս Մարկելլինոսի հաղորդած տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռազմաքաղաքական բարդ իրադրության պայմաններում, երբ նաև անորոշ էր Հռոմից ակնկալվող ռազմական օգնությունը, Պապը փորձում էր իր հարաբերությունները կարգավորել Շապուհի հետ: Պարսիկների վստահությունը շահելու համար հայոց թագավորը ստիպված էր զոհաբերել Գլալին ու Արտավանին, քանի որ նրանք Արտագեսի պաշարման ժամանակ դավաճանել էին Շապուհին և անցել Փառանձեմ թագուհու կողմը: Ըստ Հ. Մանանդյանի տեսակետի՝ Պապի հետ բարեկամության դաշն կնքելու Շապուհ Բ-ի խոստումը որքան էլ տարտամ լիներ, կամա թե ակամա պետք է մեծ տպավորություն թողած լիներ ոչ միայն հայոց թագավորի, այլև նրա շրջապատի վրա, քանզի նրանք երկրի դժվարությունների պատճառը համարում էին 363 թ. Հռոմեական կայսրության ստորագրած «ամոթալի» հաշտությունը, որով Մեծ Հայքի թագավորությունը թողնվել էր բախտի քմահաճույքին<sup>40</sup>: Այդուհանդերձ, կար մի բացասական երևույթ, ինչը հետագայում անդառնալի հետևանք ունեցավ հայոց թագավորի համար, այն է՝ Մեծ Հայքի տարածքում հռոմեական կայսրոսի առկայությունը, կարծում ենք, պետության ներսում դրված ակնա

<sup>38</sup> Аммианъ Марцеллинъ, նշվ. աշխ., էջ 88:

<sup>39</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>40</sup> Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 203:

էր: Միգուցե Պապը հետագայում քայլեր կձեռնարկէր ազատվելու համար նաև այդ կայագործից, սակայն, ցավոք, երիտասարդ գահակալը շատ կարճ կյանք ունեցավ:

Չնայած Փավստոս Բուզանդը Պապին բացահայտ մեղադրում է Հռոմից հեռանալու համար, «եթէ Կեսարիա հետ՝ և տասն քաղաք մեր լեալ է, արդ ՚ի բաց տուր. և զՈւռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս իսանգար ինչ առնել. տուր ՚ի բաց. ապա թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ»<sup>41</sup>: Համակարծիք ենք Բ. Հարությունյանի այն տեսակետի հետ, ըստ որի՝ եթե անգամ Պապը մտքով դա անցկացներ, ապա այդ արկածախնդրությանը չէր դիմի: Պարզապէս պատմիչը թագավորի բերանով հայտնում է, թե հայ ժողովուրդը տարածական ինչ ընկալում ուներ իր հայրենիքի մասին<sup>42</sup>: Այդ ընկալման գիտակցումն այնքան ուժեղ էր, որ ավելի քան երկու դար անց Վահրամ Չուբինը (VI դարի պարսիկ զորահրամանատարը, ով ապստամբել էր Մասանյանների դեմ և իրեն հռչակել «արքայից արքա») հայերին խոստանում էր վերականգնել Մեծ Հայքի թագավորությունը՝ նշված սահմաններով՝ դրանց հավելելով Հայաստանի քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող Վիրքի և Աղվանքի թագավորությունները, ըստ էության, հյուսիսային սահմանը հասցնելով մինչև Կովկասյան լեռներ<sup>43</sup>: Կարելի է ենթադրել, որ Պապի պատկերացմամբ հայոց պետականության սահմաններն ընդգրկում էին ամբողջ հայկական լեռնաշխարհի տարածքը, և այս առումով, հայոց թագավորը հանդես եկավ որպէս հայոց առաջին պահանջատեր:

Վիճելի են նաև Փավստոս Բուզանդի այն տեղեկությունները, թե իբր «շրջեաց զմիտս իւր թագաւորն Պապ և խտորեաց զսիրտ իւր ՚ի թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զսէր իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից»<sup>44</sup>: Ինչպէս հավաստում է Ամիանոս Մարկելլինոսը, անգամ Տարսնից փախչելուց հետո Պապն «անխախտելիորեն հավատարիմ էր մնացել Հռոմին և ոչ մի խոսք որևէ մեկի չէր ասել իր կրած վիրավորանքների մասին»<sup>45</sup>: Յ. Մարկվարտը կարծում է, որ եթէ Հռոմեական կայսրությունից Պապի երես դարձնելու մասին Փավստոս Բուզանդի հաղորդումները ճիշտ են, ապա այդ անցքերը պետք է տեղի ունեցած լինէին

---

<sup>41</sup> Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 215, Փավստոս Բուզանդ, էջ 352:

<sup>42</sup> Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանը Պապ Արշակունու օրոք, Հայոց պատմություն, էջ 137:

<sup>43</sup> Տե՛ս Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 77-78:

<sup>44</sup> Փավստոս Բուզանդ, էջ 352:

<sup>45</sup> Аммианъ Марцеллинъ, նշվ. աշխ., էջ 196:

հայոց թագավորի՝ Տարսունից վերադառնալուց հետո և, բնական է, նրա սպանությունից առաջ<sup>46</sup>: Ամիանոս Մարկելլինոսի տեղեկությունները, Պարսկաստանի հետ հարաբերությունները կարգավորելու Պապի ձգտումը չժխտելով հանդերձ, բացառում են Հռոմից երես թեքելու քաղաքականությունը, որը տվալ պահին բնավ չէր բխում Հայաստանի շահերից: Ավելին, Հռոմի հետ դաշինքին հավատարիմ մնալը ամեննին չէր բացառում, որ Պապը փորձեր հարաբերությունները կարգավորել Պարսկաստանի հետ, եթե նույնիսկ Հռոմում նման քաղաքականությանը բացասաբար վերաբերվեին: Այդուհանդերձ, Պարսկաստանի հետ հարաբերությունները կարգավորելու խնդիրը երկրի արտաքին քաղաքական օրակարգում էր: Հ. Մանանդյանը, համերաշխելով Թ. Նյոլդեկեի հետ, կարծում է, թե Հռոմեական կայսրությունը հետապնդում էր Մեծ Հայքին տիրելու նպատակ և փորձում հանուն դրա Պապին դարձնել գործիք<sup>47</sup>:

Հայոց թագավորի արտաքին քաղաքականությունից խիստ անհանգստացած Վաղես կայսրը բանակցությունների պատրվակով Պապին տեսակցության հրավիրեց Կիլիկիայի Տարսոն քաղաք:

Ըստ Ամիանոս Մարկելլինոսի՝ կայսրն անհրաժեշտ տեղեկություններ էր ստանում հայաստանյան գրպարտիչներից, որոնք մինչև Ներսես կաթողիկոսի մահը փորձում էին հայոց թագավորին կայսեր աչքում սևացնել: Նրա տեղեկության համաձայն՝ չարամիտ մարդիկ, որոնք հաճախ հասարակական դժբախտություններից միայն շահեր էին հետապնդում, Պապին մեղադրեցին կայսեր առաջ: Նրանցից հատկապես ակտիվ էր հռոմեական հրամանատար Տերենտիոսը, որը, ըստ Ամիանոս Մարկելլինոսի՝ ամբողջ կյանքում ամենուրեք վեճեր ու կռիվներ էր հարուցել<sup>48</sup>: Դատելով պատմիչի հաղորդած տեղեկություններից՝ կարող ենք արձանագրել, որ նա խոր ափսոսանքով է հիշատակում այն իրադարձությունները, որոնք միտված էին վատթարացնելու հայ-հռոմեական հարաբերությունները: Այն, որ չարամիտ մարդիկ գործում էին Տերենտիոսի գլխավորությամբ՝ ակնհայտ է, սակայն վերջինս նշանակալի արդյունքի չէր հասնի, եթե Մեծ Հայքում չունենար իր համախոհները, ինչը հավելում է նաև պատմիչը. «Նա գործակցում էր մի քանի տեղացիների հետ,

<sup>46</sup> St u Markwart J., Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, S. 152:

<sup>47</sup> St u Nöldeke Th., Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887, S. 102, Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 216:

<sup>48</sup> St u Аммианъ Марцелинъ, նշվ. աշխ., էջ 193:

որոնք, իրենց արարքների համար պատժվելուց խիստ անհանգստացած, հռոմեական արքունիքին ուղղված գրպարտագրերում մշտապես հիշեցնում էին Գլակի և Արտավանի սպանությունը՝ պնդելով, որ պատանի արքան հակված է մեծամիտ քայլերի և արտակարգ դաժան է իր հպատակների նկատմամբ<sup>49</sup>: Ամիանոս Մարկելլինոսի հաղորդած տեղեկություններից կարող ենք ենթադրել, որ այդ «մի քանի տեղացիները» ամեննին էլ հասարակ գյուղացիներ չէին, այլ արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք ունեին ակնհայտ հռոմեական կողմնորոշում և դժգոհ էին Պապի վարած հավասարակշիռ արտաքին քաղաքականությունից: Հավանաբար, այդ մարդիկ գործում էին Մեծ Հայքում հռոմեական զորքերի հրամանատար Տերենտիոս գորավարի և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի ուղղորդմամբ:

Այդ հռոմեամետ պաշտոնյաները, բանակցությունների պատրվակով կազմակերպեցին Պապի ուղևորությունը Տարսոն: Նա այնտեղ մեկնեց իրեն կատարյալ նվիրված 300 հեծյալ զորականների հետ և տեղ հասնելով՝ իր ուղեկիցների հետ հայտնվեց պատվավոր կալանքի տակ: Նա ո՛չ կարողանում էր կայսեր ընդունելությանն արժանանալ, ո՛չ էլ իմանալ իրեն հապճեպ կանչելու պատճառը՝ հանդիպելով բոլորի քար լռությանը: Ըստ Ամիանոս Մարկելլինոսի՝ հավանաբար Մեծ Հայքից Պապը գաղտնի տեղեկություն ստացավ, որ Տերենտիոսը նամակով կայսերը խորհուրդ է տվել անմիջապես Մեծ Հայք ուղարկել մեկ այլ թագավորի, որպեսզի հայերը չանցնեն Մեծ Հայքին շողոքոթությամբ տիրել կամեցող պարսիկների կողմը: Պապին պարզ դարձավ, որ իրեն դաժան վախճան է սպասվում, ուստի իր 300 հեծյալների հետ երեկոյան դուրս եկավ քաղաքից և շարժվեց հայրենիք: Նահանգի կուսակալը (պատմիչը չի նշում նահանգի անունը, ուստի կարծում ենք, որ ամենայն հավանականությամբ, խոսքը Կիլիկիա նահանգի կուսակալի մասին է), Պապին հասավ քաղաքից ոչ հեռու և համառորեն խնդրեց ետ վերադառնալ, սակայն նա ոչ միայն մերժվեց, այլև քիչ մնաց սպանվեր: Պապի հետևից ուղարկվեց մեկ ամբողջ լեզեոն, բայց այն, հանդիպելով հայերի կատաղի նետաձգությանը, ավելի արագ փախուստի դիմեց<sup>50</sup>:

Արդյո՞ք տեղյակ էր Մուշեղ Մամիկոնյանը կայսերն ուղարկված այդ բազմաթիվ զեկույցներին: Այդ հարցին չենք կարող միանշանակ պատասխանել սկզբնաղբյուրներում համապատասխան տեղեկությունների

---

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>50</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 194-195:

բացակայության պատճառով: Սակայն կարող ենք ենթադրել, որ այդ ամենը կատարվել է նրա լուռ համաձայնությամբ<sup>51</sup>:

Հայոց թագավորի փախուստի լուրը խիստ անհանգստացրեց Վաղես կայսրին: Նրա կարգադրությամբ Դանիել կոմսին և տրիբուն Բարզիմերին հազար թեթևազեն նետաձիգների ուղեկցությամբ ուղարկեցին, որ Պապին խնդրեն ետ վերադառնալ: Տեղանքին ծանոթ լինելով՝ նրանք Պապի ջոկատից առաջ անցան: Սակայն հայոց թագավորը, նրանցից խորամանկորեն խույս տալով, երկու օր անց հասավ Մեծ Հայք: Ամիանոս Մարկելլինոսը փաստում է, որ նա մեծ ուրախությամբ ընդունվեց հայրենակիցների կողմից: Պապի փախուստից հետո Տերենտիոսը Մեծ Հայքից ետ կանչվեց: Նրան փոխարինեց Տրայանոսը, որին հանձնարարվեց սպանել հայոց թագավորին: Ամենանենգ ճանապարհներով նա փորձում էր ձեռք բերել Պապի բարեհաճությունը, նույնիսկ առանց հրավերի հայտնվում նրա մոտ: Միաժամանակ, նա թագավորի դեմ ընդդիմություն էր ստեղծում<sup>52</sup>: Հստակ կարող ենք ամրագրել, որ Պապը վայելում էր ժողովրդի մեծամասնության վստահությունը: Սակայն դավադիրներին արդեն հաջողվել էր կայսրի աչքում հայոց թագավորին սևացնել, և վերջինիս սպանության հարցը կայսրության համար դարձել էր օրախնդիր:

Ցավոք, հայ մեծամեծերից մի քանիսը և այդ թվում, ինչպես նկատել են Հ. Արմենը և Լեոն, Մուշեղ Մամիկոնյանը հայտնվեցին ընդդիմության շարքերում<sup>53</sup>: Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու երկերից օգտված Մեսրոպ Վայոցձորեցիի որոշակի արձանագրել է, որ Պապի եկեղեցական քաղաքականությունից դժգոհ նախարարները, որոնք թագավորին մեղադրում էին կաթողիկոսի սպանության մեջ, «խորհեցան սպանանել զՊապ եւ թագաւորեցուցանել զքաջն Մուշեղ», որն, ըստ նույն հեղինակի, իբրև հրաժարվել է այդ դավադրությունից<sup>54</sup>: Ա. Վարդանյանը նշում է, որ Արշակունյաց արքայատոհմը փոխարինելու համար, հռոմեական խմբավորումը գործում էր առանց բացահայտ առճակատման՝ ապավինելով ժամանակին և դավադրություններին<sup>55</sup>: Լ. Բաբայանը նշում է, որ Արշակունյաց գահակալի համար հասկանալի էր արդեն, որ հռոմեական

---

<sup>51</sup> Տե՛ս Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 22:

<sup>52</sup> Տե՛ս Аммианъ Марцелинъ, նշվ. աշխ., էջ 196-197:

<sup>53</sup> Տե՛ս Արմեն Հ., Պապ Արշակունի, Երոսաղեմ, 1958, էջ 288-293, Լեո, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, 1966, էջ 483:

<sup>54</sup> Մեսրոպ Երեց, Պատմութիւն վարուց եւ մահւան երանելի առն Աստուծոյ Սրբոյն Մեծին Ներսէսի, Կ. Պոլիս, 1737, էջ 245:

<sup>55</sup> Տե՛ս Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 22:

քաղաքական կողմնորոշումը անբարենպաստ և վտանգավոր էր Մեծ Հայքի համար<sup>56</sup>:

Դատելով Ամիանոս Մարկելլինոսի հաղորդած տեղեկություններից՝ երբ դավադրությունը կազմակերպված էր, Տրայանոսը Պապին իր մոտ ճաշի հրավիրեց և Գնել Անձևացի իշխանի և մի քանի թիկնապահ զինվորների հետ հյուրասիրության եկած Պապին փառահեղ ընդունեց: Ասպատակիր լեգեոնները սրահի պատերի երկայնքով և դրսում պատվո պահակ էին կանգնել: Պապը, ոչինչ չկասկածելով, զբաղեցրեց պատվո գահավորակը: Երբ ճաշկերույթի մասնակիցներն արդեն զինովցած էին, Տրայանոսը դիտավորյալ դուրս եկավ սրահից: Դրան հետևեց բարբարոս մի զինվորի հարձակումը Պապի վրա: Ինչպես վկայում է Ամիանոս Մարկելլինոսը, «թագավորը նրան տեսավ այն ժամանակ, երբ փոքր-ինչ թեքված էր բազկաթոռում: Վեր կացավ և հանեց դաշույնը, որպեսզի, որքան կարող է, պաշտպանի իր կյանքը, սակայն նա վայր ընկավ կրծքից խոցված որպես ամոթալի մի զոհ: Նա հոշոտվեց կրկին հասցված հարվածներից: Ապա այսպիսի նենգությամբ խարդախվեց դյուրահավատությունը: Հյուրընկալության ժամանակ օտարականի արյունը թափվեց շքեղ սեղանաձածկոցների վրա՝ Աստծո հյուրասիրության դեմ հանդիման: Այնուհետև, ճաշկերույթի մասնակիցները, չափից դուրս հազեցած պատահարից, սարսափահար դուրս փախան»<sup>57</sup>:

Ամիանոս Մարկելլինոսի և Փավստոս Բուզանդի Պապի սպանության նկարագրությունները գործնականում նույնն են: Ըստ Փավստոս Բուզանդի՝ հռոմեական հրամանատարներ Տերենտը, այն է՝ Տրայանոսը և Ադդեն հարմար պահի էին սպասում, որ սպանեն Պապին: Իմանալով, որ Պապը հանգրվանել է Բագրևանդ գավառի Խու կոչվող դաշտում, նրան խնջույքի են հրավիրում, որի ժամանակ նրան սպանում են. «ի բերանս տապալեր թագաւորն Պապ և զինին տաշտին և արինն պարանոցին նովաւ հանդերձ ի վերայ բաժակալ սկըտեղն առ հասարակ. և անդէն սատակեր թագաւորն Պապ»<sup>58</sup>: Գնել Անձևացին, թուրը մերկացնելով, սպանում է լեգեոններից մեկին, որը սպանել էր թագավորին, բայց սպանվում է Տրայանոսի կողմից<sup>59</sup>:

<sup>56</sup> Տե՛ս Բարսայան Լ., Քաղաքական կողմնորոշման արտացոլումը IV-VII դարերի հայ պատմագրության մեջ // «Պատմաբանասիրական հանդես», 1983, թիվ 1, էջ 92:

<sup>57</sup> Аммианъ Марцеллинъ, նշվ. աշխ., էջ 198, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, III դարի վերջերից մինչև IX դարի կեսերը, կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Երևան, 2011, էջ 113-114:

<sup>58</sup> Փավստոս Բուզանդ, էջ 354:

<sup>59</sup> Տե՛ս նույն տեղում:

Պապի սպանությունը տեղի ունեցավ 374 թ. երկրորդ կեսին: Դատելով Ամիանոս Մարկելլինոսի և Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկություններից՝ Մուշեղ Մամիկոնյանը թագավորի հետ չէր թե՛ Տարսնում և թե՛ նրա սպանության ժամանակ: Հ. Մանանդյանը, քննելով վերը նշված դեպքերը, գրում է. «Մուշեղ Մամիկոնյանը և մեծամեծ հայ իշխանները, որոնք լքել էին և չէին պաշտպանել Պապ թագավորին, այլևս չէին կարող հաստատուն նեցուկ համարվել Արշակունյաց թագավորության»<sup>60</sup>: Մամիկոնյանների և հատկապես Մուշեղ Մամիկոնյանի գործողությանն անդրադարձած Հ. Դավթյանն իրավացիորեն նշում է, որ այդ ժամանակ հայոց գործը թագավորի հետ չէր, այն է՝ վերջինս Պապին դավադրորեն մենակ էր թողել<sup>61</sup>: Հ. Արմենի կարծիքով, եթե Մուշեղ Մամիկոնյանը ներկա է եղել ճաշասրահում, անտարակույս հանդիսատեսի դեր է կատարել և շատ զոհ մնացել՝ տեսնելով Գնել Անձևացու սպանությունը: Նա կարծում է, որ Պապը սպանվել է 23 տարեկանում<sup>62</sup>: Բ. Հարությունյանը կարծում է, որ Պապը սպանվել է, երբ 20 տարեկան դեռևս չկար՝ թագավորելով չորս տարի<sup>63</sup>: Ա. Վարդանյանը նշում է, որ սպարապետի վարմունքը տարօրինակ է նաև թագավորի սպանությունից հետո: Բյուզանդական ինչ-որ հետին պաշտոնյաների ձեռքով հայոց հողում սպանվել էր հայոց թագավորը, իսկ հայ ռազմական վերնախավը նույնիսկ չփորձեց պատժել հռոմեական պաշտոնյաներին: Մեծ Հայքն այդ ժամանակ բավական հզոր տերություն էր, և զինուժի թիվը հասնում էր առնվազն 90.000-ի<sup>64</sup>:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ Պապի սպանության մեջ իր մեղքի չափաբաժինն ունի նաև Մուշեղ Մամիկոնյանը: Նրա և Պապի հարաբերությունները լարված բնույթ ունեին, հավանաբար, սպարապետը, ավելի մեծ իշխանության էր ձգտում, ինչը չէր կարող հանդուրժել Պապը: Այնուամենայնիվ, եթե Մուշեղ Մամիկոնյանը մեղք չունենար, ապա հետագայում Վարազդատ թագավորը նրան մեղադրանք չէր ներկայացնի Պապի սպանության համար: Առնվազն տարօրինակ է նաև այն որոշումը, որն ընդունվեց Պապի սպանությունից հետո հրավիրված իշխանաժողովի ժամանակ. «Ձի՞նչ արասցուք կամ զի՞նչ գործեսցուք, խնդրեսցու՞ք զվրեժ

---

<sup>60</sup> Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 227:

<sup>61</sup> Տե՛ս Դավթյան Հ., Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Երևան, 2015, էջ 155:

<sup>62</sup> Տե՛ս Արմեն Հ., նշվ. աշխ., էջ 292, նույնի՝ Մարգարանը և սպարապետը, Լոս Անճելըս, 1955, էջ 292:

<sup>63</sup> Հմմտ. Հայոց պատմություն, էջ 143:

<sup>64</sup> Տե՛ս Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 24:

թագաւորին մերոյ, թէ ոչ: Եւ ապա հաստատեցաւ այս բան ՚ի խորհրդեանն, և ասեն. ոչ կարեմք հեթանոսաց ՚ի պարսկաց ՚ի ծառայութիւն մտանել, և թշնամի առնել զթագաւորն Յունաց. և ոչ զերկոսեան թշնամի առնել, և ոչ առանց միոյ թիկանց կարեմք կեալ: Ապա եկաց այս բան ՚ի խորհրդին, թէ զինչ եղև ահա եղև, թող ծառայեսցուք թագաւորին Յունաց. կայցուք ՚ի հնազանդութեան իշխանութեան թագաւորութեանն Յունաց, զհարդ և կամք իցեն թագաւորութեան Յունաց, արասցեն մեզ»<sup>65</sup>: Ըստ էության, սա նշանակում էր հռոմեական կողմնորոշման խմբավորման քաղաքական ազդեցության ընդլայնում Մեծ Հայքում: Հետագայում, Մանվել Մամիկոնյանի քաղաքականությունը դրա անուղղակի ապացույցն էր, երբ Վարազդատ թագավորին հակակշռելու համար պարսից արքան նրան Մեծ Հայք ուղարկեց: Վստահաբար, պարսիկները դրանով ցանկանում էին Մեծ Հայքում ուժերի հավասարակշռությունը թեթել հոգուտ իրենց: Սուշեղ Մամիկոնյանի, իսկ հետագայում նաև Մանվել Մամիկոնյանի քաղաքականությունը ցույց է տալիս, որ Մամիկոնյանները ձգտում էին թագավորական իշխանության: Նրանք Արշակունիներին համարում էին թուլացած, և չի բացառվում, որ այդ քաղաքականությանը օժանդակելու համար եղել է նաև հռոմեական ծածուկ օժանդակություն:

Պապ Արշակունու արտաքին քաղաքականության վերաբերյալ շատ ուսումնասիրողներ են հայտնել իրենց տեսակետները: Ս. Պալասանյանը նշում է, որ երբ հայոց թագավորը փորձեց Պարսկաստանի հետ իր հարաբերությունները կարգավորել, և նույնիսկ պատերազմի պատրաստություն տեսնել Հռոմի դեմ, Հռոմում սա համարեցին դավաճանություն և նրան սպանեցին<sup>66</sup>: Ն. Շահնագարյանը գտնում է, որ Վաղեսի հանդեպ Պապի վերաբերմունքի փոփոխության հիմնական պատճառներից մեկը հարկ է համարել Մեծ Հայքի նկատմամբ հռոմեական կայսրի կողմից վարվող երկդիմի քաղաքականությունը: Այդ ժամանակաշրջանում աշխարհակալ պետությունների (Հռոմեական կայսրություն, Սասանյան Պարսկաստան) քաղաքական և ռազմական ուժեղ մրցակցության առկայության պայմաններում Պապը չունէր օբյեկտիվ պայմաններ ինքնուրույն քաղաքականություն վարելու համար<sup>67</sup>: Հ.

---

<sup>65</sup> Փավստոս Բուզանդ, էջ 356:

<sup>66</sup> Տե՛ս Պալասանեան Ս., Պատմութիւն հայոց, սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1902, էջ 188:

<sup>67</sup> Տե՛ս Շահնագարյան Ն. Հ., Հայ-իրանական և հայ-հռոմեական հարաբերությունները հայ մատենագիրների լուսաբանությամբ (մ. թ. ա. VI դ. - մ. թ. V դ.), Երևան, 1990, էջ 245:

Աստուրյանը նշում է, որ Պապի սպանության և Վաղեսի ատելության պատճառներից մեկը թերևս հայոց թագավորի եկեղեցական անկախության ծրագիրն էր: Նա Պապի քաղաքական կողմնորոշման փոփոխության քննադատությանն առնչվել է միակողմանի՝ խարազանելով Վաղեսի վարքագիծը և Պապի սպանության մեջ մեղադրել միայն հռոմեացիներին<sup>68</sup>: Մ. Դյակոնովը նշում է, որ Պապը ձգտում էր իրականացնել ինքնուրույն քաղաքականություն. դրա համար նա նախ դուրս մղեց պարսկական կայսրները, ապա փորձեր կատարեց համաձայնության հանգելու պարսիկների հետ, որպեսզի ամբողջապես չընկնի Հռոմի գերիշխանության տակ: Պապը եռանդուն կերպով վարում էր թագավորական իշխանությունը կենտրոնացնելու քաղաքականություն<sup>69</sup>: Հ. Արմենը նշում է, որ Պապը «կուզեր իրապես և իրական թագավոր մը ըլլալ, ոչ թէ անվանական...որ իր արքայական իրավանց դեմ որևէ ոտնձգություն տեղի չունենա»<sup>70</sup>: Հ. Հարությունյանը նշում է, որ Պապը վարում էր ինքնուրույն քաղաքականություն, և երկիրը դարձնում էր անկախ: Պապի սպանության համար նա դատապարտում է այդ դավադրությանը Մուշեղ Մամիկոնյանի, հռոմեասեր հայ նախարարների ու հոգևորականների մասնակցությունը<sup>71</sup>: Ե. Մուրադյանը նշում է, որ Պապը թեպետ պատանի էր, բայց կարճ ժամանակում իր գործողություններով ցույց տվեց, որ իսկական հանճար է, իսկ նրա սպանության ողբերգական պատճառներից մեկը համարում է թագավորի, նախարարի և կաթողիկոսի անմիաբանությունը<sup>72</sup>:

Հիրավի, այս բոլոր հետազոտողների տեսակետները պարունակում են ճշմարտություն: Այդ պատճառներից յուրաքանչյուրն էական ցուցիչ էր հայ-հռոմեական հարաբերությունների վատթարացման համար: Պապի ձախողման պատճառներից մեկը հայոց ներքին անմիաբանությունն էր, ինչը թույլ չէր տալիս հայոց թագավորին ավելի ճկուն խուսանավել երկու գերիզոր տերությունների միջև: Կարևոր բաղադրիչներից էր նաև հռոմեական կայսրի առկայությունը Մեծ Հայքում, որի հրամանատարը, ըստ էության, Պապի սպանության գլխավոր դերակատարներից մեկը դարձավ:

<sup>68</sup> Տե՛ս Աստուրեան Հ., Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռոմվայ 190 էն ն. Ք. մինչև 428 յ. Ք., Վենետիկ, 1912, էջ 310:

<sup>69</sup> Տե՛ս Дьяконов М., Очерки истории древнего Ирана, Москва, 1961, с. 288:

<sup>70</sup> Տե՛ս Արմեն Հ., Պապ Արշակունի, էջ 236-237:

<sup>71</sup> Տե՛ս Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ (1-429 թթ.), Երևան, 1945, էջ 132:

<sup>72</sup> Տե՛ս Մուրատեան Ե., Քննական պատմութիւն Արշակ Երկրորդի եւ անոր Պապ որդւոյն, Աղեքսանդրիա, 1900, էջ 182-183:

### **Եզրակացություններ**

Հողվածում ներկայացվում է Պապ թագավորի գահակալության արտաքին քաղաքականության պատմափուլը, որը Հայոց պատմության ամենահետաքրքրական ու էական ժամանակաշրջաններից է: Պապը Մեծ Հայք եկավ քաղաքական բարդ իրադրության պայմաններում, երբ պարսիկները խաբեությամբ գերեվարել և ձերբակալել էին հայոց թագավոր Արշակ Բ-ին, երկիրը պարսկական արշավանքների հետևանքով ավերվել էր, մի շարք երկրամասեր անջատվել էին Մեծ Հայքից և երկրում տիրում էր քաղաքական անիշխանություն: Իր գահակալության հենց սկզբից հայոց թագավորը հետևում էր մի գաղափարի՝ պետության հզորացմանը, որին էլ միտված էր արտաքին քաղաքականության մեջ նրա յուրաքանչյուր քայլը:

Արտաքին քաղաքական բարդ իրադրության պայմաններում արձանագրել ենք, որ հայոց թագավորը կարողացավ.

1. երեք գլխավոր ճակատամարտերում հաղթանակ տոնելով՝ հայ ժողովրդի գրեթե յոթնամյա պայքարից հետո փրկել հայոց պետականությունը կործանումից և ազատագրել Մեծ Հայքը պարսկական ռազմակալումից,

2. կարճ ժամանակում հայոց թագավորությանը նա միացրեց նրանից անջատված ծայրագավառները՝ վերականգնելով երկրի տարածքային ամբողջականությունը,

3. փորձեց շարունակել հոր՝ Արշակ Բ-ի, վարած արտաքին քաղաքականությունը, հարաբերությունները կարգավորելով Հռոմի և Պարսկաստանի հետ, ինչը կբարձրացներ պետության միջազգային հեղինակությունը:

Վերոնշյալ քայլերի շնորհիվ հայոց երիտասարդ գահակալին կարճ ժամանակամիջոցում հաջողվեց բարձրացնել հայոց թագավորության հեղինակությունը միջազգային հարաբերություններում, որի արդյունքում հարևան երկու գերտերությունները հաշվի էին նստում հայոց թագավորության շահերի հետ: Ցավոք սրտի, պետության ներքին անմիաբանությունը որևէ շանս չտվեց Պապին արտաքին ճակատում հաջողության հասնելու համար: Ավելին, այդ հակասությունները ողբերգական վախճան ունեցան հայոց թագավորի համար, և Մեծ Հայքը կորցրեց իր նշանավոր և հազվագյուտ ունակ գահակալին:

**Внешняя политика Папа Аршакуни**

**Заключение**

**Ключевые слова и выражения:** Пап Аршакуни, Шапур II, император Валент, внешняя политика, царство Великая Армения, армяно-римские отношения, армяно-персидские отношения.

В статье представлен исторический период внешней политики правления короля Папы, который является одним из самых интересных и значимых периодов армянской истории. Папа пришёл в Мец Айк в условиях сложной политической ситуации, когда персы захватили и арестовали армянского царя Аршака II, страна была разрушена персидскими нашествиями, от Мец Айка отделился ряд территорий, воцарилась политическая анархия в стране. Армянский царь с самого начала своего правления преследовал идею укрепления государства, на что был направлен каждый его шаг во внешней политике.

Мы можем зафиксировать, что армянский царь смог:

1. Празднуя победу в трех крупных битвах, он спас армянскую государственность от разрушения после почти семилетней борьбы армянского народа и освободил Великую Армению от персидской оккупации.

2. В короткие сроки присоединил Армянское царство к отдаленным областям, восстановив территориальную целостность страны.

3. Пытался продолжить внешнюю политику своего отца Аршака II, урегулировав отношения с Римом и Персией, что повысило бы международный престиж государства.

Благодаря вышеуказанным шагам, молодому армянскому царю удалось за короткое время поднять авторитет своего царства в международных отношениях, в результате чего две соседние сверхдержавы считались с интересами Армении. К сожалению, внутренняя раздробленность государства не давала папе шансов добиться успеха на внешнем фронте. Причем эти противоречия имели трагический конец для армянского царя, и Великая Армения потеряла своего выдающегося и редко способного правителя.

### Pap Arsacid's foreign policy

#### Conclusion

**Key words and expressions:** Pap Arsacid, Shapur II, emperor Valens, foreign policy, The Kingdom of Greater Armenia, Armenian-Roman relations, Armenian-Persian relations.

The article presents the historical period of the foreign policy of the reign of Pap, which is one of the most interesting and significant periods of Armenian history. Pap came to Great Armenia in the conditions of a difficult political situation, when the Persians had captured and arrested the Armenian king Arshak II, the country was destroyed by Persian invasions, a number of territories were separated from Great Armenia, and political anarchy reigned in the country. From the very beginning of his reign, the Armenian king pursued an idea, the strengthening of the state, and his every action in foreign politics was aimed at it.

We can record that the Armenian king was able to:

1. Celebrating victory in three major battles, he saved the Armenian statehood from destruction after almost seven years of struggle of the Armenian people and liberated Great Armenia from the Persian occupation.

2. In a short time, he joined the Armenian kingdom to the remote regions, restoring the territorial integrity of the country.

3. He tried to continue the foreign policy conducted by his father, Arshak II, by regulating relations with Rome and Persia, which would increase the international prestige of the state.

Thanks to the above steps, the young Armenian ruler succeeded to raise the reputation of the Armenian kingdom in international relations, as a result of which the two neighboring superpowers took into account the interests of the Armenian kingdom, in a short period of time. Unfortunately, the internal disunity of the state did not give the Pope any chance to succeed on the external front. Moreover, these contradictions had a tragic end for the Armenian king, and Great Armenia lost its distinguished and rarely capable ruler.

#### Օգտագործված գրականություն

1. Аммианъ Марцелинъ, История, переводъ съ латинского Ю. А. Кулаковский, вып. III, Киевъ, «Тип. С. В. Кульженко», 1908, 293 с.
2. «Ազգաթանգեղայ պատմութիւն հայոց», աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ս. Կանայեանց, Տիֆլիս, «Արագատիպ Մնացական Մարտիրոսեանց», 1909, 504 էջ:

3. Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, «Հայաստան», 1987, 639 էջ:
4. Ալիշան Ղ., Այրարատ, բնաշխարհի Հայաստանեայց տեղագրեաց, Վենետիկ, «Մխիթարեան հրատ.», 1890, 590 էջ:
5. Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց, հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, «Մխիթարեան հրատ.», 1881, 62 էջ:
6. Աստուրեան Հ., Քաղաքական վերաբերություններ ընդմէջ Հայաստանի և Հռովմայ 190 էն և ք. մինչև 428 յ. ք., Վենետիկ, «Ս. Ղազար», 1912, 391 էջ:
7. Արմէն Հ., Մարգպանը և սպարապետը, Լոս Անճելըս, «Ազդարար», 1955, 286 էջ:
8. Արմէն Հ., Պապ Արշակունի, Երոսաղէմ, «Մրբոյ Յակոբեանց», 1958, 318 էջ:
9. Արմէն Հ., Պատմական քննարկումներ, Պէրյութ, «Կ. Տօնիկեան եւ որդիք հրատ.», 1968, 229 էջ:
10. Բաբայան Լ., Քաղաքական կողմնորոշման արտացոլումը IV-VII դարերի հայ պատմագրության մէջ, «Պատմաբանասիրական հանդէս», 1983, թիվ 1:
11. Դավթյան Հ., Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, «Դալլ», Երևան, 2015, 793 էջ:
12. Լեո, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, «Հայաստան», 1966, 568 էջ:
13. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, III դարի վերջերից մինչև IX դարի կեսերը, կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Երևան, «ԵՊՀ հրատ.», 2011, 696 էջ:
14. Հայոց պատմություն, հ. Բ, Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես), գիրք Ա, (IV դարի սկիզբ – IX դարի կես) (այսուհետև՝ Հայոց պատմություն), Երևան, «Զանգակ», 2018, 704 էջ:
15. Հարությունյան Բ., Հայ Արշակունիների ձեռնական իշխանության կալվածքների հարցի շուրջը, «Պատմաբանասիրական հանդէս», 1988, թիվ 4, 44-60 էջ:
16. Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, թիվ 2, 176-198 էջ:
17. Հարությունյան Բ., Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թվականներին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, թիվ 2, 77-95 էջ:
18. Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, (Արևմտյան և հարավային աշխարհներ), Երևան, «ԵՊՀ հրատ.», 2001, 404 էջ:
19. Հարությունյան Բ., Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, թիվ 12, 61-76 էջ:
20. Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ (1-429 թթ.), Երևան, «Հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատ.», 1945, 155 էջ:
21. Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, մասն Ա, Արշակունիների հաստատումից Հայաստանում մինչև մարգպանության շրջանը (I-V դ.դ.), Երևան, «Հայպետհրատ», 1957, 456 էջ:
22. Մեսրոպ Երեց, Պատմութիւն վարուց եւ մահուան երանելի առն Աստուծոյ Սրբոյն Մեծին Ներսէսի, Կ. Պոլիս, «Աբրահամ Թշակացի», 1737, 248 էջ:

23. Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Ս. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ս. Մալխասյանի, Երևան, «Երևանի համալս. հրատ.», 1981, 428 էջ:
24. Մուրատեան Ե., Քննական պատմութիւն Արշակ Երկրորդի եւ անոր Պապ որդոյն, Աղեքսանդրիա, «Արաքս», 1900, 198 էջ:
25. Յակոբեան Ա., «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց հայոց» եւ «Զարանամակ», «Բազմավէպ», Վենետիկ, «Ս. Ղազար», 2011, թիւ 3-4, 485-550 էջ:
26. Շահնագարյան Ն. Հ., Հայ-իրանական և հայ-հռոմեական հարաբերությունները հայ մատենագիրների լուսաբանությամբ (մ. թ. ա. VI դ. - մ. թ. V դ.), Երևան, «Երևանի համալս. հրատ.», 1990, 296 էջ:
27. Պալասանեան Ս., Պատմութիւն հայոց, սկզբից մինչեւ մեր օրերը, Թիֆլիս, «Տ. Ս. Ռօտինեանցի», 1902, 599 էջ:
28. Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, «ՀՍՍՌ ԳԱ», 1979, 445 էջ:
29. Վարդանյան Ա., Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Երևան, «Պատմ. ինստ.», 2013, 208 էջ:
30. Վարդանյան Ա., Մուշեղ Մամիկոնյանի գործունեության գնահատման հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2018, թիվ 1, 14-27 էջ:
31. Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Բ. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ս. Մալխասյանցի, Երևան, «ԵՊՀ հրատ.», 1987, 456 էջ:
32. Дьяконов М., Очерки истории древнего Ирана, Москва, «Восточной литературы», 1961, 444 с..
33. Markwart J., Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Studien zur armenischen Geschichte, IV, Wien, «Mechitharisten-Buchdruckerei», 1930, 648 s..
34. Nöldeke Th., Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, «T. O. Weigel», 1887, 158 s..

***Խմբագրություն է ուղարկվել 11.10.2022թ.***

***Հանձնարարվել է գրախոսության 26.10.2022թ.***

***Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.***

**МИСАК ТИГРАНЯН**

«Рязанский государственный университет имени С. А. Есенина»

Факультет истории и международных отношений

Кафедра всеобщей истории и международных отношений

*mail:* [misaktigranyan2@gmail.com](mailto:misaktigranyan2@gmail.com)

## **АРМЯНО-РОССИЙСКОЕ СОТРУДНИЧЕСТВО В ПРОЦЕССАХ ФОРМИРОВАНИЯ СИСТЕМЫ БЕЗОПАСНОСТИ НА КАВКАЗЕ**

### **Заключение**

Одним из важнейших факторов, определяющих современное состояние и тенденции развития армяно-российских отношений, является объективная заинтересованность обоих государств в формировании в регионе атмосферы мира и стабильности, создание эффективной системы региональной безопасности, сформированной на основе комплексного учета интересов всех заинтересованных сторон, и запуске механизма взаимовыгодного сотрудничества. Противоречивость подходов к этой проблематике региональных и внерегиональных сил в значительной степени ослабляет как общую стабильность в регионе, так и безопасность отдельных стран. В этом отношении армяно-российское стратегическое партнерство отражает не только стремление дать адекватные ответы на угрозы, исходящие из общерегиональных процессов, но и в целом может представлять собой яркий пример эффективного межгосударственного взаимодействия как основы будущей системы общерегиональной безопасности, призванной установить прочную стабильность и способствовать полноценному развитию Южного Кавказа.

Наиболее значимым фактором, который будет определять эффективность армяно-российского межгосударственного взаимодействия, в том числе и в рамках формирования единых, совместных армяно-российских подходов к проблемам обеспечения региональной безопасности и сотрудничества, является неурегулированность нагорно-карабахского конфликта. Перспективы сохранения и упрочения российских позиций в регионе в целом будут во многом зависеть от того, в какой мере России готова будет отказаться в своей региональной политике от стратегии "сиюминутной выгоды" и будет руководствоваться интересами, имеющими долгосрочный характер. Именно таким интересам служит скорейшее окончательное и всеобъемлющее урегулирование нагорно-карабахского конфликта.

**Ключевые слова и выражения:** урегулирование, стратегическое партнерство, автономные республики, нагорно-карабахского конфликта, договор, Кавказском регионе, миротворческий процесс.

### **Введение**

Говоря о региональной безопасности и перспективах сотрудничества на Кавказе, необходимо учитывать основные факторы, все те сложные, нелинейные процессы, которые непосредственно воздействуют на формирование среды региональной безопасности и сотрудничества, а также на разработку региональной политики государствами региона и внерегиональных акторов. Переплетающиеся и зачастую конкурирующие интересы вовлеченных в региональные проблемы держав требуют комплексного подхода к вопросам регионального сотрудничества, безопасности и стабильности. С необходимостью создания коллективной системы безопасности согласны сегодня практически во всех региональных центрах Южного Кавказа. Концептуальные подходы к этому вопросу в настоящее время находятся в процессе активного обсуждения. Актуальность данной проблемы диктуется и тем, что даже сегодня политическая обстановка и взаимоотношения государств в регионе определяются страхом внешней агрессии.

### **Армяно-российское сотрудничество в процессах формирования системы безопасности на Кавказе**

За прошедшие годы независимости каждая из стран региона активно пыталась самостоятельно обеспечить собственные национальные интересы. Односторонние действия не всегда уважали интересы соседа, а в условиях неразрешенных конфликтов часто носили характер противодействия, что усугубляло унаследованные противоречия.

Не секрет, что Южный Кавказ исторически является краем дезинтегрированных интересов. Почти все субъекты региона проявляли и проявляют индифферентность в отношении друг друга, поскольку не имеют осмысленных общих интересов. Ни один субъект не связывает решение своих проблем с другим субъектом региона, а, наоборот, обращает свои взоры в сторону той или иной влиятельной внешней инстанции. Во все времена стабильность на Кавказе достигалась доминированием здесь какой-то внешней силы.

Несомненно, международные интересы в регионе Кавказа являются значительным фактором в деле формирования политического облика этого региона. Именно это обстоятельство "и делает неубедительными теории о

возможности игнорирования указанного фактора"<sup>1</sup>. Какого-либо успеха можно добиться исключительно при достижении международного консенсуса по тем или иным вопросам региональной безопасности. В этом отношении армяно-российское союзническое взаимодействие и стратегическое партнерство отражают не только традиционную дружбу между двумя народами, но и заинтересованность в создании и укреплении региональной безопасности.

В последние годы стала общепринятой критика в адрес России за отсутствие у нее внешнеполитической стратегии в отношении государств региона. Представляется, что формирование такой стратегии достаточно неоднозначный процесс, который осложняется тем, что отношения России с ближним зарубежьем вообще и закавказских государств в особенности отягощены имперским наследием, в силу чего в условиях, когда в бывших советских республиках идет процесс внутреннего самоутверждения, любой шаг России, который может задеть (или выглядит таковым) национальное самолюбие их народов, воспринимается настороженно и провоцирует резкую и болезненную реакцию. Поэтому на первоначальном этапе определенная дистанцированность российских внешнеполитических служб от постсоветских государств, возможно, была неизбежна.

Как справедливо отмечает российский эксперт по региону Д.Малышева, "Кавказ с его мини-гражданскими войнами, территориальными и национально-этническими конфликтами генерирует наиболее серьезные вызовы безопасности России, СНГ, сопредельных государств "третьего мира"<sup>2</sup>. Регион в целом является сосредоточением разного рода угроз для национальной безопасности как России, так и Армении, что, в частности, проявляется в наличии в регионе многочисленных неурегулированных конфликтов, в ориентации государств региона на участие в разных международных системах безопасности и соседство с Ближне-средневосточным регионом, насыщенным очагами терроризма и др. И как подчеркивал секретарь Совета безопасности России Владимир Рушайло, несмотря на то, что "у России с Арменией нет общих границ, но есть общие

---

<sup>1</sup> Саркисян М. О безопасности на Кавказе / Формирование Атмосферы Мира, Стабильности и Доверия на Южном Кавказе. – Е., Центр по изучению конфликтов, июль, 2002. С.92.

<sup>2</sup> Малышева Д.Б. Конфликты в развивающемся мире, России и Содружестве независимых государств. – М., 1997. С.53.

цели по обеспечению мира и стабильности на Кавказе"<sup>3</sup>.

В последнее время влияние международных военно-политических процессов на Южном Кавказе существенно возросло, что обусловлено многочисленными факторами: антитеррористической борьбой, военными действиями в Ираке, расширением ЕС и НАТО, развитием интеграционных процессов в рамках СНГ/ОДКБ, вследствие чего интенсифицировалась деятельность преследующих в регионе свои интересы сверхдержав, других заинтересованных сторон и соответствующих систем безопасности.

Вовлечение государств Южного Кавказа в международные интеграционные процессы, стремление стать полноправным членом международного сообщества предполагает более глубокое отражение международных процессов в жизнедеятельности государств региона. Если активизация Армении в евро-атлантическом направлении обусловлена расширением НАТО и Евросоюза, включением стран Южного Кавказа в программу ЕС "Расширенная Европа: Новые соседи" и соответственно, декларированием приоритетности интеграции в европейские структуры во внешнеполитическом курсе, то синтез стратегического партнерства с Россией с развитием сотрудничества в рамках ОДКБ обусловлены реформами в данной организации, процессами создания реальных механизмов обеспечения коллективной безопасности.

Возможности сопряжения относительно синхронного пропорционального развития политики безопасности в этих двух направлениях обусловлены общими задачами, стоящими перед данными двумя системами безопасности, общими подходами к нейтрализации угроз безопасности, наличием общих интересов. Сегодня становится очевидным, что и ОДКБ, и НАТО для решения проблем безопасности в своих зонах влияния взяли на вооружение принципиально схожие подходы, а глобальный масштаб и актуальность международных угроз отодвинули на второй план имеющиеся противоречия, вынуждая стороны все более и более расширять рамки сотрудничества. Вследствие этого, как подчеркивается в одном из выступлений министра обороны Армении Сержа Саркисяна, "...следуя курсу комплементаризма, мы пытаемся, в рамках наших возможностей, обеспечить поле для конструктивного взаимодействия заинтересованных государств и безопасностных систем, руководствуясь

---

<sup>3</sup> Интерфакс – 2003. 6 ноября

общими интересами, способствуя смягчению существующих противоречий"<sup>4</sup>.

Вместе с тем декларируемый Арменией комплементарный подход во внешней политике в современных условиях требует большей определенности и ясности во взаимоотношениях с ведущими игроками на региональном пространстве. И речь идет уже не только о необходимости проведения сбалансированной политики, позволяющей определить сферу приоритетов при построении отношений с каждым из ключевых игроков, но и о выдвижении новых инициатив по региональному сотрудничеству. В целом для региона Южного Кавказа может стать приемлемой формула "безопасность на базе сотрудничества"<sup>5</sup>, суть которой сводится к тому, что государства данного региона должны понимать, что их односторонние попытки укрепить собственную безопасность могут иметь негативные последствия для них самих. На Стамбульском саммите ОБСЕ в декабре 1999 года президент Республики Армения Роберт Кочарян представил подход Армении к формированию действенной системы региональной безопасности, основанной на трех взаимосвязанных элементах:

- экономическое сотрудничество и взаимодействие в процессе экономических преобразований;
- активизация реформ в направлении закрепления демократических ценностей и принципов;
- формирование механизмов коллективной безопасности и урегулирования конфликтов<sup>6</sup>.

Очевидно, что регион представляет большой интерес с точки зрения его экономического потенциала. Богатство региона, в первую очередь, заключается в наличии углеводородных ресурсов, все еще сохранившемся промышленном и кадровом потенциале, а также в удобном географическом положении, как важнейшего перекрестка путей. Кроме того, привлекательность южнокавказских рынков для большого бизнеса значительно выше в контексте единого экономического пространства. Понимание этого медленно, но устойчиво становится определяющим в подходах политических элит стран региона.

---

<sup>4</sup> Саркисян С. Южный Кавказ: Проблемы региональной безопасности // ИА "Регнум". – 2004. 20 декабря.

<sup>5</sup> Cohen R., Mihalka M. Cooperative Security: New Horizons for International Order. – Marshall Center Paper. №3, At>ri!2001.

<sup>6</sup> См.: Выступление президента РА Р.Кочаряна на саммите ОБСЕ, Стамбул, 19 ноября 1999г. // www.president.am.

Экономические факторы, в понимании Армении, призваны играть консолидирующую роль в формировании атмосферы доверия. Экономическое взаимопереплетение в регионе – залог укрепления взаимного доверия. Через экономическое сотрудничество эффективнее способствовать оздоровлению общей среды, в которой происходят процессы разрешения существующих региональных конфликтов, тем более что в подобных инициативах страны региона могут рассчитывать на поддержку мирового сообщества. В этом свете настоящей необходимостью становится идея синхронизации экономических реформ и равномерного экономического развития стран региона.

Фактором, мешающим реализации этой идеи, являются неразрешенные конфликты и как следствие – сильное давление объективных обстоятельств на процесс экономических реформ в странах региона. Отсюда же исходит иллюзия возможности использования экономических факторов как рычагов давления и вытеснения какой-либо из стран из общерегиональных процессов. Такой подход контрпродуктивен, усугубляет существующие антагонизмы и представляет угрозу региональной стабильности.

Одной из важнейших составляющих региональной безопасности является формирование системы общих ценностей стран региона. С восстановлением независимости страны региона получили возможность проведения коренных преобразований государственного строительства, социально-экономических и других отношений в обществе. В основе этих преобразований декларированы принципы демократии и верховенства закона. Конечно, на современном этапе процессы демократических реформ сталкиваются в странах региона с серьезными препятствиями и проистекают с различной степенью интенсивности. Однако именно сегодня необходимо закладывать прочные основы будущей стабильности как внутривнутриполитической, так и общерегиональной, так как через становление общности демократических ценностей, основанных на принципах верховенства закона и защиты прав человека, возможно способствовать формированию качественно новых рычагов влияния на разрешение существующих конфликтов, на изменение всей сущности региональных взаимоотношений в целом. В этом смысле масштабы и темпы реформ в Республике Армения, других странах региона определенно выходят за рамки внутривнутриполитических процессов, приобретая тем самым региональный характер.

Следуя во внешнеполитическом курсе принципу комплементарности, в том числе и в вопросах региональной безопасности, Армения исходит из того, что будущая система коллективной безопасности в

регионе может рассчитывать на эффективность, если она действительно будет носить всеобъемлющий, комплексный характер. Такая система не должна исключать участие какой-либо из держав, имеющей непосредственное влияние на регион. Предложенная руководством Армении формула общекавказской безопасности "3+3+2" включает в себя все три государства Южного Кавказа, непосредственно соседствующие с регионом государства, а именно Россия, Турция и Иран, а также Европейский Союз и Соединенные Штаты<sup>7</sup>.

Примечательно, что после появления данной "формулы" и другие ключевые акторы предложили свои концепции региональной безопасности, в основе которых лежат собственное видение организации регионального сотрудничества, приемлемости и степени участия тех или иных сил в политических процессах на Южном Кавказе. Так, например, формула, предложенная президентом Северной Осетии Александром Дзасоховым и которая фактически отражает российскую позицию, построена по принципу "4+2". "Первый эшелон" системы должны составлять Россия, Грузия, Армения и Азербайджан (так называемая "кавказская четверка"), а второй – Турция и Иран, непосредственно граничащие с регионом<sup>8</sup>.

Затем появился еще один вариант формулы общекавказской системы безопасности, представленный Центром европейских политических исследований (ЦЕПИ), являющийся одним из наиболее авторитетных и влиятельных "мозговых центров" Европы. Данная формула "общекавказской безопасности" предполагает несколько иную структуру, а значит и другую политическую направленность, и выглядит таким образом – "3+2+3". В отличие от армянского варианта в европейской 'версии второй эшелон должен быть сформирован только Турцией и Ираном, а уже третий – Россией, Евросоюзом и США<sup>9</sup>.

И, наконец, свой вариант региональной системы безопасности выдвинул Иран. Приверженность Ирана внешнеполитическому принципу невмешательства "внешних сил" в дела региона нашла свое отражение в формуле: "3+3" (Армения, Азербайджан, Грузия + Иран, Турция, Россия)<sup>10</sup>.

---

<sup>7</sup> См.: Выступление Президента Республики Армения Р.Кочаряна в Парламенте Грузии, 29 марта 2000г. // [www.president.am](http://www.president.am).

<sup>8</sup> См.: Джилалян А. Еще одна формула безопасности // Независимая газета. – 2000. 20 мая.

<sup>9</sup> Там же.

<sup>10</sup> Новое время. – 2003. 6 мая.

Полагаем, что из всех перечисленных моделей – иранская имеет меньше всего шансов на успех. Грузия и Азербайджан отреагировали на нее довольно холодно. Более того, министр иностранных дел Азербайджана Вилаят Гулиев заявил, что Азербайджан и Грузия стремятся к интеграции в НАТО и ЕС, "поэтому серьезная система безопасности на Кавказе невозможна без участия евроатлантических структур". Несмотря на то, что официальный Ереван подобных заявлений не делал, Армения также не готова строить систему безопасности без участия ЕС и США.

Очевидные преимущества в сложившейся системе региональных отношений имеют два варианта, предложенные Арменией и ЦЕПИ. При этом армянская концепция системы общекавказской безопасности, на мой взгляд, наиболее адекватно отражает как исторические, так и современные геополитические реалии региона. Общеизвестно, что географически регион Южного Кавказа или Закавказья включает в себя три основных внутрирегиональных центра – Армению, Азербайджан и Грузию.

Соответственно, именно эти страны должны составить основу системы безопасности. Кроме того, исторически регион находился на стыке трех империй, и под воздействием интересов этих государств, во многом противоречивых, и формировались и формируются основные региональные процессы. Разумеется, роль России в регионе всегда была и остается значительной в сравнении с Ираном или Турцией. Но именно стремление руководства Армении выработать взаимоприемлемую для всех региональных центров концепцию безопасности предопределило состав второго звена системы. Наконец, исходя из активизации сотрудничества и процессов интеграции стран региона с европейскими институтами, неизбежности учета формирующейся системы евроатлантической безопасности, а также процессов реального вовлечения внерегиональных акторов система общекавказской безопасности не может эффективно функционировать без соответствующего участия Соединенных Штатов и Европейского Союза.

В этой связи отметим наличие еще одного формата – "Кавказской четверки" (Россия, Армения, Азербайджан, Грузия), являющейся как бы правопреемницей начавшегося еще в 1996 году "кисловодского процесса"<sup>11</sup>. Данный форум, в рамках которого регулярно встречаются президенты, спикеры парламентов, секретари советов безопасности четырех стран позволяет получать информацию "из первых рук". По мнению главы

---

<sup>11</sup> См.: Ханбабян А. СНГ без победителей и побежденных // Независимая газета. – 2000. 22 июня. С. 1,5.

армянского внешнеполитического ведомства Вардана Осканян, "...решения, принимаемые в рамках "четверки", могут стать первым шагом на пути к установлению всеобъемлющей системы общекавказской безопасности". Более того, В.Осканян заявил, что "кавказская четверка" ныне является достаточно институционализированным механизмом для эффективного обсуждения таких вопросов, как региональные конфликты, экономическое сотрудничество и безопасность всего Кавказа"<sup>12</sup>. Однако, на наш взгляд, попытки России дальнейшей институционализации "четверки" могут вызвать неприятие у Грузии и Азербайджана.

В тоже время, и сама Россия не может позволить себе характерный для советского периода одинаковый подход ко всем трем государствам Южного Кавказа. В итоге, Россия вынуждена проводить не региональную политику в зоне Южного Кавказа, а строить отношения в отдельности – с Арменией, Азербайджаном и Грузией, с учетом всех сложностей и нюансов их взаимоотношений. Сегодня российская сторона практически не предлагает и не осуществляет проектов, предполагающих участие всех трех государств Южного Кавказа. Предложений на уровне многостороннего сотрудничества очевидно следует ожидать лишь после того, как доля российского капитала станет более чем ощутимой во всех трех государствах региона. И здесь важно, чтобы Россия не повторяла ошибок других заинтересованных внешних сил в попытках объединить три государства региона под искусственно спланированным политическим зонтиком. Т.е. проекты и программы регионального сотрудничества должны включать синхронизированный диалог в сферах политического урегулирования региональных конфликтов, формирования механизмов региональной безопасности, политического и экономического сотрудничества. При этом, несмотря на то, что экономический аспект регионального сотрудничества имеет ключевое значение, он не должен доминировать или подчинять себе проблему обеспечения безопасности и политический аспект. Экономическое сотрудничество не следует сводить исключительно к проблеме добычи и транспортировке энергоресурсов.

Таким образом, стабильность и безопасность на Южном Кавказе лишена прочных основ, если в ней игнорируется необходимость развития добрососедских отношений стран региона с Россией. Регион связан с Россией многочисленными историческими, экономическими, культурными и

---

<sup>12</sup> Цит по ст.: Казарян А. Россия выигрывает баталию за "общекавказскую безопасность" // Независимая газета. -2000. 14 июля.

другими связями. Соответственно, Республика Армения не может не учитывать глубину российских интересов в регионе и в свете их недооценок наличие определенной обеспокоенности с ее стороны. Перспективы дальнейшего развития и углубления экономических и демократических реформ в России, бесспорно, являются основой для качественно нового, соответствующего интересам стран региона, равноправного и взаимовыгодного сотрудничества. Исходя из очевидности этого факта, руководство Армении, приветствуя повышение роли России на международной арене, ее экономические успехи, считает, что "...Россия играет чрезвычайно важную роль в вопросах стабильности и безопасности на Южном Кавказе"<sup>13</sup>.

### **Заклучение**

В целом же, для обеспечения безопасности в регионе важны конструктивная политика и заинтересованность в обеспечении стабильности со стороны внешних сил: России, США, ЕС, Ирана, Турции, однако решающим фактором остаются занимаемые позиции и политическое поведение самих государств Южного Кавказа. При этом, формирование архитектуры региональной безопасности возможно только лишь путем регионального сотрудничества, поскольку сотрудничество является самым эффективным способом создания атмосферы взаимного доверия, что, в свою очередь, имеет первоочередное значение для разрешения региональных проблем. Возможность осуществления взаимовыгодного сотрудничества существует во многих сферах, конечно, при условии наличия политической воли национальных лидеров региона и храбрости в процессе ведения прямого диалога со своими народами.

### **Միասն Տիգրանյան**

#### **Հայ-ռուսական համագործակցությունը Կովկասում անվտանգության համակարգի ձևավորման գործընթացում Ամփոփում**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** կարգավորում, ռազմավարական գործընկերություն, ինքնավար հանրապետություններ, Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, համաձայնագիր, Կովկասյան տարածաշրջան, խաղաղության գործընթաց:

---

<sup>13</sup> ՏՄ.: Интервью Президента Республики Армения Р.Кочаряна//Независимая газета. - 2001. 18 сентября. С.5.

Հայ-ռուսական հարաբերությունների զարգացման ներկա վիճակն ու միտումները որոշող կարևորագույն գործոններից մեկը տարածաշրջանում խաղաղության և կայունության մթնոլորտ, տարածաշրջանային անվտանգության արդյունավետ համակարգ ստեղծելու երկու պետությունների օբյեկտիվ շահագրգռվածությունն է՝ ձևավորված բոլոր շահագրգիռ կողմերի շահերի համապարփակ դիտարկման և փոխշահավետ համագործակցության մեխանիզմի գործարկման հիման վրա: Տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժերի այս հարցում հակասական մոտեցումներն էապես թուլացնում են ինչպես տարածաշրջանի ընդհանուր կայունությունը, այնպես էլ առանձին երկրների անվտանգությունը: Այս առումով հայ-ռուսական ռազմավարական գործընկերությունն արտացոլում է ոչ միայն տարածաշրջանային գործընթացներից բխող սպառնալիքներին համարժեք պատասխան տալու ցանկությունը, այլև ընդհանրապես կարող է արդյունավետ միջպետական համագործակցության վառ օրինակ հանդիսանալ՝ որպես ապագա տարածաշրջանային անվտանգության համակարգի ստեղծման հիմք, որը կոչված է ամուր կայունություն հաստատելու Հարավային Կովկասում և նպաստելու նրա լիարժեք զարգացմանը:

Ամենաէական գործոնը, որը կորոշի հայ-ռուսական միջպետական համագործակցության արդյունավետությունը, այդ թվում տարածաշրջանային անվտանգության և համագործակցության ապահովման հիմնախնդիրների շուրջ հայ-ռուսական միասնական մոտեցումների ձևավորման շրջանակներում, Լեռնային Ղարաբաղի հակամարտության անկայունությունն է: Ընդհանուր առմամբ տարածաշրջանում ռուսական դիրքերի պահպանման և ամրապնդման հեռանկարները մեծապես կախված կլինեն նրանից, թե որքանով է Ռուսաստանը պատրաստ հրաժարվել «ակնթարթային շահույթի» ռազմավարությունից իր տարածաշրջանային քաղաքականության մեջ և առաջնորդվել երկարաժամկետ շահերով: Հենց այս շահերին է ծառայում Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուտափույթ, վերջնական և համապարփակ կարգավորումը:

**Armenian-Russian cooperation in the formation of a security system in the Caucasus**

**Conclusion**

**Key words and expressions::** settlement, strategic partnership, autonomous republics, Nagorno-Karabakh conflict, agreement, Caucasus region, peace process.

One of the most important factors determining the current state and trends in the development of Armenian-Russian relations is the objective interest of both states in creating an atmosphere of peace and stability in the region, creating an effective system of regional security, formed on the basis of a comprehensive consideration of the interests of all interested parts, and launching mechanism for mutually beneficial cooperation. The contradictory approaches to this issue of regional and extra-regional forces significantly weaken both the overall stability in the region and the security of individual countries. In this regard, the Armenian-Russian strategic partnership reflects not only the desire to provide adequate responses to threats emanating from regional processes, but in general can be a vivid example of effective interstate cooperation as the basis for a future regional security system designed to establish strong stability and promote full development. South Caucasus.

The most significant factor that will determine the effectiveness of the Armenian-Russian interstate cooperation, including within the framework of the formation of unified, joint Armenian-Russian approaches to the problems of ensuring regional security and cooperation, is the unsettledness of the Nagorno-Karabakh conflict. The prospects for maintaining and strengthening Russian positions in the region as a whole will largely depend on the extent to which Russia is ready to abandon the "instant gain" strategy in its regional policy and be guided by long-term interests. It is precisely these interests that an early, final and comprehensive settlement of the Nagorno-Karabakh conflict serves.

**Список использованной литературы**

1. Саркисян М. О безопасности на Кавказе / Формирование Атмосферы Мира, Стабильности и Доверия на Южном Кавказе. – Е., Центр по изучению конфликтов, июль, 2002. С.92.
2. Малышева Д.Б. Конфликты в развивающемся мире, России и Содружестве независимых государств. – М., 1997. С.53.
3. Джилавян А. Еще одна формула безопасности // Независимая газета. – 2000. 20 мая.

4. Ханбабян А. СНГ без победителей и побежденных // Независимая газета. – 2000. 22 июня. С. 1,5.
5. Казарян А. Россия выигрывает баталию за "общекавказскую безопасность" // Независимая газета. -2000. 14 июля.

*Խմբագրություն է ուղարկվել 13.10.2022թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 28.10.2022թ.*

*Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.*

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի ասպիրանտ  
Էլիասուգե՝ [gor.galstyan@vnu.am](mailto:gor.galstyan@vnu.am)

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԶԵՆՆԻ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՄԱՐԻ» ԲՆԱԳԻՐԸ  
(«ԶԻՆՉ Է ԹՈՒԱԿԱՆ»-Ի ԽՆԴԻՐԸ)**

**Ամփոփում**

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Ժ.-ԺԱ. դդ. անվանի տոմարագետ Հովհաննես Կոզեռն Տարոնեցու ձեռագրագիտական ժառանգությունը՝ պահպանված Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում: Առաջնային ենք համարել անդրադառնալ «Զի՛նչ է թուական» հարցադրմանը՝ ըստ Հովհաննես Կոզեռնի «Մեկնություն տոմարի» աշխատության: Հարցն ուսումնասիրելու համար օգտվել ենք նշյալ մեկնության ինչպես արդեն հրատարակված բնագրերից, այնպես էլ երկու նոր ձեռագրերից, որոնք չեն օգտագործվել քննական և համեմատական բնագրերը կազմելիս: Հոդվածում քննարկված է նաև Հայոց մեկ թվականի սկզբնավորման գաղափարը: Հովհաննես Կոզեռնը ցույց է տվել այդ թվականի համապատասխան լինելը Հուլյան տոմարի 552/553 թվականին՝ Նավասարդի 1-ը գուգադրելով արքաների կառավարելու շրջանների տարբեր թվականների հետ: Հոդվածում այդ տեղեկություններն ուսումնասիրվել և որոշ ճշտումների են ենթարկվել:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Հովհաննես Կոզեռն Տարոնեցի, մեկնություն, «Մեկնություն տոմարի», Անանիա Շիրակացի, ձեռագիր, բնագիր, շարժական տոմար, անշարժ տոմար:

**Ներածություն**

Հայ տոմարագիտական միտքը տարբեր դարաշրջաններում առաջնակարգ դիրք է գրավել գիտության բազմոլորտ բնագավառներում: Լինելով համալիր գիտություն՝ տոմարագիտությունը սերտ կապերով աղերսվել է և՛ հումանիտար, և՛ բնագիտական գիտաճյուղերին՝ աստվածաբանությանը, պատմությանը, գրականությանը, աստղագիտությանը, տիեզերագիտությանը, թվաբանությունը և ընդհանրապես ամբողջ մշակութային: Տոմարական գիտելիքները լուծել և ցայսօր էլ լուծումներ են տալիս բազմաշերտ հանգույցների համար:

Միջնադարյան տոմարագետները տոմարական աշխատությունների հետ հեղինակել են նաև տոմարի մեկնություններ՝ առաջացած խրթին հարցերը ևս մեկ անգամ պարզաբանելու, արդեն եղած մեկնություններն ու

«Պատճեն տոմարի հայոց»- ին վերաբերող խնդիրները խմբագրելու և այդպիսով ամբարված գիտելիքները սերունդներին փոխանցելու համար:

### Մերոդարանություն

Թեմայի ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք տոմարական նորագույն մեթոդը, ինչպես նաև օգտվել ենք պատմաքննական, պատմահամեմատական և վերլուծական մեթոդներից:

\*\*\*

Հայ իրականության մեջ հիրավի իր ուրույն տեղն ունի Ժ.-ԺԱ. դդ. տոմարագետ Հովհաննես վարդապետ Կոզեռն Տարոնեցին<sup>1</sup>: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են Հովհաննես Կոզեռնին պատկանող 71 ձեռագրեր, որից նրա «Մեկնություն տոմարի» բնագիրն են բովանդակում տասնմեկը (ՄՄ Հ<sup>մ</sup> 1973, 1999, 2001, 2292, 3587, 5809, 7040, 7098, 7995, 8716, 10200): ՄՄ Հ<sup>մ</sup> 7040<sup>2</sup> և 7995<sup>3</sup> ձեռագրերի պարունակած տոմարի մեկնությունների հեղինակային պատկանելիությունը վերագրվում է Հովհաննես Սարկավագին: Իսկ ՄՄ Հ<sup>մ</sup> 6017 գրչագիրը պարունակում է Հովհաննես Կոզեռնի «Ձգատճառ վերայ բերելեաց կամ ի բաց տանելեաց թուսկանին» հատվածը<sup>4</sup>, որը հրատարակել է Ջ. Էյնաթյանը՝ որպես Կոզեռնի մեկնության հաջորդական մաս: Հովհաննես Կոզեռնին վերագրվող<sup>5</sup> «Տեսիլ» աշխատությունն ընդօրինակվել է անհամեմատ ավելի շատ, քան, օրինակ, նրա տոմարի մեկնությունը: ՄՄ ձեռագրացուցակներում կա պահպանված «Տեսիլ» աշխատությունը

<sup>1</sup> Հովհաննես Կոզեռնի կյանքին, գործին և «Մեկնություն տոմարի» աշխատությանն անդրադարձել ենք «Հովհաննես Կոզեռնը և նրա «Մեկնություն տոմարի» աշխատությունը» հոդվածում, տե՛ս **Գ. Գալստյան, Հովհաննես Կոզեռնը և նրա «Մեկնություն տոմարի» աշխատությունը**, ՇՊՀ Գիտական տեղեկագիր, 2020, N 1, Պրակ Բ., 77-94 էջեր:

<sup>2</sup> Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ., Երևան, 1970, էջ 447:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 651:

<sup>4</sup> Տե՛ս ՄՄ Հ<sup>մ</sup> 6017, թ. 185 ա-186 ա:

<sup>5</sup> Նիկողայոս Մառը, Ղևոնդ Ալիշանն ու Աշոտ Հովհաննիսյանը համարել են, որ «Տեսիլ» աշխատությունը Կոզեռնին չի պատկանում, այլ շարադրված է քաղաքական իրավիճակի թելադրանքով, ուր կարևորվում է լատիներներից սպասվող օգնության գաղափարը: Այս մասին տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 307, հմմտ **Գ. Գալստյան, Հովհաննես Կոզեռնը և նրա «Մեկնություն տոմարի» աշխատությունը**, էջ 80:

պարունակող շուրջ 51 գրչագիր<sup>6</sup>: Մնացած՝ մեկ տասնյակի չհասնող, ձեռագրերը պարունակում են այլ մեկնություններ<sup>7</sup>, ճառեր<sup>8</sup>, քարոզներ<sup>9</sup>, խրատներ<sup>10</sup>: ՄՄ Հ<sup>մ</sup> 1775 ձեռագիրը պահպանել է նաև Կոզեռնի հեղինակած «Յոհաննու Տարոնացու, ըստ արժանեաց կոչեցեալ վարդապետի աշակերտի երանելոյ վարդապետին... շարադրութիւն պատմութեան Տանն Բագրատունեաց ի վերա Հայաստանեաց, զոր արարի հրամանաւ տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի...» աշխատության առաջաբանը<sup>11</sup>, սակայն բուն պատմությունը, ցավոք, կորած է և մեզ չի հասել:

Հ. Քյուրտյանի<sup>12</sup>, Հ. Քյոսեյանի<sup>13</sup> և Ջ. Էյնաթյանի<sup>14</sup> կողմից հրատարակվել են Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տումարի» աշխատության քննական և համեմատական բնագրերը: Հ. Քյուրտյանը, հրատարակելով Հովհաննես Կոզեռնի մեկնության բնագիրը, օգտվել է ընդամենը մեկ՝ իր ձեռքի տակ եղած ԺԷ. դարի ձեռագրից: Հ. Քյոսեյանը քննական բնագիրը հրատարակելու համար ուսումնասիրել և համեմատել է ՄՄ Հ<sup>մ</sup> 1999, 2292 ձեռագրերը: Ջ. Էյնաթյանը «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Յոհաննիսի վարդապետի, զոր մականուն Կոզեռն կոչեցեալ» հատվածի համար ուսումնասիրել և համեմատել է ՄՄ Հ<sup>մ</sup> 2292, 1999, 2001, 3587, 10200, 7040 և Հ. Քյուրտյանի հրատարակած բնագիրը, իսկ «Յոհաննիսի վարդապետի, որ մականուն Կոզեռն ի խնդրոյ Անանիայի աշակերտաց էպիսկոպոսի վասն զի գիտելոյ զպատճառ վերայ բերելեաց» տումարական միավորի համար՝ ՄՄ Հ<sup>մ</sup> 1973, 6017, 7098 ձեռագրերը և Հ. Քյուրտյանի

<sup>6</sup> Տե՛ս ՄՄ Հ<sup>մ</sup> 84, 433, 516, 557, 641, 655, 682, 700, 701, 941, 944, 991, 992, 1324, 1397, 1482, 1518, 1525, 1779, 1865, 2197, 2607, 2890, 3478, 3839, 4505, 4682, 4716, 4717, 4749, 4756, 4764, 4789, 4880, 4950, 5901, 6608, 6712, 7187, 7260, 8065, 8095, 8100, 8222, 8223, 8448, 8509, 8689, 9613, 9622, 10236:

<sup>7</sup> Տե՛ս ՄՄ Հ<sup>մ</sup> 6012:

<sup>8</sup> Տե՛ս ՄՄ Հ<sup>մ</sup> 1007, 3177:

<sup>9</sup> Տե՛ս ՄՄ Հ<sup>մ</sup> 2939, 7298, 10329:

<sup>10</sup> Տե՛ս ՄՄ Հ<sup>մ</sup> 3522:

<sup>11</sup> Տե՛ս ՄՄ Հ<sup>մ</sup> 1775, թ. 8բ-16ա:

<sup>12</sup> **Յ. Քյուրտեան**, «Յովհաննես վարդապետ Կոզեռն», ՀԱ, 1967/Ա., էջ 1-15:

<sup>13</sup> **Յովհաննես Տարաւնեցի Կոզեռն**, *Մեկնութիւն տումարի զոր արարեալ Յոհաննիսի վարդապետի որ մականուն Կոզեռն*. Վասն հոռումիւն, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. դար., հ. ԺԶ., Երևան, 2012, էջ 64- 69:

<sup>14</sup> **Յովհաննես Կոզեռն**, *Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Յոհաննիսի վարդապետի, զոր մականուն Կոզեռն կոչեցեալ: Յոհաննիսի վարդապետի, որ մականուն Կոզեռն ի խնդրոյ Անանիայի աշակերտաց էպիսկոպոսի վասն զի գիտելոյ զպատճառ վերայ բերելեաց*, **Ջ. Էյնաթյան**, Տումարի և տիեզերագիտության մեկնություններ, Երևան, 2015, էջ 81-95:

հրատարակած բնագիրը: Ինչպես նկատելի է, Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տումարի» աշխատությունը բովանդակող երկու ձեռագիր՝ ՄՄ Հ<sup>մ</sup> 5809 և 8716, ուսումնասիրողների կողմից չեն օգտագործվել ինչպես քննական, այնպես էլ համեմատական բնագրերը կազմելու համար<sup>15</sup>: Այսու, այս ձեռագրերը մեր ուշադրության և ուսումնասիրության կենտրոնում են՝ առաջ բերելու մեզ հետաքրքրող բնագրային առանձնահատկություններն ու նմանությունները՝ ի համեմատ արդեն հրատարակվածների:

**Ա.** ՄՄ Հ<sup>մ</sup> 5809, թ. 78ա – 80բ, ԺԶ., ԺԷ. դդ., գրիչ՝ Պետրոս (ԺԷ. դ.), թերթ՝ 256, տող՝ 32, 20, 25, 38:

**Բ.** ՄՄ Հ<sup>մ</sup> 8716, թ. 21ա – 24բ, ԺԷ. դար, գրիչ՝ Աստուածատուր Հալաթճի, թերթ՝ 129, տող՝ 24:

Անդրադառնալով նշյալ ձեռագրերի բովանդակած մեկնություններին՝ արձանագրենք, որ բնագրային տեքստերը, հրատարակված բնագրերի համեմատությամբ, ունեն ինչպես նմանություններ (հիմնականում), այնպես էլ տարբերություններ և առանձնահատկություններ: Կարծում ենք, որ դրանց ուսումնասիրությունը ճշգրտություն կհաղորդի բնագրային նյութի՝ առավել ճիշտ ըմբռնման և մեկնաբանման գործին<sup>16</sup>:

ՄՄ Հ<sup>մ</sup> 5809 ձեռագրում, ինչպես արդեն նշվեց, մեզ հետաքրքրող բնագիրը սկսվում է 78 ա էջից, որի սկզբնահատվածը ջնջված է: Բնագիրը սկսվում է «...պեցաւ դնել», որը, թերևս, պետք է վերականգնել «հանդիպեցաւ դնել», իսկ նախադասության սկզբնահատվածի համար կարելի է անդրադառնալ արդեն հրատարակված բնագրերին. *«Արդ, վասն զի յԱրաց ամսոյ ի Լ. նն (30) հանդիպեցաւ դնել զգիր թուականութեան հայոց ազգիս ի ձեռն Անանիայ Շիրակացոյ, Ժ. երորդ (10) ամի արթոնակալութեան Յոհաննիսի հայոց կաթողիկոսի, որ ԻԳ. (23) թիւ էր հայրապետացն ի սրբոյն Գրիգորէ, եւ ի ԻԵ. (25) ամին Յուստիանոսի կայսեր, ի հիմնարկութեան մեծի եկեղեցոյն Սրբոյն Սովիհայ, եւ ի ԻԵ. (25) ամին Խոսրովու պարսից արքային. արդ, յայսմ տարուջ յորում զթուականն եղին, ԸԶՀԶ. (5976) ամ էր յԱդամայ մինչեւ ի հայ թուականն, եւ ի ծնընդենէն Քրիստոսի մինչեւ ի սրբոյն Գրիգորի էլն ի Վիրապէն են ամբ ՄՀԶ. (276), որ լինի ի ծնընդենէն Քրիստոսի մինչեւ ի հայ թուականն ամբ ՇԾԲ. (552)»<sup>17</sup>*: Փաստորեն,

<sup>15</sup> Այս մասին տե՛ս նաև **Գ. Գալստյան**, *Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնէայ» երկը*, Բանբեր Մատենադարանի, 33, Երևան, 2022, էջ 435:

<sup>16</sup> Ձեռագրային նյութի և արդեն հրատարակված բնագրերի համեմատական վերլուծությունը նախատեսում ենք կատարել առաջիկայում:

<sup>17</sup> **Յովհաննէս Կոզեռն**, *Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Յոհաննիսի վարդապետի, զոր մականունն Կոզեռն կոչեցեալ*: **Զ. Էյնաթյան**, Տումարի և տիեզերագիտության մեկնություններ, էջ 82-83:

Հովհաննես Կոզեռնի մեկնությունը սկսվում է Հայոց 1 թվականի հաստատման մասին տեղեկատվությամբ, որտեղ նաև տոմարագետը ցույց է տալիս այդ թվականի համապատասխան լինելը Հուլյան տոմարի 552/553 թվականին՝ Նավասարդի 1-ը զուգադրելով տարբեր համաժամանակյա տարեթվերի<sup>18</sup>: Մինչև բերված թվականների քննարկմանն անցնելը, նշենք, որ Ս. Օրմանյանն այն կարծիքն է հայտնում, որ 552 թ. որևէ նշանավոր անցք չի կատարվել հայոց մեջ՝ ասելով, որ այդ թվականը Անդրեասի 200-ամյա Ջատկացուցակի լրման տարին էր, որը հայերի հետ չուներ որևէ մասնավոր առնչություն<sup>19</sup>: Սակայն հայտնի է, որ երբ ավարտվեց Անդրեասի 200-ամյա Ջատկացուցակը, հայերը Հայասնների նմանողությամբ թեև իրենց ՇԼԲ. (532-ամյա) պարբերաշրջանի առաջին տարին (553 թ.) սկսել են Նիսան 23 = Ապրիլի 13 լրման տարուց, սակայն իրենց ՇԼԲ.-ի սկիզբը համարել են 562 թվականը՝ Շ-եակի՝ հաշվման իմաստով 10-րդ տարին: Այդպիսով ստեղծվեց Հայոց թվականության համակարգը՝ հայոց 1 թվականը զուգադրելով հուլյան 552/553 թվականին: Սա հայոց մեջ ակնառու իրադարձություն էր, քանի որ այսպիսով մենք ունեցանք ոչ միայն սեփական թվականության համակարգ, այլև այն օգնեց՝ զերծ մնալու օտար տիրապետությունների ազդեցությունից: Ըստ Ջ. Էյնաթյանի՝ Հայոց մեծ թվականով առաջնորդվելու որոշումը կատարվեց Մովսես Բ. Եղիվարդեցի կաթողիկոսի (574-604 թթ.) օրոք Աթանաս Տարոնացու ջանքերով<sup>20</sup>: Անանիա Շիրակացին հետևել է Հայասնների ՇԼԲ.-ին, սակայն սիմվոլիկ կերպով ընտրել է 581 թվականը՝ որպես Մովսես կաթողիկոսի պաշտոնական կարգադրության թվական<sup>21</sup>: Այսպիսով՝ հայոց 1 թվականը զուգորդված է ներկա 552/553 թվականներին, ինչպես և Հովհաննես Կոզեռնը ներկայացրել է մեկնության մեջ: Եվ երբ մեկնիչը հայոց թվականի հաստատումը կապում է Անանիա Շիրակացու անվանը, նա նկատի ունի հայոց ՇԼԲ.-ի ստեղծումը, որը կատարվել է Անանիա Շիրակացու կողմից<sup>22</sup>:

<sup>18</sup> Այս մասին տե՛ս նաև **Գ. Գալստյան**, *Հովհաննես Կոզեռնը և նրա «Մեկնություն տոմարի» աշխատությունը*, էջ 83:

<sup>19</sup> **Ս. Օրմանյան**, Ազգապատում, հ. Ա., Ս. Էջմիածին, 2001, պ. 665:

<sup>20</sup> **Ջ. Էյնաթյան**, Տոմարի և տիեզերագիտության մեկնություններ, էջ 35:

<sup>21</sup> **Ռ. Վարդանյան**, Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ.), Երևան, 1999, էջ 171: Ս. Օրմանյանն այս իրադարձությունը կապում է Մովսես Բ. կաթողիկոսի գահակալության Ժ. (10-րդ) 584 թվականի հետ: Այս մասին տե՛ս **Ս. Օրմանյան**, Ազգապատում, հ. Ա., պ. 667:

<sup>22</sup> **Ռ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 173:

Ներկայացնելով բոլոր զուգադրումները՝ փաստորեն կստանանք 552/553 թվականը<sup>23</sup>: Այսպես, բերված թվականներն են Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննեսի (557-574 թթ.<sup>24</sup>) (խոսքը Հովհաննես Բ. Գաբեղենացի կաթողիկոսի մասին է), որը Գրիգոր Լուսավորչից հաշված՝ ԻԳ. (23-րդ) կաթողիկոսն էր, գահակալության Ժ. (10-րդ) տարին, Բյուզանդիայի հզոր կայսր Հուստինիանոս Ա.-ի (527-565 թթ.<sup>25</sup>) գահակալության ԻԵ. (25-րդ) տարին, Սուրբ Սոֆիայի տաճարի կառուցման թվականը (537 թ.<sup>26</sup>), պարսից Խոսրով Ա. արքայի (531-578 թթ.<sup>27</sup>) գահակալության ԻԵ. (25-րդ) տարին (Հ. Քյոսեյանն ուղղել է՝ ԻԲ. (22))<sup>28</sup>: Այնուհետև հեղինակը տալիս է արարչության թվականներից մեկը՝ ՐՁՀՁ. (5976), որը Հ. Քյոսեյանն ուղղել է ՐՈՀՁ. (5676)<sup>29</sup>: Հաջորդիվ բերվում են տարիները՝ Քրիստոսի Ծնունդից մինչև Գրիգոր Լուսավորչի ելքը Խոր Վիրապից, որը կազմում է ՄՀՁ. (276) տարի, և ելքից հետո մինչև Հայոց մեծ թվականի սկիզբը՝ կրկին ՄՀՁ. (276) տարի, որոնք միասին կազմում են ՇԾԲ. (552) տարի<sup>30</sup>:

Ինչպես ակներև է վերոշարադրյալից, Հովհաննես Բ. Գաբեղենացի կաթողիկոսը գահակալել է 557-574 թթ: Նա իրոք 23-րդն է՝ Գրիգոր Լուսավորչից հաշված: Սակայն նրա գահակալության 10-րդ տարին ստացվում է 567 թվականը: Այս իրողությունները ճիշտ հասկանալու համար պետք է հիշել, որ հայոց մեջ օգտագործվել են քրիստոնեական թվականության տարբեր համակարգեր: «Պատճեն տոմարի հայոց»-ի

<sup>23</sup> Ձ. Էյնթայանն առաջնահերթություն է տալիս 553 թվականին: Այս մասին տե՛ս **Ձ. Էյնթայան**, «Պատճեն տոմարի հայոց մեծացը» և նրա մի քանի մեկնությունները.- Լրաբեր/ Ե., 1976, էջ 83:

<sup>24</sup> Կաթողիկոսի գահակալման թվականները տե՛ս **Մ. Օրմանյան**, նույն տեղում, պ. 647, հմմտ՝ **Վ. Վարդանյան**, Հովհաննես Բ. Գաբեղենացի, «Ամենայն հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Ս. Էջմիածին, 2008, էջ 127, հմմտ՝ **Ա. Կարապետյան**, Հովհաննես Բ. Գաբեղենացի, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Ս. Էջմիածին, 1994, էջ 615:

<sup>25</sup> Թագավորի գահակալման թվականները տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ., Երևան, 1984, էջ 11:

<sup>26</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հտ. ԺԱ., Երևան, 1985, էջ 48:

<sup>27</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ., նույն տեղում:

<sup>28</sup> **Յովհաննես Տարանեցի Կոզեռն**, *Մեկնութիւն տոմարի գոր արարեալ Յոհաննիսի վարդապետի որ մականունն Կոզեռն*. Վասն հոռոմիին, «Մատենագիրք Հայոց», էջ 64, հմմտ՝ ՄՄ Հ<sup>4</sup> 1999, թ.67 ք:

<sup>29</sup> Նույն տեղում, հմմտ՝ ՄՄ Հ<sup>4</sup> 1999, թ.67 ք:

<sup>30</sup> ՄՄ Հ<sup>4</sup> 5809 ձեռագրում կարդում ենք «ՇԾԳ. (553)»: Տե՛ս ՄՄ Հ<sup>4</sup> 5809, 78 ա: Այս տարբերության մասին կխոսեմ տեքստում:

խմբագրությունները պահպանել են քրիստոնեական թվականները ստանալու համար 3 կանոններ, որոնք ասում են՝ հայոց թվականին մի դեպքում պետք է գումարել 552, մյուս դեպքում՝ 553, հաջորդ դեպքում՝ 556 հաստատունը՝ քրիստոնեական թվականը ստանալու համար<sup>31</sup>։ Հաշվումները կատարելիս հարկ է ստուգել երեք տարբերակներն էլ, որպեսզի ճիշտ ստացվի խնդրելին<sup>32</sup>։ Սակայն Հովհաննես Բ. Գաբեղենացի կաթողիկոսի պարագայում հստակ է, թե որ մի քրիստոնեական թվականն էլ օգտագործված լինի, չէր կարող ստացվել 567 թվականը։ Ուստի, կարելի է ճշտել հատվածն այսպես. «*Արդ, վասն զի յԱրաց ամսոյ ի Լ.նն (30) հանդիպեցաւ զնել զգիր թուականութեան հայոց ազգիս ի ձեռն Անանիայ Շիրակացոյ, Դ.երորդ (4) ամի աթոռակալութեան Ներսիսի հայոց կաթողիկոսի, որ ԻԲ. (22) թիւ էր հայրասպետացն ի սրբոյն Գրիգորէ...*»։ Չ. Էյնաթյանն իր «Տիեզերագիտության և տոմարի մեկնություններ» (Է.-ԺԵ. դդ.)» մեծածավալ և արժեքավոր ուսումնասիրության «Մեկնություններ» բաժնում, առանձին հրատարակելով «Ձի՞նչ է թուական» խնդրին վերաբերող բոլոր մեկնությունները, Հովհաննես Կոզեռնի բնագրային հատվածը հրատարակելիս գրել է «*Ժ.երորդ (10) ամի աթոռակալութեան տեառն Յոհաննիսի (=Մովսէսի) Հայոց կաթողիկոսի...*»<sup>33</sup>՝ նկատի ունենալով, որ խոսքը Մովսէս Բ. Եղիվարդեցի կաթողիկոսի (574-604 թթ.) մասին է, ում օրոք Դվինի ժողովում իրապես որոշում կայացվեց ընդունել Էսայան պարբերաշրջանը և ունենալ սեփական թվականության համակարգը։ Իհարկէ, հետագայում Անանիա Շիրակացին ստեղծեց ՇԼԲ. (532-ամյա) Զատկացուցակներ ինչպես հայոց, այնպես էլ հուլյան շարքով, որի սկիզբը համարվեց 552 թվականը։ Լ. Սարգսյանն էլ հարում է այն կարծիքին, երբ ասում է, որ Հովհաննես Կոզեռնն ակնհայտորեն սայթաքել է, երբ մեկ թվականը համարել է Հովհաննեսի կամ Մովսէսի կաթողիկոսության 10-րդ տարին<sup>34</sup>։ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը մեջբերում է Ներսես կաթողիկոսի գահակալության Դ. (4-րդ) տարին՝ ասելով, որ այդ թվականին

<sup>31</sup> Գ. Մինոյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավազի տոմարական ժառանգության մեջ առկա թվականության համակարգերը, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Երևան, 2013, էջ 51-52:

<sup>32</sup> Լ. Սարգսյանն այն կարծիքն է հայտնում, որ Անանիա Շիրակացու և Հովհաննես Կոզեռնի ժամանակին բնորոշ է եղել 552 թվականը, որով հնարավոր էր ստանալ քրիստոնեական Դիոնիսյան կամ ներկա թվականը՝ հայոց թվականը գումարելու եղանակով։ Տե՛ս Լ. Սարգսյան, Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը (4-8-րդ դդ.), Երևան, 2010, էջ 192-193:

<sup>33</sup> Չ. Էյնաթյան, Տոմարի և տիեզերագիտության մեկնություններ (Է.-ԺԵ. դդ.), էջ 254:

<sup>34</sup> Լ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 192:

գումարված Դվինի ժողովում է սահմանվել հայոց թվականը<sup>35</sup>: Սակայն Լ. Սարգսյանը ճշգրիտ կերպով նկատել է, թե Ալեքսանդրացոց Շ-եակը, որը հիմքն էր հայոց թվականի, 9 տարի հետո նոր ստեղծվել է. ինչպե՞ս կարող էր հայոց թվականը սահմանվել 9 տարի առաջ<sup>36</sup>: Այսու, կարծում ենք, որ ավելի ճիշտ կլինի գրել *«...Դերորդ (4) ամի աթոռակալութեան Ներսիսի հայոց կաթողիկոսի, որ ԻԲ. (22) թիւ էր հայրապետացն ի սրբոյն Գրիգորէ...»*, որպէսզի ստացվի ՇԾԲ. (552) թվականը, ինչպես և ասվում է մեկնության մեջ:

Բերված երկրորդ թվականը Հուստինիանոս Ա. կայսր գահակալության ԻԵ. (25-րդ) տարին է, որը ճշգրիտ կերպով համապատասխանում է մեկնության տեղեկությանը, քանզի կայսրը գահակալել է 527-565 թթ., ուստի նրա գահակալության ԻԵ. (25-րդ) տարին կլինի հենց 552 թվականը: Հաջորդիվ բերվում է պարսից Խոսրով Ա. արքայի գահակալության ԻԵ. (25), իմա՝ ԻԲ. (22-րդ) տարին: Կատարենք հաշվումները. պարսից Խոսրով Ա. արքան գահակալել է 531-578 թթ.: Նրա գահակալության 22-րդ տարվա դեպքում կստացվի 553 թվականը, իսկ 25-րդ տարվա դեպքում՝ 557 թվականը: Պարզ է, որ ընդունելի է Խոսրով Ա.-ի ԻԲ. (22-րդ) տարվա գահակալության թվականը, որով ստանում ենք քրիստոնեական երկրորդ, այն է՝ ՇԾԳ. (553) թվականը: Եվ շատ հավանական է, որ այս դեպքում կիրառվել է քրիստոնեական երկրորդ թվականը՝ ՇԾԳ. (553) թ.-ը<sup>37</sup>: Հովհաննես Կոզեռնի՝ հայոց մեկ թվականը պարսից Խոսրով Ա. արքայի գահակալության 22-րդ տարվա հետ առնչելը նորություն էր հայ մատենագրության հետ և բացարձակ թիվ<sup>38</sup>: Իսկ ինչ վերաբերում է Սուրբ Սոֆիայի տաճարի կառուցման ժամանակին, ասենք, որ այն կառուցել են ճարտարապետներ Անթեմիոս Տրալացին և Իսիդորոս Միլեթցին՝ 532-537 թթ.: Հուստինիանոս Ա. կայսեր օրոք<sup>39</sup>: Վերոբերյալից ելնելով՝ առաջարկում ենք հատվածի հետևյալ տարբերակը՝ *«ի ԺԵ. (15-րդ) ամին ի հիմնարկութեան մեծի եկեղեցոյն Սրբոյն Սոփիայ»*, որ ստացվի ինդրելին՝ 552 թվականը:

Ըստ Հ. Բաղայանի՝ անկասկած է, որ հայերը տոմարական բարեփոխությունը հաստատել են Մովսես Ա. Եղիվարդեցի կաթողիկոսի

<sup>35</sup> **Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան**, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 82-83, 141:

<sup>36</sup> **Լ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 187:

<sup>37</sup> **Գ. Միմոնյան, Ռ. Վարդանյան**, նույն տեղում:

<sup>38</sup> **Լ. Սարգսյան**, նույն տեղում, էջ 192:

<sup>39</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հտ. ԺԱ., նույն տեղում:

(574 – 604 թթ.) գահակալության օրոք 584 թ.-ին հրավիրված Դվինի ժողովում, որտեղ ընդունել են Էսայան<sup>40</sup> պարբերաշրջանը<sup>41</sup>: Ռ. Վարդանյանը հաղորդում է, որ Անդրեասի 200-ամյա Ջատկացուցակի ավարտվելուց հետո առնվազն 9 տարի՝ ամենաքիչը 553-561 թթ., եկեղեցական տոները կարգավորել են Լուսնի 19-ամյա պարբերաշրջանի Լուսնի լրման օրերից ելնելով, այսինքն՝ շարունակելով Անդրեասի Ջատկացուցակը, իսկ հայոց 10 թվականին՝ այսինքն՝ 562 թ., սկսվել է 500-յակը, որն է՝ Էսայան ՇԼԲ (532)-ամյա Ջատկացուցակը: Հայ տոմարագիտական միտքը պահպանել և սերունդներին է փոխանցել այն իրողությունը, որ Անաստաս Ա. Ակոռեցի կաթողիկոսը (661-667 թթ.) պահանջ է ներկայացրել Անանիա Շիրակացուն, որ կատարի տոմարական բարեփոխում՝ կազմելով հայոց անշարժ տոմարի նախագիծ՝ այն անշարժ դարձնելու նպատակով: Եվ ըստ տեղեկության՝ Շիրակացուն հաջողվել է կազմել հայոց անշարժ տոմարի նախագիծ, սակայն կաթողիկոսին չի հաջողվել այն հաստատել եկեղեցական ժողովում<sup>42</sup>: Այսու, ուզում ենք առաջ բերել այն թեզը, որ Անանիա Շիրակացին գուցե կազմած լինի հայոց անշարժ տոմարի նախագիծ<sup>43</sup>, ինչպիսիք ունեին ժամանակի շատ նշանավոր ազգեր: Սակայն, ուշագրավ է հաշվի առնել կարևոր մի փաստ. եթե Անանիա Շիրակացին հայոց տոմարը դարձնէր անշարժ, այսինքն՝ կիրառվեր նահանջի գաղափար ամեն 4 տարին մեկ՝ այդ տարիների օրաքանակը դարձնելով 366 օր, երբեք հնարավոր չէր լինի տոմարական գուգադրումների միջոցով որոշել տոների տոնման ճշգրիտ ժամկետները, ձեռագրերի թվագրման, աստղագիտական և այլ տարբեր երևույթների ճիշտ ժամանակները: Նշյալ եզրակացությունը կապված է այն փաստի հետ, որ եթե բոլոր տարիներին հայոց և որևէ այլ ազգերի տոմարների ամիսն ու օրը համընկնեին, վերոնշյալ բոլոր երևույթների պատասխանն այսօր չէինք ունենա: Օրինակ՝ եթե Ահեկան 30-ը բոլոր տարիներին համապատասխաներ մայիսի 7-ին, մենք չէինք կարողանա գուգադրումների միջոցով իմանալ տոները կատարելու հստակ թվականները, որոնք էլ շատ հաճախ օգնում են ճշգրտորեն թվագրել նշյալ ձեռագիրը: Ուրեմն, եթե

<sup>40</sup> Էսայան 532-ամյա զատկացուցակի և հայոց թվականության համակարգի մասին մանրամասն տե՛ս **Ռ. Վարդանյան**, Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ.), էջ 115-140:

<sup>41</sup> Տե՛ս **Հ. Բաղայան**, Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 65:

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Ռ. Վարդանյանը հերքել է այս իրողությունը: Այս մասին տե՛ս **Ռ. Վարդանյան**, Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ.), էջ 173, տե՛ս նաև **Ռ. Վարդանյան**, **Գ. Կարախանյան**, Անանիա Շիրակացին և նրա «Քննիկոնը», Աճեմյան մատենաշար, հ. Ա., Երևան, 2002, էջ 72-74:

բնագրում առկա է հայոց շարժական և որևէ այլ անշարժ տոմարի ամիս-ամսաթիվ, հնարավոր է որոշել թվականը քառամյակների ճշգրտությամբ: Իսկ եթե նշված լինի շաբաթվա օրը, հնարավոր է որոշել անգամ 1 օրվա ճշգրտությամբ: Եթե պահպանվել է որևէ անշարժ տոմարի ամսաթիվ և հայոց շարժական տոմարի ամիսը, կարող ենք որոշել թվականը 120 տարիների ճշգրտությամբ՝ միջինից 60 տարվա սահմաններում: 120 տարիների ճշգրտությամբ թվականը կարող ենք գտնել նաև այն դեպքում, երբ ձեռագրում կատարվել է բառացի թարգմանություն, այսինքն՝ օտար ամիս-ամսաթիվը դարձել է հայոց տոմարի որևէ ամիս՝ ամսաթիվը պահպանելով նույնը<sup>44</sup>: Արժե նաև վերստին ընդգծել, թե ի՞նչ սաել է անշարժ կամ շարժական տոմար: Առհասարակ անշարժ է ընդունվում այն տոմարը, որում կիրառված է նահանջի գաղափարը, այսինքն՝ ամեն 4 տարին մեկ 1 օր ավելանում է տարվա օրերի քանակին՝ այդ դարձնելով 366 օր: Իսկ շարժական տոմարների դեպքում բոլոր տարիներն ունեն 365 օր և անշարժ տոմարների հետ զուգադրելիս ամեն քառամյակում 1 օրով տոմարը հետ է ընկնում: Սակայն, եթե այլ տեսանկյունից նայենք հարցին, մի թե հայոց տոմարը քարացած, այսինքն՝ «անշարժ» չէ՞ր, չէ՞ որ տարվա օրերը նույնությամբ կրկնվում էին 365 օրը մեկ: Այստեղ խնդիրն այն է, որ եթե մենք դրանք զուգադրենք անշարժ տոմարներին, ամեն քառամյակում առաջանում է 1 օրվա տարբերություն, բայց ըստ էության՝ դա քարացած՝ «անշարժ», տոմար էր, քանզի 365 օրը մեկ՝ նույնությամբ տարվա օրերը կրկնվում էին: Կարծում ենք, որ արժե հարցին նաև այս տեսանկյունից նայել:

Բնագրային հաջորդ հատվածը, որտեղ քննարկվում է «Զի՞նչ է թուական»-ի խնդիրը, հետևյալն է. *«Իսկ զի սաէ «կա՛լ թիւ մի Արաց ամսոյ եւ թուեա՛ մինչեւ ցՅայտնութիւն», վասն զի յորում ամի զթուականն եղին, յԱրաց ամսոյ Լ. (30) էր եւ առաջին ամին էր յետ նահանջի: Եւ ի նոյն ամի Ջատկին լրումն՝ ի Մարերի Գ.ն (3) եւ օրն կիրակի էր, եւ Մարերի ԺԴ. (14) Ջատիկն էր»<sup>45</sup>*: Այս հատվածը բավականին հետաքրքրական է, քանի որ այն

<sup>44</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Ռ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը. թարգմանական բնագրերի ժամանակը, Երևան, 1993, էջ 4-9:

<sup>45</sup> ՄՄ Հ<sup>մ</sup> 5809, թ. 79 ա, ՄՄ Հ<sup>մ</sup> 8716, 22 բ, հմմտ՝ **Յովհաննէս Տարանեցի Կոզեռն, Մեկնութիւն տոմարի գոր արարեալ Յոհաննիսի վարդապետի որ մականունն Կոզեռն. Վասն հոռոմին**, «Մատենագիրք Հայոց», էջ 66, հմմտ՝ **Յովհաննէս Կոզեռն, Մեկնութիւն տոմարի, գոր արարեալ է Յոհաննիսի վարդապետի, գոր մականունն Կոզեռն կոչեցեալ**: **Զ. Էյնաթյան**, Տոմարի և տիեզերագիտության մեկնություններ, էջ 87:

բովանդակային առանձնահատկություններ է պարունակում ինչպես արդեն հրատարակված բնագրերում, այնպես էլ ՄՄ Հ<sup>46</sup> 5809 և 8716 ձեռագրերի՝ ինդրո առարկա բնագրերում: Այսպես, Ջ. Էյնաթյանի հրատարակած բնագիրը և ՄՄ Հ<sup>46</sup> 5809 ու 8716 ձեռագրերը պահպանել են Ջատկի Լուսնի լրման օրը՝ Մարերի Գ. (3): Հ. Քյոսեյանը համապատասխան բնագիրը հրատարակելիս իրավամբ ուղղել է գրչական սխալը՝ այն դարձնելով Մարերի Է. (7): Գիտենք, որ եթե Ջատկական Լուսնի լրումը համընկնում է կիրակի օրվան, Ջատկի տոնը տեղի է ունենում մեկ շաբաթ հետո՝ կիրակի օրը: Այսինքն՝ Ջատկական Լուսնի լրումից մինչև Ջատիկ օրերի տատանման առավելագույն քանակը 7 օր է: Ուստի, հստակ է, որ Մարերի Գ.-ն (3) գրչական սխալ է, և այն պետք է ուղղել Մարերի Է. (7): Այստեղ կա ևս մեկ ուշագրավ փաստ. նախադասության շարունակությունը, այն է՝ *«Եւ Մարերի ԺԳ. (14) Ջատիկն էր»*, Հ. Քյոսեյանը փոխել է՝ գրելով՝ *«Եւ ի նոյն ամի Ջատիկն լրումն՝ ի Մարերի յԷ. (7) եւ արն կիրակե, եւ ապրիլի ԺԳ. (13), որ է սկիզբն բոլորին ապրելեացն»*: Կարծում ենք, որ այդ հատվածը կարելի է վերաձևակերպել այսպես. *«Եւ ի նոյն ամի Ջատիկն լրումն՝ ի Մարերի յԷ (7) եւ արն կիրակե, եւ Մարերի ԺԳ. (14) Ջատիկն էր, եւ ապրիլի ԺԳ (13), որ է սկիզբն բոլորին ապրելեացն»*, քանի որ ձեռագրերը պահպանել են հայոց 1 թվականին Մարերի ԺԳ. (14)-ին Ջատիկը տոնելու իրողությունը<sup>46</sup>: Այսպես, Ռ. Վարդանյանը իր «Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ.)» հսկայածավալ աշխատության մեջ բերում է մի աղյուսակ, որտեղ զուգադրորեն նշված են ներկա թվականը, Հայոց թվականը, Անդրեասի, Էասի և Հայոց 19-ամյակի տարիները, 19-ամյակի օրերը հուլյան և հայոց ամսաթվերով և Ջատկի օրերը՝ կրկին հուլյան և հայոց ամսաթվերով<sup>47</sup>: Եվ դրանից պարզ է դառնում, որ ներկա 552 թվականին ավարտվեց Անդրեասի 200-ամյա Ջատկացուցակը, նիսան 4 = մարտ 25 լրման տարին էր, և արդեն Հայոց 1 թվականը զուգադրվեց ներկա 552/553 թվականին, որը հանդիսացավ Էասյան ՇԼԲ- ի (532-ամյակի) և հայոց թվականության սկիզբը. այն նիսան 23 = ապրիլի 23 լրման տարին էր: Հենց այդ տարում Լուսնի լրումը հայոց տոմարով համընկել էր Մարերի 7-ին (ապրիլի 13), իսկ Ջատկի օրը Մարերի 14-ն էր (ապրիլի 20):

### Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը՝ արձանագրենք՝ ներկա 552/553 թվականը հայոց թվականության համակարգի սկիզբը հանդիսացավ, որի մասին իր

<sup>46</sup> Տե՛ս ՄՄ Հ<sup>46</sup> 5809, թ. 79 ա, հմմտ՝ ՄՄ Հ<sup>46</sup> 8716, թ. 22 բ:

<sup>47</sup> Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ.), էջ 117-118:

մեկնության մեջ խոսել է Հովհաննես Կոզերնը: Մեկնության մեջ դրանք զուգադրված են դինաստիական տարբեր թվականների, որոնցում առաջարկել ենք որոշակի փոփոխություններ, որպեսզի ճշգրիտ կերպով հայոց 1 թվականը համապատասխանի հուլյան տոմարի 552/553 թվականին: «Զի՛նչ է թուականը» տոմարական միավորում բերված բոլոր թվականները ևս մեկ անգամ ճշգրտելուն նպաստել են ՄՄ Հ<sup>Կ</sup> 5809 և 8716 ձեռագրերը, որոնց ուսումնասիրողները չեն անդրադարձել: Հուսով ենք նաև, որ մեր կողմից առաջ քաշված հայոց տոմարի «անշարժականության» գաղափարը թույլ է տալիս նոր դիտանկյունից նայել հայոց տոմարագիտական տարբեր հարցերի:

Гор Галстян

**Оригинал Ованнеса Козерна "Толкование календаря"  
(проблема "Что такое год?")**

**Заключение**

**Ключевые слова и выражения:** Ованес Козерн Таронечи, календарь, толкование, "Толкование календаря", Анания Ширакаци, рукопись, оригинал, мобильный календарь, стационарный календарь.

Подводя итоги работы, мы хотели бы отметить, что, следуя нашей цели, в этой статье мы представили рукописное наследие известного календариста 10-11 веков Йованнеса Козерна Таронечи, наследие которого сохранилось в рукописях Матенадарана Маштоца. Мы уже заявляли, что "Толкование календаря" включено в одиннадцать рукописей Матенадарана. Йованнес Козерн также является автором других работ: сочинения "Тесил", "История дома Багратуни", речей, проповедей и других интерпретаций.

В статье мы затронули вопрос "Что такое год?" согласно работе Йованнеса Козерна "Толкование календаря". Для изучения вопроса мы использовали как уже опубликованные оригиналы, так и две новые рукописи, которые не использовались при подготовке экзаменационных и сравнительных оригиналов. Еще раз, эти рукописи Матенадарана № 5809 и № 8716, на которые исследователи не ссылались, способствовали прояснению всех цифр, приведенных в календарном сборнике "Что такое год?".

В статье также обсуждается идея начала первого года в Армении. Ованнес Козерн показал соответствие этого года 552/553 году по юлианскому календарю, сравнив 1 Навасард с различными периодами правления царей и католикосов армян.

Мы также надеемся, что выдвинутая нами идея "неподвижности" армянского календаря позволит взглянуть на различные вопросы армянского календаря под новым углом.

В ходе изучения темы мы применили новейший календарный метод, а также использовали историко-аналитические, историко-сравнительные и аналитические методы.

Gor Galstyan

**The original of the "Interpretation of the calendar" by Yovhannēs Kozern  
(the problem of "What is the year?")**

**Conclusion**

**Key words and expressions:** Yovhannēs Kozern Taronets'i, Calendar, "Interpretation of the Calendar", Anania Shirakats'i, manuscript, original, Moveable Calendar, Fixed Calendar.

To conclude, we would like to note that, following our goal, in this article we presented the handwritten legacy of the famous calendar expert of the 10th-11th centuries Yovhannēs Kozern Taronets'i, whose legacy has been preserved in the manuscripts of the Mashtots Matenadaran. We have stated that the author's "Interpretation of the Calendar" is included in eleven manuscripts of the Matenadaran. Yovhannēs Kozern is also the author of other works: the work "Tesil", "The history of the House of Bagratuni", speeches, sermons and other interpretations.

In the article we touched on the question "What is the year?" according to the work of Yovhannēs Kozern "Interpretation of the calendar". To study the issue, we used both the already published originals and two new manuscripts that were not used in the preparation of examination and comparative originals. Once again, these manuscripts of the Matenadaran No. 5809 and No. 8716, which the researchers did not refer to, contributed to the clarification of all the figures given in the calendarial entity of "What is the year".

The article also discusses the idea of the beginning of the Armenian first year. Yovhannēs Kozern showed the correspondence of this year to 552/553 of the Julian calendar, comparing 1 Navasard with various periods of the reign of the kings and Catholicoses of Armenians.

We also hope that the idea of the "immobility" of the Armenian calendar put forward by us will allow to look at various issues of the Armenian calendar from a new angle.

During the research of the topic, we adopted a new calendar method, and also used historical-analytic, historical-comparative and analytic methods.

### Օգտագործված գրականություն

#### ա) Սկզբնաղբյուրներ

1. ՄՄ ձեռ. Հ<sup>մ</sup> **5809**, թ. 78ա – 80բ, ԺԶ., ԺԷ. դդ., գրիչ՝ Պետրոս (ԺԷ. դ.), թերթ՝ 256, տող՝ 32, 20, 25, 38:
2. ՄՄ ձեռ. Հ<sup>մ</sup> **8716**, թ. 21ա – 24բ, ԺԷ. դար, գրիչ՝ Աստուածատուր Հալաթճի, թերթ՝ 129, տող՝ 24:
3. Մատթեոս Ոռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, «Հայաստան» հրատ., 1973, 376 էջ:
4. «Մատենագիրք Հայոց», ԺԱ. դար., հտ, ԺԶ., Երևան, «Նաիրի» հրատ., 2012, 1122 էջ:
5. Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, 438 էջ:
6. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ., Երևան, 1970, 1546 էջ:

#### բ) Ուսումնասիրություններ

7. «Ամենայն հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Ս. Էջմիածին, 2008, 256 էջ:
8. Բաղայան Հ., Օրացույցի պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 562 էջ:
9. Գալստյան Գ., Հովհաննես Կոզեռը և նրա «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը, ՇՊՀ Գիտական տեղեկագիր, 2020, N 1, Պրակ Բ., էջ 77-94:
10. Գալստյան Գ., Հովհաննես Սարկավազի «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» երկը, Բանբեր Մատենադարանի, 33, Երևան, 2022, 425-445 էջեր:
11. Էյնաթյան Ջ., «Պատճեն տոմարի հայոց մեծացը» և նրա մի քանի մեկնությունները.-Լրաբեր/ Ե., 1976, էջ 77-88:
12. Էյնաթյան Ջ., Տիեզերագիտության և տոմարի մեկնություններ, Երևան, «Նաիրի» հրատ., 2015, 413 էջ:
13. Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ., Երևան, 1984, 768 էջ:
14. Հայկական սովետական հանրագիտարան, հտ. ԺԱ., Երևան, 1985, 719 էջ:
15. Սիմոնյան Գ., Վարդանյան Ռ., Հովհաննես Սարկավազի տոմարական ժառանգության մեջ առկա թվականության

- համակարգերը, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Երևան, 2013, էջ 48-65 էջեր:
16. Սարգսյան Լ., Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը (4-8-րդ դդ.), Երևան, 2010, 300 էջ:
  17. Վարդանյան Ռ., Կարախանյան Գ., Անանիա Շիրակացին և նրա «Քննիկոնը», Աճեմյան մատենաշար, հ. Ա., Երևան, 2002, 37-117 էջեր:
  18. Վարդանյան Ռ., Հայոց տոմարական եղանակը. թարգմանական բնագրերի ժամանակը, Երևան, 1993, 84 էջ:
  19. Վարդանյան Ռ., Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, 1999, 647 էջ:
  20. Քիւրտեան Յ., Յովհաննէս վարդապետ Կոզեռն.-Հանդէս ամսօրեայ, Վիեննա- Միխիթարեան տպարան, 1967/Ա, էջ 1-15:
  21. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Ս. Էջմիածին, 1994, 1200 էջ:
  22. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 1870 էջ:

***Խմբագրություն է ուղարկվել 12.11.2022թ.***

***Հանձնարարվել է գրախոսության 28.11.2022թ.***

***Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.***

**ՄՇԱԿՈՒՅԹ**

**ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ  
Կերպարվեստի ամբիոնի հայցորդ  
Էլհասուղե՝ [avetisyan.gagik.93@mail.ru](mailto:avetisyan.gagik.93@mail.ru)

**ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ՏԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ**

**Ամփոփում**

Յուրաքանչյուր հայի պարտքն է ուխտագնացություն կատարելու մեր պատմական հայրենիք՝ ներառյալ Տայոց աշխարհի (իմա՝ ներկայիս Թուրքիայի Հանրապետության հյուսիս-արևելյան նահանգներ): Ու եթե հիմնականում թրքաբնակ Արդվին և Օլթի քաղաքներից հայկական պատմամշակութային շերտը գրեթե իսպառ վերացել է, ապա այլ է դրությունն անտառածածկ Թորթումի կիրճում, ուր վեր են հառնում Օշկվանքի Ս. Հովհաննես Մկրտիչ, Խախուի և Իշխանի Ս. Աստվածածին եկեղեցիները:

Միջնադարյան այս վանական համալիրների պատերը դեռ պահպանել են Մամիկոնյան և Բագրատունի իշխանների շունչն ու ոգին, առաքելական և քաղկեդոնական կղերականների պայքարն ու անցյալի և ներկայի համադրումը: Ու թեև քաղաքական որոշակի նկատառումներից ելնելով Տայքն ընկալվում է իբրև վրացական պատմական տարածք (Տառ), այնուամենայնիվ այստեղի հայկական շերտն անուրանալի է և մնայուն:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Արևմտյան Հայաստան, Տայք, Թորթումի կիրճ, Իշխան, Օշկվանք, քաղկեդոնականներ, վրացական նկրտումներ:

**Ներածություն**

Ինչպես յուրաքանչյուր հրեա պետք է իր կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ այցելի Երուսաղեմ, յուրաքանչյուր մահմեդական՝ Մեքքա, այնպես էլ ամեն հայ պարտավոր է լինել Արևմտյան Հայաստանում՝ տեսնել, արժևորել ու գնահատել այն ամենը, ինչ ունեցել ենք և կորցրել, ինչ արարել ենք և ի հեճուկս ճակատագրի՝ անհատույց թողել օտարին ու հեռացել:

Հայ ժողովուրդը երբեմնի բովանդակ Հայաստանի միայն մեկ տասներորդ մասի վրա է շարունակում ապրել և արարել՝ սահմանափակվելով միայն Հայաստանի, Արցախի ու Վրաստանի Հանրապետությունների սահմաններում, իսկ Հայկական լեռնաշխարհի մնացյալ

հատվածներում հայերի երբեմնի գոյության լուռ վկաներն են միայն կիսավեր պատմամշակութային կոթողներն ու խոնարհված օջախները:

Այդ համատեքստում առաջնային ենք համարում իբրև գիտական նորույթ՝ հայրենաճանաչությանն ու հայրենասիրությանը միտված պատմամշակութային կոթողների մասնագիտական ներկայացման ուխտագնացություններն ու պլեներային պատկերագրությունները, որոնց շնորհիվ էապես կզարգանա հայորդիների շրջանում գեղարվեստական ընկալունակության ձևավորումն ու հայրենատիրության վեհ առաքինությունը՝ ինչն ունի նաև ռազմավարական նշանակություն:

Արևմտյան Հայաստանի մի չնաշխարհիկ և դեռ ոչ լիարժեք ուսումնասիրված վայր է պատմական Հայաստանի Տայք աշխարհը (Խորագույն Հայք)<sup>1</sup>: Հողվածի խնդիրը հայրենաճանաչ և հայրենատեր գիտակից քաղաքացու ձևավորումն է, իսկ նպատակը՝ Արևմտյան Հայաստանի առավել հեռավոր շրջաններ ուխտագնացությունների կատարումը, որով էապես կկանխվեն նաև հարևան ժողովուրդների կողմից տվյալ կոթողների նկատմամբ սին հավակնությունները:

### **Մեթոդաբանություն**

Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս առկա են հայոց հնամենի մի շարք կոթողային շինություններ, որոնց պատշաճ ներկայացումը դաստիարակչական և զարգացնող առաջնահերթ արժեքներից զատ կձևավորի նաև հայրենիքի հանդեպ ճանաչողության մակարդակ ու կամրապնդի կոթողների պահպանության հիմնախնդիրը: Այդ ամենի կիրառումը պետք է իրականացվի ուխտագնացությունների գործընթացում առաջնային խնդիրների լուծման, ստուգման և հաստատման նպատակով գործածվող՝ տեսական, փորձարարական, հետազոտական մեթոդների ներգրավմամբ:

Թեմայի արդիականությունը գալիս է աշխարհով մեկ սփռված մեր հայրենակիցների կողմից մեկ ընդհանուր նպատակի շուրջ համախմբմամբ, այն է՝ պահանջատեր լինել կորուսյալ հայրենիքին և հնարավորության դեպքում այցելելու և տեղում ուսումնասիրելու երբեմնի անձեռակերտ կոթողների բեկորները:

\*\*\*

Զբոսաշրջային ուղևորությունն Արևմտյան Հայաստան ինքնին կարելի է համարել սրբազան մի ուխտագնացություն՝ մեր պապերի վաղեմի

---

<sup>1</sup> Տայք աշխարհը համընկնում է ներկայիս Թուրքիայի Հանրապետության հյուսիս-արևելյան նահանգներին:

երազանքի մասնակի կատարում, երգրից մի բուռ հող ու ջուր բերելով նրանց շիրիմներին ամփոփում՝ փոքրիկ դարման մեծ ցավին: Շատ տարագիր հայերի սերունդներ, հատկապես վերջին աղետալի պատերազմից հետո, օր առաջ ցանկանում են տեսնել երբեմնի կորուսյալ հայրենիքը, որի մի զգալի հատվածն այսօր գտնվում է Թուրքիայի Հանրապետության օկուպացիայի տակ:

Քաղաքական նկատառումներով հայ-թուրքական սահմանի փակ լինելու պատճառով՝ դեպի Տայոց աշխարհ ուխտագնացությունը՝ Մարգարայով կամ Գյումրիով անցնելու փոխարեն, հատում է հայ-վրացական անցակետն ու մտնում Ջավախքի տարածաշրջան: Անցնելով հայաբնակ շեների միջով ու հատելով վերջին բնակավայրը՝ մոտենում ենք վրաց-թուրքական սահմանային պետական Վալե անցակետին, որն այն կողմից կապվում է Թյուրքգյոզու ավանի հետ<sup>2</sup>: Այստեղից ոլորապտույտ ճանապարհը մեզ տանում է դեպի կորուսյալ հայրենիքի 14-րդ աշխարհը:

Տայքը նախկին տայոխների երկիրը, հնուց ի վեր բնակեցված է եղել հայալեզու էթնիկական խմբերով և մշտապես եղել է հայկական պետականության մի մասնիկը<sup>3</sup>: Այն հիշատակվում էր դեռևս ասորեստանյան սեպագիր արձանագրություններում, իսկ արդեն որպես ձևավորված մեկ միասնական հայկական վարչական միավոր՝ 7-րդ դարում այն ընդգրկվել էր Ա. Շիրակացու «Աշխարհացույցում»: Այդ ժամանակաշրջանում Տայքը դեռևս պատկանում էր Մամիկոնյան իշխաններին, սակայն Հայոց մեծ ապստամբության պարտությունից հետո (774-775 թթ.) սպարապետական տան ներկայացուցիչներին այս տարածքներում փոխարինելու էին եկել Բագրատունիները, որոնց կառավարման շրջանում էլ բուռն վերելք էր ապրել եկեղեցաշինարարությունն ու մշակույթը:

Տայոց աշխարհի ոչ պաշտոնական կենտրոնը կարելի է համարել Արդվին քաղաքը, որի անկրկնելի բնությունն անտառապատ է և ամբողջապես թաղված է կանաչի մեջ: Երբ վերջանում է այդքան երկար ճանապարհն ուղեկցող կիրճը, հեռվում երևում է լեռան ստորոտում՝ փռված քաղաքը, որը ճորտի գետի ափով ձգվում է ավելի քան 5 կմ: Այստեղի տները դրսից և ներսից սպիտակ են, կղմինդրածածկ: Արդվինում չկան հարթ ճանապարհներ՝ բոլորը կամ բարձրանում են, կամ էլ իջնում: Երբ մոտենում ես քաղաքին, ճանապարհը սկսում է պտտվել: Այն նախ շրջապտույտներով

<sup>2</sup> Արևմտյան Հայաստան կարելի է մուտք գործել նաև Կարծախ-Աքթաշ անցակետով՝ համապատասխան հակահամաճարակային կանոնների պահպանման պայմանով:

<sup>3</sup> Арутюнян Б., К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII-IV вв. до н.э., ՊԲՀ, 1998, 1-2, էջ 233-246:

իջնում է ներքև, ապա մոտենում է լեռանը: 25 000-ից ավել բնակչությամբ քաղաքում ապրում են հիմնականում թուրքեր, կան նաև լազեր և նախկին ԽՍՀՄ-ից գաղթած աղբբեջանցիներ: Ընդգծենք, որ տեղացիներից շատերը բռնի իսլամ ընդունած հայեր են, որոնք իրենց նիստ ու կացում դեռևս պահպանել են որոշակի հայկական տարրեր:

Ներկայիս քաղաքը ոչ մի աղերս չունի հին հայկական Արդվինի հետ: 9-11-րդ դարերում այն իր արվարձաններով հանդերձ մտնում էր Կղարջքի Բագրատունյաց իշխանության կազմում, իսկ 11-րդ դարից՝ վրաց Բագրատունիների տիրապետության մասն էր: Այս ժամանակաշրջանից՝ Ճորոխ գետի ափին պահպանվել են հին կամուրջն ու Թամար թագուհուն վերագրվող միջնադարյան բերդի ավերակները<sup>4</sup>: Ջաքարյանների իշխանապետությունից հետո Արդվինը գրավել և ավերել էին մոնղոլ-թաթարները, իսկ 1555 թվականից այն անցել էր Օսմանյան կայսրության կազմի մեջ: 1878 թվականի Բեդլինի դաշնագրով այս տարածքները միացվել էին Ռուսական կայսրությանը՝ Բաթումի մարզի կազմում:

Քաղաքը 20-րդ դարի սկզբին ուներ շուրջ 8000 բնակիչ, որից մոտ 6000-ը՝ հայեր էին, որոնք հիմնականում զբաղվում էին գյուղատնտեսությամբ: Քաղաքի ներքին առևտուրը մանրածախ էր և կենտրոնացած միակ շուկա-հրապարակում, որտեղ կային մի քանի տասնյակ կրպակներ ու արհեստանոցներ: Արդվինում գործում էին 5 եկեղեցիներ, որոնց կից կային դպրոցներ, բացի այդ քաղաքում գործում էր նաև մի վարժարան՝ շուրջ 100 սաներով: Ցավոք, առաջին աշխարհամարտի սկզբին թուրքական զինուժը գրավել և ոչնչացրել էր տեղի ողջ բնակչությանը: Ավելի ուշ ռուսական զորքերն ազատագրել էին Արդվինն ու ընթացել առաջ, սակայն բոլշևիկյան հեղաշրջումից հետո այն անցել էր վրաց մենշևիկներին, իսկ 1921 թվականի Մոսկվայի, ապա նաև Կարսի անօրինական պայմանագրերով ի վերջո կցվել էր Քեմալական Թուրքիային:

Արդվինից հարավ կա մի հրաշագեղ պատմամշակութային հուշարձան, որտեղ Արշակունիների հարստության շրջանում տեղակայված էր արքունի գորաբանակը: Անգամ ավերված վիճակով առանձնահատուկ շքեղություն ունի Բանակի տաճարը, որն ըստ Հակոբ Կարնեցու՝ 7-րդ դարի կառույց է. «Եւ կայ ի մէջ ձորոյն մեծամեծ վանորայք, որ յար եւ նման թէ լինի միայն սուրբ Սոփի ի Կոստանդինուպոլիս»<sup>5</sup>: Ներսէս Գ Տայեցի կաթողիկոսի օրոք կառուցված սույն տաճարը զվարթնոցատիպ էր, որը վերանորոգվել էր

---

<sup>4</sup> Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., 1987, էջ 58:

<sup>5</sup> Կարնեցի Յ., Տեղագիր Վերին հայոց, յիշատակարան ԺԷ դարու, խմբ. Կոստանեանց Կ., Վաղարշապատ, 1903, էջ 17:

9-րդ դարում Կյուրիկե Բանակցու կողմից: Երբեմնի եռահարկ՝ դեպի վեր աստիճանաբար պակասող տրամագծերով եռագլան ծավալներով կառուցված կենտրոնագմբեթ հորինվածքով սույն վանքի նկատմամբ ժամանակն ու պատերազմներն անողորք էին գտնվել և այսօր այն կանգնած է վերացման եզրին:

Բանակի տաճարի ավերակների մոտով է հոսում Ճորոխի վտակ Օլթի գետը, որն անցնում է նաև համանուն քաղաքի մեջով: Երբեմնի հայաբնակ Ողթիքը (Ուխտյաց քաղաք) Տայքի Բագրատունյաց կյուրապաղատության կենտրոնն էր: Տարաբնույթ ասպատակությունների ու պատերազմների արդյունքում այն մերթ ամայանում էր, մերթ շենանում: 20-րդ դարասկզբին, երբ ներառված էր Ռուսական կայսրության կազմում՝ տեղի բնակչությունն անցնում էր 3 000-ը: Այս շրջանում քաղաքը բարեկարգվել էր և ընդարձակվել, տեղական հոգևոր շինություններից գատ կառուցվել էր նաև ռուս ուղղափառ եկեղեցին, որը կանգուն է առ այսօր:

Օլթին իրոք որ հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով: Այստեղ են գտնվում դեռևս Բագրատունիների շրջանում կառուցված հանրահայտ միջնաբերդը, Ս. Տիրամոր եկեղեցու մնացորդները, ինչպես նաև միջնադարյան միաթոռիչք կամուրջն ու մի քանի վանական համալիրների ավերակներ: Ընդգծենք, որ բացի թուրքական գործոնից, Արդվինի, Արդահանի, այնպես էլ Օլթիի կոթողային հուշարձանների ու ընդհանուր տարածքների պատկանելիության հարցը հատկապես 1918 թվականի Անդրկովկասյան հանրապետությունների անկախացումից հետո առավել ակտիվորեն վիճարկման առարկա էր հանդիսացել նաև հայերի ու վրացիների կողմից:

Ուղևորվելով արևմուտք՝ մեր առջև է բացվում Թորթումի կիրճի աննկարագրելի տեսարանը, որտեղ գտնվում է Տայոց աշխարհի «Սուրբ Երրորդությունը»: Վանական համալիրներից առաջինը գտնվում է Բաղբաշը գյուղի մոտ: Այն 868 թվականին կառուցված՝ խաչաձև հիմքով և կենտրոնագմբեթ կառուցվածքով Խախուի Սուրբ Մարիամ Աստվածածինն է, որը հայ ճարտարապետության դասական նմուշներից է: Ընդհանրապես ճարտարապետական ձևի պարզության և հատակագծային անպաճույճ կազմության շնորհիվ այն անմիջական տպավորություն է թողնում: Եկեղեցու մուտքի մոտ կերտված է Սուրբ Գրիգոր Լուսավորչի քանդակը՝ «Գ» տառի հետ, իսկ հարավային բաց սյունասրահի ճակատի պատին՝ Աստվածամոր քանդակը մինչև ծնկները՝ մանուկը ձեռքերի վրա, նրա երկու կողմերում հրեշտակներն են իրենց ողջ հասակով: Այս քանդակի վերաբերյալ, 1916 թվականին, մի ականատես ռուս սպա նշում էր հետևյալը. «...Աստվածամոր այդ պատկերը շատ հարգի էր տեղի թրքուհիների մոտ, նրան պաշտում էին, չբերության և այլ դժբախտ դեպքերի ժամանակ գալիս,

նրանից օգնություն էին հայցում, զոհ մատուցում և այլն»<sup>6</sup>: 17-րդ դարի կղերական աշխարհագրագետ Հակոբ Կարնեցին իր աշխատություններից մեկում նշում էր, որ Խախուի բնակչության մի մասը հայեր էին, մյուսը՝ վրացիներ, որոնք ևս հայի լեզվով կխոսեին:

Ճանապարհը ձգվում է երկար, խորը ձորի միջով, սակայն չի ձանձրացնում: Անընդհատ փոփոխվող բնապատկերները լողում են մեր աչքերի առջև: Մոտենում ենք Չամլըյամաչ (Աշունք) գյուղին, որի հարևանությամբ է գտնվում Օշկվանքը. «Վանքը Օշկին է պատկանում. գեղից երկու կիլոմետր հեռու է և իր ճարտարապետությամբ առաջին տեղն է բռնում ամբողջ Տայոց աշխարհում, որը յոթ հրաշալիքներից մեկն է և ամենանշանավորը»<sup>7</sup>: Այն կառուցվել էր գետի ձախ ափին, հարթեցված բարձրադիր վայրում, որտեղից գեղեցիկ տեսարան է բացվում դեպի հարակից հովտի համայնապատկերը:

9-րդ դարի կեսերին թվագրվող այս կառույցը սկզբնական շրջանում հայ առաքելական դավանանքի աղոթատեղի էր: Հարակից Կղարջքի քաղկեդոն հոգևորականների և իշխանականների ճնշումները բարդ կացություն էին առաջացրել տեղի ոչ դավանակիցների հանդեպ: Այդ ժամանակներից էլ սկսվել էր վանքի քաղկեդոնացման գործընթացը<sup>8</sup>: Լինելով տարածաշրջանի ամենամեծ խաչածև գմբեթավոր եկեղեցին՝ այն Տայքի հայ քաղկեդոնական համայնքի գլխավոր կենտրոնն էր դարձել, որտեղ ծիսական արարողություններն ըստ Պետրիցիոնի կանոնագրքի կատարվում էին հիմնականում վրացերեն<sup>9</sup>. «Քանի որ հայ քաղկեդոնական համայնքի եկեղեցիներում, իր ժամանակի սահմանված կանոնով, արարողությունը կատարվում էր վրացերեն, դրանից ելնելով էլ այդ նույն եկեղեցիների պատերին գրանցվող արձանագրությունները կատարվում էին վրացերենով»<sup>10</sup>: Հետայսու վրացականացվելու էին ոչ միայն տեղի կոթողային հուշարձաններն ու բնակավայրերը, այլև հենց բուն երկրամասը՝

---

<sup>6</sup> Եղիազարյան Ա., Հայ բագրատունիների տերությունը (885-908 թթ.):

Պատմաաշխարհագրական ուսումնասիրություն, Ե., 2011 էջ 111-112:

<sup>7</sup> Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, էջ 171:

<sup>8</sup> Арутюнова-Фиданян В., Повествование о делах армянских (VII век) Источник и время, Москва, 2004, с. 183:

<sup>9</sup> Մարության Տ., Հայ դասական ճարտարապետության ակունքներում, Ե., 2003, էջ 244-245:

<sup>10</sup> Ակոպով Ա., Տայքյան հուշարձանների «պատկանելության» հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, հ. 17, 2014, Ե., էջ 74:

ստանալով Տառ անվանումը<sup>11</sup>: Ուստի պատահական չէր, որ երկրորդ աշխարհամարտի ավարտի մոտալուտին, երբ հարց էր բարձրացվել Թուրքիայի արևելյան հողերի նկատմամբ ԽՍՀՄ հավակնությունների վերաբերյալ, ընդարձակ մի գեկույցով վրացական ղեկավարությունը ներկայացրել էր վերոնշյալ կոթողային հուշարձանների նկատմամբ իր «պատմական» հավակնությունները. «Բնութագրական է, որ «յուրահատուկ վրացական ճարտարապետության փայլուն հուշարձանների» շարքում հիշատակվում էին (վրացական տառադարձությամբ) 12 հոգևոր կառույցներ, որոնցից 5-ը Տայքում էին (Բանակ, Խախու, Օշկ, Իշխան, Փանասկերտ), Շատբերդն էլ հայկական եկեղեցիներ ունեցող ամրոց-բնակավայր էր Կղարջքում<sup>12</sup>:

Օշկվանքի համալիրն ընդգրկում էր եկեղեցին, սեղանատունը և մատենագրության վայրը: Գլխավոր եկեղեցին (Ս. Հովհաննես Մկրտիչ) կառուցվել էր 963-973 թվականներին իշխանաց իշխան Բագրատի և Մեծ կյուրապաղատ Դավթի կողմից՝ Գրիգոր Օշկեցու ղեկավարությամբ: Շինության բաց սյունասրահի վերջին սյան ութ քանդակազարդ նիստերից մեկի վրա, ծնկաչոք աղոթող ճարտարապետի քանդակի մոտ կարմիր ներկով մակագրված է՝ «Քրիստոս օգնիր քո ձորտ Գրիգորին»: Տաճարի պատերը դրսից երեսպատած են դեղնակարմիր գույնի սրբատաշ քարով, կանոնավոր շարքերով, ներսից՝ համեմատաբար փոքրաչափ քարերով ու շաղախի լայն կարերով: Օշկվանքը հարուստ է նաև զարդաքանդակներով: 40 մ բարձրությամբ շինությունն աչքի է ընկնում իր վեհությամբ և սլացիկությամբ: Վանական համալիրն իր ծիսակարգային նշանակությունը պահպանել էր մինչև 15-րդ դարի վերջը:

Մենք գնում ենք Թորթումի անտառածածկ ձորահովտի նեղ ճանապարհով, որին կից ցուցանակները հուշում են հարակից հարուստ պատմական հուշարձանների առկայության մասին: Անցնում ենք Իշխանանիստի ձորով, ուր գտնվում էր Մամիկոնյանների երբեմնի ավանը: Մոտենում ենք Իշխանի Սուրբ Աստվածածին եկեղեցուն, որը հառնում է մեր դիմաց իր ողջ վեհությամբ, կատարելությամբ և նրբագեղությամբ:

Իշխանի Ս. Աստվածածինը կառուցվել էր 7-րդ դարում Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի կողմից: Արաբական արշավանքների պատճառով

---

<sup>11</sup> Տե՛ս, Նազարյան Լ., «Տայք» անվանումն ըստ բյուզանդական աղբյուրների, Պատմական Տայք. պատմություն, մշակույթ, դավանանք: Հոդվածների ժողովածու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2019, էջ 120 – 131:

<sup>12</sup> Մարության Հ., Տայքի ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը եվ խորհրդային գրաքննությունը, Բանբեր Մատենադարանի, №23, Ե., 2016, էջ 119:

ավերված եկեղեցին վերականգնվել էր 9-րդ դարում Սաբան Իշխանցու կողմից և վերածվել քաղկեդոնական ծեսով: Մի հետաքրքիր պատմություն կա այդ դեպքերի մասին, ըստ որի Իշխանի լքված վանքը Կղարջքի կյուրապաղատության քաղկեդոն հոգևոր առաջնորդ Գրիգոր Խանձթեցին ու նրա մորաքրոջ որդի Սաբանը (Սավվա) տեսել էին Կոստանդնուպոլսից վերադարձի ճանապարհին՝ 826 թվականին: Կղարջքի Խանձթա մայրավանք այցից հետո Գրիգորը մնացել էր այնտեղ, իսկ Սաբան վերադարձել էր Իշխան: Շուտով Գրիգոր Խանձթեցին պատմել էր Սաբանի մասին Կղարջքի Բագրատ կյուրապաղատին, ով վերջինիս հրավիրել էր իր մոտ, սակայն Սաբանը մերժել էր այդ հրավերը, քանի որ Տայքը Հայ Բագրատունիների տիրույթում էր գտնվում: Բայց երբ նա հրավեր էր ստացել արդեն Գրիգորի կողմից, հոժարակամ համաձայնել էր, որովհետև քաղկեդոնական էր և ընդունում էր նրա հոգևոր իշխանությունը: Այդ դեպքերից հետո Իշխանի վերականգնված եկեղեցի էին այցելել Գրիգոր Խանձթեցին և Կղարջքի Բագրատ կյուրապաղատը: Ավելի ուշ Սաբանը դարձել էր Իշխանի եպիսկոպոս: Որոշ վրացի ուսումնասիրողների կարծիքով սկզբնական շրջանում այդ շինությունը եղել էր զվարթոցատիպ և հետագա վերականգման ժամանակ նոր դարձել խաչաձև հիմքով կառույց<sup>13</sup>:

Այդ վարկածը, սակայն վերջին ժամանակաշրջանի ուսումնասիրությունների արդյունքում հիմնովին հերքվել է: Վերանորոգված եկեղեցու արձանագրությունները վրացատառ են, որոնց կողքին մենք հանդիպում ենք նաև հայատառ թվագրումներ, որոնք վկայում են գյուղի բնակչության հայկական լինելու մասին: Եկեղեցին զարդարող գայլերի, արծիվների և վայրի խոզերի քանդակները բարձր արվեստի մարմնացում են: Առանձնակի ուշադրության է արժանի կոթողի լուսամուտների շրջանակներին, կամարաղեղներին, քիվերին, պուներին և որմնասյուների խոյակներին կերտված գալարաձև երկտեսակ ականթների կազմությունը<sup>14</sup>: Վերջինս Ն. Տոկարսկին անվանում էր կիսագլանաձև ակոսների շարք, որոնց ստորին հատվածները նման են պտերանման տերևների<sup>15</sup>:

<sup>13</sup> Տե՛ս, Амиранашвили Ш., История грузинского искусства, Москва, 1963.

<sup>14</sup> Մարյան Ա., Արևավեճու և ականթի զարդաքանդակները Տայքի հուշարձաններում և դրանց վաղմիջնադարյան և համաժամանակյա զուգահեռները, Բանբեր Մատենադարանի, №24, Ե., 2017, էջ 51:

<sup>15</sup> Токарский Н., Из истории средневекового строительства в Тайкском княжестве, Е., 1988, с. 20.

Եկեղեցին ներսից ևս տպավորիչ տեսք ունի: Պատերին պահպանվել են հին որմնանարների որոշ հատվածներ, իսկ այն ինչ պահպանվել է վերևում, կատարելության կենդանի վկան է. «...արևելյան խորանի գմբեթարդ ծածկի ձախակողմում եղած մեդալիոններից մեկի վրա ...Տրդատ թագավորի կնոջ Աշխավնարի (Աշխենի) պատկերն է դրոշմված, ուր առկա են նաև հայկական գրերի դրվագներ, մեդալիոններից մյուսի վրա, ...Վրաստանում Ս. Նունեից առաջին քրիստոնեություն ընդունող Նանայի (Միհրան թագավորի կնոջ) պատկերն է, վրացերեն գրերի մնացորդներով...»<sup>16</sup>:

Ս. Աստվածածինը մի ժամանակ անգամ վերածել էին մզկիթի, սակայն վերջերս այն վերանորոգվել է, ամրացվել են գմբեթն ու պատերի մի մասը և այժմ գործածվում է որպես վրացադավան եկեղեցի:

Թորթումի հովտի այս վանական համալիրները կոմպոզիցիոն հորինվածքով ունեն մի շարք ընդհանրություններ, որոնք լրացնելով մեկը մյուսին կազմում են Տայքի միջնադարյան ճարտարապետական դպրոցի ամբողջական պատկերը: Հարկ է ավելացնենք, որ այս եկեղեցիները, համաձայն թուրք-վրացական 2012 թվականի մշակութային ժառանգության վերականգնման վերաբերյալ միջպետական համաձայնագրի, ճանաչվել են վրացական և թուրքական իշխանությունների կողմից պարտավորություն է ձեռք բերվել վրաց մասնագետների հետ համատեղ վերականգնելու տվյալ վանական համալիրները: Փաստացի՝ բուն հայկական ճարտարապետական հուշարձանների պատմությունը խեղաթյուրվել է և այսուհետ ներկայացվելու է որպես հին վրացական ուղղափառ կառույցներ:

Թորթումի կիրճում բնության հրաշքն է համարվում համանուն ջրվեժն ու լիճը, որի հատակին դեռ պահպանվում են ավերակ ամրոցի հետքերը: Կիրճից վեր՝ տեղի ժայռոտ լեռներում վեր ծվարած են հայտնի տայքյան վիշապաքարերը, որոնց առկայությունը տվյալ շրջանում ևս մեկ ակնառու ապացույցն է հանդիսանում տեղում հայության, որպես բնիկ ժողովրդի մի քանի հազարամյա պատմության եղելության:

Հայկական Տայքից թերևս այսքանը ընդհանրական ուխտագնացության համատեքստում: Հեռանալով պատմական Տայքից հասկանում ենք, որ այն, ինչը տեսանք և զգացինք այս կարճ ուխտագնացության ընթացքում լոկ մի ակնթարթ է այն դարավոր կսկիծի, որ պահում է իր մեջ բռնակցված մեր մայր հայրենիքը: Վերադառնում ենք տուն՝ թողնելով օտարականին մեր մյուս տունը: Ահա այստեղ է իրեն զգացնել տալիս կորուսյալ հայրենիքի իրական արժեքը: Մեր կորուստն անգին է և անփոխարինելի, սակայն քանի

---

<sup>16</sup> Մարության Տ., Խորագույն Հայք, Ե., 1978 էջ 32:

դեռ ամուր է մեր հավատը, քանի դեռ հիշում ենք, որ այդ ամենը մերն է եղել, օտարներն էլ դա ի նկատի կառնեն այնքան ժամանակ, որքան մենք ինքներս չենք մոռանա:

### **Եզրակացություններ**

Այսպիսով, համապարփակ ուսումնասիրելով Տայոց աշխարհի կոթողների պատմական ընթացքն ու արդի վիճակը, հանգեցինք ներքոթվարկյալ եզրահանգումների

1. Թուրքիայի ներկայիս պատկան մարմինները համապատասխան մասնագետների ներգրավմամբ համագործակցելով իրենց վրացի գործընկերների հետ՝ վերականգնում են Տայքի հայկական կոթողային մի քանի նշանավոր հուշարձանները՝ քաղքեղոնական կանոնին համապատասխան:
2. Երբեմնի հայոց հուշարձանները ներկայացվում են իբրև վրացական ժառանգություն՝ վերականգնման քողի ներքո վերացնելով հայեցի իսկությունն ապացուցող արձանագրային հատվածները:
3. Որոշ կոթողները ենթարկվել են վանդալիզմի և պատշաճ ուշադրության չարժանանալու պարագայում տարիներ անց շատ այլ քարեղեն վկայությունների նման կանցնեն պատմության գիրկը:
4. Հայության մի ստվար հատվածի համար դեպի Արևմտյան Հայաստան ուխտագնացությունները սահմանափակվում են միայն կենտրոնական հատվածներ շրջայցով՝ հիմնականում աչքաթող անելով հայկական Տայքը:

Վերոնշյալից ելնելով գտնում ենք, որ հայրենաճանաչ և հայրենատեր քաղաքացու ձևավորման կարևորագույն պայմանը շարունակում է լինել կրթված, իր պատմությունն ու կրոնը իմացող և գնահատող անհատը, որի ձևավորման լավագույն միջոցներից մեկը դեպի պատմական հայրենիքի անգամ ամենահեռավոր և հիմնական երթուղիներից հեռու գտնվող հատվածներ ուխտագնացությունն ու ուսումնասիրությունն է: Ուստի կորուսյալ հայրենիքի հատկապես հեռավոր, քիչ լուսաբանվող և վիճարկելի հատվածների ուխտագնացության, հետազոտման և մշտական դիտարկման խնդիրն այժմեական է և պահանջում է կոնկրետ լուծումներ:

**Паломничество В Тайкский Ашхар<sup>24</sup>**

**Заключение**

**Ключевые слова и выражения:** Западная Армения, Тайк, Тортумское ущелье, Ишхан, Ошкский собор, халкидоны, грузинские притязания.

Таким образом, всесторонне изучив исторический процесс и современное состояние памятников Тайка, мы пришли к следующим выводам.

1. Нынешние компетентные органы Турции, сотрудничая со своими грузинскими коллегами с привлечением соответствующих специалистов, восстанавливают несколько известных армянских монументальных памятников Тайка в соответствии с Халкидонским канонном.
2. Под видом реставрации вырезая фрагменты надписей, подтверждающих армянскую подлинность, исконно армянские памятники преподносятся как грузинское наследие.
3. Некоторые памятники подверглись вандализму и в случае отсутствия должного внимания спустя годы от них даже и следа не останется.
4. Для значительной части армянства паломничества в Западную Армению ограничиваются лишь посещением центральных районов, в основном не обращая внимания на армянский Тайк.

Исходя из вышеизложенного, мы считаем, что важнейшим условием формирования гражданина-патриота продолжает оставаться образованная личность, знающая и ценящая свою историю и религию, одним из лучших способов которого является паломничество и изучение даже самых отдаленных от основных маршрутов мест исторической родины. Поэтому проблема паломничества, исследования и постоянного наблюдения за особо отдаленными, малоизвестными и спорными частями утраченной родины сейчас актуальна и требует конкретных решений.

---

<sup>24</sup> *Ашхар (мир, земля)- административно-территориальная единица Великой Армении.*

**Pilgrimage in Tayk Ashkharh<sup>25</sup>**

**Conclusion**

**Key words and expressions:** Western Armenia, Tao, Tortum Gorge, Oshki, Khakhuli Monastery, Ishkani, Chalcedonian clergy, Georgian claims.

Thus, having comprehensively studied the historical process and the current state of the monuments of the Tayk, we came to the following conclusions.

1. The current competent authorities of Turkey, cooperating with their Georgian colleagues with the involvement of relevant specialists, restore several famous Armenian monumental monuments of Tayk in accordance with the Chalcedonian Canon.
2. Under the guise of restoration, by cutting out fragments of inscriptions confirming Armenian authenticity, native Armenian monuments are presented as Georgian heritage.
3. Some monuments have been vandalized and in the absence of proper attention, years later they will not even leave a trace.
4. For a significant part of the Armenians, pilgrimages to Western Armenia are limited only to visiting the central districts, mostly ignoring the Armenian Tayk.

Proceeding from the above, we believe that the most important condition for the formation of a patriot citizen continues to be an educated person who knows and appreciates his history and religion, one of the best ways of which is pilgrimage and exploring even the most remote places of the historical homeland from the main routes. Therefore, the problem of pilgrimage, research and constant monitoring of particularly remote, little-known and disputed parts of the lost homeland is now relevant and requires concrete solutions.

**Օգտագործված գրականություն**

1. Ակոպով Ա., Տայքյան հուշարձանների «պատկանելության» հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, հ. 17, 2014, Ե., էջ 74:
2. Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, էջ 171:

---

<sup>25</sup> *Ashkharh (country) - Greater Armenia administrative-territorial unit*

3. Եղիազարյան Ա., Հայ բագրատունիների տերությունը (885-908 թթ.): Պատմաաշխարհագրական ուսումնասիրություն, Ե., 2011 էջ 111-112:
4. Կարնեցի Յ., Տեղագիր Վերին հայոց, յիշատակարան ԺԷ դարու, խմբ. Կոստանեանց Կ., Վաղարշապատ, 1903, էջ 17:
5. Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., 1987, էջ 58:
6. Մարության Հ., Տայքի ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը եվ խորհրդային գրաքննությունը, Բանբեր Մատենադարանի, № 23, Ե., 2016, էջ 119:
7. Մարության Ս., Խորագույն Հայք, Ե., 1978 էջ 32:
8. Մարության Ս., Հայ դասական ճարտարապետության ակունքներում, Ե., 2003, էջ 244-245:
9. Նազարյան Լ., «Տայք» անվանումն ըստ բյուզանդական աղբյուրների, Պատմական Տայք. պատմություն, մշակույթ, դավանանք: Հոդվածների ժողովածու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2019, էջ 120 – 131:
10. Մարյան Ա., Արմավենու և ականթի զարդաքանդակները Տայքի հուշարձաններում եվ դրանց վաղմիջնադարյան և համաժամանակյա զուգահեռները, Բանբեր Մատենադարանի, №24, Ե., 2017, էջ 51:
11. Амираншвили Ш., История грузинского искусства, Москва, 1963.
12. Арутюнова-Фиданян В., Повествование о делах армянских (VII век) Источник и время, Москва, 2004, с. 183:
13. Арутюнян Б., К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII-IV вв. до н.э., ՊԲՀ, 1998, 1-2, էջ 233-246:
14. Токарский Н., Из истории средневекового строительства в Тайкском княжестве, Е., 1988, с. 20.

***Խմբագրություն է ուղարկվել 23.06.2022թ.***

***Հանձնարարվել է գրախոսության 07.07.2022թ.***

***Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.***

---

---

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԻՐԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ  
Գեղարվեստական կրթության ֆակուլտետ  
Կերպարվեստի ամբիոնի դասախոս  
[72naira@gmail.com](mailto:72naira@gmail.com)

**ԱՆՀԱՏԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՏԵՂԾՍԳՈՐԾԱԿԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ՄԻՋՈՑՈՎ**

**Ամփոփում**

Համակարգչային գրաֆիկական ծրագրերի կիրառումն անհրաժեշտ է անհատի գեղարվեստական, գեղագիտական հետաքրքրությունների բարձրացման, հասարակության աշխարհայացքի ընկալման և արդյունավետ աշխատանքի գործունեության համար: Տեխնոլոգիայի զարգացումը ենթադրում է փոփոխություններ ոչ միայն մարդու կրթության բովանդակության մեջ, այլև ազդում է մտածողության վրա, ծառայում է որպես մտավոր և գեղագիտական ձևավորման արդյունավետ միջոց: Ժամանակակից տեխնոլոգիաները մեծացնում են անձի ստեղծագործական գործունեության՝ մասնավորապես հորինվածքների, տարածական պատկերացման, երևակայության, յուրօրինակության, ինքնուրույնության, մտածողության և ունակությունների զարգացման գործոնները:

Հողվածում արծարծվում է համակարգչային գրաֆիկական ծրագրերի գործնականորեն կիրառման և տիրապետման մի շարք խնդիրներ:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** գեղագիտական, հորինվածք, գրաֆիկական, համակարգչային տեխնոլոգիա, համակարգչային գրաֆիկա, գեղարվեստական, կրթություն, տեխնոլոգիաներ:

**Ներածություն**

Հասարակության առաջընթացի նոր շրջափուլում փոխվում են արդի համակարգերը, անձի ձևափոխման չափանիշները, բարոյականության նորմերը՝ պայմանավորված բազմաթիվ տարաբնույթ գործոններով: XX դարասկզբին հասարակական քաղաքական զարգացումները մտան առաջընթացի նոր շրջափուլ, համացանցը փոխեց աշխարհի, մարդու և բնության, անձնականի ու անանձնականի վերաբերյալ պատկերացումները, ընդլայնվեցին անհատի հետազոտությունների շրջանակները, թվայնացումը

անհատի առջև բացեց ստեղծագործական զարգացման լայն հնարավորություններ, որոնցից մեկն էլ գրաֆիկական ծրագրերի միջոցով այդ հնարավորությունները կյանքի կոչելն է:

Ժամանակակից աշխարհում փոփոխվում է նաև գեղարվեստական կրթության համակարգը, ինչը նորովի մոտեցումներ է առաջադրում անհատի գեղագիտական աշխարհայացքի ձևավորման գործընթացում:

Անհատի հետաքրքրությունների և ստեղծագործական հնարավորությունների զարգացումը գրաֆիկական ծրագրերի միջոցով հողվածի նպատական է՝

1. Խնդիրների լուծման համար կիրառել պահանջվող համակարգչային տեխնոլոգիաներ: Համակարգչային գրաֆիկական ներկայացնել որպես հնարավորություններ ընձեռող միջոց:
2. Դասավանդման գործընթացում համակարգչային գրաֆիկական ծրագրերի կիրառումը սովորողներին հնարավորություն է տալիս զարգացնել տարածական մտածողության շրջանակները:

### **Մեթոդաբանությունը**

Ուսումնասիրության ընթացքում կերտել են մի շարք մեթոդներ՝ վերացական, քննական, համեմատական: Գործնական փորձի վրա հիմնավորած մեթոդների կիրառման արդյունքում ներկայացնում են վերը նշված եզրակացությունը: Օգտվել են Հ. Մուկոյանի, Ա. Ջիլավյանի, Մ. Василев-ի, В. Давидов-ի ուսումնասիրություններից, որոնց ուսումնասիրությունների արդյունքները նույնպես փաստում են այս հողվածում ներկայացված խնդրի կարևորությունը:

\*\*\*

Հասարակական կյանքի զարգացման ժամանակակից պահանջները կարևորում են համակարգչային տեղեկատվական տեխնոլոգիաների և նոր ծրագրային միջոցների գիտելիքները: Դրանք էլ հանդիսանում են գեղարվեստական հետաքրքրությունների ձևավորման, մասնագիտական խնդիրների լուծման և ակտիվ ստեղծագործական մոտեցման նախապայման: Համակարգչային և հաղորդակցական տեխնոլոգիաների իմացությունը հնարավորություն է տալիս զարգացնել անձի ունակությունները և ստեղծագործական գործունեությունը:

Գեղարվեստական կրթության համակարգում արդիական վերափոխումները պահանջում են նորովի մոտեցումներ, որոնք զարգացնում են անհատի գեղագիտական աշխարհայացքի ձևավորումը:

Վերջինս անձի մոտ խթանում է հետաքրքրություն գեղարվեստական և գրաֆիկական առարկաների հանդեպ:

Համակարգչային գրաֆիկական ծրագրերի կիրառումն անհրաժեշտ է անհատի գեղագիտական հետաքրքրությունների, ստեղծագործական գործունեության, ինքնուրույն աշխատանքի և մի շարք այլ ունակությունների զարգացման համար:

Համակարգչային գրաֆիկական ծրագրերի կիրառման գործընթացում անհրաժեշտ է որպես գեղարվեստական կրթվածության իրականացման պայման օգտագործել ստորև բերված միջոցները: Տվյալ խնդիրների լուծման համար պահանջվող համակարգչային տեխնոլոգիաները, ներառում են գեղարվեստական տարրեր, ստեղծում են տեսողական միջավայրի օբյեկտների զուգադրության անսահմանափակ քանակի տարբերակների ընտրության հնարավորություններ և գործառնությունների բազմազանություններ: Համակարգչային գրաֆիկայում օբյեկտի մանրակերտման ժամանակ անձը միշտ փոփոխում է դրա մեջ մտնող տարրերի դիրքը, ձևը և համաչափությունը, կատարում է մասշտաբավորում մյուս օբյեկտների չափերին համապատասխան: Տվյալ բնագավառի շնորհիվ անձի աշխարհընկալման շրջանակներն ընդլայնվում, հետաքրքրանում ու արտահայտվում են նորովի:

Ժամանակակից պահանջները թելադրում են հնարավորություններ ու նոր պայմաններ մարդու ստեղծագործ միտքն ավելի պատկերավոր ներկայացնելու համար: Համակարգչային գրաֆիկան նման պայմաններ և հնարավորություններ տրամադրող ու ընձեռող բնագավառ է:

Համակարգչային գրաֆիկական ծրագրերը մարդու աշխարհընկալման կարևոր, ժամանակակից միջոցներ են: Վերոնշյալով պայմանավորված, անհատի տարածական մտածողության զարգացման համար ստեղծվում են նոր պայմաններ: Համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություն է տալիս ի սկզբանե մտովի պատկերացնել տարածական ձևափոխությունները, ապա դրանք գործնականորեն, կարճ ժամանակահատվածում կիրառել համակարգչի միջոցով: Այսպիսով, ստեղծվում են պայմաններ զարգացնելու անձի տեսողական ընկալումը, արդյունավետ պատկերացումը և տարածական մտածելակերպը: «Особо следует отметить, что компьютерная графика является великолепным средством моделирования и демонстрации

законов, лежащих в основе художественного и графического творчества».<sup>1</sup>

Ստեղծագործական գործընթացում համակարգչային գրաֆիկայի միջոցներով գործողությունների իրականացումն արդյունավետ և արագ է դարձնում աշխատանքը, որտեղ կարևորվում են ճշգրտությունը, տարածության մեջ շուտ կողմնորոշումը և ընկալման լիարժեքությունը: «Компьютерная графика позволяет формировать особую графическую информационную среду специальным инструментарием не только для творческой деятельности художников, дизайнеров, архитекторов, конструкторов, но и для областей, как общего, так и специального образования».<sup>2</sup>

Որպես արդյունավետ գրաֆիկական ստեղծագործական մատուցման միջոց, համակարգչային տեխնոլոգիաները բացի գեղագիտական զարգացման և աշխարհընկալման կարևորությունից անձին տալիս են նաև գրաֆիկական գործիքներով աշխատելու գործնական հմտություններ: Տարբեր բնույթի պատկերագրումների համար միջոցների ընտրության ազատությունը հնարավորություն է տալիս ինտեգրվել մի շարք բնագավառների աշխատանքային գործընթացին՝ առավելագույնս օգտագործելով ու զարգացնելով ստեղծագործողի ունակությունները:

Անձի գեղագիտական դաստիարակության զարգացման համար հարկավոր է ճշտել գեղարվեստական հետաքրքրությունների ձևավորման որոշ բնութագրեր, մասնավորապես ծավալել ստեղծագործական գեղարվեստանախագծային գործունեություն: Հաշվի առնելով անհատի մասնագիտական կրթությունը՝ անհրաժեշտ է դառնում գրաֆիկական գործունեության առանձնահատկությունները ստեղծագործական աշխատանքների տարբեր փուլերում վերլուծել ավանդական ձևերով և համակարգչային տեխնոլոգիաների միջոցով:

Համակարգչային տեխնոլոգիաներն ի հայտ են գալիս որպես միջոց, որի շնորհիվ ցանկացած տեղեկատվություն դառնում է հասանելի: Համակարգչային հնարքների օգտագործումն օգնում է ստեղծել միջառարկայական կապերի ցանց, որն էլ նպաստում է պահանջված աշխատանքի որոնման՝ նախագծերի նյութականացման և մի շարք տարբերակների ներկայացման:

<sup>1</sup> Нодельман Л. Я., Технология обучения студентов художественно-графического факультета компьютерной графике: Дис. канд. пед. наук: Москва, 2000, 275 с.

<sup>2</sup> Нодельман Л. Я., Технология обучения студентов художественно-графического факультета компьютерной графике: Дис. канд. пед. наук: Москва, 2000, 275 с.

Սովորողների վերաբերմունքն ուսուցման և կայուն պատկերների հետ գործունեության ընթացքում դառնում է կարևորագույն հատկանիշ, որն և արտահայտում է անհատական ներշնչանք երևակայական միջավայրում: Դրանք ունեն պատկերման միջնորդավորված և միասնականացված միջոցներ, որոնց յուրահատկությունները նույնականացվում են օգտագործողների համար: Այս հանգամանքն իր մեջ ամփոփում է հատկապես տեղեկատվության ստեղծում, պահպանում աստիճանական համալրման և մի շարք այլ նպատակներ: Նշված նախապայմանները բնորոշ են բացառապես համակարգչային գրաֆիկային՝ որպես սովորողների գեղագիտական դաստիարակության ձևավորման ժամանակակից միջոց, որն էլ ապահովում է նրա առավելություններն ու տարբերություններն այլ միջոցների նկատմամբ:

Ժամանակակից հասարակության մտավոր ընկալումը ստիպում է ավելի մեծ ուշադրություն դարձնել համակարգչային տեխնոլոգիաներին: Դրանց զարգացումը բերում է փոփոխությունների ոչ միայն կրթության բովանդակության մեջ, այլև անձի մտածելակերպի վրա, ծառայում որպես արդյունավետ միջոց անհատի մտավոր ունակությունների ձևավորման և գեղագիտական դաստիարակության զարգացման համար: Անձի ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը նպաստող համակարգչային միջոցների օգտագործումը կարևոր է ստեղծագործական գործունեության համար: Համակարգչային գրաֆիկան մի կողմից ներկայանում է որպես արվեստի նոր տեսակ, մյուս կողմից՝ նկարիչ-ձևավորողի աշխատանքային գործիք: Այդ միջոցները ծառայում են անձի ընդհանրական աշխարհայացքի ձևավորման զարգացմանը՝ տալով նոր հնարավորություններ ինքնարտահայտման, մասնագիտական ունակությունների զարգացման և նախագծման գործունեության մեջ:

Այսօր արվեստի բոլոր բնագավառներում ստեղծագործական կարողությունների զարգացումը գրեթե ամբողջությամբ կապված է համակարգչային գրաֆիկայի գործընթացի հետ: Տվյալ միջոցով ընդլայնվում է ստեղծագործողի կարողությունների զարգացումը: Մերօրյա քաղաքացին գրեթե բոլոր ոլորտներում ունի հնարավորություն ընտրելու տեսական և կիրառական խնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ: Համակարգչային գրաֆիկայի շնորհիվ աշխատանքը դառնում է ավելի դյուրին, ստեղծվում է միջառարկայական կապեր, ինչը ավելի արագ, արդյունավետ և լայնամասշտաբ է դարձնում անձի աշխարհընկալումը, գիտակցական կարողությունների զարգացումը ու վերարտադրումը: Սա է պատճառը, որ ժամանակակից հասարակության համար մասնագիտական գործունեության բոլոր ոլորտներում նոր տեխնոլոգիաների համատարած կիրառումը դառնում է առաջնային և պահանջված:

Այսպիսով գեղարվեստական և ստեղծագործական գրեթե բոլոր ոլորտներում մասնագետների համար անհրաժեշտ պայման է հանդիսանում համակարգչային տեխնոլոգիաների իմացությունը և դրանց կիրառումը: Նման կարծիք է արտահայտում Հ. Մուկոյանը՝ «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառումը նախադպրոցական հաստատությունների կրթական գործընթացում բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը, նաև աջակցում է դաստիարականերին ավելի արդյունավետ ու խնայողաբար օգտագործել ժամանակը»:<sup>3</sup> Համակարգչային գրաֆիկան առանցքային դիրք է զբաղեցնում տեսողական գործունեության բազմաթիվ տեսակներում: Համակարգչային տեխնոլոգիաների տիրապետումը հնարավորություն է տալիս անձի մոտ ձևավորել նոր զարգացման հեռանկարներ, դարձնելով ժամանակի պահանջներին և մարտահրավերներին պատրաստ մասնագետ:

### **Եզրակացություններ**

Թեմայի ուսումնասիրության արդյունքի եզրակացությունը՝

1. Գեղարվեստական ստեղծագործական բոլոր ոլորտներում մասնագետների համար անհրաժեշտ պայման է համակարգչային տեխնոլոգիաների իմացությունը և դրանց կիրառումը: Համակարգչային գրաֆիկան առանցքային դիրք է զբաղեցնում տեսողական գործունեության բազմաթիվ տեսակներում: Համակարգչային տեխնոլոգիաների տիրապետումը հնարավորություն է տալիս անձի մոտ ձևավորել նոր զարգացման հեռանկարներ՝ դարձնելով ժամանակի պահանջներին և մարտահրավերներին պատրաստ մասնագետ:
2. Ներկա պայմաններում արվեստի բոլոր բնագավառներում ստեղծագործական կարողությունների զարգացումը կապված է համակարգչային գրաֆիկայի գործընթացի հետ: Որի միջոցով ընդլայնվում է ստեղծագործական կարողությունների զարգացումը: Համակարգչային գրաֆիկայի շնորհիվ աշխատանքը դառնում է ավելի դյուրին, ստեղծվում են

---

<sup>3</sup> Մուկոյան Հ., Երեխայի գեղարվեստական դաստիարակության ժամանակակից և տեղեկատվական տեխնոլոգիաներ, ուսումնամեթոդական ձեռնարկ (դասընթաց միջին մասնագիտական կրթօջախների և բուհերի սովորողների համար), Հայաստան հրատ., Երևան 2016, էջ 41:

միջառարկայական կապեր, ինչն ավելի արագ, արդյունավետ և լայնամասշտաբ է դարձնում անհատի աշխարհընկալումը, գիտակցական կարողությունների զարգացումն ու վերարտադրումը:

3. Ժամանակակից հասարակության մտավոր ընկալումը պահանջում է մեծ ուշադրություն դարձնել համակարգչային տեխնոլոգիաներին: Դրանց զարգացումը բերում է փոփոխություններ ոչ միայն կրթության բովանդակության մեջ, այլև անձի մտածելակերպի, ծառայում որպես արդյունավետ միջոց անհատի մտավոր ունակությունների ձևավորման և գեղագիտական դաստիարակության զարգացման համար:

Ուստի համակարգչային գրաֆիկական ծրագրերը մի կողմից ներկայանում են որպես արվեստի նոր տեսակ, մյուս կողմից՝ նկարիչ- ձևավորողի աշխատանքային գործիք:

4. Որպես արդյունավետ գրաֆիկական ստեղծագործական մոտեցման միջոց, համակարգչային տեխնոլոգիաները բացի գեղագիտական զարգացման և աշխարհընկալման կարևորություն՝ անձին տալիս են նաև գրաֆիկական գործիքներով աշխատելու գործնական հմտություններ: Տարբեր բնույթի պատկերացումների համար միջոցների ընտրության ազատությունը հնարավորություն է տալիս ինտեգրվել մի շարք բնագավառների աշխատանքային գործընթացին՝ առավելապես օգտագործելով ու զարգացնելով ստեղծագործողի ունակությունները:

5. Այս ամենն իրագործելու, ուսանողներին հասանելի դարձնելու համար խիստ անհրաժեշտ է լսարանները ապահովել համակարգչային տեխնիկաներով: Դրանց կիրառումը ուսանողների հետ աշխատանքը կդարձնի հետաքրքիր, նորովի: Տարբեր տեսակի դասերի անցկացումը նոր տեխնոլոգիական հնարավորությունների հավելումով կստեղծի միջառարկայական կապ տրվող առաջադրանքի միջոցով: Ինչն էլ կնպաստի ժամանակակից մարդու բազմակողմանի զարգացմանը:

### Заклучение

**Ключевые слова и выражения:** компьютерная графика, дизайн, сочетание, графический рисунок, эстетическое воспитание, художественное образование, анимация, композиция, рисунок, информационные технологии.

Заклучение по результатам изучения темы:

1. Знание компьютерных технологий и их применения является необходимым условием для специалистов всех областей художественного творчества. Компьютерная графика занимает ключевое место во многих видах изобразительной деятельности. Овладение компьютерными технологиями позволяет формировать у человека новые перспективы развития, делая его специалистом, готовым к требованиям и вызовам времени.
2. В современных условиях развитие творческих способностей во всех областях искусства связано с процессом компьютерной графики. Это средство развития творческих способностей. Благодаря компьютерной графике работа упрощается, создаются межпредметные связи, что делает мировосприятие личности, развитие и воспроизведение сознательных способностей более быстрыми, эффективными и масштабными.
3. Интеллектуальное восприятие современного общества требует большого внимания к компьютерным технологиям. Их развитие вносит изменения не только в содержание образования, но и в образ мышления человека. Он служит действенным средством формирования интеллектуальных способностей личности и развития эстетического воспитания. Поэтому компьютерные графические программы предстают как новый вид искусства с одной стороны, а с другой стороны как рабочий инструмент художника-оформителя.
4. Как средство эффективного графического творческого подхода компьютерные технологии, кроме значения эстетического развития и мировосприятия, дают человеку и практические навыки работы с графическими средствами. Свобода выбора средств визуализации разного характера дает возможность интегрировать в процесс ряд областей, максимально используя и развивая способности творца.
5. Для того, чтобы все это реализовать, сделать доступным для учащихся, очень необходимо обеспечить учебные классы

компьютерной техникой. Их применение сделает работу со студентами интересной и новой. Проведение разных видов уроков с добавлением новых технологических возможностей создаст межпредметную связь через задание.

**Naira Mkhitaryan**

### **Conclusion**

**Key words and expressions:** computer graphics, design, combination, aesthetic education, art education, animation, composition, drawing, Information technology.

Conclusion based on the results of the study of the topic:

1. Knowledge of computer technologies and their application is a prerequisite for specialists in all areas of artistic creativity. Computer graphics occupies a key place in many types of visual activity. Mastering computer technologies allows a person to form new development prospects, making him a specialist ready for the requirements and challenges of the time.
2. In modern conditions, the development of creative abilities in all areas of art is associated with the process of computer graphics. It is a means of developing creativity. Thanks to computer graphics, work is simplified, interdisciplinary connections are created, which makes the worldview of the individual, the development and reproduction of conscious abilities faster, more efficient and larger.
3. Intellectual perception of modern society requires great attention to computer technology. Their development introduces changes not only in the content of education, but also in the way of thinking of a person. It serves as an effective means of forming the intellectual abilities of the individual and developing aesthetic education. Therefore, computer graphics programs appear as a new kind of art, on the one hand, and on the other hand, as a working tool for a graphic designer.
4. As a means of an effective graphic creative approach, computer technologies, in addition to the importance of aesthetic development and worldview, give a person practical skills in working with graphic tools. The freedom to choose visualization tools of a different nature makes it possible to integrate a number of areas into the process, maximizing and developing the abilities of the creator.
5. In order to implement all this, to make it accessible to students, it is very necessary to provide classrooms with computer equipment.

Their application will make working with students interesting and new. Conducting different types of lessons with the addition of new technological capabilities will create an interdisciplinary connection through the task.

### Օգտագործված գրականություն

1. Գրիգորյան Ն. Դ., «Բազմաչափանիշային մոտեցման հիման վրա ուսանողների գիտելիքների գնահատման մեթոդիկան համակարգչային գրաֆիկայում», սեղմագիր, ՄԳԹ-ի, Երևան, 2010 թ., 22 էջ:
2. Մուկոյան Հ., Երեխայի գեղարվեստական դաստիարակության ժամանակակից և տեղեկատվական տեխնոլոգիաներ ուսումնամեթոդական ձեռնարկ (դասընթաց միջին մասնագիտական կրթօջախների և բուհերի սովորողների համար), Հայաստան հրատարակչություն, Երևան 2016:
3. Ջիլավյան Ա. Գ., «Դպրոցականների գեղագիտական ընկալման ձևավորումը կինոարվեստի ֆակուլտատիվ պարապմունքների միջոցով», սեղմագիր, ՄԳԹ-ի, Երևան, 2008 թ., 22 էջ:
4. Васильева И. А., «Психологические аспекты применения информационных технологий» Вопр. психологии – 2002. – N 3. – с. 15-18. Волкова Н.В.- Компьютерное обучение на основе гуманистического подхода: Дисс. канд. пед. наук. СБД., 1997. – 144 с.
5. Давыдов В. В., Теория развивающего обучения – М.: Интор, 1996, 544 с.
6. Джонассен Х. Д., Компьютеры как инструменты познания: изучение с помощью технологии, а не из технологии», 1994. - N 4. - С. 117-129.
7. Зазнобина Л. С., Банк визуальной информации как научно-педагогическая задача/ Информатика и образование. – 1996., N4. –1-4.
8. Нодельман Л. Я., Технология обучения студентов художественно-графического факультета компьютерной графике: Дис. канд. пед. наук: Москва, 2000, 275 с.
9. Михайленко Е. А., Развитие эстетического восприятия и художественно-творческих способностей учащихся средствами компьютерной графики. Педагогика Выпуск № 1 (135), 2014.

***Խմբագրություն է ուղարկվել 28.10.2022թ.***

***Հանձնարարվել է գրախոսության 14.11.2022թ.***

***Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.***

---

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

<b>ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱՆ</b> Գրական նամականի. կառուցվածք և լեզու	4
<b>ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</b> Միջին հայերենի բառ-նախադասությունները	14
<b>ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱՂՅԱՆ</b> Բայական հիմքերով համադրական բարդությունների կաղապարները ժամանակակից հայերենում	25
<b>ՄԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ</b> Ղազար Փարպեցու «Թուղթը» երկի բառային կազմի իմաստաարժեքային տեղաշարժերը հայերենում (տարժամանակյա քննություն)	38
<b>ՄՈՒՍԱՆՆԱ ՏԻՈՅԱՆ</b> Փոխ(ա) - նախածանցով նորաբանությունները ժամանակակից արևմտահայերենում	50
<b>ՏԱԹԵՎԻԿ ՍԱՏԱՐՅԱՆ</b> Գոյականի ձևաբանական առանձնահատկությունների Հետ կապված շեղումները արդի հայերենում	61
<b>ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ</b> Արևմտահայերենի նոր բառերի բառակազմական հարաբերությունների մասին	71

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

<b>AELITA DOLUKHANYAN</b> Le poème <i>Requiem</i> de Razmik Davoyan	78
<b>ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ</b> Աշուղ Նահապետ Քուչակը և իր երգերը	86

---

**ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ**  
Պարույր Սևակը՝ մանուկներին 107

**ԼԻԼԻԹ ՄԵՅՐԱՆՅԱՆ**  
Արշակ Չոպանյանի բանաստեղծական աշխարհը 118

**ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, ՄԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ**  
*Ես կին եմ* ասացումը Ջապել Եսայանի  
«Միլիտարի պարտեզներ» ինքնակենսագրական վեպում 133

**ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**  
Հրայր Հովհաննիսյանի պոեզիայի  
ժանրային համակարգը 149

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ԷՂԳԱՐ ՎԱՐՇԱՍՅԱՆ**  
Պապ Արշակունու արտաքին քաղաքականությունը 158

**МИСАК ТИГРАНЯН**  
Армяно-российское сотрудничество в процессах  
формирования системы безопасности на Кавказе 185

**ԳՈՌ ԳԱԼՍՅԱՆ**  
Հովհաննես Կոզեռնի «Մեկնություն տոմարի» բնագիրը  
(«Զի՞նչ է թուական»-ի խնդիրը) 198

**ՄՇԱԿՈՒՅԹ**

**ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**  
Ուխտագնացություն Տայնց աշխարհ 213

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԻՐԱ ՄԻՒԹԱՐՅԱՆ**  
Անհատի հետաքրքրությունների և ստեղծագործական  
հնարավորությունների զարգացումը  
գրաֆիկական ծրագրերի միջոցով 226